Բարբ

4–5–6/95

Ե. ՉԱՐԵՆՑ ԵՒ ՏՈՒՆԹԵ

Գնում ենք տխուրսի ցեղ ենք Քերբուրիան ու Խոսի դժուար
ճամ ուսպարիսի
Դէպի ոսկը դէպի ամէն յոյս ու հուսար բոլոր յոյս ապրեն,
Եւ Մարմուռնս տխուր, որպէս ճչպնչական ու գորոյի Քարտեն,
Նստոտում է դէպի Անցեալը, դէպի Անցեալը դասն, դէպի ՝՝՝՝
Մահուան ու Ս.գուսպի...



Գ. ԱԼԻՇԱՆ

«Երգեցի ես յոյսով ոսկեսկան ամրոցներն ու բերդերը հայոց.
«Ոսկեսկներդ հայոց արքայից, պալատներդ նոցա փառաւոր.
«Երգեցի Գարեգին Սարգսյան, Մասիսը ասպետների հայոց,
«Զգեստով հին փառքը հայոց արդեսուն անմար մի՛շտ պահել»

ԲԱՆԴԻ

«—Այս խաղալիքը ի՛ն վառեցի աշխարհում յիսարկով իմ թոյլ
«Եւ գասնեսի գարիներ բարդարում՝ ես գրեց շոգեր ու կայծեր-
«Թե ամբողջ կիսերում կասցում՝ փլեցի ես ամբոցը ու սեղուն
«Ոչ երբե՛ք, երբե՛ք չմարի նրա հուրը – ես յա՛ր ասկայծ է»

Գ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«Ես արդի փոխարէն ասէի իմ կրծրում արդարար զարգանան,
«Ամենաօր էր կիսերում ինչ հասար ամենայն վարանում ու ան.
«Մեր երկրի ոգի այրերից կազմեցի ես մեծ մի բանակ,
«Ես մեր սու գրոշի վրայ գրեցի «Հայրենիք կամ Մահ»»

digitised by A.R.A.R.@

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.–Վ. ՕՇԱԿԱՆ	Սփիւռք
19.–ՎԱՐԱՆԴ	Ջանգածաղիկներ
22.–•••	Վենդետա – Վրէժ
31.–Հ. ՄԱՐԳԱՐԵԱՆ	Հեթում արքայ
56.–Շ. ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ	Բանաստեղծութիւններ
65.–•••	Հոգեւոր բժիշկը
67.–ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ	Հայ գիրքը՝ արիւնը հայուն
74.–•••	Մահփուզեան նոր ողբերգութիւն մը
76.–Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Նեկիպ Մահփուզի արգիլուած խնձորը՝ «Մեր թաղի տղաքը»
86.–•••	Վերծանուած ու վերծանման կարօտ
89.–Ե. ՉԱՐԵՆՑ	Մահուան տեսիլ
115.–•••	Հերոսներուն կենսագրականները
121.–•••	Անհետացած դէմքեր
132.–•••	«Ցիսուն ֆերթուած»
136.–•••	Լոյս տեսան
140.–•••	Մշակութային լուրեր

digitised by A.R.A.R.@

Բագին

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ԼԴ. ՏԱՐԻ 4-5-6 ԱՊՐԻԼ-ՄԱՅ.-ՅՈՒՆ. 1995 ՊԷՅՐՈՒԹ

ԱՓԻՒՈՒՔ

«Սփիւռք» խորագրով յաջորդ էջերուն տրուած գրութիւնը առնուած է մամուլի տակ եղող Վահէ Օշականի արձակ նոր հատորէն, որ կը կրէ «Սերունդներ» ընդհանուր վերտառութիւնը։

Ոմանք տարբեր կառոյցներէ բաղկացող յիշեալ գործը կը զարնուի արձակով թէ բանաստեղծութիւններով յանախ արծարծած Վահէ Օշականի հարցերուն երբեմնագլխին նոր երեսներուն, ընդգրկուած, անշուշտ, հոսող կեանքին թելադրանքներուն տակ։

Կայ Սփիւռք մը եւ կան հոն արկածով ինկած մարդիկ, եւ կան նոյն միջավայրին բնական ծնունդը հանդիսացող ուրիշներ, որոնք սեւական բախտի մէջ են՝ դարաւոր ժառանգութիւններ պահպանելու եւ նոր աւանդութիւններ ստեղծելու հակադիր հրամայականներու ներքեւ։

Այո՛ այդ, բնականաբար, կան նոյնքան էական մանրամասնութիւններ, ուր պայքարի մէջ են դարձեալ հայրենիքի իրականութեան կամ գաղափարին կապուած մնալու ակզբունքը եւ Սփիւռքի պատկանելիութեան որոնումը, արեւան հաւասարմութիւնը տակաւին եւ քաղաքացիութեան միայն յարգ ընծայելու տրամադրութիւնը, օտարը-ներս հրաւիրելու թոյլատուութիւնը եւ անոր առջեւ գուռները փակ պահելու յամառութիւնը, եւայլն, եւայլն, հարցեր, որոնք մեր առօրեան են, լոյսի կարօտ տագնապները։

Այս բոլորը, անշուշտ, տրուած են այնպէս՝ ինչպէս կը պահանջէ գրականութիւնը, տագնապահար տիպարներու հոգեբանական հուզին ընդմէջէն, շարժումի ընթացքին, պլպլանութիւններով։

Ընթերցողը պիտի նկատէ հարկաւ, որ կարգ մը էջերու դիմաց խմբագրութիւնս ճիգ ըրած է հաւասարիմ մնալու նախադասութիւնները կոտրտելու Վահէ Օշականի եղանակներուն, կէտադրական ձեւերուն ու «օրինազանցութիւններուն»...

Վ. ՕՇԱԿԱՆ

200

digitised by A.R.A.R.@

Վ. ՕՇԱԿԱՆ

Ս Փ Ի Ւ Ռ Ք

Ներկայացում մը

Երեք սերունդ - 14 ձայն

1900 - 2000

ՄՈՒՏՔ

Ամէն տկլոր մասնարոպէ որ կը պայթի մակերեսին
ուրկէ կ'անցնի քնքուշ շուքը ամպերու
կը տարտղնէ տիեզերքը կը տարածէ հունէն անդին
դէպի վերջին կապանները Սփիւռքի
կեդրոնախոյս հսկայ սիրտ մը իր կմախքը պիտի փնտռէ
քաղաքներու հազին լացին եզերքին
խարակները կը բզկտեն օտարութեան մեր ոտքերը
պիտի քալեն խուլ անկշռոյթ մինչեւ ծայր:

Սակայն յանկարծ անտես ձեռքեր ուսկանը ետ պիտի քաշեն
դէպի պորտը ձգախէժէ անցեալներու ոստայնին
պիտի սահինք ճաղերն ի վար կարօտներու մարմիններուն
յիշատակի ութոտուիներ պլլուեր են կը սեղմեն
սեւ թունաւոր մշուշ իջեր հին ժանգոտած կունդին մէջէն
ոճիր արկած աճազանգ մը անգութ անմիտ կը կոտտայ
կ'արձագանգէ կիկլոպներու ակոայի ցաւ զարհուրելի
վէրքը տակաւ հասարակաց աղբանոցի վերածուած
մեր ձեռքը չէ մենք պարզապէս կը փորձէինք կեանք մը ապրիլ:

20554 digitized by A.R.A.R.2001

ՍԵՐՈՒՆԴ ՄԷԿ - ՀԱՅՐԸ
(1900 - 1950)

ԱՉՔԸ.—

Փոշոտ, տաք խոնաւութիւնը կը փակի մարդոց թեւերուն ու վզին: Խորտուբորտ ճամբէն կ'անցնի հին օթոպիւսը ու մէն մի ցնցումի իրարու քով թիմուած, քրտնած մարմինները վրայէ վրայ կը փլին: Դեռ կէս ժամ կայ մինչեւ Գահիրէ հասնիլը, սակայն Բենիամին դժգոհ չէ վիճակէն: Խոշոր թաշկինակով ծոծրակը կը չորցնէ, կը ծռի Տիկին Սիրվարդին վրայ, բան մը կ'ըսէ անոր որ աղմուկին մէջ կը կորսուի: Կը շտկուի, դուրս կը նայի, երկչոտ ու համակերպած: «Սեանքին մէջ աւելի գէշ բաներ կան քան ասիկա» կը խորհի ու կը սեղմէ կեղծ ակռաները:

ՔԱՐՏՈՒՂԱՐԸ.—

Սերունդ մէկի ամբողջ տեւողութեան, հեռախօսը պիտի զարնէ, բայց ընկալուչը վերցնող պիտի չըլլայ: Հարցաքննիչը ներս կը մտնէ: Կարճ, նիհար ու ջղային մարդ մը է, խիստ նայուածքով: Մարդ մը կայներ է քիչ մը անդին:

ՀԱՐՑԱՔՆՆԻՉԸ.—

Ո՞վ է ի՞նչ է սա մարդը ուրկէ՞ եկա ի՞նչ կ'ուզէ
այդ արիւնոտ քարայրին աչքերը ի՞նչ տեսեր են
ինչո՞ւ լեզուն չի քակուիր ո՞ր դժոխքէն փախեր է
աստուածայի՞ն թէ մարդկային:

ՔԱՐՏՈՒՂԱՐԸ.—

Մէկ հոգի չէ հարիւր ալ չէ հազարներ են
խումբ խումբ կու գան չորցած ցեխէ մարմիններով
ճամբաներէն տանիքներէն ու դաշտերէն
ակռաները որ կը հոտին ծերութիւնը վաղահաս
եւ սոսկալի ուժի թափը կարելի չէ կեցնել:

ՀԱՅՐԸ.—

Մեզի ըսին աչքերը գոց դագաղները շալկեցէք գերեզմանոց քալեցէք հոն որ հասնիք գետին դրէք ձեր ուսինը շտկուեցէք չըլլայ որ լոյս յետոյ նորէն հաւաքուեցէք յուղարկաւոր թափօր եղէք խունկով մոմով շարականով հոս եկէք ձեր ձեռքերը լուացէք:

digitised by A.R.A.R.@

ՀԱՐՑԱՔՆՆԻՉԸ.—

Ասդին դարձիր ինձի նայիր յստակ խօսէ
ո՞վ են ասոնք հրահանգը ուրկէ՞ եկաւ բացատրէ
դուք ի՞նչ յանցանք գործեր էք:

ՀԱՑՐԸ.—

Մեզի ըսին ժամացոյցը հարիւր տարի կէս գիշերը պիտի զարնէ
դուռ պատուհան պիտի կղպէք մութին գիրկը պիտի նստիք
սուգ բռնեցէք ծոմ պահեցէք ձեր մեղքերը քաւեցէք
հարիւր տարի հոգեհանգիստ պիտի սարքեն ձեր շուրջը
խաւարին մէջ խորխորատին բերնին կառչած պիտի երգէք
փախուստ չկայ ձեզի համար:

ՀԱՐՑԱՔՆՆԻՉԸ.—

Հարցումներուս պատասխանը կը պահանջեմ
որո՞ւ մասին կը խօսիս դուք ի՞նչ յանցանք գործած էք
աս մարդիկը ուրկէ՞ բուսան...

ՀԱՑՐԸ.—

Մեզի ըսին դուք շատ ծեր էք այլեւս հինցած անպէտ մարդիկ էք
մեզի ըսին ձեր զաւակը աշխարհ կու գայ՝ եթէ մեռնիք
ծնած պահուն այս է գինը ու պատիժը
ձեր յանցանքին ձեր մեղքին:
Մեզի ըսին ձեր միտքերը մարգերու մէջ սեւ թռուցիկ
պիտի միայն թռցնեն ասկէ ետքը պիտի կտրենք
ձեր ջիղերուն խարիսխները
որ խրեր էք հիւլէներու պզտիկ սրտին խորերը
մեզի ըսին պիտի փրթի ժամանակի պիրկ ու մեծդի ճոկանը
հին դարերու մշուշապատ ամայացած քարափներուն ամրացուած
ձեր անցեալը իր թագերով սկիհներով
դամբաններով մատեաններով գորգերով
պիտի սուզուի ծովին լուսնոտ նայուածքին մէջ ու կորսուի,
մեզի ըսին ձեր գանկերուն հանգոյցները
կծիկները թնճուկները պիտի քակուին
ալ քառուղի ու դարձուածք չմնայ ձեր առջին
այլ ընթանաք տափաստանի խճուղիէն յիմար
ստերջ երջանկութեամբ:
Լեզուն լեզուն պիտի պատժենք ըսին մեզի
իր անմատոյց կուսութիւնը
իր գաղտնիքը պիտի հանենք նետենք փողոց
բառ ու պատկեր շեշտ ու իմաստ պիտի բաժնենք իրարմէ·
եւ շպրտենք ութ ծագերուն ի սփիւռս աշխարհի

digitised by A.R.A.R.@

գիրերը մերկ ու լպիրշ պիտի պառկին հրապարակի մայթին վրայ
որ պղծուին Անատոլուէն ճամբայ ինկած
թուրք մուհաճիրներու վոհմակներէն
ասկէ ետքը շրթունքները պիտի շարժին
բայց հնչումը պիտի չգայ,
մեր աչքերը մեզ լքեցին գացին
փակաւ դահիճներու մորթերուն,
մեր ունկերը...

ՀԱՐՑԱՋՆՆԻՉԸ.—
(*պոռալով գրեթէ*) Հերիք է հերի՛ք, սա ինչ ապսիւրտ տեսարան է
հոսկէ տարէք սա մարդիկը
անցեալին մէջ կամ ապագայ չկա՞յ
լքուած բարքինկ մը քաղաքէն դուրս
այս մարդիկը մեր աշխարհին չեն պատկանիր:

ՔԱՐՏՈՒՂԱՐԸ.—
Հեռախօսը միշտ կը զարնէ
չկայ մէկը վերցնէ,
հաւանաբար ոչ իսկ մէկը՝ որ լսէ:
Հայրը մէկ մէկ գրպանները կը նայի
շուրջը դէմը գետինը...
բայց չի գտներ բանալին:

ՀԱՑՐԸ.—
Ո՞ւր գացեր է բանալին, ո՞ւր...
հիմա հոս ենք մեր ձեռքերը պիտի լուանք թեւեր սոթտենք
այս է սկիզբը մեր հայրութեան բոլորս ալ
կնքահայր ենք ու դայեակ քահանայ ու հօրեղբայր
մեծ հայր խորթ հայր ու նախահայր մինչեւ աստուած
ու ետ մեզի...

ՔԱՐՏՈՒՂԱՐԸ.—
Ցանկարծ կին մը կը բաժնուի բազմութենէն
կու գայ կայնիլ դիմացը:

ՄԱՑՐԸ.—
Մտիկ մ'ընէք այդ մարդուն —
ես եմ գուռը եւ հայելին թուչունները կերակրողը
արեւածագին ես եմ կուկուզ՝ բրուտին քով՝ կաւ կը շինեմ
աղջիկներուս օժիտներն ու պատանքները ես կը կարեմ

digitised by A.R.A.R.@

ես եմ ակը սիրոյ որ կեանք կու տայ ու կը սպանէ
գիշերները մուս մութին միայն ես եմ տեսանելին.
ես եմ մակարդն ու թթխմորը ես եմ լորձունքն ու արիւնը
հոգիս գրաստն է անմեռ որ շալկեր է կեանքի մահուան պարէնը
ու կ'ընթանայ աչքերը գոց մատները բաց շօշափելով երեսները
մարմինները մեռելներու ողջերուն չկայ ոչ մէկ տարբերութիւն
թշնամիին արտակիցին հարազատին օտարին էրկան զաւկին
միայն թէ դառնայ ընտանիքին երկանաքար
աղայ հունտը ժամանակին
ոլոր ոլոր բարձրանալով մէյ մը դրախտ
մէյ մը դժոխք պիտի քալենք
բայց չհասնինք որեւէ տեղ երազներու կայսրութեան մէջ
միայն կեանքը կը տարածուի հորիզոնի կարկահին
ինչ որ կրնաս վրան բանի
օրէնք չկայ կրօնք չկայ միայն ձիգ չուան մը լուացքի պիտի քաշես
մէկ արգանդէն միւս արգանդը պզտիկ մատներ բռնեն քալեն...

ՔԱՐՏՈՒՂԱՐԸ.—
Բայց բանալին կորսուած է
կարելի չէ ճամբայ ելլել:

ՀԱՑՐԸ.—
Լռեցուցէք սա կինը խելքը բանի չի հասնիր:

ՀԱՐՑԱՔՆՆԻՉԸ.—
Եկէք տարէք երկուքն ալ:

ՀԱՑՐԸ.—
Մտիկ ըրէ ով որ ես ապուշ ապուշ մի խօսիր
խենթ ու խելառ թափթփուկի կը նմանիմ՝
բայց ես գիտեմ ինչ կ'ըսեմ
մի հարցներ ուրկէ կու գանք եւ ով ենք
հիմա հոս ենք եկեր կոտրած գաւաթներ
հին հագուստներ սիրոյ փշրանք հաւաքելու
բայց տուր մէկ դար մեր ազգին՝ թաղուած գանձը գտնելու
հեռախօսի ուղիղ գիծ մը՝ որ չ'աշխատիր
մենք պահեստի կեանքեր ունինք աչքեր ականջ ու լեզու
մենք գիտենք թէ թուրքը ողորմելի
բայց անարկու գործիք մըն է չարչարանքի
Տիզնիլէնտեան սարսափներու հիւնոսութիւն՝
մեզ կը ճզմէ ճանկերուն մէջ
անասնական ախորժակ՝ մարդ էակի տառապանքը

digitised by A.R.A.R.@

իր սեւ հիւթէն կը պարպէ
մտքի շքեղ օֆիսներու նուրբ վայելուչ
ժիր մանկամարդ քարտուղարներ
յիշողութեան պարտէզները երեխաներ պտտցնող
արեւ—չտեսած մանկաբարձներ
պոռչտալով հայհոյելով մէկիկ մէկիկ կը շուլլէ
ու կը մնայ անկեանք չորցած թեթեւ կեղեւը անցեալին
ամառնային ճպուռներու կմախքներ ճիւղերու վրայ մոռցուած:

ՔԱՐՏՈՒՂԱՐԸ.—
Լռութիւն է

ՀԱՐՑԱՔՆՆԻՉԸ.—
Սակայն հիմա ի՞նչ կ'ուզէք ինչո՞ւ եկաք
վերջին անգամ կը հարցնեմ:

ՔԱՐՏՈՒՂԱՐԸ.—
Լուռ է պահ մը ու նայուածքը կը թափառի
անդիմագիծ բազմութեան մէջ կնկան ձեւը կը փնտռէ
քայլ մը առաջ կը շարժի խորունկ շունչ մը կը քաշէ:

ՀԱՑՐԸ.—
Ալ մի խօսիք ալ մի երգէք ի՞նչ կը թակէք բառերուն
ասդիի կողմը մարդ մարդասանք չկայ չկայ
մեր կռնակը կը սարսուայ ցաւի վիհէն մագլցող խոնաւ շունչէն
մտիկ ըրէք հէյ մարդիկ
մեզի ըսին թէ զոհ գացինք վար ինկանք դրօշարշաւը չաւարտած
հեղեղները առին տարին հին կամուրջը պէտք է նորը կառուցել
փոթորիկի խուճապին բանային ալ կորսուեր է
ասկէ ետքը դուք ձեր կեանքը փրկեցէք
մերն ալ հետը եթէ կրնաք...:
Աս է վերջը աս է սկիզբը ամէն ինչի...
Տղաս տղաս
գիս քու սրտիդ մէջ թաղէ
որ հանդարտի խռովահար իմ հոգին...

digitised by A.R.A.R.@

ՍԵՐՈՒՆԴ ԵՐԿՈՒ - ՏՂԱՆ
(1950 - 1975)

ԱՁՔԸ.—

Մթին, անձայն հիւրանոցին մէկ անկիւնին, հաստ ծանր վարագոյրներու ետին կիսով գոցուած՝ Տղան կայներ, ձեռքերը գրպանը: Կոկիկ, խակ, ձայնը մեղմ երեսունենց երիտասարդ մըն է: Դուրսը՝ մեղկ գարունն է լիբանանեան աշխարհին որ իր գաղտնի ու յայտնի մեղքերուն շուրջ գոցուած, կղպուած՝ քաղաքակրթութեան մը հոգեվարքին կը պատրաստուի, խոովիչ զուգահեռականութեամբ մը Հայկական փորձառութեան:

ՏՂԱՆ.—

Հարցաքննիչ մէջտեղ ելիր եկա՛ծ եմ
ո՞ւր է հայրս:

ՏԱՆ ԲԺԻՇԿԸ.—

Պատի խոշոր ժամացոյցը մեծ աղմուկով քանի մը անգամ ժամը 8 պիտի զարնէ: Կամուրջը դեռ չէ նորոգուած բայց փոթորիկին ու քամիին աղմուկը զգալիօրէն մեղմացած է:
Հեռախօսը ա՛լ լռած է: Բայց անցագիրը կորսուեր է:

ՏՂԱՆ.—

Տարեդարձիս ընտանիքին հին դերձակը տուն բերին
կեանքս չափեց ձեւեց հագցուց ու գնաց
հիմա վարէն կօշկակարն ալ պիտի գայ ոտքիս չափը առնելու
գետին ծռած ոսկորները ճաթտելով ձեռքը դպնայ արունքիս,
ապրելիքս մէկ օր մըն է տարիներով
կը քաշուի ու կը քաշուի չի հատնիր
ամէն իրկուն նոր կը ծնի մոխիրի համ ունենալու է մարդոց բերնին
ու կը հատնի ցերեկ չեղած պէտք է գտնեմ անցագիրս կորսուեր է:

ՏԱՆ ԲԺԻՇԿԸ.—

Լուռ ես Արմէն, շուարած:

ՏՂԱՆ.—

Հարցաքննիչ ո՞ւր ես:

ՏԱՆ ԲԺԻՇԿԸ.—

Եկայ, եկայ, համբերէ: Լոյսին կոճակը կը փնտռեմ:

digitised by A.R.A.R.@

ՏՂԱՆ.—
Բայց դուն չէ որ պիտի գայիր Տոքթ. Ռուբէն
ես հօրս հետ կ'ուզեմ խօսիլ:

ՏԱՆ ԲԺԻՇԿԸ.—
Պարոն Արմէն կը խեղդուիք աս տան մէջ
պէտք է ելլէք այս բանտէն երթաք աշխարհ ճամբորդէք
դուրս ելէք դո՛ւրս հսկայ աշխարհ ձեզի կը սպասէ:

ՏՂԱՆ.—
Նոր անցագիր ինքնութեան թուղթ պէտք է հանեմ
հօրմէս դրամ պէտք է առնեմ՝ տոմսակ կտրել դիւրին չէ
ոչ պարտէզ կայ ոչ հորիզոն այս տան շուրջ
թաղարներով չորցած ծաղիկ պէտք է ջրեմ ամէն օր
նամակ չի գար հիւր չի գար
ոչ իսկ դրացի կը տեսնեմ ամբողջ շաբաթ
կափարիչ մը դանդաղօրէն կեանքիս վրայ կը գոցուի
ժամանակը կը հատնի ո՞ւր է հայրս:

ՏԱՆ ԲԺԻՇԿԸ.—
Ինչո՞ւ ի՞նչ կայ:

ՏՂԱՆ.—
Ինծի բան մը պիտի տար:

ՏԱՆ ԲԺԻՇԿԸ.—
Ի՞նչ:

ՏՂԱՆ.—
Չեմ գիտեր... մանկութենէս մեծ նուէր մը խոստացեր էր
եթէ միասին ապրէինք ձեռքէս բռնած՝ ծերանար:

ՏԱՆ ԲԺԻՇԿԸ.—
Ի՞նչ նուէր էր:

ՏՂԱՆ.—
Հայրս ինքն ալ չէր գիտեր ու կը փնտռէր
մեր տան մէջ ամէն գիշեր սեւ շղարշով
խորհրդաւոր կին մը կու գար
ժամեր անվերջ ննջարանը քիթ քիթի կը խօսէին
հայրս կ'ելլէր ինքզինքէն
կ'երգէր կու լար ու չէր տեսներ ինչպէս մայրս սուրճ կը բերէր
սուսիկ փուսիկ անհրապոյր թափթփած՝

digitised by A.R.A.R.@

մէկդի կայնած կը դիտէր յետոյ կ'երթար
մինչ ես թառած շփոթանքի ողբերգութեան եւ ամօթի եզերքին
հարցնելով՝ «ո՞րն է մայրս...»:

ՏԱՆ ԲԺԻՇԿԸ.—
Տղուն հազը կը բռնէ անցագիրը չէ գտնուած տակաւին:

ՏՂԱՆ.—
Ուր որ դառնամ բառեր բառեր ամբարտակներ՝
որ չեն լեցուիր իմաստով
մինչ կը մեռնին հովիտին մէջ երաշտէն՝
կեանքի հունտեր երազելով
հարիւրներով հեռուներէն կը կանչեն՝
ո՞ւր է աստղը Բեթղեհէմի եւ Սիոնի
մեր աչքերը տկարացան հին անունէն որբանոցէն առելցած
ալ մինչեւ ե՞րբ խոնա ափով սերնդապիղծ
երազանքներ պիտի շոյենք
մեր հայրերը մէջտեղ ինկեր մեզի համար կին կը փնտռեն
օտարութեան սառ ձեռքերով
ես իմ մարմնիս փաթթուեր եմ ու կը մսիմ
այսպէս յեցած ժամուն պատին մէջը հիւսուած
հերոսներ ու սուրբեր կան
կը տաքցնեն եթէ գրկես բրածոյէ սիրուհիդ
տասնեօթ դար քեզ կը սպասէր
ամէն մէկ հայ կաթիլ մը թոյն պէտք է պահէ
ակոսին մէջ սրտին մէջ
որ մի գուցէ չդիմանայ առանձնութեան շքեղանքին փախի տունէն
եւ անիծուի անլայտ յիմար տեղ մը ծնած իր անառակ որդիէն:
Ո՞ւր է հայրս:

ՄԱՅՐԸ.—
Հոս եմ տղաս ես քու պառաւ մայրդ եմ
մէջքիս փաթթեր մեր պատմութեան հաստ պարանը՝
դեռ կայներ եմ քարափին
շալիս վրայ դեռ կը մնան մեքենական
հում հում ծամուած աղօթքներու փշրանքներ
քեզի համար թուրքին ժահը ժռուատ բերնով
դանդաղօրէն կ'որոճամ
հազար տարուայ լորձունքով զայն կը լուամ ու կը լուամ
նոր զգեստդ արդուկեր եմ
որ պատրաստ ըլլայ առջինեկիդ կնունքին
լոգնած հայրդ կը քնանայ մի խանգարեր իր հանգիստը:

digitised by A.R.A.R.@

ՏՂԱՆ.—
Ո՞ւր է հայրս, հայրս կ'ուզեմ:

ՏԱՆ ԲԺԻՇԿԸ.—
Քեզմէ գաղտնի արմատներդ հորդ մարմնին շուրջ փաթթեր ես
մինչդեռ անոր արմատները հին դարերու կուրծքին մէջը մխրճուած
կը պրկուին պիտի փրթին պիտի կորչին՝ բայց դեռ հոն են
տառապանքի քառսին մէջ հազարներու հետ կը ճօճուին
անկարելի մթին ծերպեր կը շօշափեն որ կառչին
ու տակաւին աւելի խոր կը սուզուին
եւ փշրուած ոսկորներու ճապաղիքի յիշողութեան յատակին
ինկած կորած բանալի մը կը փնտռեն...

ՏՂԱՆ.—
Ըսէ ինծի մեռա՞ւ հայրս:

ՏԱՆ ԲԺԻՇԿԸ.—
(*խոր լռութենէ մը ետք*) Ան կը մեռնի երբ Նոր Հայը կը ծնի:

ՏՂԱՆ.—
Իսկ ես նոր չե՞մ:

ՏԱՆ ԲԺԻՇԿԸ.—
Նորը ան է որ աշխարհի թիւ մէկ օրը ետ այսօրուան կը կապէ
հայելիները ակնոցները կ'այլակերպէ
թոչուններուն ծաղիկներուն փողոցներուն անունները
մտքի խաղին օրէնքները մեզմէ գաղտնի կը փոխէ:

ՏՂԱՆ.—
Եթէ հայրս լումպափոխ մը ըլլար զիս իր քովը կ'աշխատցնէր
զիս իր մաշած անցագրին վրայ կ'անցընէր:

ՏԱՆ ԲԺԻՇԿԸ.—
Ինչո՞ւ տղադ չես կանչեր:

ՏՂԱՆ.—
Հայրս ինծի մեծ նուէր մը պիտի տար:

ՏԱՆ ԲԺԻՇԿԸ.—
Կարելի է տուած է...

ՏՂԱՆ.—
(*ընդոստ*) Ի՞նչ է ո՞վ է ո՞ւր է:

digitised by A.R.A.R.@

ՏԱՆ ԲԺԻՇԿԸ.—

Բայց տղա՛դ է այդ նուէրը
մէկ սերունդէն միւս սերունդը փոխանցելի
ամէն անգամ նոր զաւակով շարունակուած Նախահայրը նորոգող:

ՏՂԱՆ.—

Տղա՞ս Աւո՞ն այդ երեխա՞ն...

ՀԱՑՐԸ.—

(կը մօտենայ մուտքին մէջէն)
Մահը մահ չէ երբ զաւկիդ մէջ կը թաղուիս
բացատրելով պահակին թէ միտք չունիս հոն շատ մնալ
փոսը խորունկ մի փորէք՝ մէկ ձեռքս դուրս թող մնայ
ես ճամբորդ եմ յաւիտենէ ի յաւիտեան
ես եմ վերջին մահկանացուն հազարամեայ պատմութեան
ես եմ գալիք սերունդներու մուտքի նիհար դրան կայնած
երկար շարքին առաջինը...

ՏՂԱՆ.—

(պոռալով) Աւո՛ Աւո՛:

ՏԱՆ ԲԺԻՇԿԸ.—

Լոյսը տակաւ կը շիջի
հօր ու տղու ձայնը արդէն արձագանգի կը փոխուի
Արարատը ձիւնը հալած ու մշուշը փարատած՝
սովորական լեռ մըն է ալ
ասդին անդին արմատներ՝ պարապութեան մէջ կ'օրօրուին
չորս քահանայ մէկ սարկաւագ պատրաստ կայներ
հոգեհանգիստ պիտի ընեն
հեռու հեռու տեղերէ որոտում մը կը լսուի ու կը մարի
արիւնի գոյն վարագոյրը առաստաղէն վար կը թափի
վերջին անգամ ժամը 8 կը զարնէ:

digitised by A.R.A.R.@

ՍԵՐՈՒՆԴ ԵՐԵՔ - ԹՈՌԸ
(1975 - 2000)

ԱՂՔԸ.—

Վարագոյրը կը բարձրանայ: Օդակայանի մը սպասման սրահը: Զուսպ աղմուկ, ձուռզեռ, բարձրախօսով անհասկնալի յայտարարութիւններ: Զով ու հանգստացնող մթնոլորտ — Ամերիկա ըլլալու է:

Ասոն սլացիկ, մարզիկի մարմնով, համակրելի եւ լուրջ դէմքով երիտասարդ մըն է, 21 տարեկան: Հիմա պատին կոթներ է շատ անճիգ բնականութեամբ ու կը խօսի հեռախօսով: Գետինը ոտքին՝ ճամբորդական տոպրակ մը: Հանդարտ, ինքնավստահ է ձայնը:

—...Իրար մի անցնիր, պապա, քնացեր էիր, ատոր համար չարթնցուցի քեզ, օդանաւով երկու ժամ է մեր տունէն, համալսարան հասնելուս պէս քեզի քարթ մը կը դրկեմ:

—...

—Լաւ լաւ, թէլէֆոն ալ կ'ընեմ, ձայնս կը լսես նորէն

—...

—Չատի՝ որովհետեւ դրամի պէտք չունիմ հիմա: Արդէն հոն մատեանադարանը գործ մը գտած եմ, պատրաստ ինծի կը սպասէ, մի վախնար անօթի չեմ մնար

—...

—Այո այո, վերադարձի տոմսակը քովս է, մի վախնար չեմ կորսընցներ...

—...Չէ չէ, ապահով տեղ դրած եմ... դեռ վեց ամիս կայ վերադարձիս, իրար մի անցնիր

—...

—Լաւ լաւ, հիմա պէտք է գոցեմ, հինգ վայրկեանէն կը մեկնի օդանաւը... պայ պայ

ԹՈՌԸ.—

Ես Ասոն եմ
ոչ երկինքը ոչ երկիրը ոչ ալ ծովը երկնեց զիս
ես թերթերու եւ ռատիոյի միջազգային լուրերուն մէջ ծնած եմ
տասը անգամ օրական խօսնակները ամէն լեզուով
զիս պատմած են սխալ մխալ անուններով ինքնութեամբ
դաւադրութիւն հերոսութիւն իմ հեքիաթին խառնելով
զիս ընտելով երկրագունտի բոլոր անկայտ խորշերուն
թուխ մազերով սեւ աչքերով ու պեխերով ջղուտ ու խիտ տղաներ
Մեծ Եղեռնի հալածանքին զոհաբերուած Երկրորդ սերունդ՝
մեր գալուստը մենք ալ արեամբ ու մեր մահով կնքեր ենք:

digitised by A.R.A.R.@

ՈՒՍՈՒՑԻՉԸ.—

Բայց քու հայրդ գործատո՞ր էր
թէ պաշտօնեայ խանութպա՞ն էր թէ բժիշկ
կուսակցական տաք շունչին ու միսթիքին մէջ թաթխուած
անկիւնները կլորցած Սիամանթօ արտասանող
խաֆատէնկի մարդ մըն էր —
իսկ դո՞ւն ուրկէ բուսեր ես:

ԹՈՌԸ.—

Հայրս հայրս
թէլէֆոնը ամէն անգամ բանալուս
ձայնը աւելի հեռուներէն ինձ կը հասնէր
աւելի կարճ կը խօսէինք շատ բան չկար ըսելիք
միայն թէ թելը կարօտին չտժգունէր չբարակնար չփրթէր
պորտակապը սիրոյ գէթ մնար ու զիս տանէր միացնէր
ցամքած լեզուին երջանկութեան սիրոյ կեանքի պապակին
ու բառերուս ետին ներսս թափառող արի արանց
խօսքին երգին տառապանքին երբ կը թակեն
ու կը կոտտան վանկերուս մէջ գաղտնի
շեշտերն ու կշռոյթը անցեալին:

ՈՒՍՈՒՑԻՉԸ.—

Բայց քու հայրդ միայն բառէ շինուած չէ
հոն կայ նաեւ երազանք կոստղերու պէս
սիրոյ չքնաղ թռչունները որսալու
հոն կայ սիկը լռութեան պահուըտելու անհեթեթի անգղներէն:

ԹՈՌԸ.—

Կռիւ ունիմ հազար տարուայ պատմութեան հետ
լացի ողբի աղերսանքի ինչ անհաւոր ժառանգութիւն
կռիւ ունիմ հօրս հետ՝ իր կնկան տեղ բառերու հետ սիրաբանող
հասարակաց գաղտագողի սիրուհիներ՝
որոնց գիրկը կ'ապաստանին ու կը սպառին
իրենց մանրուկ անգոյ երկրին մայրաքաղաք
հակասփիւռքը կեդրոնաձիգ զառիթափը հակարնազդ
մեղսակիցը մեր պարտութեան
թշնամիին գործակալը պարիսպէն ներս...

ՈՒՍՈՒՑԻՉԸ.—

Բայց ինձ խօսէ բանալիէն ու զէնքէն
անցագիրէն վերադարձի տոմսակէն:

digitised by A.R.A.R.@

ԹՈՌԸ.—

Ակումբները ժողովները բուրդէ երկար վարտիքներ են
մեր մէջքէն վար տաքցնելու
Եկեղեցին՝ պապանձումն Ջաքարիայի ի լուր
ի տես նոր աշխարհին
որ մերկ ու ցոփ հրապուրիչ ինքնամատոյց
բայց արգիլուած կին մըն է
որուն բոլորին գոյնին շուքին ետեւէն դուք վազեցիք դարերով
Հոնկ Քոնկ Համպուրկ Լիզպոն Տաքար Մինէաբոլիս
մէյ մէկ պզտիկ Սարդարապատ՝ ձեր փախուստը հոս կանգ կ'առնէ
Սթոքհոլմ Մատրիտ Պէյրութ Փարիզ
Լոնտոն Ջէպէք Հոոմ Մոնթեպելլօ
խենթ կատաղի թեք հարազատ տարաշխարհիկ հայ տղաք կան
շոգեկառքի կայարանի ժամացոյցին մեծ ալաքին պլլուած
հայերէն գիտեն կամ չեն գիտեր եկեղեցի ոտք չեն դրած
թերթ չեն կարդար կեանքերնուն մէջ մէկ հատ նամակ գրած չեն
բայց միտք մարմին շեղբի հատու նոյն պարագիծը ունին
շատ չեն խօսիր շատ չեն ուտեր մէկ աչքը բաց կը քնանան:

ՈՒՍՈՒՑԻՉԸ.—

Ա՞յս է Սփիւռքը:

ԱՀՔ.—

Տեսարանը կը ներկայացնէ Մոնրէալի պողոտաներէն մէկը, ուր խումբ մը հայ տղաք ու աղջիկներ կայներ են Հայ Ակումբի մուտքին: Լուրջ երիտասարդներ են, դարերու պատասխանատուութեան տակ ճնշուած, քով քովի, իրարու դարձած, կոնակը եռուզեռին, ցած ձայնով կը խօսին

ԱՂՋԻԿ Ա.—

...պատմութիւնս կէս մնաց գիշերներս դեռ նոր կ'եփին լոյսը խակ է
ոչ ոք կ'ուզէ մտիկ ընել... հազար անգամ լսեր են

ԱՂՋԻԿ Բ.—

Ի՞նչ կեանք ինչ բան... փախիլ չկայ անցեալէն մէջս նստեր կը հակէ

ԱՂՋԻԿ Գ.—

Սիրոյ քաղցը լիշատակի դառն ու քաղցր անուանը... ի՞նչ գիտնամ

ՏՂԱՑ Ա.—

Այս գիշեր ո՞վ պահակութիւն պիտի ընէ ինծի հետ

ՏՂԱՑ Բ.—

Ինչքան հօրդ կը նմանիս ձայնը շեշտը գլխուդ ձեւը նայուածքը

digitised by A.R.A.R.@

ՏՂԱՑ Ա.—

Ես եմ խոնարհ ժառանգորդը ամէնուն
ու պահակը իմ մէջ ապրող հերոսներուն որ կը հեգնեն
ժամանակը տաժանագին բայց թերկրալի զառիվերն է
որ կը տանի ետ անմատչելի զօրանոցները դրախտի
թուրքը մուրքը համայն աշխարհի չորս կողմը թափուած
անիրական ականադաշտ ու մոլախոտ կարիճ տատասկ՝
վերադարձի ճամբուն վրայ:

ՏՂԱՑ Բ.—

Մենք ենք Սփիւռքը
հնադարեան հայ պատմութեան
հիւլէական շողարձակում մեզ կը խանձէ
ու կը խանձէ ներսէն դուրսէն
հզօր մագնիս մեզ կը պրկէ կամք ու մկան
ու կը շարժի փաղանգը
մենք հազար ենք ու մենք մէկ ենք աջէն ձախէն
Մեծ Եղեռնի պումբրանկը նեմեսիսը
պիտի դառնանք ետ դէպի ակը ոճիրին՝ երբ գայ ժամը
պատուհասենք բայց չկենանք անցնինք անդին
դէպի երկիր դրախտավայր
Հայաստան:

ՈՒՍՈՒՑԻՉԸ.—

Հոյակապ է բայց միւսնե՞րը միւս հայերը —
Ֆրանսախօս Անգլիախօս Սպանախօս Ռուսախօս

ՏՂԱՑ Բ.—

Աղօրիքը պատմութեան պիտի դառնայ անողորմ
պիտի տոկայ ան որ կրնայ պիտի փլի ան որ իյնայ մարդորսներուն
ասկէ անդին քսանչորս ժամ ճգնաժամ է հայուն համար
ով որ քաջ է ի՞նչ կը սպասէ...

ԱՂՋԸ.—

Մինչ խումբը կը սկսի երգել «Ով որ քաջ է ի՞նչ կը սպասէ» կ'երեւի Աւոն: Կը սպասէ որ լմննայ կրակոտ երգը, յետոյ կը մօտենայ:

ԹՈՌԸ.—

Ներկայացնեմ ձեզ իրարու երկու ծայրերը ծիածանին:
Աջ կողմը՝ Աւարայրի պատանդները արտասահման ապաստանած
պահակները բանալիին անցագիրին զրահին
հրուանդանը ու փարոսը՝
մէգին մութին մէջ պահուըտած հին աշխահին:

digitised by A.R.A.R.@

(կուռ է կարճ պահ մը, յետոյ կը շարունակէ)
Այն կողմը՝ Սփիւռքն է —
իր երկունքի խարխափումին էն խոցելի
էն խանդավառ վայրկեաններուն
անզէն անփորձ ինկած մէջտեղ
օտարութեան օդակներու պաշարումը ճեղքելու
հասնելու դուրս թարմ թթուածին շնչելու
նոր բանալի նոր անցագիր շինելու:

ԱՀՔ.—

Տեսարանը՝ Ամերիկեան համալսարանի մը վկայական բաշխումի մայիսեան շքեղ օր մը: Հայ երիտասարդ շրջանաւարտը սեւ զգեստով ու գլխանոցով կայներ է իր ամբողջ գերդաստանին հետ մարգին վրայ՝ կը լուսանկարուի:

Շուրջը բազմութիւնը վայելուչ տարիքով հեռու Wasp:

ՈՒՍՈՒՑԻՉԸ.—

Նորէն Աւոն է կը մօտենայ հայկական աղմկոտ խումբին

ԹՈՌԸ.—

Միածանին ճիշդ կեդրոնը՝ ուրիշ հայեր
ուշիմ մաքուր երիտասարդներ
իրենց լեզուէն մերկացած բաղնիք առած մաքրուած
ու դրացի տեղացիէն ձեռք մը զգեստ փոխ առած
հագուած շքուած
առհասարակ կամ շատ լայն է կամ շատ նեղ
բայց խնդիր չէ կը խառնուին հազարդէմ ամբոխին
կը մասնակցին տողանցքին
«ես ձեր խումբէն կը խաղամ»
հանդարտ կ'ըսէ ուսանողը ինձ նայելով
«միւս խումբին ալ քէրթընն եմ» կ'աւելցնէ:
Կը դիտեմ զինքը —
քանի քանի ցեղերէ խնամիներ
ու զարմիկներ պարագաներ ազգականներ
պիտի քաշեն արմատները հազար կողմերն աշխարհի...
բայց գիտեմ թէ որքան տնեակ
արիւն որ հոսի երակներու ածուներէն գաւառներէն
ինչքան հունտեր հայ բառերու չորնան
կորչին թռչուններու զոհ երթան
դեռ որքան ջուր որ խառնենք մեր գինիին
հայ ըլլալու զգլխանք մը պիտի պարէ երգէ ու լայ
գիտակցութեան սրահներուն
պիտի տեւէ միշտ բան մը՝ որ անմահ է:

digitised by A.R.A.R.@

143-2001

ՈՒՍՈՒՑԻՉԸ.—

Երիտասարդ,
ո՞ւր է ի՞նչ է Սփիւռքը։

ԹՈՌԸ.—

Այս է Սփիւռքը
ամէն տեղ ու ոչ մէկ տեղ անէծք եւ օրհնութիւն նոյն ատեն
արհեստաւոր ճարտար ձեռքեր
հարիւրաւոր բանալիներ պիտի շինեն ու փորձեն
մաքսանենգներ մեզի անթիւ կեղծ անցագիր հայթայթեն
հազարաւոր գիշերային միջատներ պիտի թռին դէպի լոյսը
սակայն երբեք չհասնին ու կիսախանձ՝
շուրջը դառնան մինչեւ մահ
անհողաթափ կը թափառինք
վաճառքներու գետնատարած շուկաներէն
մեր տուներուն սեմերը սանդուխները պիտի չմաշին
սերունդներու կօշիկներէն
մեր կեանքը մերկ պիտի ըլլայ մշակոյթի
մշտադալար մամուռներու թաւիշէն
Բաբելոնի Աշտարակի բնակիչներ՝
պիտի տոկանք լեզուներու շփոթութեան
ուր որ ըլլանք գուլպաներով պիտի նստինք գետինները
որպէս թէ մեր տունը ըլլար
բայց մէկ աչքը միշտ՝
ելքի նեղլիկ դրան կարմիր լոյսին պիտի ուղղենք
ուր որ ըլլանք՝
ամէն Դատի կամաւոր ենք ամէն կռուի յառաջապահ
բայց մեր Դատին՝ գաղտագողի արհեստագէտ արուեստագէտ։

(Երկար պահ մը լռութիւն)։

Սփիւռքը դեռ կը շինուի...

Մայիս, 1987
Սան Ֆրանսիսքօ

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

digitised by A.R.A.R.@

ՎԱՐԱՆԴ

ՋԱՆԳԱԾԱՂԻԿՆԵՐ
(Պոէմ)

Քաղաքը քեզնից
Թափուր է հիմա.
Կապույտ լամբերը՝
Ջանգածաղիկներ,
Որ զարդարում են ուղին քո դարձի,
Ու մէկ-մէկ ցօղում
Ունայնութիւնը այս երկարամեայ։

Քաղաքը քեզնից
Թափուր է հիմա
Ու նման է մի կենտ մոլորակի,
Որի արեւն ու զովը հեզասահ
Բռնել են ուղին
Չայտնաբերուած ու դեռ անծանօթ
Մի մոլորակի
Մառոչէ քաղաքի...

Չայտնաբերուած
Ոչ թէ քաղաքի,
Այլ՝ աւերակի,
Աւերակ, որը ինչ-որ ժամանակ
Ունեցել է տեսք
Վառ ապարանքի...

Աւերակ, որը
Ինչ-որ ժամանակ
Վայելել է հռչակ բերդ ու դղեակի,
Աւերակ, որի պատերի վրայ
Դեռ հետքերը կան
Ինչ-որ հանճարի նախշ ու քանդակի,
Աւերակ, որը պատի՛ւ է բերել
Մի օր քաղաքին։

Այո, քաղաքը
Հիմա նման է մի մոլորակի,
Որի արեւն ու զովը հեզասահ

digitised by A.R.A.R.@

Բռնել են ուղին
Չյարտնաբերուած ու դեռ անծանօթ
Սեւ աւերակի։

Այդ աւերակը
Միրտն է իմ, անգին,
Որի մէջ չկայ նոյնիսկ մնացորդ,
մոխիր-մնացորդ՝
խարոյկ-վրակի,
Ուր լոկ ստուեր է մնացել պատին
Սարսռուն ստուերը
Քո յիշատակի...

Իսկ թէ արեւն ու զովը հեզասահ
Բռնել են ուղին
Այդ աւերակի,
Դա դրա համար՝
Եթերի տակին
Այդ ուր էլ գնայ,
Ուր էլ հեռանայ
Ուրուականդ, կին,
Մէկ է՝ պիտ տարսի,
Պիտի մթագնի
Ու վերջը պիտ գայ
Իմ թիթեղի տակ,
Իմ թիւի վրայ
Թռչնի պէս քնի-
Իմ լո՜յս աղաւնի...

Քաղաքը քեզնից
Թափուր է հիմա.
Կարմիր լամբերը՝
Գինու գաւաթներ,
Ուր բարձրացրել են քառուղիները ոոջ.
Որ՝ ո՛ւր էլ լինես,
Ո՛ւմ յարկի տակ էլ
Ապրես ու քնես
Եւ ո՛ւմ դիմաց էլ գաւաթներ դնես՝
Ինքդ միշտ լինես
երջանիկ-առողջ։

Քաղաքը քեզնից
Թափուր է հիմա,

digitised by A.R.A.R.@

Լոկ տերեւներ կան
Սարառուն, դողդոջ,
Ու թում է ինձ՝ նրանք ծածկում են
Պողոտան այս ողջ
Ու միայն թողնում երկու ոտնատեղ-
Ոտնատեղը մեր,
Որոնցով չանցանք
Մեր կեանքում ամբողջ,
Կեանքում միասին.
Մենք չանցանք ու մեր
Ոտնատեղն հիմա
Իր մէջ շաղել է,
Իր մէջ թաղել է մի պղտոր լուսին։

Լուսին, որ մի օր
Պիտի զարդարէր քո կուրծքը կոյսի,
Լուսին, որ մի օր
Պիտ լուսաւորէր
Խաւար երկինքն իմ կապոյտ երազի,
Լուսին, որ պիտի
Շոյէր երկոսիս,
Երբ անցնէինք այս մայթով՝ միասին...

Քաղաքը հիմա
Թափուր է քեզնից,
Սակայն լեցուն է
Գոյնով սառոյցի,
Դրա համար էլ
Մէկ կապոյտ լամբը
Դառնում է բազում զանգաձաղիկ,
Դրա համար էլ
Մէկ լամբը կարմիր
Դառնում է գինու
Բազմաթիւ կաթիլ...

Կաթիլները՝ ցող՝
Ծաղկունքի շրթին,
Ծաղկեփնջերը՝
Գաւաթների մէջ.
Ուստի ծաղկունքը
Ջրում է... արեամբ,
Իսկ արցունքներն իր
Գոյնն ունեն նրա...

digitised by A.R.A.R.@

Քաղաքը քեզնից
Թափուր է հիմա.
Թէ ինչ է լինում
Այս քաղաքը քո բացակայութեան-
Թող որ զգամ ե՛ս,-
Իսկ ի՞նչ ես անում
Դու այլ մի վայրում,
Չէ՞ որ դու ինքդ
Հող-իրականի,
Երազ-երկնքի
Մեր աներկնաքեր
Քաղաքի վրայ
Հորիզոն ես՝ կէս.
Իսկ միա կէսդ՝
Այդ ուր է մնայ,
Թէ ողջ աշխարհն է շրջանցի, գնայ,
Հէնց նոյն աշխարհի օրէնքով պիտի
Գայ ու իր կէսին
Պիտի միանայ.
Դրա համար է
Իմ աշխարհն ես դու,
Դրա համար է՝
Ինձ է չես մնայ...

Քաղաքը քեզնից
Թափուր է հիմա...

25-28 Յունուար 1995, Թեհրան

ՎԵՆԴԵՏԱ-ՎՐԷԺ

...Ոչ բաժանումն է կարեւոր,
ոչ միութիւնը։ Սա է երկիրը։
Ժառանգութիւնը մեր։

T. S. ELIOT

Սիրտս բացած գարնանային մեղմ հովերին,
Սիրտս բացած ե՛ւ աշխարհի,
ե՛ւ մարդու դէմ,

digitised by A.R.A.R.@

Հոգիս լեցուն անհուն սիրով՝
շնչով բարի
Եւ առլեցուն ցոլանքներով
Ո՛ղջ աստղերի,
Հողի պէս պարզ
Հերկուած, պատրաստ
Ընդունելու ամէն լաւ հունտ,
Հունտն այդ, որպէս բար ու բարիք,
Կրկին տալու
Կեանքին, մարդուն,
Մերթ ամպելով,
Եթէ հարկ է ջաղբ-անձրեւով
Ողողել ցանքս,
Ու կազմելով հա՛յ ընտանիք,
Որ միշտ ծաղկի մեր կեանքը թանկ.
Ցար ունկնդիր
Խղճիս կանչին,
Որով ասի Բառս առաջին,
Եւ ուշադիր
այն ճաճանչին,
Որ պիտ պահի հայեացքս՝ ջինջ,
Եւ առնելով
հիւթ ու ափշ
հայ արմատիս երակից վառ,
Բայց բացուելով դէպի ուրիշ
Հորիզոններ արեւավառ,
Հաւատալով սիրատոչոր,
ամենազօր Տիրոջ վճռին,
Բայց եւ թոյլս դէմ դնելով
«ճակատագիր» անխիղճ դահճին,
Մերթ հարբելով
Մեր ոգեղէն գաւի գինուց զառ-նռնագոյն,
Բայց աչքս բաց դէպ Ցարդագող տանող
այլոց
ճիգը բեղուն,
Մերթ դիմելով Արեւելքի իմացութեան
տաճարին սուրբ,
Մերթ մտնելով Արեւմուտքի
գանձ-գիտութեան կաճառն անդուռ,
Մերթ սնելով բարկ Հարաւի
տեսիլքներով՝ աչքս ու հոգիս,
Մերթ անսալով ցուրտ Հիւսիսին
բանալով գիրքն այլ նախնիքիս,

digitised by A.R.A.R.@

Հաստատելով, որ աշխարհում
Դեռ կայ արեւ ու ջերմութիւն,
Եւ ամէն մարդ պիտի տեսնի
Երջանկութեան պտուղի գոյն...

Մաքառելով վասն Հացի,
վասն Հոգու,
եւ Դպրութեան,
Թանձրանալով՝ իբրեւ հոգի,
մսին տալով
գին հոգեկան,
Հասկանալով ցաւի լեզուն,
Զգտնելով ճար ու դարման,
Դեռ լիզելով վէրքեր բազում,
Ուր դեռ թարմ են հետքերն արեան...
Չարի զօրքի դէմ առանց զէնք,
Ընկերներից ընկած հեռու,
Ես՝ դասալի՜ք,
Ես՝ անհասցէ՜,
Բայց ոչ երբեք «երես երկու»,
Չներելով աղամորդուն,
Երբ կրում է սեւ թալիսման,
Բայց սիրելով անո՛յշ մարդուն,
Որ ծնուել է ծուռ ու տիտան.
Միրտ չկոտրած արեւի տակ,
Միշտ մնալով արի, բարի,
Յանկանում եմ բուրք ու բարիք,
Խաղաղութիւն՝ ողջ աշխարհին։

* * *

Այս գարնան հետ,
Այս հովերի,
Միրտս է ճեղքում ինչ-որ դաշոյն
Ու կեանքս ի վար,
Ու կեանքս ի վեր
Կաթեցնում է ինչ-որ գորշ թոյն։

Այդ ինչի՞ց է՝ այս աշխարհում
Չխնդացի ես ոչ մի պահ,

digitised by A.R.A.R.@

Կեանքիս Մայիսն
Դարձաւ աշուն,
Ինձ հալածեց ուրու մի պաղ,
Ուր գնացի՝ դարձաւ սոսինձ,
Ուր մնացի՝ դարձաւ տանտէր,
Օձի նման խայթոտեց ինձ,
Հանց Հետերա ասաց ստեր.
Գինուս գաւին
խառնեց արիւն,
Մարմնիս կտրին՝ մոլեխինդ-թոյն,
Ուրախ օրիս՝ սգոյ քողեր,
Միրոյս դողին՝ արեան ցօղեր,
Հոգուս լոյսին բերեց մութ թուխպ,
Մեծ դաշինքիս՝ բեկանուած ուխտ,
Քարաւանիս՝ ուղտի սատակ,
Հանգրուանիս՝ շիջած կրակ,
Թէժ խարոյկիս՝ թաց ցախ ու փուշ,
Այս ինչ դարձաւ կեանքս անուշ...
Անապատ է ասես իմ շուրջ...

Անապատ է ո՛չ թէ իմ շուրջ,
Այլ հոգուս մէջ՝
ունայն ու փուճ...

Այս աշխարհում որքան բարիք,
Որքա՜ն հաճոյք ու բերկրութիւն-
Ինձ է նայել մի ծուռ տանիք,
Որ չի եղել հայրական տուն։
Այս աշխարհում որքան երդիկ,
որքա՜ն անհոգ օջախ-ակութ-
Ինձ կլանեց հանց վառելիք,
Աւերակիս թոնիրը մութ։
Այս աշխարհում որքա՜ն ծաղիկ,
որքա՜ն վայելք ու խնդութիւն
Ինձ է զարկել, իբրեւ չարիք,
Օտարութեան թայֆունը ցուրտ...
այս աշխարհում որքա՜ն «գալիք»,
որքա՜ն երազ ու որքա՜ն գոյն,
Ինձ է փարուել անցեալ մի լիրբ,
Վառ շապիկիս քսել արիւն։
Այս աշխարհում որքա՜ն երկինք,

digitised by A.R.A.R.@

Որքա՜ն արեւ, որքան անհուն,
Ինձ դրոշմուեց որպէս կնիք,
Լոկ «Դէր-Զօրը» ֆոսֆորագոյն.
Այս աշխարհում... երգ ու միւզիք,
Միրոյ նուագ մեղմահնչիւն,
Ինձ խառնել են ճիչերը ձիգ
Անապատի ոսկրափոշուն...

Ինչո՞ւ վարդիս իջաւ աշուն,
Վարդս թօշնեց վատի փշում։

* * *

Թեւածել են ամեր վրաս,
Ագռաւները անանց վշտի,
Ներխուժել է գիշեր վրաս,
Մղձաւանջով անապատի.
Երազներս՝ հատիկ-հատիկ,
Մանկութիւնս՝ տոտիկ-տոտիկ,
Կեր են դարձել բազմապատիկ
Ցուշի անգղին չարաբաստիկ...
Եւ ես խաչեալ ու խաչազուն,
Եւ ես տեսած մահեր բազում,
Ես չարչարուած ու ազազուն,
Խաչից պոկում իմ մէկ բազուկ,
Կայծակում եմ
Խաւարի դէմ
Ոխն ու ողբս շանթալեզու.

-Ես եկել էի աշխարհ, որ սիրեմ,
Ես եկել էի՝ գոյն տամ ձեր աչքին,
Ես եկել էի՝ երազներ բերեմ,
Աներազ քնի ձեր մութ տարածքին.
Ես եկել էի, որ քարը փորէք,
Ժէռ քարից քամէք նուռ, եղնիկ, ողկոյզ...
Ես եկել էի՝ կաքաւէք, պարէք,
Սողանքի փոխան ձեր քարշ... կուզէկուզ...։
Ես եկել էի վիպասանութեամբ,
Բանաստեղծութեան ոսկէ հրաշքով,
Նարեկայ վանքի իմ աստուածութեամբ,

digitised by A.R.A.R.@

Ու ջաստուածներիս կապույտ հմայքով։
Ես եկել էի հրայրքով տիրեմ,
Հանճարիս հուրը նուվիրեմ ու տամ,
Իսկ դուք դրախտս շինեցիք գեհեն,
Շէկ աստուածներիս՝ դիմակ անատամ...։
Եւ հիմա գոյի իմ իրատունքով,
Եւ հիմա իբրեւ վենդետա-վրէժ,
Ես ձեզ կ'աւերեմ իմ նոր հրաշքով-
Հանճարիս հուրը կ'արձակեմ ձեր մէջ.
Դուք՝ մթան սադրանք, չոջիկ ու աքիս,
Քարանձաւների պատերին՝ պալար,
Պիտի մոխրանաք շանթերիս զարկից,
Եւ պիտի թափուէք գարշ, գետնագալար։
Հանճարիս հրով պիտի այրեմ ձեզ,
Պիտի աւերեմ արարիչ աջով,
Ինչպէս Զօրավար դուրս եկած կրկէս,
Որ թուրը կոտրած, կռում է խսչով...
Ես պիտի կռուեմ մտքիս փարոսով,
Ու գոյատեւեմ իմ հոգու լոյսով։

* * *

...Եւ Քրիստոսի
Արիւնը պիտի
Լուանար մեղքը համայն մարդկութեան.
Այլազան ցեղեր ելնելով մարտի
Կործանում էին միմեանց անվարան.
Սափորից հոսում
գինին կրքերի
Մերկ մարմինները օծում էր մեղքով,
Ոչ մի բալասան
Չկար վէրքերին՝
Պղծուած ջինէր
նենգութեան թքով։
Հոսեց արիւնն այդ
Ու լուաց երկար
Մարդկային խղճի
փոշին կոշտացած,
Մաքրեց շնացման
Անկողինը չար,
Բուժեց բազմաթիւ կոտտանք, խոց ու ցաւ.
Սակայն մարդկային մեղքը

digitised by A.R.A.R.@

Շատ էր մեծ,
-Էլ մօտենում էր
Երրորդ հազարին...-
Այս անգամ Չարը
Եկել էր հանդէս,
Ոչնչացնում էր բոլո՛ր ազգերին.
Խելառ մի փամփուշտ
Արքայ էր սպանել,
Արքայորդու՝ իր պերճ գահոյքի մէջ.
Սատանան անկուշտ
Աշխարհն ատամնել,
Եւ սպառնում էր
Հրդեհով անշէջ...

Նոր արիւն էր պէտք,
-Ո՞ւր էր Քրիստոս,-
Իսկ տանջող,
Խաչող
Իժեր շատ կային,
Ու դեռ գտնուեց մի հեղգ Պիղատոս,
Խուժանին տուեց
Խիստ հատատացեալ,
Երիցս խաչեալ,
Քրիստոսատիպ,
Մաքրասիրտ Հային...
...Թէ Քրիստոսի
Արիւնը պիտի
Լուանար մեղքը ապրող մարդկութեան,
-Մինչեւ չինի ատեանը Դատի,
Մինչեւ ջասմի պահը հատուցման,-
Ցեղի արիւնը կուրացնի պիտի
Աչքերը նրանց, որ դեռ պիտի գան...
.....
.....
Նոր արիւն էր պէտք,
Իսկ չկար Մեսիան։

* * *

Ծլելու համար, ծլարձակելու,
Ծաղկելու համար ու ծաւալուելու,

digitised by A.R.A.R.@

Թէկուզ ոտնաչափ
Մի ափ հող է պէտք։

Ցլելու համար, ծլարձակելու,
Ծաղկելու համար ու ծառալուելու,
Թէկուզ բռաչափ
Ջուր ու ցող է պէտք։

Ցլելու համար, ծլարձակելու,
Ծաղկելու համար ու ծառալուելու,
Թէկուզ մատնաչափ
Մի քիչ շող է պէտք։

Ցլելու համար, ծլարձակելու,
Ծաղկելու համար ու ծառալուելու,
Թէկուզ սրտաչափ
Հոգս ու դող է պէտք...

Եւ դրա՛ համար,
Ցօղն այդ մի բուռ,
Թանկ է մեզ համար,
Քան իմ ողջ ցեղի արիւնը հանուր։

Եւ դրա՛ համար,
Հողն այդ մի բուռ,
Թանկ է մեզ համար,
Քան ողջ երկնքի տարածքը լազուր։

Եւ դրա՛ համար,
Շողն այդ մի բուռ,
Թանկ է մեզ համար,
Քան ողջ արեւի ճառագայթը հուր...

-Դրօշ եռաթոյր-

Եւ դրա՛ համար
Երկիրն այս պուճուր
Մեզ համար հաց է,
Աղուհաց է, ջուր...

Եւ դրա՛ համար,
Երկիրն այս «չնչին»

digitised by A.R.A.R.@

Մեր զարկերակն է
Եւ փողը շնչի՛։

Եւ դրա՛ համար,
Երկիրն այս քարոտ,
Մեզ համար ոստ է,
Պտակ ու նարօտ...

Եւ դրա՛ համար,
Երկիրն այս ատղունց,
Մեր էութիւնն է՝
Իսկ խմորը հունց։

Եւ դրա՛ համար
Երկիրն այս մի մատ,
Մեր ինքնութիւնն է,
Ափշ ու արմատ...

Դրա՛ համար ենք
Մտել հազար մարտ,
Դրա՛ համար ենք տալիս կեանքեր վարդ...

* * *

Սիրտս բացած
Գարնանային մեղմ հովերին,
Սիրտս բացած
Ե՛ւ աշխարհի,
Ե՛ւ մարդու դէմ,
Հոգիս լեցուն անհուն սիրով,
Շնչով բարի,
Եւ աչեցուն
ցոլանքներով
Ոչ աստղերի,
Ողջունում եմ հեռուներից այս աշխարհի,
Ողջոյն ունեմ յաւերժավառ
Քո արեւին,
Ի՛մ Նայիրի...

1995, Գարուն **ՎԱՐԱՆԴ**
Թեհրան

digitised by A.R.A.R.@

Հ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

ՀԵԹՈՒՄ ԱՐՔԱՅ

(Թատերգութիւն Երկու Արարով)

ՏԻՊԱՐՆԵՐԸ ՄՈՒՏՔԻ ԿԱՐԳՈՎ

ՀԵԹՈՒՄ	Հայոց արքայ
ՍՄԲԱՏ	Սպարապետ: Հեթում արքայի եղբայրը
ԼԵՒՈՆ	Հեթում արքայի որդին
ԿՈՍՏԱՆԴԻՆ ՊԱՅԼ	Հեթում արքայի հայրը
ԶԱՊԷԼ	Թագուհի: Հեթումի կինը
ՍՈՒՐԷՆ	Թիկնապահ՝ Հեթում արքայի
ՄԱՐԻԱՄ	Նաժիշտ
ՄԵԾ ՏԻԿԻՆ	Ղայասսատտին սուլթանի մայրը
ՏԻԿԻՆ	Ղայասսատտին սուլթանի կինը
ԼԷՑԼԱ	Ղայասսատտին սուլթանի դուստրը
ՄԱՐԿՈՍ	Դերասան
ԱՏԱՐ	Աւազակ
ԱԾՐԱՖ	Ղայասսատտին սուլթանի ճօրեղբօրորդին
ՌՈՒԲԷՆ	Իշխան մը

Դերասաններ, դերասանուհիներ, իշխաններ, իշխանուհիներ եւ ժողովուրդ

ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

ԱՐԱՐ ԱՌԱՋԻՆ

Տեսարան առաջին	Մատուռ
Տեսարան երկրորդ	Բերդի պատշգամ
Տեսարան երրորդ	Բերդի հրապարակ
Տեսարան չորրորդ	Բերդի հրապարակ
Տեսարան հինգերորդ	Բերդի հրապարակ

ԱՐԱՐ ԵՐԿՐՈՐԴ

Տեսարան առաջին	Բերդի հանդիսասրահ
Տեսարան երկրորդ	Վրան մը
Տեսարան երրորդ	Վրան մը
Տեսարան չորրորդ	Բերդի հրապարակ

Ժամանակ, վայր եւ զգեստաւորում... ըստ բեմադրիչի հայեցողութեան

digitised by A.R.A.R.@

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐ
Տեսարան առաջին

Արքունի մատուռ:

Եկեղեցական երգեցողութիւն:

Ներկաները, ոմանք ծունկի, ոմանք՝ ոտքի, կ'ունկնդրեն երգեցողութիւնը:

Հեթում եւ Զապէլ կը մտնեն միասին, անոնց կը հետեւի Կոստանդին:

Զապէլ եւ Կոստանդին կը գրաւեն իրենց արքունի աթոռները:

ՀԵԹՈՒՄ (*ոտքի*).—*Այս է երկի՛ր։ Այս է ժողովուրդս։ Ինչպէ՞ս, ինչպէ՞ս պաշտպանեմ թշնամիներէն։ (Կը նստի Զապէլին կից արքայական աթոռը):*

ՍՄԲԱՏ (*Կը մտնէ Հեթումի հակառակ ուղղութեամբ*):

ՀԵԹՈՒՄ (*տեսնելով Սմբատ սպարապետը*).—*Սմբա՛տ, Սմբա՛տ, ե՞կո՛ւր, հո՛ս եմ։*

ՍՄԲԱՏ (*կը մոտենայ։ Անհանդարտ մտահոգութեամբ*).—*Ողջո՛յն, տէր արքայ։*

ՀԵԹՈՒՄ.—*Ողջո՛յն, Սմբա՛տ սպարապետ։ Ի՞նչ նորութիւն։*

ՍՄԲԱՏ.—*Հարաւէն՝ Ամանոս լերան ստորոտի ճանապարհով, թշնամի բանակի վրաններ նկատուած են երէկ գիշեր։*

ԿՈՍՏԱՆ.—*Մ՞ւր նկատուած են։*

ՍՄԲԱՏ.—*Ամանոս լերան ստորոտի ճանապարհին։*

ՀԵԹՈՒՄ.—*Թի՞ւը։*

ՍՄԲԱՏ.—*Հինգ հազարնոց բանակ մը ըլլալու է։*

ՀԵԹՈՒՄ.—*Հի՛նգ հազարնոց, Աստուա՛ծ իմ։*

ԿՈՍՏԱՆ (*անհանդարտ*).—*Իսկ ներքին ճակատի հարցերը ինչպէ՞ս են։*

ՍՄԲԱՏ.—*Վա՛տ են, հա՛յր, վա՛տ են։ Հիւսիսէն՝ Բարձր բերդի մէջ, նոր խլրտումներ սկսած են։*

ՀԵԹՈՒՄ.—*Նորէ՞ն խլրտումներ։*

ՍՄԲԱՏ.—*Իշխանական տոհմերու սահմանային կռիւ։*

ՀԵԹՈՒՄ.—*Մահ կա՞յ։*

ՍՄԲԱՏ.—*Այո՛։ Հարիւր հոգի մեռած են պոյգ տուներէն։*

ՀԵԹՈՒՄ (*ջղայնի*).—*Այդ ամբարտաւան իշխանները չէի՞ն կրնար հարցը խաղաղութեամբ լուծել։ (Դահ մը): Իսկ արեւելքէն՝ Օշին իշխանի գրաւած Կորիկոսի կիրճէն ի՞նչ լուր։*

ՍՄԲԱՏ.—*Լեւոն իշխանը ուղարկեր եմ, որ բանակցի Օշին իշխանին հետ։ Այսօր կը վերադառնայ եւ կը զեկուցէ։*

digitised by A.R.A.R.@

ՀԵԹՈՒՄ (յանդիմանական).—Սմբա՛տ, ինչո՞ւ դուն չգացիր։ Լեւոնը դեռ անփորձ երիտասարդ է։ Ռազմական կարեւոր անցք է մեզի համար այդ կիրճը, պէ՛տք է դրաւենք։

ՍՄԲԱՏ.—Համաձա՛յն եմ։

ԿՈՍՏԱՆ.—Հանդարտէ, Հեթո՛ւմ, հանդարտէ։ Սմբատը հոս բանակը կը վերակազմէ. ինչպէ՞ս կրնար ինքը երթալ։

ՍՄԲԱՏ.—Կորիկոսի կիրճին համար ի՞նչ կը թելադրէ արքան։

ՀԵԹՈՒՄ.—Ես կը կարծէի, որ սպարապետն է, որ կը թելադրէ, իսկ արքան կ'որոշէ։

ՍՄԲԱՏ.—Հարցերու լուծման մէջ մենք կը տարբերինք։ Ես ռազմագէ՛տ եմ, դո՛ւն՝ քաղաքագէտ։ Մեր ուղիները շատ յաճախ իրարու չեն միանար։

ՀԵԹՈՒՄ.—Կարեւորը մեր ուղիներու միանալը չէ՛, այլ՝ մեր միջոցներուն զիրար լրացնելը։

ԿՈՍՏԱՆ.—Ես կը զարմանամ, որ դուք՝ հարազատ եղբայրներ, զիրար չէք հասկնար եւ դեռ կը պահանջէք, որ իշխանե՞ր համերաշխ ըլլան։

ՍՄԲԱՏ.—Խորհուրդ մը կրնա՞մ տալ, տէ՛ր արքայ։

ՀԵԹՈՒՄ.—Եղբայրս ես, մի՛շտ մտիկ ըրած եմ քեզ, հիմա՛ ալ պատրաստ եմ։

ՍՄԲԱՏ.—Բայց իմ խորհուրդը եղբայրական խորհուրդ չէ, կ'ուզեմ խօսիլ իբրեւ սպարապետ։

ՀԵԹՈՒՄ.—Սմբա՛տ, Սմբա՛տ, եղբայրս եղած ես՝ ծնունդէս ի վեր, իսկ սպարապետ՝ միայն թագադրութենէս ի վեր։ Ժամանակի կը կարօտի եղբայրն ու սպարապետը իրարմէ բաժնել։

ՍՄԲԱՏ.—Ժամանակ չունիս, սիրելի՛ եղբայր (ինքզինք սրբագրելով)՝ ժամանակ չունիս, տէ՛ր արքայ։ Քու ժամանակը հասարակ մարդու չափանիշով չի՛ չափուիր։ Քու ժամանակը՝ արագընթաց է։ Հա՛յր, խնդրեմ, դուն ըսէ, ի՞նչ կ'ըլլայ մեր վերջը, եթէ հարցերը արագօրէն լուծում չգտնեն։

ԿՈՍՏԱՆ.—Մեծ աղէտներու առջեւ կը կանգնինք։ (Պահ մը)։ Թող ներէ՛ արքան, եթէ հասուննալու դասեր կու տանք իրեն։

ՀԵԹՈՒՄ.—Ամէն մարդ հասուննալու պէտք ունի, նոյնիսկ արքաները։ Լա՛ւ, տէ՛ր սպարապետ, թող այդպէս ըլլայ։ Հաւաքէ՛ բոլոր զօրավարները։

ՍՄԲԱՏ.—Վերջապէ՛ս։

ՀԵԹՈՒՄ.—Բայց խորհուրդ առ ամէ՛ն անհատէ։ Ամէնէն անիրական միտքն անգամ մի՛ անտեսեր։ Մտիկ ըրէ մա՛նաւանդ չլսուած խօսքերուն։ Անոնց ետին թաքնուած կ'ըլլան մեծագոյն միտքերը։

digitised by A.R.A.R.@

ՍՄԲԱՏ.—*Շա՛տ լաւ։ Այսօ՛ր իսկ կը հաւաքեմ զօրավարները եւ Զինուորական Խորհուրդի թելադրանքները վաղ առաւօտեան կը փոխանցեմ քեզի։*

ԿՈՍՏԱՆ.—*Թող ձեր տարակարծութիւնները միշտ այսպէս համաձայնութեամբ աւարտին, զաւակնե՛րս։ Իրարու ձեռք սեղմեցէք։*

ՀԵԹՈՒՄ եւ ՍՄԲԱՏ.—*(Ձեռք կը սեղմեն)։*

ԿՈՍՏԱՆ.—*Ցուսամ այլեւս ինծի պէտք չէք ունենար (դուրս)։*

ՀԵԹՈՒՄ.—*Սմբա՛տ, այս երկրին ուժը դո՛ւն ես, առանց քեզի ոչի՛նչ կրնամ ընել։*

ՍՄԲԱՏ.—*Առանց քեզի եւ քու քաղաքագիտական մտքիդ, ուժը ոչի՛նչ է։ Ե՛ս ալ ոչինչ եմ, Հեթո՛ւմ։*

ՀԵԹՈՒՄ *(Սմբատը գրկելով)*.—*Եղբա՛յրս։*

ԼԵՒՈՆ *(կը մտնէ)*.—*Ողջո՛յն, հօրեղբայր, ողջո՛յն, հայր։*

ՍՄԲԱՏ.—*Ողջո՛յն արքայորդիին։*

ՀԵԹՈՒՄ.—*Ողջո՛յն, Լեւոն իշխան։*

ԼԵՒՈՆ *(զարմացած)*.—*Ի՞նչ պատահեցաւ։ Դեռ ամիս մը առաջ պարզ Լեւոն էի ձեզի համար։*

ՍՄԲԱՏ.—*Ինչպէ՞ս ընթացան բանակցութիւնները Օշին իշխանին հետ։*

ԼԵՒՈՆ.—*Հօրեղբա՛յր, ինչպէս թելադրած էիր, ամէն ճիգ թափեցի եւ բացատրեցի Օշին իշխանին, որ Կորիկոսի կիրճը ռազմական կարեւոր անցք մըն է մեր երկրին համար եւ ոեւէ անհատի կամ իշխանական տան չի՛ պատկանիր։ Ցամաքեցաւ։*

ՀԵԹՈՒՄ.—*Լեւո՛ն։*

ԼԵՒՈՆ.—*Ներողութիւն, բայց դիտե՞ս ինչ ըսաւ։*

ՀԵԹՈՒՄ.—*Ի՞նչ։*

ԼԵՒՈՆ.—*Դարերէ ի վեր մեր տոհմին պատկանած է այդ կիրճը եւ ես եմ անոր տէրը։ Ո՛վ որ գործածէ կիրճը, տուրք պէտք է վճարէ։ Ժամերով փորձեցի համոզել, չյաջողեցայ։ Ստիպուած հաւաքեցի զօրքս եւ ետ քաշուեցայ մեր սահմանները։*

ՀԵԹՈՒՄ *(Սմբատին)*.—*Հիմա հասկցա՞ր սխալդ, կիրճը կորսնցուցինք։*

ՍՄԲԱՏ *(յանդիմանական)*.—*Է՛, Լեւո՛ն։ Լաւ, ե՛ս երթամ փորձեմ համոզել Օշինը (կ'ուղղուի դէպի դուրս)։*

ԼԵՒՈՆ.—*Սպասէ, հօրեղբա՛յր, սպասէ։*

ՍՄԲԱՏ.—*Ա՛լ ի՞նչ պիտի ընես։*

ԼԵՒՈՆ.—*Հօրեղբա՛յր, երբ ես կը վերադառնայի, յանկարծ խօսքդ, յիշեցի։*

ՍՄԲԱՏ *(զարմացած)*.—*Ի՞նչ խօսք։*

ԼԵՒՈՆ.—*Երկաթը կռանելու համար, հարկ է զայն ժուլել։*

digitised by A.R.A.R.@

ՍՄԲԱՏ.—Է՞։

ԼԵՒՈՆ.—Գիշերով առի զօրքս եւ վերադարձայ Կորիկոս։ Մտա՛նք իր բերդը՝ ձերբակալեցի Օշին իշխանը եւ շղթայակապ հո՛ս բերի դատելու։ Կիրճը ազատ անցք է հիմա։

ՀԵԹՈՒՄ եւ ՍՄԲԱՏ (Ապշահար կեցած են)։

ԼԵՒՈՆ.—Հօրեղբա՛յր, ա՛լ պէտք չունիս երթալու...։ Կիրճը հոն՝ ազատ... Օշինը հոս՝ ձերբակալուած։

ՍՄԲԱՏ եւ ՀԵԹՈՒՄ (Զարմացկոտ իրարու կը նային)։

ՍՄԲԱՏ.—Տեսա՞ր որ իրաւացի էի՝ Լեւոնը ղրկելով։ Լեւո՛ն իշխան, իբրեւ սպարապետ, բարձր կը գնահատեմ ռազմավարութիւնդ։

ՀԵԹՈՒՄ.—Լեւո՛ն, իբրեւ արքայ կը թելադրեմ, որ արդարութեա՛մբ դատես Օշին իշխանը։

ԼԵՒՈՆ.—Այո՛, տէր իմ։

ՀԵԹՈՒՄ.—Սմբա՛տ, ըսէ՛ նայիմ ի՞նչ ծրագրած ես հարաւը նը-կատուած թշնամիի զօրքին համար։

ՍՄԲԱՏ.—Որոշած եմ հետախոյզներ ղրկել թշնամիի դիրքը...

ԼԵՒՈՆ (ոգեւորուած).—Քանի՞ հոգի են, հօրեղբա՛յր։

ՍՄԲԱՏ.—Հանդարտէ, Լեւո՛ն։ Հինգ հազարնոց բանակ է։ Ուրեմն որոշած եմ՝ հետախոյզներ ղրկել թշնամիի դիրքը՝ զինուորական ուժը ստուգելու համար։ Ատկէ ետք...

ԼԵՒՈՆ.—Հի՛նգ հազար...։ Որքա՞ն մարդ ունին, որ այսպէս հսկայ բանակ կրնան կազմել, հօրեղբա՛յր։

ՍՄԲԱՏ.—Այդ ցեղի իւրաքանչիւր ընտանիքը բազմաթիւ զաւակներ կ'ունենայ։ Մի ընդհատեր, Լեւո՛ն։

ԼԵՒՈՆ.—Իսկ մե՛նք ինչու չենք ունենար։

ՍՄԲԱՏ.—Ջենք ուզեր, չենք ունենար։ Մի՛ խանգարեր ըսի։ Հեթո՛ւմ, ատկէ ետք, կ'ուզեմ գիշերով անակնկալ ձեւով յարձակիլ, որպէսզի...

ԼԵՒՈՆ.—Ջե՛նք ուզեր...։ Այն ատեն, մե՛նք ալ օրէնք հանենք, որ ամէն ընտանիք պարտաւորուի՛ տասը զաւակ ունենալ։

ՍՄԲԱՏ.—Հեթո՛ւմ, պարապ խօսակցութեան ժամանակ չունիմ։ Զաւակիդ բան մը հասկցուր (դէպի դուրս)։

ՀԵԹՈՒՄ.—Սմբատ, սպասէ՛։ (Լեւոնին)՝ ի՞նչ կ'ուզես, Լեւո՛ն։

ԼԵՒՈՆ.—Կ'ըսեմ՝ օրէնք հանենք, որ ամէն ընտանիք պարտաւորուի տասը զաւակ ունենալ։

ՀԵԹՈՒՄ.—Լա՛ւ, եթէ չենթարկուի՞ն։

ԼԵՒՈՆ.—Տուգա՛նք կը դնենք։

ՀԵԹՈՒՄ.—Այդպիսի օրէնք մը արդա՞ր է։ Եկուր, եկուր, Սմբա՛տ, չարունակենք։

ԼԵՒՈՆ.—Սպասէ՛, հօրեղբայր։ Լա՛ւ, բարեփոխե՛նք օրէնքը։ Տասը զաւակ ունեցող ընտանիքը տուգանք չի տար։ Մնացեալնե-

digitised by A.R.A.R.@

ըը բոլորը տուգանք կու տան՝ ըստ զաւակներու թիւին։

ՀԵԹՈՒՄ.—*Իսկ ան՝ որ զաւակ չ'ուզեր ունենալ։*

ԼԵՒՈՆ.—*Այդպիսիները կը բանտարկուին։*

ՀԵԹՈՒՄ.—*Ի՞նչ։*

ԼԵՒՈՆ.—*Կը բանտարկուի՛ն։*

ՀԵԹՈՒՄ.—*Կը բանտարկուի՞ն եւ ինչո՞ւ։*

ԼԵՒՈՆ.—*Մինչեւ որ զաւակ ունենան։*

ՍՄԲԱՏ (*քմծիծաղով*).—*Բանտին մէ՞ջ պիտի ունենան, խելո՛ք։*

ԼԵՒՈՆ (*պահ մը*).—*Հա՛յր, եթէ օրէնքը գործադրուի, մեր ընտանիքի տուգանքը քիչ պիտի ըլլայ։ Մենք արդէն ութ զաւակ ենք, երկու հատ ալ ունենանք՝ լրիւ տուգանքէ զերծ կը մնանք։* (*Քմծիծաղով*)՝ *Բայց հօրեղբօր տուգանքը ծանր պիտի ըլլայ, ան միայն չո՛րս զաւակ ունի։*

ՍՄԲԱՏ (*ժպիտով*).—*Մեծխօսի՛կ։ Դո՞ւն քանի զաւակ պիտի ունենաս։*

ԼԵՒՈՆ.—*Ես հօրս հետ պիտի մրցիմ։ Կը ծրագրեմ՝ ութէն աւելի։*

ՍՄԲԱՏ եւ ՀԵԹՈՒՄ (*Կը խնդան*)։

ԼԵՒՈՆ.—*Ինչո՞ւ կը խնդաք։ Բանակ կ'ուզենք կազմել եւ մարդ չունինք։ Զինուորները ուրկէ՞ պիտի գան, եթէ ոչ մե՛ր ժողովուրդէն։*

ԶԱՊԷԼ (*ներս մտնելով, Հեթումին*).—*Ողջո՛յն, տէր արքայ։* (*Սմբատին*)՝ *Ողջո՛յն, տէր սպարապետ։*

ՀԵԹՈՒՄ.—*Ողջո՛յն, թագուհի։*

ՍՄԲԱՏ.—*Ողջո՛յն, թագուհի։*

ԼԵՒՈՆ.—*Ողջո՛յն, թագուհի։*

ԶԱՊԷԼ (*Լեւոնին*).—*Փառք Աստուծոյ, որ ողջ-առողջ վերադարձած ես։*

ԼԵՒՈՆ.—*Կը ներես, մա՛յր, որ չայցելեցի քեզ։ Պէտք էր նախ առաքելութեանս զեկոյցը տայի։*

ԶԱՊԷԼ.—*Իբրեւ մայր, չե՛մ ներեր։ Իբրեւ թագուհի, կ'ենթադրեմ, պէտք է հասկնամ։*

ԼԵՒՈՆ.—*Կու գա՛մ, մա՛յր, կու գա՛մ կ'այցելեմ։*

ՍՄԲԱՏ.—*Լաւ, ես երթամ զօրավարները ժողովի հրաւիրեմ։*

ԼԵՒՈՆ.—*Հօրեղբա՛յր, թոյլ տուր ես ալ ներկայ ըլլամ։*

ՍՄԲԱՏ.—*Միայն թէ լուռ կը մնաս։ Երթա՛նք, Լեւոն իշխան։* (*Հեթումին եւ Զապէլին*)՝ *Ի տեսութիւն, տէր արքայ, թագուհի։* (*Դէպի դուրս*)։

ԼԵՒՈՆ (*Սմբատին ետեւեն խօսելով*).—*Ի տեսութիւն, տէր արքայ, թագուհի։* (*Դէպի դուրս*)։

ԶԱՊԷԼ.—*Լեւո՛ն, կը բաւէ խեղկատակութիւն ընես։ Ե՞րբ պիտի լրջանաս։*

digitised by A.R.A.R.@

ԼԵՒՈՆ.—*Ամուսնանալէս ետք։*

ՍՄԲԱՏ եւ ԼԵՒՈՆ (*Խնդալով եւ խօսակցելով՝ դուրս*)։

ԶԱՊԷԼ.—*Այդ զաւակդ անուղղելի՛ է։*

ՀԵԹՈՒՄ.—*Այդպէս մի՛ ըսեր, Զապէ՛լ։ Զուր տեղը չէ, որ զաւակը, հօրդ՝ Լեւոն Մեծ արքայի անունը կը կրէ։ Դուն գիտե՞ս, որ ան Օշին իշխանը ձերբակալած եւ հոս բերած է։*

ԶԱՊԷԼ.—*Զաւակիդ այդ հերոսութեան մասին տեղեակ եմ։ Իսկ դուն անոր մի՛ւս հերոսութեան մասին գիտե՞ս։*

ՀԵԹՈՒՄ.—*Ուրիշ ի՞նչ հերոսութիւն ըրած է։*

ԶԱՊԷԼ.—*Էէյլան կը սիրէ։*

ՀԵԹՈՒՄ.—*Էէյլա՞ն ով է։*

ԶԱՊԷԼ.—*Ղայասսատին սուլթանի դուստրը։*

ՀԵԹՈՒՄ.—*Բայց միայն երեք ամիս է, որ այդ ընտանիքը մեր քովն է, ինչպէ՞ս ժամանակ գտաւ...*

ԶԱՊԷԼ.—*Սիրահարուելու համար ակնթարթն ալ կը բաւէ։ Հեթո՛ւմ, չես կրնար երեւակայել, թէ որքա՛ն երախտապարտ են քեզի, որ զիրենք պատսպարեցիր արքունի բերդիդ մէջ։ Սուլթանի մայրը իր որդուն մահը կ՚ողբայ, իսկ կինը միշտ տխուր է։ Միայն Էէյլան է, որուն սէրը կը մեղմացնէ իր վիշտը։ Ափսո՛ս Ղայասսատինը։*

ՀԵԹՈՒՄ.—*Թաթարներուն դէմ անոր պատերազմը անխոհեմ քայլ էր արդէն։ Կը զարմանամ, թէ ինչպէ՞ս համարձակեցաւ այդպիսի փոքր թիւով, բազմահազար բանակի դէմ ելլել։ Երկրի մը ուժը իր ժողովուրդի թիւին մէջ կը կայանայ՝ կռուո՛ղ ուժին, գործո՛ղ ուժին, կառուցո՛ղ եւ մշակո՛ղ ուժին։ Մենք ալ բո՛ւռ մը ժողովուրդ ենք, ինչպէ՞ս դիմադրենք այդ հսկայ բանակին։*

ԶԱՊԷԼ.—*Ինչո՞ւ, ո՞ւր հասած են թաթարները։*

ՀԵԹՈՒՄ.—*Աւերած են Անի քաղաքը։ Սուրէ անցուցած են հազարաւոր մարդիկ, տղամարդ, կին ու երեխայ։*

ԶԱՊԷԼ.—*Աստուա՛ծ իմ։ Ինչո՞ւ այս վայրագութիւնները։ Չեմ հասկնար, ի՞նչ կը հետապնդէ թաթարներու Պաչու իշխանը։*

ՀԵԹՈՒՄ.—*Իր եսին փա՛ռքը։*

ԶԱՊԷԼ.—*Ինչո՞ւ իր եսին փառքը չի հիւսեր՝ աւաններ կառուցելով, մշակո՛յթ զարգացնելով։*

ՀԵԹՈՒՄ.—*Զապէլ, ազգ մը մշակուած պէտք է ըլլայ, որ մշակոյթ սերմանէ։ Ասոնք բարբարոսներ են։*

ԶԱՊԷԼ.—*Այդ ցեղախումբերը ինչպէ՛ս ալ այսքան զօրացան։ Արդեօք մինչեւ ո՞ւր պիտի յառաջանան։*

ՀԵԹՈՒՄ.—*Մ՚վ գիտէ։*

ԶԱՊԷԼ.—*Եւրոպա կը հասնի՞։*

digitised by A.R.A.R.@

ՀԵԹՈՒՄ.—*Եթէ կարենան։*

ԶԱՊԷԼ.—*Արդեօք այս կողմերէ՞ն ալ պիտի անցնին։*

ՀԵԹՈՒՄ.—*Արդէն մեր սահմաններուն հասած են։*

ԶԱՊԷԼ.—*Սարսափելի օրերու նախօրեակին կը գտնուինք, Հեթո՛ւմ։ Ի՞նչ պիտի ընես։*

ՀԵԹՈՒՄ.—*Ամէն գնով պիտի փորձեմ սիրաշահիլ թաթարները, որ պատերազմէ խուսափիմ։*

ԶԱՊԷԼ.—*Սիրաշահի՞ս։*

ՀԵԹՈՒՄ.—*Այո՛, այո՛, Զապէլ։ Ամէ՛ն միջոցի պիտի դիմեմ ժողովուրդիս գոյութիւնը ապահովելու համար։*

ԶԱՊԷԼ.—*Լա՛ւ, լա՛ւ, դուն գիտես։ Դո՛ւն ես այս երկրին ղեկավարը։ Եւ ժողովուրդին գոյութեան հարցն ալ քեզմէ է կախուած։ Ինչ որ ճիշդ կը համարես, ա՛յդ ալ ըրէ։*

ՀԵԹՈՒՄ.—*Կը կարծես դիւրի՞ն է քաղաքականութեան մէջ ճիշդ ճամբան գտնելը։*

ԶԱՊԷԼ (մտահոգ).—*Ինչո՞ւ այս բեռը ուսերուդ դրաւ հայրդ։*

ՀԵԹՈՒՄ.—*Զապէ՛լ, խնդրեմ, նորէն մի՛ սկսիր։*

ԶԱՊԷԼ.—*Այո՛, այո՛, հայրդ ո՛չ միայն ուսերուդ դրաւ այս բեռը, այլեւ սպաննեց ամուսինս եւ...*

ՀԵԹՈՒՄ.—*Զապէ՛լ, քսան տարի է անցեր արդէն, մոռցի՛ր պատահածը։*

ԶԱՊԷԼ.—*Մ՛չ, չեմ մոռնար։ ...Եւ դիս՝ արքայադուստրս, սուգի՛ս մէջ չղթայակապ հոս բերաւ՝ քեզի կին ըրաւ, որպէսզի ի՛ր տոհմը գահին բարձրացնէ։ Ինծի կ՚ըսես մոռցի՛ր պատահածը։ Մ՛չ, Հեթում, արժանապատուութեան ոտնահարումը չի՛ մոռցուիր։*

ՀԵԹՈՒՄ.—*Իսկ արժանապատուութիւնդ չանարգուեցա՞ւ, երբ օտարազգի ամուսինդ՝ Պեմունդ իշխանը, որ քու միջոցաւ թագաւոր դարձաւ, վարձահատոյց ըլլալու փոխարէն, գողցաւ հօրդ գանձերը եւ ղրկեց իր երկիրը։ Պեմունդը անարգեց հայրդ, մեր երկիրը եւ քե՛զ։ Ան արժանի չէր քու սիրոյն։ (Պահ մը)։ Զապէ՛լ, եթէ ես գիտնայի, որ քսան տարի ետք, դուն դեռ անարգուած պիտի ըլլաս, հաւատա՛, որ այդ անարգանքէդ զերծ կը պահէի քեզ։ Տասնչորս տարեկան էի։ Ինծի պարտադրեցին, որ թագաւոր եւ ամուսին դառնամ... տասնուվեց տարեկան Զապէլին։ Ես չէի՛ գիտեր, ես չէի՛ ուզեր, որ դուն որեւէ կերպով տառապիս։ Զապէ՛լ, երբ տառապանքիդ ծանօթացայ, անիծեցի՛ այդ օրը, որ ե՛ս եղայ անոր պատճառը։*

ԶԱՊԷԼ.—*Կը ներես, Հեթո՛ւմ, որ քու ծանր բեռիդ վրայ այս մէկն ալ աւելցուցի։ Նպատակս այդ չէր։*

digitised by A.R.A.R.@

ՀԵԹՈՒՄ.—*Փակուած աչխարհները պէտք է բացուին երբեմն։*
ԶԱՊԷԼ.—*Իսկ ինչու չես բանար քու աչխարհը, Հեթո՛ւմ։*
ՀԵԹՈՒՄ.—*Ինչո՞ւդ պէտք իմ մո՛ւթ ու խրթի՛ն աչխարհը։*
ԶԱՊԷԼ.—*Կ՚ուզեմ բաժնեկի՛ց ըլլալ մտահոգութիւններուդ։*
ՍՈՒՐԷՆ (*կը մտնէ մտահոգ*).—*Տէ՛ր արքայ, պատուիրակութիւն հասաւ թաթարներու Պաչու իչխանէն։*
ԶԱՊԷԼ (*մտահոգ*).—*Պաչու իչխանէ՞ն։*
ՀԵԹՈՒՄ (*թիկնապահին*).—*Սուրէ՛ն, առաջնորդէ պատուիրակութիւնը սպասման սրահը։ Ես հիմա կու գամ։*
ՍՈՒՐԷՆ.—*Այո՛, տէր իմ։* (*Դուրս*)։
ԶԱՊԷԼ.—*Արդեօք ի՞նչ հարցով եկած են։*
ՀԵԹՈՒՄ.—*Երթամ, երթա՛մ տեսնեմ Պաչու իչխանը ի՞նչ կ՚ուզէ։* (*Դէպի դուրս կ՚ուղղուի*)։
ԶԱՊԷԼ (*մտահոգ*).—*Հեթո՛ւմ։*
ՀԵԹՈՒՄ.—*Այո՛, Զապէլ։*
ԶԱՊԷԼ.—*Գիտցի՛ր որ ի՛նչ ալ պատահի, քու թագուհին կողքիդ պիտի ըլլայ։*
ՀԵԹՈՒՄ (*փաղաքշական*).—*Շնորհակալ եմ, ի՛մ թագուհի։*
ՍՈՒՐԷՆ.—*Տէ՛ր իմ, պատուիրակութիւնը ձեզի կը սպասէ։*
ՀԵԹՈՒՄ.—*Երթանք, Սուրէ՛ն, երթանք։* (*Դուրս*)։
ԼԵՒՈՆ (*հակառակ կողմէն մտնելով եւ դէպի դուրս խօսելով*).—*Մարիա՛մ, հոս կանչէ Լէյլան։* (*Տեսնելով մայրը*)՝ *Մա՛յր, ո՞ւր է հայրս։*
ԶԱՊԷԼ (*մտահոգ*).—*Գնաց Պաչու իչխանի պատուիրակութեան հանդիպելու։*
ԼԵՒՈՆ.—*Պաչու իչխանի՞։ Ի՞նչ կայ արդեօք։*
ԶԱՊԷԼ.—*Ո՛վ գիտէ։ Անորոչութեամբ յղի օրեր են, Լեւո՛ն։*
ԼԵՒՈՆ.—*Այո՛, անորոչութեամբ։ Ցուսամ այս ալ կ՚անցնի։*
ԶԱՊԷԼ.—*Այո՛, զաւակս, ամէն ինչ կ՚անցնի։*
ԼԵՒՈՆ.—*Մա՛յր, գարունը ծաղկեր է ծառերուն, թռչունները անվերջ կը ծլվլան, արեւը ջերմութիւն կը բուրէ…։ Ձե՞ս ուզեր միթէ այս բոլորը վայելել…*
ԶԱՊԷԼ.—*Այո՛, այո՛, պէտք է վայելել…։ Երթամ Ղայասատինի մայրն ու կինը միխիթարելու, իսկ գարունը դուն վայելէ։* (*Դուրս*)։
ԼԵՒՈՆ (*դէպի դուրս*).—*Լէյլան ինչո՞ւ ուշացաւ։* (*Գրպանէն խորանարդ քարեր կը հանէ, ձեռքին մէջ կը դարձնէ ու կը նետէ գետին։ Կը մօտենայ տեսնելու, թէ քարերը ինչ ձեւով ինկած են*)։
ԼԷՅԼԱ (*կը մտնէ*).—*Ի՞նչ կ՚ըսեն բախտի քարերը, Լեւո՛ն իչխան։*
ԼԵՒՈՆ (*ուրախ անդրադարձով*).—*Իչխանուհի՛ Լէյլա, յարգանքնե՛րս։* (*Պահ մը*)։ *Քարերը համբ են, անոնց լեզուն չեմ հասկըներ։*

digitised by A.R.A.R.@

ԼԷՑԼԱ.—(Կը մտնեն այլ քարերուն եւ կը զննէ)։

ԼԵՒՈՆ.—*Քու տուած քարերդ են։ Հետս տարի արշաւանքին եւ ազատ պահերուս երբ առանձին էի, փորձեցի օրերը կարդալ եւ... Հե՛տդ ըլլալ։*

ԼԷՑԼԱ (կը նայի քարերուն եւ կը մատնանշէ).—*Բայց հակադրութիւն մը կայ այստեղ։*

ԼԵՒՈՆ.—*Ի՞նչ հակադրութիւն։*

ԼԷՑԼԱ.—*Այս մէկ քարը հրճուանք է, իսկ միւսը՝ թախիծ։*

ԼԵՒՈՆ (կը մտնեն այլ եւ «թախիծ» քարը կը շրջէ).—*Ահաւասիկ, երկո՛ւքն ալ հրճուանք են։*

ԼԷՑԼԱ.—*Երանի՛ թէ այդքան դիւրաւ, մէկ շարժումով կարելի ըլլար ճակատագիրը փոխել։*

ԼԵՒՈՆ.—*Ճակատագիրը մե՛ր ձեռքն է։ Դուն ու ես կը դարբնենք մեր երջանիկ ապագան։*

ԼԷՑԼԱ.—*Բայց այս քարերը ուրի՛շ բան կ՚ըսեն։*

ԼԵՒՈՆ.—*Իշխանուհի՛ Լէյլա, մեր քար բերդին չունէ տուիր քու ներկայութեամբ։*

ԼԷՑԼԱ.—*Բերդի՞ն միայն։ Իսկ քեզի, Լեւո՛ն իշխան։*

ԼԵՒՈՆ.—(Լռո ու սիրազեղ կը նայի)։

ԼԷՑԼԱ (երազուն).—*Հոգիս երբեմն կը թեւածէ դէպի անծայրածիր հորիզոնները, ուր կապո՛յտ է եւ խաղա՛ղ։ Ուր մարդը ազա՛տ է։ Ուր մարդը կրնայ սիրել։ Գիտե՞ս, Լեւո՛ն իշխան, որքա՛ն երազեր եմ այդ աշխարհը։*

ԼԵՒՈՆ.—*Ե՞ւ։*

ԼԷՑԼԱ.—*Այնքան երջանիկ եմ եղած այդ աշխարհին մէջ։*

ԼԵՒՈՆ.—*Ե՞ւ։*

ԼԷՑԼԱ.—*Բայց երբ վերադարձած եմ իրական կեանքին, թախի՛ծը դարձեալ պարուրեր է հոգիս։*

ԼԵՒՈՆ (կը մտնեն այլ եւ Լէյլայի ձեռքերէն բռնելով).—*Երջանկութիւնը մե՛ր ձեռքն է, իշխանուհի՛։*

ԼԷՑԼԱ (ձեռքերը ազատելով).—*Բայց քարերը ուրիշ բան կ՚ըսեն։*

ԼԵՒՈՆ.—*Մոռցիր քարերը, մե՛նք կը դարբնենք մեր օրերը։*

ԼԷՑԼԱ.—*Իրա՞ւ։*

ԼԵՒՈՆ.—*Լսէ, ինծի, Լէյլա՛։*

ԼԷՑԼԱ.—*Կը լսեմ, Լեւո՛ն։*

ԼԵՒՈՆ.—*Վերջին ուղեւորութեան, շատ մտածեցի մեր մասին։*

ԼԷՑԼԱ.—*Այո՞։*

ԼԵՒՈՆ.—*Ես այսօր պիտի ներկայանամ հօրս եւ առաջարկեմ...*

ԼԷՑԼԱ (ձեռքերը կ՚երկարէ եւ կը գոցէ Լեւոնի բերանը).—*Մի՛ խօսիր։*

ԼԵՒՈՆ.—*Ես կը կարծէի, որ պիտի ուրախանաս։*

ԼԷՑԼԱ.—*Լեւո՛ն իշխան, եթէ գիտնաս որքա՛ն ուրախ եմ... եւ... որքա՛ն կը սոսկամ այդ ուրախութենէն։* (Դէպի դուրս

digitised by A.R.A.R.@

նալելով)՝ Մարդիկ կու գան։ Մեզ պէտք չէ միասին տեսնեն։ Պէտք է երթա՛մ։ (Կ'ուղղուի դէպի դուրս)։

ԼԵՒՈՆ.—*Լէյլա՛։*

ԼԷՅԼԱ.—*Այո, Լեւոն։*

ԼԵՒՈՆ.—*Ե՞րբ կը տեսնեմ քեզ նորէն։*

ԼԷՅԼԱ.—*Չե՛մ գիտեր։ Առանց քեզի բերդը դատարկ էր։ Ես միայն ձայնդ ուզեցի լսել այսօր, ուրիշ ոչինչ։ (Դուրս)։*

ԼԵՒՈՆ.—*(Կը մօտենայ՝ կը վերցնէ քարերը, կը նայի եւ դուրս)։*

ՀԵԹՈՒՄ.—*(Մտահոգ կը մտնէ։ Լռութեամբ կը կարդայ հրովարտակը։ Կը ծալէ։ Տխուր է)։*

ԶԱՊԷԼ *(կը մտնէ).—Մոայլ ես, Հեթո՛ւմ։ Պատուիրակութիւնը ինչո՞ւ եկած էր։*

ՀԵԹՈՒՄ.—*Կանչել տուր Ղայասսատինի ընտանիքը։*

ԶԱՊԷԼ.—*Ղայասսատինի ընտանիքը, ինչո՞ւ։*

ՀԵԹՈՒՄ.—*Կանչե՛լ տուր։*

ԶԱՊԷԼ *(դէպի դուրս).—Մարիա՛մ։*

ՄԱՐԻԱՄ *(ներս մտնելով).—Այո՛, տիրուհիս։*

ԶԱՊԷԼ.—*Ղասսայատինի ընտանիքը հոս առաջնորդէ։*

ՄԱՐԻԱՄ.—*Շա՛տ լաւ, տիրուհիս։ (Դուրս)։*

ԶԱՊԷԼ.—*Հեթո՛ւմ, ըսելո՞ւ ես վերջապէս, թէ ինչ է պատահած։*

ՀԵԹՈՒՄ *(դանդաղօրէն).—Թաթարներու Պաչու իշխանը կը պահանջէ, որ մեր քով ապաստանած Ղայասսատին սուլթանի ընտանիքը իրե՛ն յանձնեմ։*

ԶԱՊԷԼ.—*Իրե՞ն յանձնես։*

ՀԵԹՈՒՄ.—*Դեռ աւելի՛ն։ Եթէ չյանձնենք, մեր երկիրը քարուքանդ պիտի ընէ Պաչու իշխանը։*

ԶԱՊԷԼ.—*Աստուա՛ծ իմ։ (Կարեկցութեամբ)՝ Հեթո՛ւմ, ի՞նչ պիտի ընես։*

ՀԵԹՈՒՄ.—*Երանի՛ անոնց ճակատագիրը որոշել իմ ձեռքը ըլլար։*

ԶԱՊԷԼ.—*Ուրեմն պիտի յանձնե՞ս։ Բայց երբեմնի բարեկամդ՝ սուլթանը քեզի՛ վստահեցաւ։*

ՀԵԹՈՒՄ.—*(Լռո՛ւ է)։*

ԶԱՊԷԼ *(կշտամբանքով եւ հատիկ-հատիկ).—Բայց ան վստահեցա՛ւ... քեզի՛։*

ՀԵԹՈՒՄ *(շեշտակի Զապէլին կը նայի).—Զապէ՛լ։*

ԶԱՊԷԼ.—*Վստահութիւնը ոտնակոխ չեն ըներ, Հեթո՛ւմ։*

ՀԵԹՈՒՄ.—*Եթէ չյանձնեմ, մեր երկիրը քարուքանդ պիտի ընէ Պաչու իշխանը, չե՞ս հասկնար։*

ՄԱՐԻԱՄ *(կը մտնէ).—Սուլթանին ընտանիքը այստեղ են։ Նե՛րս եկէք, տիկնայք։*

ՍՈՒԼԹԱՆԻ ՄԵԾ ՏԻԿԻՆԸ, ԿԻՆԸ եւ ԼԷՅԼԱՆ.—*(Ներս կը մտնեն եւ թեթեւ կը խոնարհին)։*

digitised by A.R.A.R.@

ՀԵԹՈՒՄ.—Շատ կը ներէք, որ ձեր հանգիստը խանգարուեցաւ։

ՄԵԾ ՏԻԿԻՆ (հպարտ).—Թող վստահ ըլլայ արքան, որ մենք մեր հանգիստը իր յարկին տակ գտանք։

ՀԵԹՈՒՄ.—Կ'ուզեմ իմ վիշտը յայտնել Մեծ Տիկինին, ձեր զաւակի մահուան առթիւ։

ՄԵԾ ՏԻԿԻՆ.—Ազնիւ էք, տէր արքայ։ Զաւակս՝ Ղայասսատոր-նը, ձեզ շատ կը յարգէր։

ՀԵԹՈՒՄ.—Թագուհի՛, իշխանուհի՛ Լէյլա, խորին ցաւակցութիւն-ներս։

ԼԷՅԼԱ.—Շնորհակալ ենք, որ մեզի ապաստան տուիք։

ԿԻՆԸ.—Ամուսինս տիպար ղեկավար մը կը սեպէր ձեզ։

ՀԵԹՈՒՄ.—Իր մահով մեր երկիրը լաւ բարեկամ մը կորսնցուց, բայց··· Երանի թէ ուժը ունենայի ձեր կեանքը տարբե՛ր հունի մէջ դնելու։

ԿԻՆԸ.—Ձեր հիւրասիրութիւնը հարազատ տան մը ջերմութիւնը տուաւ մեզի։ Իսկ Թագուհի Զապէլի հոգատարութիւնը քրոջ մը պէս մեղմացուց մեր վիշտը։ Շնորհակա՛լ ենք։

ՀԵԹՈՒՄ.—Կը վախնամ, որ ուժը չունիմ այնչափ այդ ջերմութիւնը իմ փափաքած ձեւով ընծայելու։

ՄԵԾ ՏԻԿԻՆ.—Ձե՛մ հասկնար։ Ի՞նչ ըսել կ'ուզէք։

ՀԵԹՈՒՄ (կը մօտենայ եւ հրովարտակը կը յանձնէ Մեծ տիկնոջ).—Թաթարներու Պաչու իշխանի հրովարտակը։

ՄԵԾ ՏԻԿԻՆ (կը կարդայ, կը յանձնէ կնոջ ու կը բացագանչէ).—Ալլահ ու աքպէռ։ (Պահ մը)։ Այդ վայրի գազանները մեր աւանները հրկիզեցի՛ն, մեր ժողովուրդը ցիրուցան ըրի՛ն, մեր տունները կողոպտեցի՛ն։ Մի՞թէ բաւարար չէր։

ԿԻՆԸ (կը կարդայ).—Ինչո՞ւ այլեւս մեզ կը պահանջեն։

ԼԷՅԼԱ.—Մա՛յր, ի՞նչ պիտի ըլլայ մեր բախտը։

ԿԻՆԸ.—Հպարտ իշխանի մը զաւակն ես, հպարտութեամբ ալ պիտի դիմագրաւես բախտը։ Հեթում արքան իր կարելին պիտի ընէ, զաւա՛կս։

ՀԵԹՈՒՄ (Լռուն է, այլ կողմ կը նայի)։

ՄԵԾ ՏԻԿԻՆ.—Հեթո՛ւմ արքայ, անօգնակա՛ն ենք։ Բախտի՛ն ենք ձգուած, ազատէ՛ մեզ այս կացութենէն։ Մօր մը պատուախնդրութեամբ կ'աղաչեմ, որ չյանձնե՛ս մեզ թաթարներուն։

ԿԻՆԸ.—Զաւակներու տէր ես, արքա՛յ, հասկցի՛ր մեզ։

ՀԵԹՈՒՄ.—Դուք ալ զիս հասկցէք, թաթարները ահռելի ուժ ունին։

ՄԵԾ ՏԻԿԻՆ.—Այո՛, զաւակս գիտէր այդ, բայց դիմադրեց։ Մինա՛կը դիմադրեց։ Ան գիտէր, որ անկարող է յաղթել թաթարներուն, սակայն չուզեց յանձնուիլ առանց պայ-

digitised by A.R.A.R.@

քարի։ Ուզեց իսկական զօրավարի պէս կռուիլ ու մեռնիլ։

ԿԻՆԸ.—*Պատերազմի դաշտէն ազատած զինուոր մը ըսաւ, որ ամուսինս առաջին շարքերու վրայ էր։ Ա՛ն էր, որ կը խրախուսէր զինուորները։*

ՄԵԾ ՏԻԿԻՆ.—*Ափսո՛ս, սպաննեցին իմ առիւծ տղան։*

ՀԵԹՈՒՄ.—*Ձեր տղան իսկական հերոս մըն էր, Մե՛ծ Տիկին, կ՚ընդունիմ։*

ՄԵԾ ՏԻԿԻՆ.—*Եւ հերոսի՛ պէս ալ մեռաւ։*

ԿԻՆԸ.—*Իր երկրին եւ ժողովուրդին համար մեռաւ։*

ՀԵԹՈՒՄ.—*Իսկական հերոսները չե՛ն մեռնիր, անմահ են։ Ատո՛ր համար է, որ իրենց մահէն ետք նոր հերոսներ կը ծընին։ Ես չեմ կրնար ձեր ճակատագիրը տնօրինել։ Թող Տէրը օգնէ ձեզի։*

ԼԷՑԼԱ.—*Մա՛յր, ես չե՛մ յանձնուիր թաթարներուն։ Ես չե՛մ յանձնուիր։* (*Վազելով դուրս կ՚ելլէ*)։

ԿԻՆԸ (*ետեւէն կը պոռայ*).—*Լէյլա՛, Լէյլա՛։*

ԶԱՊԷԼ.—*Եկէ՛ք ինծի հետ։ Ես ձեզ մասնաւոր թաքստոց մը կը պահեմ։ Երթա՛նք։* (*Դէպի դուրս կ՚ուղղուի*)։

ՀԵԹՈՒՄ.—*Զապէ՛լ, ի զո՛ւր է, ի զո՛ւր։*

ԶԱՊԷԼ (*անտեսելով Հեթումը*).—*Երթա՛նք։*

ՄԵԾ ՏԻԿԻՆ.—*Կեցի՛ր, տիրուհի։* (*Կը դառնայ Հեթումին*)՝ *եթէ մէյ մըն ալ չհանդիպինք, Հեթո՛ւմ, զաւակս, կ՚ուզեմ չնորհակալութիւն յայտնել, որ ապաստան տուիր։ Եթէ նոյնիսկ թաթարները մեզ առեւանգեն, կ՚ուզեմ գիտնաս, որ ես միշտ պիտի հաւատամ, որ քու կամքով չէ պատահած։ Կը գիտակցիմ, որ տկարութիւնը քեզ կը կաշկանդէ։ Մնաս բարով, զաւակս։* (*Կը մօտենայ եւ կը համբուրէ Հեթումի ճակատը*)։

ԶԱՊԷԼ.—*Երթա՛նք։* (*Կ՚առնէ հրովարտակը։ Դէպի դուրս։ Կը կենայ, կը դառնայ՝ Հեթումին կը նայի լուռ ու յանդիմանական*)՝ *Արժանապատուութիւնս անգամ մը ոտնակոխ եղաւ, երկրորդ անգամ թոյլ չե՛մ տար։* (*Կը նետէ հրովարտակը գետին*)։

ՀԵԹՈՒՄ (*կը վերցնէ հրովարտակը*).—*Արժանապատուութեան հարց չէ՛, ես թոյլ չեմ տար, որ երկիրս քարուքանդ ըլլայ եւ ժողովուրդս ոչնչանայ։*

ԼԵՒՈՆ.—*Ղայասսատինի ընտանիքը թաթարներուն յանձնել։*

ՀԵԹՈՒՄ.—*Որոշումը ես չառի, այլ պարտադրուեցաւ ինծի։*

ԼԵՒՈՆ.—*Եթէ ուզէիր՝ կրնայիր հարցը ձգձգել, մինչեւ որ Պաչուն հանդարտէր։*

ՀԵԹՈՒՄ.—*Պաչուն չի՛ հանդարտիր։ Վրէժխնդրութեամբ լեցուած է։ Ղայասսատինը անխոհեմութիւնը ունեցած էր Պաչուի*

digitised by A.R.A.R.@

հասցէին անարգական խօսքեր ըսելու։ Դուն պէտք է գիտնաս այդ ցեղին մէջ վրէժն ու պատուախնդրութիւնը իրարու կապուած են։

ԼԵՒՈՆ.—*Հապա մե՞ր ցեղին մէջ, հա՛յր։ Հաւատարմութիւնը եւ վստահութիւնը իրարու կապուած չե՞ն։*

ՀԵԹՈՒՄ.—*Լեւո՛ն։*

ԼԵՒՈՆ.—*Դուն հնարամի՛տ դիւանագէտ ես, պատրուակ մը չէ՞ր կրնար գտնել։*

ՀԵԹՈՒՄ.—*Հնարամտութեան սահմաններէն անցած է հարցը։*

ԼԵՒՈՆ.—*Այն ատեն գիտցի՛ր, որ ես Էջլա իշխանուհին կը սիրեմ։*

ՀԵԹՈՒՄ.—*Գիտե՛մ։*

ԼԵՒՈՆ.—*Գիտե՞ս, եւ...*

ՀԵԹՈՒՄ.—*Երիտասարդի սէրը հովի նման է՝ կ'անցնի։*

ԼԵՒՈՆ.—*Բայց, հա՛յր։*

ՀԵԹՈՒՄ.—*Կը մոռնա՛ս։ Նորե՛րը կը սիրես։*

ԼԵՒՈՆ.—*Բայց... հա՛յր...*

ՀԵԹՈՒՄ (*ուշադիր*).—*Կը լսեմ։*

ԼԵՒՈՆ (*Լուռ է*)։

ՀԵԹՈՒՄ.—*Լեւո՛ն իշխան, ըսէ՝ կը լսեմ։*

ԼԵՒՈՆ.—*Էջլա իշխանուհին, Թոռանդ մա՛յր պիտի դառնայ։*

ՀԵԹՈՒՄ (*անմիջական եւ բարձր*).—*Սո՛ւտ ես։*

ԼԵՒՈՆ.—(*Լուռ է*)։

ՀԵԹՈՒՄ (*ջղային*).—*Լեւո՛ն, ըսէ՝ որ սուտ ես։*

ԼԵՒՈՆ (*ճօրը վիճակը տեսնելով*).—*Պահէ՛ մեզ ու կ'ազատիս։* (*Դուրս*)։

ՀԵԹՈՒՄ.—*Սո՛ւտ է, սո՛ւտ։* (*Պահ մը*)։ *Թո՞ռս։ Մ՛չ, սո՛ւտ է։ Խա՛ղ է այս... աժան խաղ։* (*Պահ մը*)։ *Թո՛ռս... առաջին ժառա՛նգս։* (*Պահ մը*)։ *Ճարպի՛կ ես, Լեւոն։ Քի՛չ մնաց որ հաւատայի։*

ՍՈՒՐԷՆ (*կը մտնէ*).—*Տէ՛ր իմ, տէր իմ։*

ՀԵԹՈՒՄ.—*Սո՛ւտ է, Սուրէ՛ն, սո՛ւտ է։*

ՍՈՒՐԷՆ.—*Ի՞նչը, տէր իմ, ի՞նչը։*

ՀԵԹՈՒՄ.—*Ըսէ՛, Սուրէ՛ն։ Զինուորները Ղայասատրինի ընտանիքը տարի՞ն արդէն։*

ՍՈՒՐԷՆ.—*Այո՛, տէր իմ, չղթայակապ տարին։*

ՀԵԹՈՒՄ.—*Ձե՞ս կրնար քանի մը զինուորներով գոնէ Էջլան ազատել։*

ՍՈՒՐԷՆ.—*Մ՛չ, տէր իմ։ Էջլան ինքզինքը ազատեց։*

ՀԵԹՈՒՄ (*ուրախ*).—*Իրա՞ւ, ինչպէ՞ս։*

ՍՈՒՐԷՆ.—*Ինքզինքը ազատեց զինուորներէն եւ բերդի պատշգամէն ձորը նետուեցաւ։*

ՀԵԹՈՒՄ (*գլուխը ձեռքերուն մէջ կ'առնէ։ Շշուկով, ինքնիրեն*).—*Թո՛ռս։*

digitised by A.R.A.R.@

ՍՈՒՐԷՆ (*պահ մը*).—*Ի՞նչ, տէր իմ։*
ՀԵԹՈՒՄ.—(*Լռու է*):
ՍՈՒՐԷՆ.—*Որեւէ հրահանգ ունի՞ արքան։*
ՀԵԹՈՒՄ (*ինքզինքը վերագտած*).—*Դիւանապետին յայտնէ, որ իշխանական բարձրագոյն կարգով թաղեն իշխանուհի Լէյլան։*
ՍՈՒՐԷՆ.—*Շա՛տ լաւ, տէր արքայ։* (*Դուրս կ'ուղղուի*):
ՀԵԹՈՒՄ (*Սուրէնի թեւէն բռնելով*).—*Այս երկրին պատասխանատուն ես եմ եւ իմ ուսերուն կ'իյնայ զայն պաշտպանելու պարտականութիւնը։*
ՍՈՒՐԷՆ.—*Այո՛, տէր իմ։* (*Դուրս*):
ՀԵԹՈՒՄ (*պոռալով*).—*Ես թոյլ չեմ տար, որ երկիրս քարուքանդ ըլլայ եւ ժողովուրդս ոչնչանայ։*

(*Լոյսը դանդաղօրէն կը մարի Հեթումին վրայ*):

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ
(Արքայական բերդի պատշգամ մը)

ՀԵԹՈՒՄ ԵՒ ԶԱՊԷԼ (*Բեմին խորքէն կը յառաջանան։ Զապէլ տկար է։ Թէեւ կը փորձէ առանձինն քալել, յաճախ չի կրնար, կը յենի Հեթումին եւ թեւը կը բռնէ*):
ՀԵԹՈՒՄ.—*Զապէ՛լ, քանի մը օր առաջ էր ծննդաբերութիւնդ։ Հանգստանալու պէտք ունիս։ Արդեօք խոհեմութի՞ւն էր ոտքի ելլելդ։*
ԶԱՊԷԼ.—*Մ՛ւթ զաւակ բերեր եմ, իններո՞րդը տարբեր պիտի ըլլար։*
ՀԵԹՈՒՄ.—*Բայց ըսին, որ այս մէկը ամէնէն դժուարն է։*
ԶԱՊԷԼ.—*Ամէն ծննդաբերութիւն դժուար եղած է, դուն այստեղ չես եղած, որ տեսնես։*
ՀԵԹՈՒՄ.—*Եթէ քովդ չեմ եղած, այդ ակամայ եղած է։ Պարտականութիւն մը կամ կացութիւն մը զիս հեռու պահած է քեզմէ։*
ԶԱՊԷԼ.—*Է՛հ, թագաւոր ես եւ դեկավար։ Բազմատեսակ կեանք կ'ապրիս եւ ամէն մէկ կացութեան համար տիպար մը ունիս։* (*Պահ մը*): *Հեթո՛ւմ, երբ հետդ խօսիմ, յաճախ կը մտածեմ, ո՞ր մէկ տիպարը հիմա կը տիրէ քեզի։ Քաղաքագէ՞տը, խմաստո՞ւնը, երագրո՞ղը, թէ Հեթումը։* (*Պահ մը*): *Աւելի Հեթո՛ւմը կը փնտռեմ, ա՛ն՝ որ ազնիւ*

digitised by A.R.A.R.@

է։ Ան՝ որ զգայո՛ւն է։ Ան՝ որ գո՛ւթ ու գորո՛վ ունի։

ՀԵԹՈՒՄ.—Եթէ ակնարկդ սուլթանի ընտանիքը թաթարներուն յանձնելու մասին է, խնդրե՛մ, հասկցի՛ր, կա՛մ երեք հոգի պիտի զոհուէին, կա՛մ ամբողջ մեր ժողովուրդը։ Եւ նայէ՛, մեր ժողովուրդը, որ կրնար ոչնչանալ, ահաւասիկ կ՚ապրի, կը բարգաւաճի...

ՋԱՊԷԼ.—Եւ քեզի ինը զաւակ կու տայ։ (Պահ մը)։ Հեթո՛ւմ, մեր թագաւորներէն ո՞վ ինը զաւակ ունեցեր է։

ՀԵԹՈՒՄ.—Չե՛մ գիտեր։

ՋԱՊԷԼ.—Հօրս մեծ հայրը, Լեւոն Առաջինը եօթը զաւակ ունեցեր է։

ՀԵԹՈՒՄ.—Իսկ մենք մրցանակ հաստատեցինք՝ ինը զաւակ ունենալով։ Բայց ինծի կը թուի, որ տղադ՝ Լեւոնը, մեզ պիտի գերազանցէ։

ՋԱՊԷԼ (ցաւի կանչով).—Ա՛հ։

ՀԵԹՈՒՄ.—Զապէ՛լ, ի՞նչ եղաւ։

ՋԱՊԷԼ.—Ոչի՛նչ, խիթեր են, կ՚անցնին։

ԿՈՍՏԱՆԴԻՆ (կը մտնէ ցուպը ձեռքին).—Ողջո՛յն, զաւակներս։

ՀԵԹՈՒՄ (ոտքի կ՚ելլէ).—Ողջո՛յն, հայր։

ՋԱՊԷԼ.—Թող ներէ Կոստանդին պայլը, եթէ ոտքի չելլեմ։

ԿՈՍՏԱՆ.—Զաւա՛կս, դուն անկողին պէտք էր ըլլայիր։

ՀԵԹՈՒՄ.—Զապէ՛լ, ճիշդ կ՚ըսէ հայրս, երթանք։

ՋԱՊԷԼ.—Մ՛չ, կ՚ուզեմ քիչ մը դուրսը մնալ։

ԿՈՍՏԱՆ.—Չեմ գիտեր, թէ որքան խոհեմութիւն է այդ։

ՀԵԹՈՒՄ.—Անխոհեմութիւն է ըրածդ։

ՋԱՊԷԼ.—Անխոհեմութիւնը երբեմն աւելի՛ հաճելի է, քան խոհեմութիւնը։

ԿՈՍՏԱՆ.—Այդ կախում ունի կացութենէն։

ՋԱՊԷԼ.—Քաղաքագէտներուդ համար ամէն ինչ «կացութի՛ւն» է, մեկնակէտ, յենակէտ եւ վերջակէտ ունի։ Դուք չէ՛ք կրնար պարզ լեզուով խօսիլ։

ԿՈՍՏԱՆ.—Կեանքը կացութիւններու շարք մըն է, պէտք է միշտ հեռո՛ւն ծրագրել։

ՀԵԹՈՒՄ.—Հա՛յր, հիմա ժամանակը չէ։ Զապէ՛լ, երթանք։

ՋԱՊԷԼ.—Հեթո՛ւմ, կեցի՛ր, խնդրեմ։ Կոստանդի՛ն պայլ, ըսէ՛ խնդրեմ։ Ես, հօրս՝ Լեւոն թագաւորին հետ շատ առիթներ չեմ ունեցած խօսելու։ Հայրս կորսնցուցի, երբ տասներկու տարեկան էի։ Դուն պէտք է գիտնա՛ս։ Իր սպարապե՛տն էիր։ Ան ալ այսպէս կը մտածէր։

ԿՈՍՏԱՆ.—Ես իր սպարապետը, քեռորդին եւ ամէնէ՛ն հաւատարիմ զօրակիցն էի։ Այո՛, ա՛ն ալ այսպէս կը մտածէր։

ՋԱՊԷԼ.—Ուրեմն՝ ա՞ն քեզի սորվեցուց հեռուն ծրագրել։

digitised by A.R.A.R.@

ԿՈՍՏԱՆ.—*Ակնարկդ կարծեմ կը հասկնամ։*

ԶԱՊԷԼ.—*Եթէ չհասկնայիր՝ պիտի զարմանայի։*

ՀԵԹՈՒՄ.—*Զապէ՛լ, հանդարտէ, յուզումը կը մնասէ քեզի։*

ԶԱՊԷԼ.—*Թոյլ տուր, Հեթո՛ւմ։ Կոստանդին պայլ, քեզի պէս խոհո՛ւն դիւանագէտ մը ինչպէ՞ս կրնայ չհասկնալ։*

ԿՈՍՏԱՆ.—*Զապէ՛լ, խնդրեմ, հասկցի՛ր։ Մեր երկրին գոյատեւման համար շատ յաճախ անախորժ որոշումներ պէտք է առնուին։*

ԶԱՊԷԼ.—*Եւ զոհե՛ր պէտք է մատուցուին, այո՞։ (Ցաւի ճիչ մը)։ Ա՛հ։*

ՀԵԹՈՒՄ.—*Զապէ՛լ։*

ԿՈՍՏԱՆ (զուսպ ջղայնութեամբ).—*Եթէ ակնարկդ քեզի բռնի հոս բերելու մասին է, ապա դիտցիր, այդ ըրի, որ մեր պետականութիւնը շարունակուի։*

ԶԱՊԷԼ.—*Զիս մինակ թողէք։*

ՀԵԹՈՒՄ.—*Հա՛յր, խնդրեմ։*

ԿՈՍՏԱՆ (աւելի՛ բարձր).—*Իսկ եթէ կը մեղադրես, որ ամուսինդ սպաննել տուի··· այդ ըրի, որովհետեւ ան անարգեց թէ՛ քեզ, թէ՛ հայրդ եւ թէ մեր երկիրը։*

ԶԱՊԷԼ.—*Խնդրե՛մ, զիս մինակ ձգեցէք։*

ԿՈՍՏԱՆ.—*Այո՛, զոհեր պէտք է մատուցուին։*

ԶԱՊԷԼ.—*Զիս մինակ ձգեցէք։*

ՀԵԹՈՒՄ.—*Լաւ, լաւ։ Երթանք, հա՛յր, երթանք։ (Զապէլին)՝ Մենք այստեղ՝ մօտիկ տեղ մը կ'ըլլանք։ (Դէպի դուրս)։ Մարիամ, եկո՛ւր, տիրուհիդ մինակ է։*

ՄԱՐԻԱՄ (Կը մտնէ)։

ԶԱՊԷԼ (Գլուխը կը դնէ հանգչելու)։

ՀԵԹՈՒՄ ԵՒ ԿՈՍՏԱՆԴԻՆ (Կը յառաջանան բեմին աջ կողմը)։

ՀԵԹՈՒՄ.—*Հա՛յր, ինչո՞ւ այդպէս դաժան խօսեցար, չե՞ս տեսներ ինչ վիճակի մէջ է։*

ԿՈՍՏԱՆ.—*Հեթո՛ւմ, ա՛լ յոգնեցայ անոր մեղադրանքները լսելէ։ Համբերութիւնն ալ սահման ունի։*

ՀԵԹՈՒՄ.—*Լա՛ւ, ըսէ, ինչո՛ւ եկած ես։*

ԿՈՍՏԱՆ.—*Իշխանները կանխագուշակած են, թէ ինչ քաղաքականութիւն պիտի վարես եւ ատոր համար ալ խռովութիւն մը կը տիրէ ամէնուրեք։*

ՀԵԹՈՒՄ.—*Այս ի՞նչ բնաղդ ունին մեր իշխանները, որ կը կըռահեն իմ մտքերը։ Ես դեռ չեմ գիտեր, թէ ինչ ընթացք պիտի առնեմ։ Կացութիւնը մօտէն ուսումնասիրելու համար, Սմբատ եղբայրս ղրկեցի թաթարներու Բաչու իշխանը տեսնելու։ Միւս կողմէ՝ իշխան Ռուբէնը ղրկեցի Քրիստոնեայ Պէմոնտ եւ ժիլ իշխաններուն ուժերը չափելու։ Կ'ուզեմ արժեւորել ուժերը, տեսնել ո՞վ*

digitised by A.R.A.R.@

զօրաւոր է եւ ո՞վ՝ վստահելի։ Նախնական քանի մը քայլեր առած եմ միայն, բայց մեր իշխանները արդէն կռահա՛ծ են իմ մտքերը…։ Ա՛հ, այդ իշխանները։

ԿՈՍՏԱՆ.—Դուն չե՞ս ճանչնար մեր իշխանները։ Խօսելու փոխարէն, գործնական քայլեր պէտք է առնէիր։

ՀԵԹՈՒՄ.—Բայց գոյութի՛ւն ունեցող բաներուն դէմ կրնամ գործել, անգոյին դէմ ինչպէ՞ս կռուիմ, հա՛յր։

ԿՈՍՏԱՆ.—Անգոյին դէմ չե՛ս կրնար կռուիլ, տղա՛ս։ Միայն պիտի պատրա՛ստ ըլլաս…։ Մի՛շտ պատրաստ ըլլաս առաջին հարուածը տալու։

ՀԵԹՈՒՄ (Խորհրդաւոր՝ հօրը կը նայի)։

ՍՈՒՐԷՆ (Ներս վազելով).—Տէ՛ր իմ։

ՀԵԹՈՒՄ.—Ի՞նչ է պատահած։

ՍՈՒՐԷՆ.—Գոնիայի սուլթանի զօրքերը անցան մեր սահմանները եւ մեծ թիւով գիւղեր աւերեցին։

ԿՈՍՏԱՆ.—Ես կ՚ըսէի, որ այդ սուլթանը իր խոստումը կը դրժէ, չէիր հաւատար։

ՀԵԹՈՒՄ (Սուրէնին).—Սուրէն, յետո՞յ։

ՍՈՒՐԷՆ.—Արեւմուտքէն թշնամիները ասպատակեցին մեր հողերը։ Հարաւէն զօրքերը սկսած են շարժիլ։ Լեւոն իշխանը արդէն կռուի է բռնուած։

ՄԱՐԻԱՄ (կը պոռայ).—Տէ՛ր արքայ… թագուհի՛ն…

ՀԵԹՈՒՄ.—Ի՞նչ պատահեցաւ։

ՍՈՒՐԷՆ.—Տէ՛ր արքայ, ի՞նչ հրահանգ փոխանցեմ Լեւոն իշխանին։

ՄԱՐԻԱՄ (սաստիկ յուզուած).—Տէ՛ր արքայ, թագուհին անշարժ է։

ՀԵԹՈՒՄ.—Ի՞նչ։ (Դէպի Զապէլ կը վազէ)։

ՄԱՐԻԱՄ (սաստիկ յուզուած).—Թագուհի՛ս… թագուհի՛ս…

ՍՄԲԱՏ (արագօրէն կը մտնէ).—Հեթո՛ւմ, արքունի բանակին պէտք ունիմ։ Ճակատ պէտք է ղրկեմ։ Զօրք չմնաց։

ԿՈՍՏԱՆ (Սմբատին).—Շը՛շ։

ՀԵԹՈՒՄ (Զապէլը գրկած եւ բարձրաձայն).—Զապէ՛լ։

ՍՄԲԱՏ (կը մօտենայ Հեթումին եւ կը գրկէ։ Կոստանին).—Լեւոնը կանչել տա՞մ։

ԿՈՍՏԱՆ (գլխու ժխտական շարժում։ Սմբատին).—Երթա՛նք, Սմբատ, երթա՛նք։ Ղեկը ձե՛ռքդ առ։ Երկիրը արեան ծով կը դառնայ։

ՍՄԲԱՏ ԵՒ ԿՈՍՏԱՆ (Դուրս)։

(Կը սկսի երաժշտութիւն մը եւ լոյսը դանդաղօրէն կը մարի)։

digitised by A.R.A.R.@

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ
(Վայր մը բերդին մէջ)

ՀԵԹՈՒՄ *(Կեցած է բերմին կեդրոնը):*

ԵՕԹԸ ԵՂԵՐԱՄԱՅՐԵՐ *(Տարբեր անկիւններէ կը մտնեն: Սեւեր հագած եւ ձեռքերնին՝ վառուած մոմեր: Դանդաղօրէն կ'երերան, կը դառնան Հեթումի շուրջը եւ եղանակաւոր կը խօսին):*

(Միատեղ).—Թագուհին մեռաւ, թագուհին մեռաւ,
Մաղիկ հասակին անդարձ թօշնեցաւ։
Սիրտը պարզ, բարի, դուստրը Լեւոնի,
Վերջին թագուհին՝ Ռուբինեան տոհմի։
(Խումբը ռնգալին կը կրկնէ եղանակը):

Ա.— *Տէրը թող բանայ դուռը դըրախտի,*
Տառապած հոգւոյն մեր խեղճ Զապէլի։

Բ.— *Որբ են զաւակներն Հեթումեան տոհմի,*
Որբ են ազգ-ազինք՝ Հայոց աշխարհի։

(Միատեղ).—Թագուհին մեռաւ, թագուհին մեռաւ,
Մաղիկ հասակին արդէն թօշնեցաւ։

Գ.— *Իր երազները փչրեցան-անցան,*
Հիմա անապատ ու սուգ է համայն։

Դ.— *Ով որ ծանօթ է կեանքին Զապէլի,*
Վիշտ ու արցունքով պիտ՝ յիշէ զանի։

(Միատեղ).—Թագուհին մեռաւ, թագուհին մեռաւ,
Վիշտը Հեթումի սաստիկ խորացաւ։

(Մէկիկ-մէկիկ կը մօտենան եւ մոմերնին կ'երկարեն Հեթումին, որ մեղմօրէն կը փչէ ու կը հանգցնէ: Մոմերու մարելուն հետ՝ լոյսը կը նուազի: Վերջին մարած մոմին հետ բեմը կը մթնայ):

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ
(Նախկին վայրը)

ՀԵԹՈՒՄ.—*(Կեցած է նոյն տեղը: Լոյսը կենդրոնացած է, ապա կամաց-կամաց կը տարածուի):*

ԿՈՍՏԱՆ *(կը մտնէ).—Ողջո՛յն, զաւակս։*

ՀԵԹՈՒՄ.—*(Լուռ է):*

ԿՈՍՏԱՆ.—*Կը տեսնեմ կորուստիդ վիշտը։*

ՀԵԹՈՒՄ.—*Դուն ամէն ինչ կը տեսնես, հա՛յր։*

ԿՈՍՏԱՆ.—*Ո՛չ ամէն ինչ։ Կը տեսնեմ ա՛յն՝ որ տեսանելի է եւ կը լսեմ ա՛յն՝ որ լսելի է։*

digitised by A.R.A.R.@

ՀԵԹՈՒՄ.—*Բայց ես լուռ էի։*

ԿՈՍՏԱՆ.—*Երբեմն լռութիւնը աւելի՛ խօսուն է, քան խօսքը։ Պէտք է խոստովանիմ, թէեւ կը տեսնեմ եւ կը զգամ վիշտդ, սակայն չեմ կրնար կարդալ մտքերդ։ Ժամանակին այդ կրնայի ընել։*

ՀԵԹՈՒՄ.—*Ես վարժուեցայ մտքերուս դարպասները փակել, հա՛յր։ Յետոյ, ի՞նչ իմաստ ունի իմ աշխարհը պեղել։ Արդէն անձնական աշխարհն ալ չունիմ։*

ԿՈՍՏԱՆ.—*Մեր տոհմին ա՛յդ է վիճակուած, տղա՛։*

ՀԵԹՈՒՄ.—*Ո՛չ, հա՛յր, մեր տոհմին այդ չէ՛ր վիճակուած։ Դո՛ւն այդպէս ծրագրեցիր։ (Պահ մը)։ Ինձի այնպէս կը թուի, որ դուն տեղ մը, մագաղաթի մը վրայ, Հեթումեան տոհմի արքայանալու ծրագիրը մշակած էիր։ Եւ գիտե՞ս ինչը կը զարմացնէ զիս։*

ԿՈՍՏԱՆ.—*Ի՞նչը։*

ՀԵԹՈՒՄ.—*Որ դուն՝ ի՛նքդ արքայական գահին չբազմեցար, երբ առիթը հոն էր։*

ԿՈՍՏԱՆ.—*Գահը չէ՛ր նպատակս, այլ՝ հայրենիքիս ծառայութիւնը։*

ՀԵԹՈՒՄ.—*Օ՛հ, հայր, եկուր անկեղծ ըլլանք։ Գահը յաւերժութիւն է, իսկ ծառայութիւնը՝ ժամանակաւոր հմայք։*

ԿՈՍՏԱՆ.—*Եթէ գահը յաւերժութիւն է, այդ յաւերժութիւնը քեզի տուի, Հեթո՛ւմ։*

ՀԵԹՈՒՄ.—*Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ դուն չառիր գահը։*

ԿՈՍՏԱՆ.—*Հեթում, եթէ նպատակս գահին տիրանալ ըլլար, հաւատա՛, այդ գահը ես կ՚առնէի։ Եւ միջոցնե՛րն ալ ունէի... գիտցի՛ր...։ Բայց ես չե՛մ կարեւորը։ (Հպարտ ու ուրախ)։ Դուն՝ զաւա՛կս, ահա այսօր խրոխտ բազմած ես հայոց գահին։*

ՀԵԹՈՒՄ (դառնութեամբ).—*Ե՞ս բազմած եմ գահին, թէ ոչ՝ Հեթումեան տոհմի անունը։*

ԿՈՍՏԱՆ.—*Պատմութիւնը քեզ Հեթում Առաջին թագաւոր պիտի յիշատակէ, որպէս այս ժամանակները դարբնողը։*

ՀԵԹՈՒՄ.—*Ըսէ՛, խնդրեմ, չո՛ւս եղբայր էինք, ինչո՞ւ այս բեռը ի՛մ ուսերուն դրիր։*

ԿՈՍՏԱՆ.—*Ամէնէ՛ն յարմարն էիր։*

ՀԵԹՈՒՄ.—*Ե՞ս, տասնչորս տարեկան երեխա՞ն։*

ԿՈՍՏԱՆ.—*Այո՛ զաւակս, դո՛ւն։ Անդրանիկ տղաս՝ Սմբատը, արդէն ամուսնացած էր, Օշինը՝ նոյնպէս։ Բարսեղը քեզմէ փոքր էր։*

ՀԵԹՈՒՄ.—*Կը մնար տասնչորս տարեկան Հեթումը՝ բե՛ռը չալկելու համար... (Հեգնական)։ Եւ դո՛ւն, չորս տարի թէեւ առանց թագի, սակայն պիտի թագաւորէիր...*

ԿՈՍՏԱՆ.—*Անողոք ես, Հեթո՛ւմ։ Եթէ նոյնիսկ չորս տարուայ՝*

digitised by A.R.A.R.@

«անթագ թագաւորութիւն» ըրած եմ ինչպէս կը բանաձեւես, արդեօք վաթսուն տարուայ նուիրումիս համար չա՞տ է։ Ես կեա՛նք վճարած եմ ինծի նուէր տրուած չո՛ր «անթա՛գ թագաւորութեան» տարիներուն համար։ (Պահ մը)։ Զարմանալի է, ինչպէ՞ս այս կուտակուած դառնութիւնը այսքան երկար տարիներ ամբարած ես։

ՀԵԹՈՒՄ.—Թերեւս առիթը չէր ներկայացած խօսելու։ Այսօր բացառարար մտքերուս դարպասները լայն բացած եմ։

ԿՈՍՏԱՆ.—Այդ կը տեսնեմ։ Բայց ինչո՞ւ։

ՀԵԹՈՒՄ.—Ի՛նչ գիտնամ, թերեւս մէջս նստած այս խօսող տիպարը նոր խելքի եկաւ։

ԿՈՍՏԱՆ.—Ի՞նչ տիպարի մասին կը խօսիս։

ՀԵԹՈՒՄ.—Ա՛ն՝ որ Զապէլը կը սիրէր։

ԿՈՍՏԱՆ.—Հեթո՛ւմ, միտքդ մի տանջեր այդպիսի բարդ հարցերով։ Նոր հանգրուանի մը առջեւ կը գտնուիս։ Ժողովուրդ մը ունիս, որ քեզի՛ յառած է իր հայեացքը։ Ա՛ռ մուրճը ձեռքդ եւ ժամանա՛կը կռանէ։ Կռանէ՛ միշտ ժողովուրդին գերագոյն շահերը նկատի ունենալով։ Գիտցիր, զաւա՛կս, պատմութեան քառուղիներուն մինակդ կեցած ես։ Ո՛չ ոք պիտի հարցնէ, թէ ինչպէ՛ս հոս հասար, բայց պիտի հարցնեն, թէ ի՛նչ կատարեցիր։ Հաշուետուն ես չե՛մ, կամ՝ միւսը, այլ դո՛ւն՝ Հեթում թագաւորը։ Ա՛յս է անողոք հաշուեյարդարը կեանքին, անողոք ճշմարտութիւնը պատմութեան։ Գործդ՝ դրո՛շմ է պատմութեան, խարխափումդ՝ ճամբա՛ն է անէացման։ Գոյութեան եւ անէութեան այս պատերազմին մէջ, յաղթանակը առաջին հարուածողի՛ն կը պատկանի։ Հարուածէ՛։ (Դէպի դուրս կ'ուղղուի)։

ՀԵԹՈՒՄ.—Հա՛յր։

ԿՈՍՏԱՆ (կը դառնայ եւ յարգալից).—Այո՛, արքա։

ՀԵԹՈՒՄ (յուզուած).—Հա՛յր։

ԿՈՍՏԱՆ.—Կոստանդին պայլը, հրահանգի՛դ կը սպասէ, տէ՛ր արքայ։

ՀԵԹՈՒՄ.—Կը տեսնուինք Իշխանաց խորհուրդի ժողովին։

ԿՈՍՏԱՆ.—Շա՛տ լաւ։ Թող ներէ արքան, եթէ յիշեցնեմ, որ իրագործելիք շատ մը խնդիրներ ունի։ Թող աւելին ներէ, եթէ կեանքիս մէջ ռազմավարութիւնը յիշեմ՝ կարեւոր իրագործումները անխօս կը կատարուին։ Ի տեսութիւն, տէ՛ր արքայ։

ՀԵԹՈՒՄ.—Ի տեսութիւն, Կոստանդի՛ն պայլ։

ԿՈՍՏԱՆ (Դուրս)։

ՀԵԹՈՒՄ (Հօրը դուրս ելլելէն ետք).—Ի տեսութիւն, հա՛յր։

(Լոյսերը կը մարին)։

digitised by A.R.A.R.@

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ
(Հրապարակ բերդին մէջ)

ՀԵԹՈՒՄ *(Ներս կը մտնէ, կը քալէ խրոխտ ու հաստատ քայլերով կը յառաջանայ մինչեւ բեմին յառաջամասը)։*

ԿՈՍՏԱՆԴԻՆ, ՍՄԲԱՏ ԵՒ ԼԵՒՈՆ *(Կը հետեւին Հեթումին։ Կոստանդին գաւազանի օգնութեամբ դանդաղ կը քալէ)։*

ՀԵԹՈՒՄ *(դերակատարներուն մէկ մասը բեմին վրայ է, մէկ մասն ալ տարածուած են հանդիսասրահին մէջ)։—Իշխաններ, զօրակիցներ եւ ժողովուրդ։ Այսօր, բացառաբար, Իշխանաց խորհուրդի ժողովը ուզեցի փոխարինել այս ժողովրդական հաւաքով, որպէսզի տեղեկանաք իմ ծրագիրներուն։ Մեր երկրի խիստ ծանր կացութիւնը ծանօթ է բոլորիդ։ Շրջապատուած ենք։ Արեւելքէն՝ թաթարները, հարաւէն՝ իսմայիլցիները, հիւսիսէն՝ Գոնիայի սուլթանը, արեւմուտքէն՝ Պէմունդ իշխանը։ Որեւէ քաղաքական ընթացք պէտք է նկատի առնէ, որ թաթարները ամէնէն զօրաւորն են եւ ամէնէն վտանգաւորը։*

Ա. ԺՈՂՈՎԱԿԱՆ.—*Այս ի՞նչ քաղաքական ընթացք է։ Ռուբինեանները միշտ խաչակիրներու բարեկամ էին։ Ինչպէ՞ս եղաւ, որ դուն անաստուած թաթարներուն հետ կը բարեկամանաս։*

Բ. ԺՈՂՈՎԱԿԱՆ.—*Նոյնիսկ աղջիկդ՝ քրիստոնեայ կրօնքէ դուրս, Սուլէյման իշխանին հետ նշանեցիր։*

ՀԵԹՈՒՄ.—*Կը լսեմ ձեզ եւ ձեր մտահոգութիւնները։ Անհատի մը եւ ղեկավարի մը պարտականութիւնները տարբեր են իրարմէ եւ յաճախ՝ հակադիր։ Ղեկավարէն զոհեր կը պահանջուի։ Նշեցիք, որ դուստրս այլազգի Սուլէյմանին հետ նշանել տուի։ Թիշեցնե՛մ նաեւ, որ միւս երեք զաւակներս՝ Սիպիլը, Ռիթան եւ Մարիամը նոյնպէս ոչ-հայ, թէեւ քրիստոնեայ իշխաններու հետ ամուսնացուցի։ Բողքեցի՞ք, որ հայ չեն։ Կը կարծէք կ'ուզե՞մ զաւակներս օտար երդիքներու տակ տեսնել։ Ձեզի՛ համար առի այդ քայլը։ Խնամիական կապերով բարեկամութիւն հաստատեցի, որպէսզի ձե՛ր տունները ապահով ըլլան, որպէսզի ձե՛ր զաւակները մեր ազգի զաւակներուն հետ ընտանիք կազմեն։ Զոհը ե՛ս տուի, որ դուք ապահով ապրիք։*

Ա. ԺՈՂՈՎԱԿԱՆ.—*Զգացական հարցեր մէջտեղ կը հանես, որ ծածկես իսկական ոճիրդ։*

ՀԵԹՈՒՄ.—*Ըսէ՛, ի՞նչ է իսկական ոճիրս։*

Ա. ԺՈՂՈՎԱԿԱՆ.—*Դուն մեր մեծագոյն թշնամիին հետ բարեկամութիւն կը մշակես։*

digitised by A.R.A.R.@

Բ. ԺՈՂՈՎԱԿԱՆ.—*Այն թշնամին, որ Անիի մէջ հարիւր հազար մարդ ջարդեց։*

Գ. ԺՈՂՈՎԱԿԱՆ.—*Պատմութիւնը պիտի խարանէ՛ քեզ, Հեթո՛ւմ արքայ։*

Ա. ԺՈՂՈՎԱԿԱՆ.—*Մենք չե՛նք մոռցած մեր նահատակները։*

ՀԵԹՈՒՄ.—*Եթէ կը կարծէք, որ իմ այցելութեամբ ես նահատակները պիտի մոռնամ, կը սխալիք։ Նահատակները չե՛ն մոռցուած։ Անոնց պահանջնե՛րն ալ չեն մոռցուած։ Մեր մեծ հայրենիքը այսօր օտարին ձեռքն է։ Ուժ ունի՞ք ետ առնելու։ Տուէ՛ք ինծի այդ ուժը եւ ես ե՛տ կ'առնեմ։ Երբ բազկի ուժ չունինք, պէտք է դործածենք բանականութեա՛ն ուժը։ Մեզի համար այսօր ամէնէն էական մեր երկրին ապահովութի՛ւնն է։*

Բ. ԺՈՂՈՎԱԿԱՆ.—*Թշնամիդ քեզմէ աւելի՛ զօրաւոր է, ի՞նչ պիտի վճարես այդ երկրին ապահովութեան համար։*

ՀԵԹՈՒՄ.—*Ժողովուրդի մը ապահովութիւնը սուղ ապրանք է։ Բարձր գին կը պահանջէ։ Սակայն պիտի վճարես ա՛յն՝ որ գյուրեանդ հիմնական սիւները չի՛ խախտեր։ Թաթարները, գիտցէ՛ք, շատ զօրաւոր են։ Անոնց մէկ հարուածով մենք պատմութեան գիրկը կ'իյնանք... կը կորսուի՛նք... կ'անէանա՛նք։ Ես այսօր, այո՛, կ'երթամ թշնամիս ոտքը։ Աւելի լաւ է ես անձնապէս անարգուիմ, քան դուք ոչնչանաք։ Ըսէ՛ք խնդրեմ, ուրիշ ելք ունի՞նք...։ Ջիս երբեք չի մտահոգեր, թէ գալիք դարերը կամ պատմաբանները ինչ պիտի մտածեն իմ մասիս։ Իմ մեծագոյն նպատակն է, որ ինձմէ ետք մեր պետականութիւնը շարունակուի։ Մնացեա՞լը՝ դաւաճանութիւն, քծնութիւն, անարգանք, ես գիտակցաբա՛ր կ'ընդունիմ։ Ուրեմն ես վաղն իսկ ճամբայ պիտի ելլեմ դէպի Քարա Քորում, Մանկու խանին այցելելու։ Երկար եւ վտանգաւոր ճանապարհ է, բայց պիտի երթա՛մ։ Հարցումս նախ իշխանական դասուն ուղղեմ։ կա՞ն անհատներ, որոնք կը փափաքին ինծի ընկերակցիլ պատմական այս ուղեւորութեան։ (Կը սպասէ պահ մը։ Պատասխան չկայ)։ Իսկ ժողովուրդէն մարդ կա՞յ, որ կ'ուզէ ինծի միանալ։*

ՄԱՐԿՈՍ ԵՒ ԱՏԱՐ (*Կը յառաջանան բեմ*)։

ՀԵԹՈՒՄ (*Մարկոսին եւ Ատարին*).—*Դուք իսկապէ՞ս կ'ուզէք ինծի ընկերակցիլ։*

ՄԱՐԿՈՍ ԵՒ ԱՏԱՐ.—*Այո՛։*

ՀԵԹՈՒՄ.—*Դուք գիտէ՞ք որքան վտանգաւոր ճանապարհ է։*

ՄԱՐԿՈՍ ԵՒ ԱՏԱՐ.—*Այո՛։*

ՀԵԹՈՒՄ.—*Եւ դեռ կը փափաքիք հե՞տս գալ։*

ՄԱՐԿՈՍ ԵՒ ԱՏԱՐ.—*Այո՛։*

digitised by A.R.A.R.@

ՀԵԹՈՒՄ.—*Դուք իրար կը ճանչնա՞ք։*
ՄԱՐԿՈՍ ԵՒ ԱՏԱՐ.—*Մ՛չ։*
ՀԵԹՈՒՄ (*Մարկոսին*).—*Չինուորակա՞ն ես։*
ՄԱՐԿՈՍ.—*Մ՛չ, տէ՛ր արքայ, դերասա՛ն։*
ՀԵԹՈՒՄ.—*Դերասա՞ն։*
ՄԱՐԿՈՍ.—*Յո՛յն դերասան։ Եկած եմ ձեր երկիրը թատերական շրջապտոյտի։ Իմ առաջին փափաքը՝ հայոց արքային իմ շնորհքը ներկայացնելն է։ Կը յուսամ արքան այդ առիթէն չի զրկեր զիս։ Երկրորդ, չէք կրնար երեւակայել, տէ՛ր իմ, որ այս ուղեւորութիւնը ի՛նչ հարստութիւն է դերասանի մը համար։ Նո՛ր վայրեր տեսնել։ Նո՛ր մշակոյթ սորվիլ։ Նո՛ր կենցաղի ծանօթանալ։ Պղատոն ըսած է՝ «Մարդը կենցաղ է, եւ կենցաղը՝ մարդ»։ Զիս Ձեր խումբին մէջ ընդունելով, օրհնութիւն մը կրած կ՛ըլլաք։ Երբ Աթէնք դառնամ, Ձեր գովքը պիտի հիւսեմ։*
ՀԵԹՈՒՄ.—*Ձեր անո՞ւնը։*
ՄԱՐԿՈՍ (*լայն խոնարհումով*).—*Դերասան Մարկոս։*
ՀԵԹՈՒՄ.—*Յուսամ առիթը կ՛ըլլայ արուեստդ վայելելու։*
ՄԱՐԿՈՍ.—*Դերասանի մը դրախտը բեմն է, տէ՛ր իմ։ Հոն մեռնիլը կեանքէն աւելի քաղցր է։ (Լայն խոնարհումով)՝ Խորագո՛յն յարգանքս ձեզի, տէ՛ր արքայ։ (Ետ կը քաշուի)։*
ՀԵԹՈՒՄ (*Ատարին*).—*Իսկ դուն, անունդ ի՞նչ է։*
ԱՏԱՐ.—*Ատար, տէ՛ր իմ։*
ՀԵԹՈՒՄ.—*Դո՞ւն ալ դերասան ես։*
ԱՏԱՐ.—*Մ՛չ, տէ՛ր իմ։*
ՀԵԹՈՒՄ.—*Ի՞նչ ես։*
ԱՏԱՐ (*ցած*).—*Աւազակ։*
ՀԵԹՈՒՄ.—*Ի՞նչ։*
ԱՏԱՐ.—*Աւազակ։*
ՀԵԹՈՒՄ.—*Աւազա՞կ։ Եւ ինչո՞ւ կ՛ուզես հետս գալ։*
ԱՏԱՐ (*կը փորձէ Մարկոսին պէս խօսիլ*).—*Տէ՛ր իմ, չէք գիտեր, թէ ի՛նչ դրախտի մէջ պիտի նետէք զիս։*
ՀԵԹՈՒՄ.—*Դրա՞խտ։*
ԱՏԱՐ.—*Այդտեղի բոլոր հարստութիւնը պիտի գողնամ եւ մեր երկիրը բերեմ։*
ՀԵԹՈՒՄ (*հազիւ խնդուքը զսպելով*).—*Եւ յետո՞յ։*
ԱՏԱՐ.—*Աղքատներո՛ւն պիտի բաժնեմ։*
ՀԵԹՈՒՄ.—*Դուն ի՞նչ տեսակ աւազակ ես։*
ԱՏԱՐ.—*Ազնի՛ւ աւազակ։*
ՀԵԹՈՒՄ.—*Ազնիւ աւազա՞կը ով է։*
ԱՏԱՐ.—*Ա՛ն՝ որ հարուստէն կ՛առնէ եւ աղքատի՛ն կու տայ։*
ՍՄԲԱՏ (*կը մօտենայ ընդհատելով*).—*Տէ՛ր իմ, կարեւոր նիւթի մը մասին ձեզի հետ պէտք է առանձին խորհրդակցինք։*

digitised by A.R.A.R.@

ՀԵԹՈՒՄ (*Մարկոսին եւ Ատարին*).—*Գացէ՛ք, յետոյ ձեզի լուր կու տանք։*

ՀԵԹՈՒՄ.—*Սմբատ, լսեցի՞ր, ի՞նչ հետաքրքրական մարդիկ էին։*

ՍՄԲԱՏ.—*Հեթո՛ւմ, յուսամ լուրջ չէ արտայայտութիւնդ։*

ՀԵԹՈՒՄ.—*Մ՛չ, չա՛տ լուրջ է։ Ի՛նչ անկեղծութիւն։*

ՍՄԲԱՏ.—*Հեթո՛ւմ, կատա՞կ կ՛ընես։*

ՀԵԹՈՒՄ.—*Մ՛չ, սիրելի եղբայրս, կատակ չէ՛։*

ԼԵՒՈՆ.—*Հա՛յր, այս ողորմելիները ինչո՞վ կրնան օգտակար ըլլալ քեզի…*

ՀԵԹՈՒՄ.—*Շատ բանով…*

ՍՄԲԱՏ.—*Օրինա՞կ…*

ՀԵԹՈՒՄ.—*Յետոյ կ՛ըսեմ։*

ՍՄԲԱՏ.—*Ժողովուրդին բերնին մէջ ծաղր ու ծանակ պիտի դառնաս։*

ՀԵԹՈՒՄ.—*Թող առաջադրութիւնս իր նպատակին հասնի, որո՛ւ հոգը, թէ ի՞նչ պիտի ըլլամ։*

ՍՄԲԱՏ.—*Ձեմ հասկնար քեզ, չե՛մ հասկնար…*

ՀԵԹՈՒՄ.—*Խնդրեմ կարգադրէ, որ Դերասան Մարկոսը եւ Ատարը բերդին մէջ յարմար տեղ մը գիշերեն։*

ՍՄԲԱՏ.—*Ձե՛մ հասկնար, Տէ՛ր վկայ, չե՛մ հասկնար։*

ԿՈՍՏԱՆ (*մօտենալով*).—*Հեթո՛ւմ, ի՞նչ կը ծրագրես։*

ՀԵԹՈՒՄ.—*Կարեւոր իրագործումները անխօս կ՛իրականան։ Ա՛յդ սորվեցուցիր ինծի, հա՛յր։*

ԿՈՍՏԱՆ.—*Իրաւո՛ւնք ունիս։ Նայէ որ չսայթաքիս։*

ԿՈՍՏԱՆ, ՍՄԲԱՏ ԵՒ ԼԵՒՈՆ (*Կոստան շենած է Սմբատի ուսին։ Դուրս*)։

ՀԵԹՈՒՄ (*պահ մը*).—*Պիտի փորձեմ, հա՛յր։ Պիտի փորձեմ կարելի՛ն եւ… անկարելի՛ն։*

(*Լոյսը դանդաղօրէն կը մարի*)։

(Վերջը յաջորդով) ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ծ. ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՍՏՈՒԱԾ

հայեցողական ցանկութիւն մը
տարասփիւռ
աստուածային մեծ լռութեան ընկալում
երրորդութիւն եւ միութիւն ուղղափառ,
երբոր ծնիս ու մեռնիս աստուծոյ,
պատրանքի կեանք մ'անհեթեթ իմաստնացող առաւել
ու մարմինդ կը նուիրես, ու հոգիդ
պիտի բաշխես ամէնքին.
օրէն պատարագ էր ամոքիչ
աստուած վերջդ էր,
որ կը փրկէ՛ր քեզ մոգութենէ եւ մահէ
երանական քիլ մարմին մը շղարշէ
պարուրող քեզ
եթէ եղար խօսքին մէջ
ու լռութեանն աստուծոյ,
աստուած սերն էր
(գաղտնի սէրե՛ր արգիլուած)
արիւններդ կ'երգէին
օ՜ միստիք արքնութեան մը երանաւէտ մեղմ կանչը
զանգակներ դժոխք դրախտ
տարականոն ճեղքուածքէ մը
մազապուրծ փրկութիւնս կ'ենթադրեմ,
սա էջերուն աչքին մէջ
հլոոդ անձս կը փորփրեմ կը գծեմ,
թուղթ ու գիրի օրէնքը գիս աւելի
աւելի՛ մօտիկցնող միութեան
աստուծոյ տարակերպոն ցանկութեան,
օ՜ մեծ լռութիւն հայեցող
ամենամեծ վերքն ես
որ կը բուժէ անձս աշխարհէն ու մահէն,
աստուածս, ով էր աստուած,
(մտերմական բայց հաւատարիմ բայց զգլխիչ սիրեկա՛ն)

Պէյրութ, 30 Հոկտեմբեր 1994

digitised by A.R.A.R.@

ՍԻՐՈՅ ԱԽՏ

սէրը հիւանդ կ'ընէ զիս,
զերթ հիւանդութիւն մը դաժան անողոք
կը խլէ զիս, կը պատռէ
եւ կ'անուշէ, կը մեղմէ
հոգիս կ'իյնայ սիրոյ խոնարհ խորանին
ուր կ'այրի ան, զերթ հրաբորբ ողջակէզ,
սէրը անձկութիւնս է մոլեգին
մերթ ամլացնող մերթ յուռթի
քաղցրաբարոյ ու կրքոտ պարտէզն է օ՛ սէրը
սէրս աստուած է, որ կու գայ, անակնկալ կը խօսի
սէրս սէրն է տիեզերքը ամրացնող
սիւն մըն է ան տատանուող խօլ ու մեղկ հովերու
արդի հիւանդութիւն մը կարծես, որ կ'օրրէ զիս
եւ կը պատրէ կը զգլխէ
ի՜նչ-ի՜ թէ սիրախտն ըլլամ
կարծր քաղցր ու ամբո՛ղջ

Պէյրութ, 1 Նոյեմբեր 1994

ԵՐԿՈՒՆՔ

ծննդական անձկութիւն երիկամս փորփրող
քաղցրերգութեան տենդ մը չափաւոր
խորունկ ձայներ զիս կանչող կամրջող,
ո՞ւր է գիշերս անլուր,
խորտուբորտ առասպելի մը խռով եզերքին
եթէ կ'երկնես՝ կ'ուրախանաս կը ծնիս
մեղրամոմէ օրե՜ր անձանձիր
մաղմաղ կրակ խենթեցնող
ու մերթ մոլեգնութիւնդ հեզնօրէն համարձակ,
բա՛ց տարածքը ծովացող ու ծոցուոր

Պէյրութ, 5 Նոյեմբեր 1994

digitised by A.R.A.R.@

ԲԱՆԱՍՏԵՂԾ

գրող ու գրողուհի, երկսեռ էակ անյագուրդ,
որսորդութիւն եւ նաւակ՝ ծովուն վրայ ծիրանի
դժուա՛ր մատեան անմեկին,
որ կը ստեղծես արուեստակեալ գիշերուան,
անձուկ զուլալ անխոռով օ՛ բանաստեղծ(ուհի)
«տօն է հոգւոյս՝ Կիրակի»
«գրող եղար տղաս, անօթի» եւայլն...
պէտք էր մոռնալ, չյիշել
հովերուն դէմ արբշիռ նաւարկել
սուրբ է օրը ու մահամերձ արեւը
«ծովուն վրայ ծիծառներ աղկիոն»
ահեղ ուրախ սէրը լոկ
որ գրելով արարելով կը հիմնեմ
գրողուհի մոխրածին,
պատկերաւոր կրակներ կտոր-կտոր կ'ակօսեմ,
օ՛ նեղքուածք գրութեան
սէրդ ի ծնէ պատռուածքին ցանկացող
պալատական կնքեալ հեքիաթներ՝ մե՛ծ տօնի մը նշան

Պէյրութ, 10 Նոյեմբեր 1994

ԱՆՈՒՐՋ

անրջական զուարճասէր ալիք
ծովային մութ ծփանք
անդին ծառուղի մը, բացուող խոլական արեւի
միջերկրականեան մսկոտ օդ
տերեւներ դափնիի, թուզ, ձիթապտուղ
մեղկացնող տօն՝ ու հին չաստուած մը
ապազդեցիկ ապազէն
թմբիրի պագշոտ պարտէզ
բարի խառնակութիւն տրէ ամսուն մեղսական
եւ անկարգ փչումը մոգ լեզուին
թուփերուն մօտ թպրտող,
ժառանգական սարսուռներ գրողի սեղանիդ

Պէյրութ, 13 Նոյեմբեր 1994

digitised by A.R.A.R.@

ԲԵՄ

առաւօտը կը ծագիս երազներուդ կապտափրփուր զամբիւղէն՝
անձրեւային նոյեմբերեան արահետ, ուր
գիրերուն հետ կը խայտաս
ծիրանեգոյն բուրվառները կ'անրջես
տաճարի հրաբերան գմբէթիդ
(եկեղեցին հայկական խօլական բեմն էր հոգւոյս)
տարուբերող մակոյկներ կան ծովուն վրայ բերկրացող
բայց կը սկսի առօրեայ օրհասն ահաւոր
կամուրջները այրելու խուլ ցանկութիւնս էլի՛
կանաչ արեւ թարմ գօտի
մերկ սէրեր մանկամարդ
կը բեմադրես խաղերդ ծպտումներդ (ո՞վ ցաւ)
եթէ ծծես կեանքի հաշիշը խո՛տը
գուցէ ըմպես ամպրոսն ու նեկտարը շատ քաղցր
աստուածներու մահացու սեղանէն,
բեմին վրայ աթոռ մը,
դատարկ իսպառ իրական

Պէյրութ, 15 Նոյեմբեր 1994

ՍԻՐԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ

ըստ Օվիտիուսի եւ ըստ Սափոյի
սիրել ու հիւծիլ, բայց ալեկոծիլ յար
միշտ սիրահետել նո՛ր գեղեցիկը
երբե՛ք չյոգնիլ ու չկշտամբել
ազատօրէն ապրիլ սիրոյ արհեստը
սիրելուն արուեստը սորվիլ, չխամրիլ
չտարակուսիլ, չայլասերիլ
ըլլալ քաղցրիկ ու մերթ մոլեգին
դրանդ սեմը վարդերով օծել
որ չանիծէ՛ քեզ սիրոյ չաստուածը
չքնաղ էրոսը՝ սիրակէզ տղան
կիսամութին մէջ մնալ ու ցանկալ

digitised by A.R.A.R.@

մինչեւ որ հասնի սէրդ նետահար
ներս հրաւիրէ՛, թող ուրախանանք
որպէսզի խելոի չաստուածը սիրոյն
տօնել պահը վայրը եւ խաղը
լեզուով պանծացնել անունը սիրուն
օ՜ սիրայօժար
զերթ Օլիմպիոսը, զերթ Սափոն մոլար

Պէյրութ, 20 Նոյեմբեր 1994

ՀԱՆԱՊԱՐՀ

ո՜վ անձնուրաց՝ Ղարաբա՛ղ
կախարդիչ հայեացքը տատիկներուդ՝ հրաւիրող ու հպարտ
նորի՛ց երգող օ՜ Շուշի, արծուաբերդ ու օրրան
հերոս ժիգոյին ձայնը՝ առիւծ, ամբո՛ղջ մարդեղէն
տարատեսակ ըղձանքներ Արցախի ճանապարհին
ուր անմահութիւն կայ՝ կեանք կայ
ազգիս լուռ վէրքը բժշկող հինաւուրց Արարատ
որ շուտով կու գայ
Արցախին, խորհրդաւոր հարուստ իր սրտին
ծննդական խորունկ արեւելք՝ տօնածառ մը առանձին
արդի Երուսաղէմն Արցախ
ապառաժներ ալեւոր անդնդախոր բարձրաբերձ
ամայութիւն մաքրացնող, առօրեական արմատ հայերէն
թողէք որ մնամ հոն
ուր բարի կեանք մը հիմա ձեւաւորեց քառսը
կ՚ուզեմ երթալ հոն
ուր մահ կայ, անմահութի՛ւն

Պէյրութ, 26 Նոյեմբեր 1994

digitised by A.R.A.R.@

ԼՈՒՍԱՆՑՔ

ընտանի լուսանցք (գունագեղ ծուղակ)
լիքանանեան մահամերձիկ մոլոշ առօրեան
հոս կեանքը խարուսիկ էր, կանաչ մեծ ծովու եզրին
խօլ փայլերու ծիրանին խոյացող
դէպի անդունդը սրտի մը մահատրոփ
ուր կան ամպեր ու անձրեւ ու թնդիւններ պռոթկումի
մահն անգամ հոս անորոշ ու մտերմիկ լուսանցք էր
կը տոկաս ո՛վ մոլի տակաւին
(դուստր բայի արբեցող)
արնաշաղախ տառեր կայի՞ն սրտի՛դ հոգեվար
հոգիի մոլորեցուցիչ հեքիաթներ ու հուրքդ բիլ լեգենդի
սիրելիս լուսանցք ապերասան անապատ
ոչ մի հեքիաթագեղ խենթօրէն լուսնկայ
եւ ոչ մէկ լոյս մօտիկցող կամ հեռակայ

Պէյրութ, 2 Դեկտեմբեր 1994

ՅԱՆԿՈՒԹԻՒՆ

կրակոտ ափին ծովը մթնեց,
հրդեհուած ու լուսեղ աչքը ընական շունչ մը կ'առնէ,
ափիբերան աղջիկը երէկ երազիս՝
հովէն յետոյ յանկարծական առաւօտը կը ծագի,
համբոյրին հետ անակնկալօրէն պա՛րզ,
վարսերդ թօթափող նո՛ր օր եւ յուզում
տունուտեղդ ել հաւաքէ ծիսաբար
մեկնումի ժամը կու գայ յեղակարծ,

Պէյրութ, 3 Դեկտեմբեր 1994

digitised by A.R.A.R.@

ԽԱՂԱՂ

տօն օրուան խաղա՛ղ օդ
գողտրիկ մոմեր ու ցնորական լամբիոնները
(երջանկութիւն՝ ալեծածան խաբուսիկ)
ի՜նչ ամպրոպ խռովութիւն խաղաղ ծոցին տօներու
եղեւին՝ Լիբանանի մայր
եռապատիկ հուրբ եւ աշխոյժ ըղձական
ժապաւէնը ժամերուդ պիտի խզուի՞ մօտալուտ
ծուռ ճրագներ՝ մառախլապատ խոր կանթեղ
խաղա՛ղ տօնին սիրտեր ինչու ընդոստ կը յուզին
(բախտաւոր անդորրութիւնն օրերուն)

Պէյրութ, 18 Դեկտեմբեր 1994

ԱՐԵՒ

ծառուդիով անցանիք մտամոլոր ես ու դո՛ւ,
տերեւներու խշրտուքը կը մտրակէր երիտասարդ արիւններ
մահամերձ օր՝ կեանքի ցաւը ալեկոծ, համբ, փախչող,
դառն հեշտանքի արհաւրալից ժամանակ մը,
բայց տունէ տուն պայծառացող բիլ արեւը գիրերուս
զգայասէր փետրուարեան արդի եղանակ
կը ծնիս արդեօք՝ ճաշակուած բոլո՛ր մահերէդ յետոյ
երկրին երկնքին ջուրի ալիքին,
կ'այրէր խորունկ յիշողութիւնը երէկիդ
բոսոր արեւ ջրամոյն

Պէյրութ, 2 Փետրուար 1995

digitised by A.R.A.R.@

ԾՈՄ

բաճաստեղծական համբ ծոմ,
խոռվքի օրինական նուազում,
տարօրինակ մի վայրէջք
սրբազան լերան կողին,
մինչեւ ուր, ո՞վ աստուած,
անորոշութեան մռայլ մէգը ինձ տանող
աշխարհածովն անէութեան,
(կապոյտ բարակ մակերեսը օրերուն)
ու կարմիր ծաղիկ մը հովին՝
երազիդ առագաստը նաւարկող
(օ՜ ջուրերու առեղծուած յարանոր)

Պէյրութ, 9 Փետրուար 1995

ՏԵԱՐԸՆԴԱՐԱՁ

փետրուարեան դիւթական եղանակ,
հոգիս արիւնով ներկեցաւ
կարմիր սիրտեր այս տօնին օ՛րդ կախարդ կ՚ընծայեն
վաղը նորէն տարեդարձ է
(ու տխրած ուրախութիւն)
անցաւոր սէրեր յիշեցի
մեծ սէր մըն ալ ապառնի
որ կ՚ուռճանայ կը խոկայ,
սուրբ անուն մը սիրեցի,
գաղտնի զոհ ու պատարագ
յաւիտեանէ՜ յաւիտեան

Պէյրութ, 14 Փետրուար 1995

digitised by A.R.A.R.@

ԳԱՐՈՒՆ

ողբերգությաան ծոցէս սկսող գարուն
մահու ընդերքին մէջ բռնկած ու սեւ
անձկագին չգոյ արեգ
հեռաւոր հեշտանքի ժամեր
ծովերու դիմաց՝ մեկնումի ըղձանք
բայց անտարբեր ու սիրալիր աշխարհ

Պէյրութ, 2 Մարտ 1995

ՇՈՒՇԻԿ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ

digitised by A.R.A.R.@



ՀՈԳԵՒՈՐ ԲԺԻՇԿԸ

Բժիշկի վկայականէ զուրկ եմ,
բայց զիս կարգեր էք հոգեւոր բժիշկ։

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Արդէն Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա.ի անձին բարեմասնութիւնները, ինչպէս եւ կատարած գործերուն այլազան երեսներն ու անոնց դրական յատկանիշները կշիռքի զարնուեցան դարձեալ եւ անոնց լոյսին տակ մարդոց մտածողութեան մէջ ուրուացան հոգեւոր ու ազգային այն հեռանկարները, որոնց պսակումին համար ոչ ոք կը տարակուսի։

Էջմիածնայ գահին առիթով, միշտ կը յիշուին ու անպայմա՛ն պիտի յիշուին կարմիր բռնակալութեան եօթանասուն տարիները, որոնց ընթացքին Աստուծոյ ու աստուածային բաներու կապուած համարեա՝ ամէն ինչ ենթարկուեցաւ բացասական վերաբերումներու, թալանի, աւերի, ամլութեան, արիւնահեղութեան, ու աննախընթաց բռնակալութեան այդ տասնամեակներուն Լուսաւորչի գահուն բարձրացած նախորդ չորս կաթողիկոսներէն ոչ մէկը ի վիճակ եղաւ լրիւ ծառայել իր կոչումին ու կենսագործել եկեղեցական ու ազգային իր երազները։ Գէորգ Ե. եւ Գէորգ Զ. ողբերգական պայմաններու մէջ վարեցին իրենց պաշտօնները, Խորէն Ա. ի՛նքը ողբերգութիւն մը եղաւ, իսկ Վազգէն Ա. բոլորեց կիսաողբերգական քառասնամեակ մը։ Ըսինք կիսաողբերգական անոր համար, որ նախորդներուն մթնոլորտին պէս հեղձուցիչ չէր Վազգէն Վեհափառի ապրած մթնոլորտը, բայց նաեւ երբեք այն ճեռնաու միջավայրը չէր, որ իշխող շրջանակներու մտայնութենէն տարբեր տեսիլքներու կարելի ըլլար մարմին տալ։

Քաղաքական առումով Էջմիածնայ վերջին հինգ գահակալներուն ամէնէն բախտաւորը, անկասկած, Գարեգին Ա.ն է, եւ ճիշդ

digitised by A.R.A.R.@

այդ պատճառով իր ուսերուն կը դրուի այլապէս ծանրագոյն լուծը, սեփական տեսլականները կեանքի կոչելու մեծ պարտքին հետ՝ նա՛եւ իր նախորդներուն անկատար ձգած գործերը պսակելու աշխատանքը, որուն տակ վստահաբար պիտի չկքի ինք։ Երեւակայութեան տէր, կարելիութիւնները չափելու բնազդով օժտուած, եռուն խառնուածքով մը աշխարհ եկած բնաւորութիւն՝ Գարեգին Վեհափառը եկեղեցական, վարչական, դասախօսական, գրական, հրատարակչական մարզերէն եւ ո՛չ մէկուն մէջ յուսախաբ ըրած է մեր ժողովուրդը եւ վստահաբար նուիրապետական աթոռներու բարձրագոյնին բարձունքներուն միխիթարական աւելի մեծ իրագործումներու հաղորդ պիտի դարձնէ ազգային ու հոգեւոր սնունդներու կապակցութեամբ սովահար ու ծարաւահիւծ իր հօտը...

Առանձնացնելու համար իր գործունէութեան մէկ երեսը, կանգ առնենք գիրքերու հանդէպ ունեցած պաշտամունքէն առաջացած գործունէութեան առիթեւ։

Գրական ու մշակութային ճակատներու վրայ վերջին մեր մէկուկէս տասնամեակը, հակառակ իր դահակալութեան տարիներուն Լիբանանի պարզած դժնդակ պատկերին, ստացաւ տարբեր երանգ մը, նախանձախնդրութեան ծնունդ աշխուժութիւն մը, թա՛փ մը պիտի ըսէինք, ստեղծագործական, հրատարակչական ու գրատարածման եռեակ իմաստներով։ Թիւով քիչ չեն ու թուական իրենց համարին չափ այլազան են իր գրիչով երկնուած գործերը, ու այն միւս գործերը, որոնք գրուեցան, ուսումնասիրուեցան կամ խմբագրուեցան իր քաջալերանքով ու հովանաւորութեամբ։ Իր հեռեւողական հետապնդումներուն, կարելիութիւններ ստեղծող հմայքին, հայ մշակոյթին համար մարդերը զոհաբերութեան մղող իր ներշնչումներուն կը պարտինք այն մեծիմաստ ու մեծածախս հատորները, որոնց պակասը հոգեպէս սովահար պիտի ընէր հազար հազարներ, եւ որոնք պիտի չհասնէին ազգային ու միջազգային այն մատենադարաններուն ու անհատ մտաւորականներուն, որոնց երախտագէտ զեղումները անպայման մաս պիտի կազմեն մշակութային մեր պատմութեան։

Գարեգին Վեհափառին կապուած գիրքերու պատմութեան մէջ անպայման առանձին գլուխ մը պիտի կազմէ հայ գիրքի ցուցահանդէսը, որ Կիլիկիոյ հայոց կաթողիկոսութեան կոչումին արժանացած տարին սկսաւ ու չմնաց պարագայական խանդավառութեան մը մէկ առանձին պոռթկումը, այլ շարունակուեցաւ անընդմէջ, նոյնիսկ տեղատարափ անձրեւներու տակ, նոյնինակ ռումբերու տեղատարափին տակ, ամբողջ տասնվեց տարի, հազարաւոր անձեր վարակելով հայ գիրքին սէրով։

Ցաջորդող էջերուն կը ներկայացնենք իր հովանաւորած վերջին ցուցահանդէսին արտասանած խօսքը, մաղթելով, ու յուսալով, որ շարունակուի ստեղծուած այս ոգեղէն աւանդութիւնը, այն խորարմատ համոզումով, որ հայ գիրքը կը հանդիսանայ «արիւնը հայուն»։

digitised by A.R.A.R.@

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՀԱՅ ԳԻՐՔԸ՝ ԱՐԻՆԸ ՀԱՅՈՒՆ

Ֆրանսացի մեծ գրող մը ըսած է. «*Ես մեծցայ տպարանին մելանը արիւնիս մէջ խառնուած*» («J'ai grandi avec l'encre de l'imprimerie dans le sang»):

Ես գիտակցական տարիքիս ծաղկումէն ասդին, Դպրեվանքեան ուսանողութեանս օրերէն սկսեալ, տպարանի մելանին հետ մտերմութիւն եմ ունեցած եւ չեմ կրնար *գիրքին* մասին խօսիլ առանց *իմ* մասին խօսած ըլլալու, ոչ ալ կրնամ իմ մասին խօսիլ առանց գիրքին մասին խօսած ըլլալու: Այո՛, կը զգամ, ֆրանսացի գրողին պէս, մելանը խառնուեր է արիւնիս, մագաղաթն ու թուղթը կպեր են մորթիս, գրիչը դարձեր է աջ ձեռքիս տեսակ մը վեցերորդ մատը, գիրքին տեսքը խառնուեր է աչքերուս բիբերուն, գրադարանիս ու բնակարանիս միջեւ խախտեր է պատը...: Այս տուեալներուն մէջ հեզասահ է խօսքը գիրքի մասին, քանի կու գայ ներսէն, ապրուած տարածքէ, եւ ոչ սոսկ միտքէ ու պաշտօնական հանգամանքի եւ պարագաներու պայմաններէ:

* * *

Այս տարի իմ խօսքին առանցքը սկիզբ կ'առնէ պատմական խորքէ մը, ապրուած դրուագէ մը, որուն մէջ Հայ Գիրքը կը պատկերացուի միախառնուած հայ արիւնին հետ:

Վերջերս, վատ արարքի մը զոհ գացած հայրենի գրագէտ Վարդգէս Պետրոսեանի մէկ գիրքէն քաղուած սա պատմութիւնը մտածել տուաւ ինծի, թէ ի՞նչ խոր, գոյութենական տարրացումով, Հայ Գիրքը զուգորդուած է հայ անրիւնին հետ: Պատմութիւնն այսպէս կը պատկերանայ.

«*Մեռաւ Տէր Մինասը՝ գիւղի միակ ուսուցիչը: Գիւղն ու վեց աշակերտները որբացան: Տէր Մինասը մեռաւ դպրոցի չեմին ինկած, հարբած ենիչերիի թուրին հարուածէն: Այդ օրը ուսուցիչը այբուբենի վերջին տառը կը սորվեցնէր, եւ խնդրեց ենիչերիներէն, որ չընդհատեն դասը, մինչեւ որ երեխաները սորվին գրել վերջին տառը: Հարբած ենիչերին չանսաց եւ հարուածեց Տէր Մինասին: Վիրաւոր գլուխէն արիւնը հոսեցաւ քարի սալին: Վերջին շունչին՝ Տէր Մինասը մօտ կանչեց իր Վահրամ աշակերտին, անոր ձեռքը թաթխեց իր արիւնին մէջ եւ քարէ սալին գրեց մեր այբուբենի վերջին տառը:*

digitised by A.R.A.R.@

«Գիւղ՝ Ջրասուն, 1827 թուական. կարին։ Բոլորը հաւաքուած կը նայէին այրուբենի վերջին տառին եւ կու լային։ Անձրեւոտ օր մըն էր»։

Ի՜նչ զգայացունց, խորհրդալից եւ ոգեխանձ տեսարան, մարդուն ողջ էութիւնը փոթորկող զօրութեամբ: Մելանի տեղ արիւնը, կենդանութեան վերջին ապաւէնը գործածել եւ գրիչի ու կաւիճի փոխարէն՝ մատղաշ ու ծիլ մատները հայ մանուկին, եւ որպէս թուղթ՝ քարեղէն սալը...

Այս ի՜նչ պաշտանք է Հայ Գիրին, ի՜նչ գոյարմատ հաւատք, ի՜նչ արիական կեցուածք, ի՜նչ խորիմաստ փիլիսոփայութիւն: Եւ այս բոլորը, կը հաւատամ, անո՛ր համար, որ բոլոր Տէր Թոդիկեան Տէր Մինասները, մինչեւ Տէր—Ջօրի մայրերը, հաւատարիմ մնացին այն ճշմարտութեան, որ կտակուած էր — եւ կը մնայ կտակեալ— Ս. Մեսրոպէն, թէ *մեր անմահութիւնը մեր Գիրի՛ն մէջ է*: Ինչպէս անհատ մարդուն մարմինին մէջ կենսական է արեան շրջագայութիւնը, այնպէս ալ մեր հաւաքական գոյութեան «մարմնին», «Հայ Ազգ» կոչուած համայնամարմինին մէջ Գիրին վառ կենդանութիւնը, առողջ ու անաղարտ պահպանումը, կենսախայտ ու գործօն շրջանառութիւնը մեր ազգային անմեռութեան, յաւերժութեան տեսակ մը շնչատուութեան աղբիւրն է, մեր ինքնութեան ո՛չ սոսկ գրաւականը, այլ՝ արարչագործ ուժը, ստեղծարար ազդակը: Երբ դադրին հայ գիրը եւ անով տարազաւորուող լեզուն, ա՜հ, այն ատեն մեր մէջ կը ցամքի մեր արիւնը. եւ գիտէ՛ք, թէ ի՜նչ անուն կը տրուի արիւնէն ցամքած մարմնոյն...

Բոլորդ ալ լաւ գիտէք, որ դարերու ընթացքին, շատ արիւններ ցամքեցան եւ ցամքուեցան անհատ հայ մարդերու մարմիններուն մէջ: Բայց մեր ժողովուրդի ամբողջութիւնը, համայնական ինքնութիւնը եւ անբեկանելի միութիւնը արտայայտող ազգային մարմնին արիւնը երբեք, երբե՛ք չցամքեցաւ: Տեղ-տեղ եւ ժամանակէ ժամանակ այդ մարմնոյն մէջ այդ արեան շրջագայութիւնը թուլցաւ ու դանդաղեցաւ, ինչպէս կաղնիի ծառին որոշ ճիւղերուն մէջ յատուկ պատճառներով, աւիշը երբեմն կը ճօսրանայ կամ կը չորնայ: Բայց մարմինն ու կաղնին իրենց բջիջներուն, երակներուն, արմատներուն եւ իրենց բունին ու մայր ճիւղերուն մէջ այդ աւիւնը կը պահեն առողջ ու կենդանի, եւ այդ արմատներէն ու ճիւղերէն յաւերժազօր աւիշ կ'երթայ նո՛ր ճիւղերուն եւ նոյնիսկ կը վերանորոգէ հնացեալ եւ ընդարմացեալ ճիւղերը:

Այս վերջին քանի մը տարիներուն, ընդհանուր հայ կեանքին մէջ ի յայտ եկող լուսադրիչ երեւոյթներէն մէկը այն է, որ թէ՛ դասականօրէն ըմբռնուած արտասահմանեան Սփիւռքին եւ թէ վերջերս փիւնիկի նման վերյայտնաբերուած եւ վերակենդանացած ներքին Սփիւռքին, այսինքն՝ նախկին Խորհրդային Միութենէն անջատուած եւ անկախացած երկիրներուն մէջ, ինչպէս Ռուսիոյ, Ուքրանիոյ եւ այլ շրջաններուն մէջ, հայ ժողովուրդի զաւակները, մա՛նաւանդ հայ նոր սերունդի անդամները հայ գիրն ու լեզուն սորվելու նոր ձգտումի մը մէջ են նետուած, որովհետեւ կը զգան այդ *գիր-եւ-լեզու* արիւնին ճօսրացումը իրենց կեանքերուն մէջ: Երանի՜

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

հարկ եղած մարդիկը գտնուին ու գործնականօրէն ազդու միջոցները հայթայթուին այդ արեան զօրացման եւ տարածման համար...

* * *

Թէ Հայոց Գիրը ի՞նչ անսահմանելի կենդանութիւն ունի՝ կրնա՛ք հեղ մը եւս ըմբռնել, երբ ձեռագրային յիշատակարանէ մը քաղուած ու մոռացութեան փոշիին տակէն արտաբերուած եւ մասունքի պէս սա վկայութիւնը դառնայ մաս ու բաժին ձեր յիշողութեան եւ գիտակցութեան:

Անյայտ, անծանօթ, մի ոմն Մովսէս, Բջնեցի անուն կրող հայ մարդ մըն է — հոգեւորակա՞ն թէ աշխարհական՝ չգիտեմ, եւ ի՞նչ փոյթ թէ գիտնանք — որ Հայ գիրին խօսիլ կու տայ սա փոխաբերական ու պատկերալից բանաստեղծական ոտանաւորով՝ «*Ակեղծուած Զգրոց*» վերնագրով, որ ինծի համար յայտնութիւն մը եղաւ: Գիրը ինք է, որ կը խօսի, ինչպէս «արիւնը մեր մէջ կը խօսի»...

«Զեռն ամենակալին ստեղծ զիս,
Եւ Բարձեալն ի բարձունս՝ ընծայեաց զիս։
Ցորժամ ծնայ յորովայնէ մօր իմոյ՝
Ես իմաստնացուցի զնա։
Զափ ամաց իմոց յառաջն էր երկու երկոտասան
Եւ այժմ աճեցայ եւ զարգացայ, եւ եմ երեք երկոտասան։
Կամ յԱրեւելս, եւ խօսիմ յԱրեւմուտս.
Ի հիւսիսոյ եւ ի հարաւոյ ընթանամ,
Ցանշնչոց ձայն ածեմ
Եւ ի մեռեալս բարբառիմ։
Մեռեալ եմ, եւ ընդ կենդանիս խօսիմ
Ցանդնդոց ձայն արձակեմ
Եւ առ Բարձրեալն աղաղակեմ։
Մնունդ իմ ի ջրոյ է,
Եւ մահ իմ ի նմանէ։
Ի հողոյ սասանիմ, եւ ի հրոյ զարհուրիմ.
Բայց նստելով ի վէմս՝ արհամարհեմ զերկոսեան։
.....
Երբեակ երկոտասնեակ
Ինն քառեակ
Եօթն հնգեակ, մին թիւ աւելեակ.
Զորս ութեակ, եւ մին նորին կիսակ.
Զորս ինեակ.
Երեք տասնեակ եւ մի վեցեակ։
Ինելոյ են արժանի։
Տարօրն՝ յոյժ փոքր.

digitised by A.R.A.R.@

Տարեալն՝ անհուն
Տունն՝ ննջող
Բնակողն՝ անքուն,
Եւ միասին գեղեցկագոյն
Չի ոչ գտաւ նոցա հանգոյն»։[1]

* * *

Այո՛, հայ Գիրն ու Գիրքը *անմնաւորեալ* գոյութիւններ են։

Կ'ապրին, կը խօսին, կը շարժին, կը շարժե՛ն։

Հոգի են եւ հոգի կու տան։

Միտք են եւ գաղափար կը ծնին։

Հաւատք են եւ ուժ կու տան։

Իմացութիւն են եւ իմաստութիւն կը ցանեն։

Սիրտ են եւ սրտեր կը յուզեն։

Աչք են եւ արցունք կը բերեն, «կրկնավտակ հոսմամբ յուրախութիւն եւ ի տխրութիւն»։

Շրթունք են եւ կը բարբառին։

Կամք են եւ միանգամայն ամրութիւն ու մորմ կ'առաջացնեն։

Մէկ խօսքով՝ կեա՛նք են եւ կ'ապրեցնեն «ի վեր քան զժամանակս եւ քան զերկրաւոր գոյութիւնս աշխարհիս այսորիկ»։ Աւելի կարճ խօսքով՝ «ելից ճանապարհ» են դէպի «աւետեաց երկիր», դէպի անպարագրելի յաւերժութիւն։

Բայց այս բոլորն են միայն ա՛յն ատեն, երբ ընկալուին սիրով ու հաղորդական ընդառաջումով, հարազատ եւ խանդալից հանդիպումով։ Ցոյց կու տա՞նք այդ ընդառաջումը, կ'ունենա՞նք այդ հանդիպումը, մա՛նաւանդ՝ կը փնտռե՞նք զայն, թէ՝ պատահաբար եւ հազուադէպօրէն երբեմն-երբեմն ինք կ'երեւի մեր կեանքի հիւսուածքին ու գնացքին մէջ։

Այս ցուցահանդէսը ինքնին գիրքերու ցուցադրութիւն եւ մատուցում ըլլալով հանդերձ, հանդիպումի պահեր ստեղծելու կոչուած ըլլալուն հետ միասին՝ է՛ նաեւ — կամ պէտք է վերածուի —, թոյլ տուէք ինծի նոր բառով մը ըսելու, *հարցահանդէս*ի մը։ Գիրքերուն հանդիպելու սա պահուն հարցումներ է, որ կը ծագին մեր բոլորի միտքերուն մէջ. որքա՞ն յաճախակի են *հայ մարդ եւ հայ գիրք* հանդիպումները մեր ամէնօրեայ կեանքին մէջ, մեր ընտանեկան յարկերուն տակ։ Մի՛ ըսէք, թէ հայ գիրք *չի տպուիր*. հարց տուէք սրտերց — եւ պատասխան գտէք անկեղծ — ըսելու

(1) *Առեղծուածս այս դրոշմեալ կայր ի կողս ուրեք ժողովածու մատենի միոյ գրելոյ առ ժամանակօք կիլիկեցւոց, զոր եւ դէպ եղեւ մեզ տեսանել եւ օրինակել յԻննակնեան վանսն որ ի Տարօն, յամին 1827։ Վերնագիր բանիցս ի բնագրի անդ էր այսպէս.— «Մովսէսի Բճնեցւոյ շինեալ բանքս ազնուագոյն»։*

digitised by A.R.A.R.@

համար հայ գիրք *չի կարդացուիր*: Ոմանց պարագային ընթերցումը իր գնահատելի երեւոյթին իսկ մէջ կը տառապի շարունակականութեան պակասէն, հետապնդումի ճիգէն, անձնական փնտռտուքի, շահագրգռուածութեան վար կենդանութենէն:

* * *

Չգիտեմ, այս տեսակէտէն՝ ի՞նչ է կացութիւնը ուրիշ ազգերու մօտ: Վերջերս կարդացի վիճակագրական տուեալներով, ինքնաքննադատական վերլուծումներով եւ դժգոհութեան եզրակացութիւններով հարուստ յօդուած մը ֆրանսական մամուլին մէջ, կրօնական հակում ունեցող թերթի մը "LA CROIX"ի մէջ: Անհաւասիկ ձեզի կարգ կը վկայութիւններ ֆրանսացի ազգի կեանքէն, գիրքերու աշխարհէն.

—Վերջին երկու տարիներուն, 1992ին եւ 1993ին, միջին հաշուով, տարեկան շուրջ 850 միայն կրօնական բովանդակութեամբ հատորներ լոյս տեսած են Ֆրանսայի մէջ:

—Երեք հարիւր միլիոն ֆրանքի կը հասնի ծախսուած գումարը կրօնական հրատարակութեանց վրայ: Եւ սա երկու առ հարիւրն է առհասարակ գիրքին համար եղած ամբողջական ծախսին, որուն ընդհանուր գումարը կը հասնի 16 միլիառ ֆրանքի:

—Ֆրանսայի մէջ կը գործեն կրօնական գրականութեան տարածման համար գոյութիւն ունեցող երկու հարիւր գրատուներ:

Ի՜նչ հետաքրքրաշարժ եւ բարեդէպ երեւոյթ է, որ ճիշդ այսօր, Փարիզի մէջ կը բացուի գիրքի ցուցահանդէսը երկու շաբթուան վրայ տարածուած, 15էն 31 Հոկտեմբեր, ներառնելով երեք շաբաթավերջեր (week-ends):

Ֆրանսայի մէջ Գիրքի տօնի այս յարաճուն ընթացքին այս տարուան հանգրուանը ունի նոր բնորոշում մը, որ երկար խորհրդածութեան դուռ բացաւ ինծի, եւ վստահ եմ պիտի բանայ ձեզի համար եւս: Այս տարուան ցուցահանդէսը որպէս խորագիր ունի հետեւեալ երկու բառերը *«Ընթերցման կիրքը»* («La fureur de lire», կամ՝ «The passion for reading», ինչպէս բնորոշուած է անգլերէն լեզուով):

«Կարդալու կիրքը»...

Չեմ ուզեր երթալ մանրամասնութեանց: Բայց հարց կու տամ ես ինծի եւ ձեզի. ի՞նչ են վիճակագրական տուեալները մեր ազգի պարագային՝ թէ՛ մայր հարինիքին՝ Հայաստան աշխարհին եւ թէ արտասահմանի գաղութներուն մէջ: Հարկ է գիտական, առարկայական պրպտումներով երեւան բերել բուն, ճշգրիտ իրականութիւնը: Տեղ-տեղ քաջալերական երեւոյթներ չեն պակսիր. ես անոնցմով հրճուողն եմ, զանոնք գնահատողը «յամենայն արտէ իմմէ»: Բայց կը նախազգամ, որ ընդհանուր պատկերը տկար է, ցանցառ եւ նշմարային. եւ ասոր մատնանշողն եմ, եւ պիտի ըլլամ

digitised by A.R.A.R.@

ցորքան կամ: Աւելի՛ն. խարազանողն եմ, կաթողիկոսական ասան այս պարագային վերածելով Յիսուսի խարազանին...

«Կարդալու կիրքը»...

Ո՞ւր է այդ կիրքը. ո՞ւր փնտռեմ եւ գտնեմ զայն մեր հայ իրականութեան մէջ: Կիրքէն «վազ անցայ»: Ո՞ւր է ձգտումը, ճաշակը, փորձը:

Անթիլիասի մեր տպարանէն այս տարի 22 հատոր գիրք լոյս տեսաւ: Շունիմ վիճակագրական տուեալները այլ հրատարակչական տուներու արտադրութեանց: Այս վանքը եւ նման հրատարակչական տուները անպայման չեն սնանկանար, եթէ գիրքերը չծախուին կամ չսպառին: Բայց մեր ժողովուրդը ի՛նք հոգեկան ու իմացական, մարդկային ու ազգային, գաղափարական ու գեղարուեստական սնանկութեան կրնայ մատնուիլ: Եւ այս սնանկութիւնն է, որ հոգեւորապէս եւ մշակութապէս կ'աղքատացնէ հոգեշինութեան նուիրուած այս վանքը եւ նման բոլոր վանքերը եւ մշակոյթի այլ կեդրոններն ու կազմակերպութիւնները:

Այդ սնանկութեան անունն է *արեան նուազութիւն* կամ *տկարութիւն* (anémie): Հիւանդութիւն մը, որ դուռ կը բանայ այլ տեսակի հիւանդութեանց, որոնցմէ ոմանք կրնան ըլլալ մահացու: Բժշկական եզրերով խօսելու իրաւունք չունիմ: Բժիշկի վկայականէ զուրկ եմ, բայց զիս կարգեր էք *հոգեւոր* բժիշկ: Եւ որպէս այդպիսին, ես ինձի թոյլ կու գամ ըսելու, որ բժշկութեան, առողջացման առաջին նախապայմանը ճշգրիտ ախտաճանաչումն է, ապա անոր դէմ ընդվզումը եւ ի վերջոյ անոր դարմանումը՝ ի սէր մեր ազգի առողջութեան վերականգնումին:

«Դէպի՛ գիրք»...

Այս նշանաբանով թող այս ցուցահանդէսը դառնայ բուժումի առիթ, նոր արեան ներարկում՝ մեր համայնական մարմնի երակներուն մէջ:

Մի՛ սպասէք, որ Տէր Մինասներու արիւնը մելան դառնայ...

Մի՛ սպասէք, որ հայ մանուկին ձեռքերը գրիչի վերածուին արեան մէջ թաթխուելու համար...

Մելանը արիւնի վերածեցէք, եւ գրիչները՝ ձեռքի, որովհետեւ՝

«Հայ Գիրքը՝ Արիւնն է հայուն»...

15 Հոկտեմբեր, 1994
Անթիլիաս, Լիբանան.

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

digitised by A.R.A.R.@

ՄԱՀՖՈՒԶԵԱՆ ՆՈՐ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԸ

Ուրբաթ, 14 Հոկտեմբեր 1994ի երեկոյեան ժամը 5։15ին, սովորական արտաքինով թխամորթ երիտասարդ մը կը մօտենայ նոր ինքնաշարժ բարձրացած Նոպէլեան մրցանակակիր (1988) Նեկիպ Մահֆուզի եւ իր գլուխը կը մօտեցնէ ճամբայ ելլելու պատրաստուող ինքնաշարժի բաց պատուհանին։ Տարիներու փորձառութեամբ իմաստնացած 83 տարեկան եգիպտացի վիպագիրը պահ մը կը կարծէ, թէ անծանօթ երիտասարդը մէկն է այն գրասէրներէն, որոնց ձեռքը կը թօթուէ ամէն օր, առանէն դուրս ելած պահուն թէ փողոցը քալած ատեն։

Երկար տարիներ իր սովորութիւնը ժամացոյցի ճշգրտութեամբ միշտ յարգած հիոքրամարմին հսկանն, որ ամէն Ուրբաթ, ճիշդ նոյն ժամուն, կ'ուղղէր մերձակայ միւնոյն ժողովրդային սրճարանը՝ գրական, մշակութային, ընկերային եւ այլ հարցերու շուրջ ժամեր շարունակ զրուցելու համար իրեն սպասող կրտսեր ու երիտասարդ գրագէտներու, մտաւորականներու, արուեստագէտներու, գրասէրներու եւ նոյնիսկ իր հերոսները դառնալու կոչուած պարզ եգիպտացիներու հետ, այդ օր, տարօրինակ կերպով չի յարգեր իր ժամադրութիւնը եւ մահֆուզեան համով-հոտով մեծլիսը կը յետաձգուի անորոշ ժամանակով, երբ երիտասարդին ձեռքը կը բարձրանայ վեր, կ'իմնէ կայծակի արագութեամբ եւ հեղնիկի կոտոշ կոչուած կոր դաշոյնը կը բկկոէ պատուհանէն դուրս երկարած Նեկիպ Մահֆուզի վիզին գլխաւոր երակները։ Դաշոյնը կը մնայ խրուած Մահֆուզի վիզին մէջ եւ ոճրագործն ու իր գործակիցները կ'ապերեւութանան կայծակի արագութեամբ։ Նախախնամութիւնը կը փափաքի, որ Ն. Մահֆուզ արիւնաթաթախ կքի իր անասնաբոյժ բարեկամին՝ Մուհամմէտ Ֆաթհի Հաշէմի ինքնաշարժին մէջ։ Բախտը երկրորդ անգամ կը ժպտի հիմատուն ծերունիին, երբ հակառակ օրը Ուրբաթ եւ շրջանը Գահիրէի խճողուած կէտերէն մէկը ըլլալուն, այդ օր գրեթէ ամայի պատկեր մը կը պարզէ (եգիպտացիք գամուած են իրենց պատկերասփիւռի պաստառներուն դիմաց՝ դիտելու համար Եգիպտոս-Զամպիա Ֆութպոլի ճակատագրական մրցումը), երրորդ՝ երբ բարեկամ բժիշկը կ'ունենայ դաշոյնը դուրս չքաշելու խոհեմութիւնը եւ անմիջապէս կը հասնի քանի մը քայլ անդին գտնուող զինուորական հիւանդանոցը, իսկ չորրորդ անգամ երբ արձակուրդ առած մասնագէտ բժիշկներ հոն կը գտնուին եւ, եօթը ժամ տեւած բարդ գործողութենէ մը ետք, կը յաջողին փրկել վաստակաշատ գրագէտին կեանքը։

Լուրը արագ մը կը տարածուի եւ անգամ մը եւս աշխարհի ուշադրութիւնը կը կեդրոնանայ Նեկիպ Մահֆուզի անունին վրայ։ Ոչ միայն Եգիպտոսի, այլեւ բովանդակ արաբական աշխարհի գրական, մշակութային, քաղաքական եւ մամլոյ շրջանակները կը ցնցուին խորապէս։ Դատապարտումի պաշտօնական յայտարարութիւնները, յոդուածներն ու նշմարները զիրար կը խաչաձեւեն՝ Գահիրէէն մինչեւ Պէյրութ ու Քուէյթ եւ Ռիատէն մինչեւ Դամասկոս ու Մարոք։

Գահիրէն եւ արաբական այլ մայրաքաղաքներ կը մնան անքուն եւ մեծ մտատանջութեամբ կը հետեւին Եգիպտոսի բովանդակ պատմութիւնն ու ոգին իր մէջ խտացուցած տարաղաւոր գրագէտին ճակատագրական վերիվայրումներուն։ Մայրայեղ իսլամներու արմատական ո՛չ մէկ կազմակերպութիւն կը ստանձնէ մահափորձը, մինչդեռ, նախապէս, ստանձնումի հաղորդագրութիւնները անմիջապէս կը յաջորդէին քաղաքական դէմքերու կամ մտաւորականներու դէմ գործուած մահափորձերուն, ինչպէս պատահած էր, օրինակ, համաբաբական

digitised by A.R.A.R.@

եւ միջազգային վարկ վայելող եգիպտացի յարգելի գրող եւ մտաւորական Ֆարուք Ֆուատի սպանութենէն ետք։

Զայրոյթն ու ընդվզումը այս անգամ իրենց գագաթնակէտին կը հասնին, որովհետեւ տարիի հետեւանքով իր տեսողութեան եւ լսողութեան մէկ մասը կորսնցուցած եւ ձեռնափայտի օժանդակութեամբ քալող պայծառամիտ գրագէտը ո՛չ միայն կը հանդիսանայ Եգիպտոսի պատուաբեր գլխաւոր գանձերէն մէկը, այլեւ՝ աստուածավախ, համեստ, բարի եւ հիմատուն նահապետը։

Եւ Անուար Սատաթի ահաբեկումով սկսած խափանարարութիւններու եւ մահափորձերու արիւնոտ օրակարգին շուրջ բարձրացած ձայները այս անգամ կը ստանան աւելի սուր շեշտ ու հնչեղութիւն։ Միաժամանակ կը դատապարտուին թ՛ւ իսլամ ընդյատակեայ ծայրայեղ խմբակցութիւնները, եւ պետութիւնը՝ երկխօսութենէ խուսափող իր կեցուածքին, արիւնոտ տագնապին արմատական լուծում բերող ծրագիր մը որդեգրած լլլալուն, ինչպէս նաեւ՝ ժողովրդավարութեան անունով ծայրայեղականներուն շնորհած իր անուղղակի քաջալերանքին համար (մամլոյ ազատութիւն, համալսարաններու մէջ իսլամական աւանդութիւններու վերադարձի արտօնութիւն, համապատասխան հակաքարոզչութենէ խուսափում, եւայլն), որոնց հետեւանքով՝ ո՛չ միայն դաւառներու եւ Գահիրէի թշուառ թաղամասերու անուս զանգուածները, այլեւ նոյնիսկ համալսարանական չրջանակներ եւ «զղջումի եկած» կարգ մը արուեստագէտներ (գրողներ, երգչուհիներ, պարուհիներ...) կը շարունակեն ներգրաւուիլ հզուրսէն ղեկավարուող խեղաթիւրուած իսլամութեան հոսանքներին մէջ։

Նեկիպ Մահֆուզի դէմ իր «էմիրդին (բառացիօրէն՝ իշխան, արմատական իսլամները այսպէս կը կոչեն իրենց շարժումին պետը, որդեգրելով Մուհամմէտի եւ անոր յաջորդներուն տրուած վերոնշեալ տիտղոսը՝ «հաւատացեալներուն իշխանը») արժանած մահավճիռը գործադրած երիտասարդը բանականութեան դէմ շղթայազերծուած կոյր ահաբեկչութիւնը լաւագոյն ներկայացնող մէկ պերճախօս նմոյշն է։ Իր արիւնոտ արարքը գործադրելէն քանչորս ժամ ետք ձերբակալուած երիտասարդը ամենայն հպարտութեամբ եւ առանց դողդղն խղճահարութեան կը յայտարարէ, որ ինք առանց կարդացած ըլլալու մեծանուն գրագէտին «Մեր թաղի տղաքը» խորագրեալ վէպը, փորձած է իրականացնել իր առաջնորդին արժանած մահավճիռը՝ «մարդկութիւնը փրկելու համար հերետիկոս Մահֆուզէն»։ Աւելո՛ւ. ան կը շեշտէ, որ մահափորձը ձախողած է, որովհետեւ, դաշունահարման պահուն... մոռցած է ցիշատակել Աստուծոյ անունը։ Վերջապէս, իր կարգին զոհ մը հանդիսացող եւ մարդուն մէջ բանականութիւնը սպաննող ծայրայեղ ազանդներու լարած թակարդին մէջ բռնուած նման բազմահազար երիտասարդներու համար, էականը է՛ եւ կը մնայ իրենց «էմիրդին անքննարկելի վճիռը, որովհետեւ անիկա... «Աստուծոյ կամքն ու պատգամն է»...

Առանց խորանալու Եգիպտոսէն մինչեւ Ալճերիա եւ Փաքիստանէն մինչեւ Թարթում ու այլուր երկարող այս բիրտ երեւոյթին տեսանելի եւ անտեսանելի ծալքերուն մէջ, առանց թափանցելու Եգիպտոսի մէջ թերթոնի ձեւով հրատարակուելէ ետք, Ազհարի վճիռով եգիպտական հողին վրայ իբրեւ հատոր լոյս տեսնելէ արգիլուած «Մեր թաղի տղաքը» վէպի արդիլման, իշխանութեան խուսափողական կեցուածքին եւ հին ու նոր յարակից մանրամասնութիւններուն մէջ, ստորեւ կը ներկայացնենք 29 տարի առաջ Լիբանանի մէջ լոյս տեսած եւ ետքը անգամ վերահրատարակուած հատորին՝ «Մեր թաղի տղաքը» վէպին նուիրուած վերլուծում մը։

digitised by A.R.A.R.@

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ՆԵԿԻՊ ՄԱՀՖՈՒԶԻ ԱՐԳԻԼՈՒԱԾ ԽՆՃՈՐԸ

«ՄԵՐ ԹԱՂԻ ՏՂԱՔԸ»

«Ասիկա մեր թաղին հեքիաթն է կամ մեր թաղին հեքիաթներն են, ինչ որ աւելի ճիշդ է»: Այս նախադասութեամբ կը սկսի Նոպէլեան մրցանակակիր եգիպտացի վիպագիր Նեկիպ Մահֆուզի խնդրայարոյց հատորին՝ *«Մեր թաղի տղաքը»* (1966) անուն վէպին *«Ցառաջաբան»*ը: Առաջին նախադասութենէն՝ գրագէտը մեր ուշադրութեան կը յանձնէ ներկայութիւնը *«Հազար ու մէկ գիշերներ»*ու հեքիաթասացը յիշեցնող հերոսին, որուն չէզոք մասնակցութիւնը կը սահմանափակուի հեքիաթները, այս պարագային՝ «մեր թաղին պատմութիւնները» ներկայացնող կրաւորական տիպարի դերակատարութեան մէջ: Ցար եւ նման դասական հեքիաթին՝ հոս եւս ամէն բան կը սկսի ասացողէն, լուսանցքային գործողութեան կը յաջորդեն առաջին շարժումը իր լինելութեան հոլովոյթին մէջ դնող հիմնական հեքիաթները, պատմութիւնները կ'ապրին իրենց զարգացման բոլորակաձեւ ընթացքը, որ հատորը իր գագաթնակէտին առաջնորդող վախճանական հեքիաթով կը վերադառնայ մեկնակէտ զսպանակին՝ բոլոր պատմութիւնները ամփոփող հեքիաթասացին: Ասացողին այս ուշագրաւ ներկայութիւնը զինք կը գտնէ գործողութիւնները առաջնորդողի դիրքին մէջ: Այսպիսով, հակառակ ներկայացուած դէպքերուն եւ ներկայացնողին միջեւ գոյութիւն ու-

digitised by A.R.A.R.@

ենցող նկատառելի հեռաւորութեան, դէպքերուն ոչ մէկ մասնակցութիւն բերող *անշարժ տիպարը*՝ ասացողը կը դառնայ անտեսանելի առանցքը եւ մոլիչ ուժը դիպաշարին, որովհետեւ ի՛նքն է, որ կը մարմնաւորէ իրմով բացայայտուող խօսքին թաքուն իմաստները:

«*Ցառաջաբան*»ին առաջին իսկ նախադասութենէն անշարժ դերակատարութեան հրաւիրուած եւ կեանքն ու անոր երեւոյթները իր լռելեայն մասնակցութեան մէջ խտացուցած ասացողը, ի սկզբանէ, կը յայտարարէ իր չէզոքութիւնը, երբ կ'ընդգծէ, որ ինք ականատես եղած է իր պատմելիք «հեքիաթ»ներուն միայն վերջին հանգրուանի դէպքերուն, միւս պատահարներուն մասին լսած է այլ պատմողներէ եւ զանոնք արձանագրած ամենայն ճշգրտութեամբ, այնպէս՝ ինչպէս պատմած են անցեալին մութ ծալքերը խօսքով լուսաւորած նախկին ասացողները, որոնց պատմութիւնները փոխանցուած են սերունդէ սերունդ, անանուն այլ ասացողներու կողմէ՝ իբրեւ «մեր թաղին հաւաքական յիշողութիւնը»: Թաղի մը ինքնութիւնն ու դիմագիծը բիւրեղացուցած հեքիաթասացի վերածուելով, ասացողը (իմա՝ նոյնինքն Ն. Մահֆուզ) կը խորասուզուի անանուն պատմիչներու յօրինած հետաքրքրաշարժ պատմութիւններուն խորերը, կենդանի կենսափորձով բաբախուն ժողովրդական բանահիւսութեան տարրերէն կը հիւսէ վայրի մը իւրայատուկ ժամանակը եւ արդարօրէն կը դառնայ եզակի աշխարհի մը բանաւոր կենդանագիրը սպիտակ թուղթին վրայ քանդակող վիպագիրը:

Աւելի՛ն. թաղի մը ներքին կլիմաներն ու համամարդկային վիճակները, անոնցմէ բխած պարզ, բայց իմաստալից ժողովրդական իմաստասիրութիւնը գիրերու աշխարհ փոխադրելով հանդերձ, արուեստագէտ արձակագիրի իր տաղանդին շնորհիւ՝ Նեկիպ Մահֆուզ կը յաջողի զսպանակուած պահել բանահիւսութեան կենսունակութիւնը, աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ ասուած խօսքին այլաբանական եղանակները, առանց շեղելու ասացողէ ասացող իր եղելոյթը ապրող այս կամ այն հեքիաթին ո՛չ դիպաշարէն եւ ոչ ալ միտք բանիէն: Սակայն ան առաջին ակնարկով կրաւորական ներկայութեան մը տպաւորութիւնը ձգող արհեստավարժ ասացող մը կամ շարքային քարտուղար մը չէ: Ճիշդ է, որ վէպին գլխաւոր հերոսը հանդիսացող հեքիաթասացը ոչ մէկ ձեւով կը մասնակցի իր պատմած արարքներուն, ճիշդ է, որ ան ամենայն բծախնդրութեամբ կը պահէ պատմութեան եւ պատմիչին միջեւ գոյութիւն ունեցող «պաշտօնական հեռաւորութիւն»ը, սակայն նոյնքան ճիշդ է, որ արտաքնապէս իր չէզոքութիւնը անխոցելի պահող հեքիաթասացը դէպքերը առաջնորդող գլխաւոր հերոսն է, որովհետեւ հակառակ երեւութական հեռաւորութեան՝ ան ներկայ է ո՛չ միայն իր ձայնով վերակենդանացող իւրաքանչիւր հեքիաթի մէն մի բառին, այլեւ՝ վախճանական գործողութեան յաջորդող ենթախօսքին, այսինքն՝ այլաբանական եզրայանգումին մէջ:

Այսպէս, «*Մեր թաղի տղաքը*» վէպի գրառման դրդապատճառները հիմնաւորող «*Ցառաջաբան*»ին մէջ, յայտնելէ ետք, որ ինք ականատես կամ մասնակից չէ դարձած իր պատմելիք հեքիաթներուն մեծա-

digitised by A.R.A.R.@

մասնութեան, հեքիաթասացը դիտել կու տայ, թէ ինք պարզապէս կը յարգէ իր խոստումը՝ տրուած իր մէկ բարեպաշտ եւ անգրաճանաչ թաղեցիին, որ իրմէ խնդրած էր գրի առնել իրենց թաղին հեքիաթները, որովհետեւ իրարմէ անկապ ձեւով եւ ըստ նախասիրութեանց պատմուող «հեքիաթ»ները կ'ենթարկուին կամայական փոփոխութիւններու, համաձայն պատմիչներու անձնական նախասիրութիւններուն եւ քմահաճոյքին: Հետեւաբար, թաղին կենդանագիրը խեղաթիւրումէ փրկելու նախանձախնդրութեամբ, ան կը խնդրէ իր բարեկամէն՝ զանոնք արձանագրել ամենայն հարազատութեամբ, ամբողջական միաձոյլ կառոյցի մը մէջ, որպէսզի հեքիաթասացին ներքին տեսողութեան ընդմէջէն ներկայացող հեռաւոր անցեալը (բարքեր, համոզումներ, աւանդութիւններ) ո՛չ միայն կը դառնայ ներկային (խեղաթիւրումներու եւ այլասերման ժամանակը) դիմագիծը անխաթար պահող կեանքի առողջ կշռոյթը, այլեւ՝ ապագային մէջ բաբախող ընդհանրական գիտակցութիւն-ուղեցիշը, կարճ խօսքով՝ վայրին ու ժամանակին հաւաքական էութիւնը, նկարագիրն ու խղճմտանքը:

*
* *

Ճշդուած վայրին (Գահիրէի մէկ անշուք թաղը) եւ ժամանակահատուածին (1930-50ական տարիներ) արտաքին եւ ներքին համապատկերը ամենայն խղճմտութեամբ հիւսող հեքիաթասաց-գրողը, փաստօրէն, գլխաւոր տիպարէ մը աւելի ազգու ներկայութիւն է: Ան նոյնիսկ թաղի մը համապատկերը կենդանագրող պատմիչէն աւելին է: Որովհետեւ՝ արտայայտչական միջոց մը ըլլալով հանդերձ, հեքիաթասացը լայն կը բանայ հորիզոնները գրաւոր խօսքին զարգացման անսպառ կարելիութիւններուն դիմաց եւ միշտ շարժման մէջ կը պահէ շարունակ ինքզինք շրջանցող ոճային հոլովոյթը: Ահա թէ ինչո՛ւ հեքիաթասացը մեզի կը պատմէ ո՛չ միայն իր թաղին սոսկական հեքիաթները, այլեւ կենդանի շարժման մէջ կը պահէ հեքիաթները ասելու գեղագիտական եղանակները եւ, միւս կողմէ՝ մեզի կը պարզէ խօսքին ու ոճին զարգացողական անդրադարձները հեքիաթասացի տիպարին նկարագրին ու հոգեբանութեան վրայ: Աւելի՛ն. իրերայաջորդ հեքիաթներու հարցումներուն յաջորդած պատասխանները կ'առաջացնեն գրողական այն մակարդակը, որ սկզբնակէտ կորիզ-հեքիաթին վերադառնալով՝ նոր թափ կու տայ բոլորակաձեւ շարժումին, փաստօրէն, մեր ուշադրութիւնը կը կեդրոնացնէ խօսքին կրկնակի արժէքին վրայ, որ առաջին հերթին եթէ խօսքին էութենական նշանակութիւնն է, երկրորդ պարագային՝ անկէ հիմնովին անկախ ժամանակին, այսինքն՝ ասուած ժամանակահատուածին եւ պատմուած հեքիաթի իրականութեան միջեւ ծաւալող այլաբանական երկխօսութիւնն է:

Խօսքային այս կրկնակիութիւնը կամ, եթէ կարելի է ըսել՝ իմաստային այս երկուութիւնը արուեստագէտ պատմիչին համար կը հանդիսանայ բացառիկ առիթ մը, որպէսզի շարունակ շրջանցէ իր գիրին ըն-

digitised by A.R.A.R.@

ձեռուած բոլոր կարելիութիւններն ու կարդացուող իմաստները: Խորքին մէջ, Ն. Մաճֆուզ հեքիաթասացը ո՛չ թէ կը պատմէ, այլ ազատօրէն կը խաղայ ծածկագրութեան բազմիմաստ խաղը, որովհետեւ ան ձեւով մը աւելի կը քողարկէ, քան կը պատմէ: Նոյնիսկ երբ կը դիմէ ճշդուած ընկերութիւնն ու ժամանակահատուածը մարմնաւորող խորհրդանշան տիպարներու եւ դիմանկարի ոճին, ան աւելի շատ գործի կը լծէ նշաններու արտայայտչաձեւը, քան բառերով պատմուած իրականութիւնը: Սկսելով տիպարներու անուններուն սոսկական եւ թելադրական իմաստներէն, անցնելով իրականութիւններու եւ դէպքերու զուգահեռականներէն եւ աւարտելով անձնաւորութիւններու մարմնաւորած բարոյական յորդորներէն ու խորհրդանշական լուեալեայն *թեքսթէն*՝ Ն. Մաճֆուզ պարզ ու սովորական թուացող դէպքերը կը փոխադրէ բարոյական, ընկերային եւ նոյնիսկ քաղաքական խօսքի բազմաշերտ ոլորտներուն, որուն շնորհիւ խօսքին միջոցաւ ինքզինք պատմող ներկայացուցչական դէպքը նաեւ կը խօսի այլ ժամանակներու եւ, տեսանելի տիպարներէն անկախ՝ նոր ժամանակները ներկայացնող խորհրդանշական այլափոխուող հոգեվիճակներու մասին:

Այսպէսով, խորհրդանշաններու այլաբանութեան մէջ ներկայացուցչական անձնաւորութիւնը կամ իրավիճակը ամփոփելով՝ արուեստագէտ պատմիչը միաձորիզոն պատումը կը փոխադրէ անդադար բացուող հորիզոններու ուղենշուած նշաններու շարժումին, որմով ասացողը կը փակէ — կը բանայ «*Ցառաջաբան*»ը՝ «մեր թաղ»ին վրայ կեդրոնացող առանցքային երեք հարցումով.— Ինչպէ՞ս գոյացաւ, ի՞նչն էր թաղի ծընունդին յաջորդած գոյութենական հիմնահարցը, որո՞նք են «մեր թաղի տղաքը»:

Եւ որովհետեւ, միշտ ալ, ասացողը ճամբայ կ'ելլէ վերջին հարցումէն եւ անոր կը վերադառնայ հիմնական խօսք արտասանելու իրաքանչիւր շարժումի առիթով, հետեւաբար կրնանք ըսել, որ «*մարդկային տարրին վրայ կեդրոնացումը վէպին գլխաւոր խորութիւնն է*», ինչպէս արդարօրէն կ'ընդգծէ եգիպտացի գրականագէտ դոկտ. Ժաքէր Ասֆուր՝ «*Մեր թաղի մարդիկը*» վէպի խորհրդանշաններուն վերծանումը կատարող իր մէկ վերլուծումին մէջ: Մարդուն եւ իր անհերեւոյթ էութեան՝ Խօսքին միջեւ զարգացող երկխօսութիւնը, վայրն ու ժամանակը բնորոշող ընկերային (իմա՝ մարդկային) յաւերժական երեւոյթներու (նախանձ, սէր, ատելութիւն, շահագործում, մոռացում, նուիրում...) վրայ կեդրոնանալով հանդերձ, շարունակ կ'առաջնորդուի պատճառաբանեալ խօսքի ղեկով, որուն շնորհիւ գրառումը կը դառնայ «մեր թաղ»ին հանդէպ հեքիաթ առ հեքիաթ աւելի եւս շեշտուող հեղինակին պատկանելիութեան գիտակցութեան անվիճելի ապացոյցը:

Վերջ ի վերջոյ, նոյնիսկ իր երեւութական չէզոքութիւնը պահող հեքիաթասացը մէկն է անոնցմէ, որոնք կը տագնապին իրենց թաղի զրկեալներու եւ հալածուածներու ցաւերով եւ ողբերգական ճակատագրով — այսինքն՝ թշուառութեանց մատնուած փախստական կամ

digitised by A.R.A.R.@

թափառաշրջիկ աղքատներով, որոնք աղբակոյտերու մէջ կ'ապրին ճանճերու եւ ոջիլներու հետ, ընկերութեան սին խոստումներուն զոհը դարձած եւ ֆիզիքապէս ու հոգեպէս շահագործուած, բայց նոյն ատեն միեւնոյն դահիճներէն անիծուած անբարոյ ցնորահարներով եւ ճնշուածներով, որոնք իրենց գործած նուազագոյն սխալին կամ արտասանած խօսքին համար ամենասուղ գինը կը վճարեն եւ կ'ենթարկուին հետեւողական հետապնդումներու:

Վէպին այս վերջին յատկանիշը եթէ յստակօրէն կը բացայայտէ *«Մեր թաղի տղաքը»* հատորին գաղափարաբանական աշխարհահայեացքն ու դիրքորոշումը՝ ի նպաստ թաղի զրկեալ ու ճնշուած ներկայացուցիչներուն, այնուամենայնիւ, քողարկուած կը պահէ վիպագիրին տրամադրութիւնները: Այս հանգամանքը գործը կ'օժտէ ընդհանրականութեան եւ վերացականութեան արժանիքներով, որպէսզի խնդրոյ առարկայ համամարդկային կացութիւնները, որոնք կրնան կրկնուիլ այլ ժամանակներու եւ նման իրավիճակներու մէջ, իրենց երկրորդ, տասներորդ եւ ...երրորդ կեանքն ու մեկնաբանութիւնը ապրին տարբեր ասացողներու եւ ունկնդիրներու (կամ ընթերցողներու) ներքին աշխարհին մէջ: Էականը մարդկային յաւերժական խնդիրներն են, որոնք կը պատկանին բացարձակ ժամանակին եւ նոյն մթնոլորտն ու դիմագիծը պարզող բազմանուն բացարձակ վայրին: Գերխնդիրը մարդն է, զրկանքի, ճնշումներու եւ հալածանքի դէմ շարունակ պայքարող նոյն մարդը, որուն խօսուն խորհրդանիշներն են պարզապէս «մեր թաղի տղաքը»:

Առարկայական տուեալէն ընդհանրական եւ վերացական ոլորտներ բարձրացող իր գրողական խաղի ընթացքին, Ն. Մահֆուզ լաւագոյնս կ'օգտագործէ արաբական դասական հեքիաթագրութեան ու առակագրութեան դարաւոր աւանդները եւ զանոնք կը հարստացնէ նոր գոյներով ու մերօրեայ հնչեղութեամբ: Անշնչելի տարբեր ժամանակներու մէջ ապրած եւ զինք կանխած դասական հեքիաթագիրներու, բայց ի մասնաւորի առակագիրներու դիմակ-խօսքի աւանդը արդիականացնելով, Ն. Մահֆուզ գրողապէս կ'ապացուցէ, որ նոր ասացողը կարելի յօրինողը, աւելի ճիշդ՝ «հաւանական գրող»ն է, որ կը պատկանի նաեւ իր նախորդներու ժառանգին, ինչպէս է պարագան Ապտալլա Պըն Մուգաֆա'ի՝ *«Քալիլէ եւ Տումնա»*, Սաֆա եղբայրներուն՝ *«Կենդանիին թուղթը»*, Ապիլ Ալա'ը էլ-Մա'արրիի՝ *«Թողութեան թուղթը»*, *«Վերընջողն ու կմկմացողը»*, Ըպն Շահիտի՝ *«Հետեւումներն ու ամպրոպները»*, էլ-Սահրուտիի՝ *«Արեւմտեան զարիպութիւնը»* եւ էլ-Ղազալիի *«Թռչունին թուղթը»* անուն այլաբանական հատորներուն: Այս կամուրջը լաւագոյնս կը հաստատէ ներկայութեան եւ բացակայութեան ներգործօն յարաբերութեան հրամայականը, նշաններու ճիւղաւորումը եւ գրողական կրկնուող թեքնիքը՝ *«Մեր թաղի տղաքը»* վէպի հեքիաթասացին եւ վերոնշեալ երկերու ասացողներուն միջեւ: Նոնյպէս, անիկա ցցուն կը դարձնէ ճնշման երկու տեսակի դէմքեր, որոնք կարմիր գիծի պէս կ'երկարին արաբական դասական հեքիաթագրութեան եւ առակա-

digitised by A.R.A.R.@

գրութեան իրերայաջորդ գործերուն մէջ, իրարու կը կապեն բոլոր ասացողները եւ կը վերածուին կենդանի ատաղձի՝ արարելու համար վերացական յատկանիշներով բնորոշուող նոյնանման դիմակներ:

Առաջին դէմքը ընկերային, քաղաքական եւ իմացական այն ճնշումն է, որ իրարու կը հակադրէ, օրինակ, *«Հազար ու մէկ գիշերներ»*ու զոհ Շահրազատը դահիճ Շահրիարին: Հակադրական ներկայութեան նոյն տարողութիւնը մեզի կը յիշեցնէ *«Մեր թաղի տղաքը»* վէպի հեքիաթասացին այն խօսքերը, որոնք կը վերաբերին ամէնէն աննշան յանցանքին կամ նուազագոյն յանդգնութեան համար ծայրայեղագոյն պատիժներու դատապարտուած «տղոց», որոնք «Առաջին տեսանողի»ին, այսինքն՝ հոգեւոր պետին կամայական «բանադրանքներ»ուն զոհերը կը դառնան եւ, այդ հանգամանքով՝ իրենք եւս կ'ապրին զոհ Շահրազատին կամ ամենազօր Տապալշիմ սուլթանի հալածանքներուն ենթակայ Պիտպա իմաստունի ոդիսականին մէկ այլ տարբերակը: Ճնշման երկրորդ երեսը մարդկային իրաւունքներու բռնաբարումն ու շահագործումն է, որ, ինչպէս վերոնշեալ հատորներուն, Ն. Մահֆուզի խնդրոյ առարկայ վէպի էջերուն նաեւ կը վերածուի հիմնահարցի, որուն դառն հետեւանքները կը ճաշակեն թաղին շահագործուող ընչազուրկները: Եւ կրօնական իշխանութեան (*շէյխեր*) եւ տնտեսական ուժին (վաշխառու դրամատէրեր) հաւարակաց շահերը երբ զանոնք կ'առաջնորդեն ուղղակի եւ անուղղակի դաշնակցումի, այն ատեն աւելի կը պարզուի թաղը ալեկոծող մնայուն պայքարին ամբողջական էութիւնը՝ իբրեւ մարդկային յարատեւ պայքար մը, որ կը նպատակադրէ պարտութեան մատնել մարդկային աշխատող ձեռքերու չարաչար շահագործումը եւ թաղեցին ազատագրել ազատ խօսքի եւ արտայայտութեանց վրայ կրօնականներու հաստատած բանադրական սպառնալիքներէն:

Բարոյական, մարդկային եւ նիւթական առումով ընչազուրկներու կեղեքումը, ինչպէս բոլոր պայքարներու պարագային, հոս եւս կը զարգանայ մէկէ աւելի մակարդակներու վրայ: Արդարութեան եւ հաւասարութեան հաստատման ի խնդիր «թաղի տղոց» անհատական թէ հաւաքական նոյնիսկ ամէնէն գաղջ կեցուածքին դիմաց՝ թաղին բովանդակ հարստութիւնը իրենց ձեռքերուն մէջ կեդրոնացուցած չնչին փոքրամասնութիւնը ո՛չ միայն աւելի կը սաստկացնէ իր անմարդկային սպառնալիքներու թափը, այլեւ աւելի եւս անշնչելի կը դարձնէ մթնոլորտը՝ դիմելով բրտութեան եւ սարսափի ծայրայեղագոյն միջոցառումներուն: Աւելի՛ն. հին ու նորօրեայ վաշխառուները կը յաջողին անմարդկային խաղին մէջ ներգրաւել հոգեւոր ուժին ներկայացուցիչները, որոնք, մինչ մէկ կողմէ խոնարհութեան եւ ներման յորդորներ կարդալով՝ շահագործուած զոհերուն բարիք եւ երջանկութիւն կը խոստանան, միւս կողմէ՝ կրօնական բանադրանքներ արձակելով՝ երկնային ու երկրային ծայրագոյն նզովքներով ու պատիժներով կը սպառնան թաղին «անդորրութիւնն ու երջանկութիւնը պղտորող անաստուած խառնակիչներուն»: Զարկերտեալ անուղղաներուն դէմ շղթայազերծուած միացեալ հալածանքը, որ գործի

digitised by A.R.A.R.@

կը լծէ զանազան «պատճառաբանութիւններ» եւ «արդարացուցիչ դէպք յանցանացներ», աւելի եւս կը ճնշէ արդէն արիւնաքամուած եւ կրաւորական խլեակներու վերածուած շահագործուած մեծամասնութիւնը, իսկ, միւս կողմէ՝ հաւատացեալի եւ արդարադատի քղամիդով կը զարդարէ իսկական ոճրագործներուն, այսինքն՝ կեղեքումի ախոյաններուն մեղապարտ մարմինները: Ցուսահատութեան կը յաջորդեն նոր ըմբոստացումներ, յետոյ՝ աւելի սարսափազդու միջոցառումներ եւ հուսկ՝ դարձեալ լռութիւն ու համակերպում: Եւ որովհետեւ մոռացումը մարդկային գլխաւոր տկարութիւններէն մէկն է, այս կացութիւնը կը շարունակուի երկար տարիներ, մինչեւ որ պայքարի նոր մեծ հանգրուան մը իր մթնոլորտով ալեկոծէ թաղը եւ նոր շարժումը դառնայ անցեալի վերաձեռքերում՝ իր սկիզբով եւ նոյնքան նոյնանման վախճանով:

Այս կրկնադէմ ճնշումը հեքիաթասացին կը պարտադրէ եզոմբոսեան լեզուն: Ան առանց բացայայտօրէն արտայայտուելու, խորհրդանշաններու միջոցաւ կը թելադրէ ունկնդիրին (կամ ընթերցողին), որ թաղին մէջ իշխող ուժին գլուխը կը գտնուի ժամանակակից Տապալշիմ մը, որ յար եւ նման է զինք կանխած բռնակալներուն՝ իր սրտի ու բանականութեան ունկերն ու աչքերը ամուր կերպով փակած է նոր արդարատենչներու բարի երազներուն եւ վեհ ցանկութիւններուն դիմաց: Այս պարագային նաեւ ընդդիմութիւնը կը սկսի խօսքով եւ ժամանակները կը միաձուլուին բացարձակ ժամանակին մէջ: Իր ժամանակին վկան հանդիսացող հեքիաթասացը նաեւ կը շղթայազերծէ իր լուռ ապստամբութիւնը, երբ խօսքին զօրութեան հանդէպ իր տածած անխախտ համոզումը բանաձեւելով՝ ան կը թելադրէ, որ հեքիաթներու գրառումը, իր կարգին, գիտակցական պայքարի ձեւերէն մէկն է եւ մղիչ ուժը տիրող իրավիճակը մերժող հաւաքական զարթօնքին: Ապա ան կը յայտնէ, որ գրողի հանգամանքը իբրեւ կեանքի կոչում ու նպատակ ճշդելէ ետք, ուժի կեդրոններուն եւ անոնց արբանեակներուն կողմէ դիմաւորուած է հեգնանքով եւ նուաստացուցիչ խօսքերով, որովհետեւ ինք գրող դառնալու որոշումը կայացուցած է ճնշուածներու քարտուղարի հանգրուանէն ետք: Այլ խօսքով՝ զոհերուն բողոքագիրներն ու հանրահաւաքները խմբագրած երէկի քարտուղարը ապրած է գիտակցական հոլովոյթ մը՝ յար եւ նման պատճառէն արդիւնք-եզրակացութեան հասնող իմաստասէրին կամ առնուազն գիտակից քաղաքացիին: Այնուամենայնիւ, այս ընդգծումը կատարելով հանդերձ, կարծես հաւանական թիւրիմացութիւններու առաջքը առնելու նպատակով ան կ'աւելցնէ, որ հակառակ իր ընդունուած գրողի կոչումին եւ իրեն դիմող տուժածներու մեծ թիւին, ինք ոչ մէկ առաւելութիւն արձանագրած է իր ճակատագրակից ծուռ հալածեալներուն վրայ: Ընդհակառակն, խեղդուած ճշմարտութիւնը աղաղակող ճշմարտութեան վերածելու իր գիտակցական որոշումին իբրեւ պատիժ՝ ան ենթարկուած է բացայայտ հալածանքի, որուն հետեւանքով դատապարտուած է իր թշուառութիւնը աւելի անշնչելի դարձնող մնայուն սպառնալիքներու: Այսպէսով, ան ձեւով մը կ'ուզէ ըսել, որ գրողը ստիպուած է վը-

digitised by A.R.A.R.@

ճարելու իր ժամանակի ընդդիմադիր ձայնը դառնալու վճիռին սուղ գինը, մանաւանդ երբ ընկերութենէն վերցուցած իր նմոյշներուն միջոցաւ ան ո՛չ միայն լուսարձակի տակ կ'առնէ համամարդկային հնչեղութիւն ունեցող ընկերային իրավիճակ մը, այլեւ կը ճգնի արթնցնել վախի եւ մոռացումի թմբիրին անձնատուր եղած անհատներու, բայց մա՛նաւանդ հաւաքականութիւններու յիշողութիւնն ու մարդկային գիտակցութիւնը:

Հետեւաբար, իր լսած եւ ապրած հեքիաթները գիրին զօրութեամբ օժտելով (իմա՝ վաւերականացնելով), հեքիաթագիրը կը փորձէ յայտնագործել մարդուն ձեռակերտը հանդիսացող չարը եւ մարդոց միջեւ օրէ օր աւելի արմատ նետող անարդարութեան դրդապատճառները, որոնք, ժառանգական ախտերու պէս, սերունդէ սերունդ կը փոխանցուին՝ իբրեւ մարդկային գոյութեան իմաստի անբաժան մասնիկներ: Կարծես թէ անոնք մարդ արարածին գլխաւոր յատկանիշներէն են, որոնց դէմ գրողը ստիպուած է մղել յարատեւ պայքար մը՝ ի խնդիր մարդկութեան ամբողջական ազատագրումին:

Խօսքին միջոցաւ ծաւալող պայքարը կը սկսի իր թաղէն: Թաղը հայելին է իր եսին: Իր թաղեցիներու գաղտնիքներուն եւ տառապանքներուն մէջ հեքիաթ առ հեքիաթ խորասուզուելով՝ ան աւելի եւս կը ճանչնայ իր ներքին աշխարհը եւ այն իրավիճակը, որուն մէջ ինք նաեւ կը տուայտի: Ահա թէ ինչո՛ւ ան տողընդմէջ կը յուշէ, որ խօսքը միայն ճանաչողական անփոխարինելի գործիք մը չէ, այլեւ՝ հրաշագործ զէնք մը, որուն միջոցաւ ասուն անասունը կը նուաճէ ճանաչողական արարքին դիմաց անդադար բացուող բազմահորիզոն եւ բազմաշերտ անծանօթ մակարդակներն ու անոնց նշանները: Պարզ խօսքով՝ առարկայական տուեալներու վրայ հիմնուելով հանդերձ, մարդկային ամբողջական գիտակցութեան շօշափելի արտայայտութիւնը հանդիսացող գիրը բարոյական-բանական դաւանանք մըն է, որ անդադար աւելի կ'ընդարձակէ գլխագիր մարդուն իմացական եւ հոգեմտաւոր տեսողութեան ընկալչական կարողութիւնները: Հեքիաթագիրը կենդանի փորձառութեամբ կը հասնի այս իմացական հաստատութեան: Գիրը այլեւս իր ճակատագիրն ու կոչումն է, որ շօշափելի պարզագոյն տուեալէն զինք կ'առաջնորդէ բնազանցական բարձրագոյն ոլորտներուն եւ գալիքի յայտնատեսումներէն կը վերադառնայ նոյնանման իրավիճակներու խորհրդանշաններուն: Դէպքերը կը շարժին նոյն ծիրին մէջ, միեւնոյն առանցքին շուրջ, սակայն, գիրին ճամբով, հեքիաթագիրը կը յայտնագործէ անդադար բազմացող խորհրդանշաններու մշտատեւ կեանքը, որոնց շնորհիւ «*Մեր թաղին տղաքը*» վէպը կ'օժտուի մշտանորոգ եւ բազմաթիւ իմաստներու բացուող խորհրդանշաններով:

Ըսինք, թէ գիրին ընտրութիւնը կատարելով՝ դէպքերուն անուղղակիօրէն մասնակցող հեքիաթագիրը կ'ուզէ պարտութեան մատնել մոռացումի ախտն ու ամենազօր ժամանակը, ներկայի գիտակցութեամբ անցեալը նուաճելու եւ անցեալի փորձառութեամբ զինուած՝ լուսադրիչ գալիքին դարպասները բանալու յստակ նպատակադրութեամբ: Խօսքին երեք

digitised by A.R.A.R.@

հեռաւորութիւնները՝ անցեալը, ներկան եւ ապագան իրարու ագուցող հեքիաթագիրը, փաստօրէն, այսպէսով կը ջանայ խորտակել անիւի մը պտոյտքին պէս շարունակ ինքզինք կրկնող կեանքի սովորական կշռոյթը՝ կեանքի հոլովոյթը իր երեւութական միօրինակութենէն ազատագրելու նախանձախնդրութեամբ: Հեքիաթէ հեքիաթ կամ ժամանակէ մը այլ ժամանակ անցնելով, ան կը հաստատէ, որ կուտակուող փորձառութիւնը այն նկատառելի ուժն է, որ ի վիճակի է հետեւելու կեանքի ընթացքին եւ զայն զետեղելու նոր հունի մէջ: Յետոյ՝ պէտք չէ մոռնալ գիտակցութեան հրաւէրին մագլցողական շեշտաւորումը հեքիաթ առ հեքիաթ, որպէսզի շահագործումներու դէմ պայքար շղթայազերծելու կոչուած մարդը նախ եւ առաջ ըմբոստանայ իր ներքին տկարութիւններուն՝ մոռացումին, վախին եւ կրաւորականութեան դէմ, յանդգնութեան թէկուզ ամենափոքր քայլը առնելէ առաջ: Միշդ այս պատճառով, իւրաքանչիւր հեքիաթի աւարտին կը հնչէ ասացողին ձայնը, որ չի ձանձրանար կրկնելէ, թէ իրենց թաղը այս տխուր կացութեան մատնուած պիտի չըլլար, եթէ թաղեցիք իրենցմէ վանած ըլլային մոռացութեան ախտը:

Փաստօրէն, երբ Ն. Մահֆուզ պայքար կը շղթայազերծէ այս մահացու ախտին դէմ, գոյութենական գիտակցութեամբ կռիւ կը մղէ ընդդէմ ոչնչութեան: Հեքիաթասացին գոյակռիւը ձեւով մը կը նմանի Շահրազատի դիմադրական արարքին, ա՛յն Շահրազատին՝ որ մահուան դէմ ճակատ յարդարեց խօսքով (կեանքով), պարտութեան մատնեց մահը եւ, այսպէսով՝ նաեւ այս անպարտելի ուժի խորհրդանիշ բռնակալ Շահրիարը: Շահրազատը մահուան (մոռացումին) հակադրեց կեանքը (խօսքը, գրութիւնը) եւ մինչեւ լուսաբաց հեքիաթներ պատմելով՝ իրմէ հեռացուց մահուան մնայուն սպառնալիքը եւ, միւս կողմէ՝ հեքիաթ առ հեքիաթ աւելի ամբողջացուց ու կռանեց իր գիտակցութեան յիշողութիւնը:

«Մեր թաղի տղաքը» վէպին հեքիաթասացը նաեւ իր հեքիաթները կը սկսի նոյն ճանաչողութեամբ: Ան նաեւ ժամանակը կը կշռէ գիտակցութեան նժարով, կը վերադառնայ գոյութեան առաջին աղբիւրին՝ հարցադրումին եւ իր հեքիաթներով, այսինքն՝ այլաբանութեան բազմահնար լեզուով կը պատասխանէ անդադար կրկնուող միեւնոյն հարցումին — «Ինչո՞ւ համար մոռացումը մեր թաղին ախտն է»: Բայց այս ժամանակը անցեալ դարձած եւ մոռացումի փոշիներուն տակ թաղուած հեռաւոր ժամանակահատուած մը չէ միայն, այլեւ այն հանգրուանը, որուն մէջ ասացողն ու թաղեցիք կ'ապրին եւ որուն սպառնալիքները կը դիմագրաւեն ամէն օր, ամէն վայրկեան: Ուստի, «ինչո՞ւ մենք անօթի ենք», «ինչո՞ւ միշտ չարը կը յաղթէ» եւ շօշափելի ներկայէն ծնող նման այլ հարցադրումներ կատարելով, ասացողը նաեւ կը քննարկէ իրեն համար անտեսանելի անցեալ ժամանակը, պատասխանատուութեան ամպիոնին վրայ կը բարձրացնէ իրենց ճակատագրին դէմ տկարացած կամազուրկ անծանօթները, որոնք ամէն սպառնալիքի սաստկացման պարագային պարզապէս կը կրկնեն՝ «Գրուածը գրուած է», կամ՝ «Կտրել չկրցած ձեռքդ պա՛գ ու ճակտիդ դի՛ր»:

digitised by A.R.A.R.@

Աւելի՛ն. առանց սրբագրուած ապագային առաջնորդող ուղին բանաձեւելու՝ հեքիաթասացը կը թելադրէ զայն: Խօսքը սկիզբն ու առաջնահերթ զէնքն է ամէն տեսակի պայքարի՝ բոլոր մակարդակներուն վրայ: Խօսքը իր մէջ կը խտացնէ բացարձակ ժամանակը եւ *«Մեր թաղի տղաքը»* վէպին մէջ Ն. Մահֆուզի օգտագործած առածներն ու ասացուածքները մոռացութիւնը յաղթահարած ժողովրդային իմաստուն եզրակացութիւններ ըլլալէ աւելի՝ խօսքին երեք ժամանակները իրարու շաղախող կենդանի կաւ ու խորհուրդ են: Խօսքը կեանքի քողը վար առնող եւ ծածկուած տգեղութիւնը կամ անարդարութիւնը (յաճախ՝ երկուքը միասին) բացայայտող մարդուն աստուածային ձեռքն է: Հո՛ս պէտք է փնտռել գաղտնիքը ժողովրդային փիլիսոփայութենէն օգտուելու նպատակով Ն. Մահֆուզի օգտագործած առածներու նկատառելի փաստին, որովհետեւ անոնց այլաբանական կուռ պերճախօսութեամբ միայն կարելի է հասնիլ անհասանելիին:

«Իրականութեան մարմինը երեւան հանեց», *«Ան աւելի բիրտ էր շրթներուն արտասանածէն»*, *«Երեւցաւ՝ ինչպէս մերկ ճշմարտութիւնը»* եւ նման մերկ արտայայտչաձեւեր հմտօրէն օգտագործելով՝ Ն. Մահֆուզի *«Մեր թաղի տղաքը»* վէպը կը յայտնագործէ ո՛չ միայն «իրականութեան մերկ մարմինը», այլեւ՝ անոր ներքին աներեւոյթ ոլորտները: Սովորական բողոքագիրներ խմբագրած պարզ քարտուղարէն վաւերագրող պատմիչ դառնալու որոշումը կայացուցած հեքիաթասացը այլեւս փրկութեան մէկ փարոսն է, որ իր եւ իր նմաններուն երազները կը գետեղէ կեանքի ճիշդ հունին մէջ, որպէսզի բռնութիւններու եւ կեղեքումներու թատերաբեմ դարձած Արեւելքին մէջ վերստին ծագի հրաշագործ ճշմարիտ լոյսը, արդարութեան, եղբայրասիրութեան եւ ճշմարտապաշտութեան տարաշխարհիկ լոյսը:

Վերջապէս, իրաքանչիւր հեքիաթի սկիզբին եւ վախճանին միջեւ այս երազեալ լոյսը աւետելով՝ մոռացումին, կրաւորականութեան եւ յետամնացութեան ու այս տուեալները շահագործող ուժերուն դէմ Ն. Մահֆուզ կը յայտարարէ մարդուն ազատագրման յարատեւ պայքարը, որպէսզի ազատագրեալները Արարիչը տեսնեն իր բոլոր բարի դէմքերով, համաձայն իրենց լուսաւորբագրուած էութեան բազմահազար դէմքերուն եւ ոչ թէ պատուհասներ սպառնացող ժխտական դէմքով, զոր շարունակ կը ներկայացնեն Աստուածն ու Մարդը շահագործման անսպառ նիւթի վերածած կարգ մը սեւազգեստ պահպանողական պատեհապաշտներ:

«Մեր թաղի տղաքը» վէպը Արեւելքի բոլոր մութ թաղերու տղոց հազարամեայ ոդիսականին համապատկերն է եւ, իր այդ իսկ արժանիքով՝ գրական-իմաստասիրական գլուխ-գործոց մը:

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՎԵՐՁԱՆՈՒԱԾ ԵՒ ՎԵՐՁԱՆՄԱՆ ԿԱՐՕՏ...

Այնպէս պատահեցաւ, որ այս տարի, Եղեռնի 80ամեակին ուշադրութեան յանձնենք Եղիշէ Զարենցի նշանաւոր «Մահուան տեսիլ» պոեմը, զոր երկար ատենէ ի վեր կը մտադրէինք նաեւ «Բագին»ի էջերէն ներկայացնել ընթերցողին, եւ ներկայացնել այս ոճով, պատկերազարդ։

Ցորովայնէ բարդ խառնուածք, ու պատմական եւ ստեղծագործական ելեւէջներով նոյնքան խառնակ ժամանակի մը մէջ միս ու ոսկոր կազմած անհատականութիւն՝ Եղիշէ Զարենց բաւական թիւով առեղծուածներ կապեց իր յիշատակին, համարումի ու հակակրանքի, յոյսի եւ յուսաբեկութեան, փառքի ու փլուզման պատճառներու վրայ կառուցուած ստեղծագործութիւններու առընչութեամբ ձգեց հարցականներ, որոնցմէ մէկը, ամէնէն ծանրակշիռը կ'առընչուի «Մահուան տեսիլ» պոեմին, որ յայտնութեան օրէն սկսեալ շարունակ նիւթ զարձաւ կեանքը տարբեր նժարներու մէջ կշռող մտաւորականներու, բայց, ինչպէս ըսել ուզուեցաւ, դեռ կը շարունակէ յուզել հարցականներ։

Հաշուի առած անոր յայտնութեան տարիներուն իշխող քաղաքական նշանախօսքերը եւ նոյն նշանախօսքերուն ցուցմունքներէն չեղողներուն գլխուն փայլատակող «արեգնացեալ կացինները», իրապէս անըմբռնելի կը թուի նախ «Մահուան տեսիլ»ի առիթով Զարենցի յայտնաբերած յղացման յանդգնութիւնը, անըմբռնելի՝ հերոսներուն ընտրութիւնը, նոյնքան վտանգաւոր՝ մեծ ոպանդը կազմակերպող ու գործադրող «հնօրեայ թշնամիին» հասցէն տալու համարձակութիւնը։

Բանաստեղծին ողջուցը հրատարակուած վերջին գործին՝ «Գիրք ճանապարհի»ի մէկ ընդարձակ բաժինը գրաւող պոեմ է «Մահուան տեսիլ»ը, 182 տուն հաշուող երկարաշունչ գործ, որ, զարմանալի երեւոյթ, վերը ակնարկուած պատճառներով կրնար բաւական մեծ փորձանք դառնալ հեղինակին գլխուն, բայց փորձիչները կանգ առին, ինչպէս անգամ մը նիւթ եղած է այս սիւնակներուն մէջ, «Աքիլլէ՞ս, թէ՞ Պիերօ» տրամա-վիպերգին, Ալեքսանդր Միասնիկեանին նուիրուած քառեակին եւ «Եօթը խորհուրդ քաղաք կառուցողներին» անուն ստեղծումներուն վրայ եւ հարեւանցիօրէն միայն զբաղեցան «Մահուան տեսիլ» պոեմին «հանդերձած» հերոսներով ու արծարծած հայրենասիրական ու կցորդ հարցերով։

Տիրող պայմաններուն մէջ մահուան հետ հաշտուած մէկը միայն կրնար հիւսել «Մահուան տեսիլ» մը եւ Զարենց կը թուի, թէ այդ հաշտութիւնը արդէն կնքած էր մուրճ ու մանգաղի մահասփիւռ գործակալներուն հետ։

182 տուներէ բաղկացող պոեմը ունի հոգեբանական ու պատմական տեղաշարժերու լծակները։ Անիկա կը սկսի մեր զոյգ զարթօնքներէն,

digitised by A.R.A.R.@

կանգ կ'առնէ պահ մը յեղափոխական բռնկումներուն առջեւ, նիւթ կ'ընէ Մեծ Եղեռնը, կը նկարագրէ Արեւմտեան Հայաստանէն ներս ռուսական բանակներու մուտքով ծլարձակուած յոյսը, նոյն բանակներուն նահանջին հետ մեր ժողովուրդի մէկ հատուածին մեծ յուսախաբութիւնն ու ստիպողական նահանջը, մնացորդացին հրաշափառ պոռթկումը ապա ու պոռթկումին չռնդալից արդիւնքը՝ Հայաստանի Հանրապետութիւնը եւ, ի վերջոյ՝ անկումը Հանրապետութեան ու Համայնավարութեան մուտքը Հայաստան, Լենինի անձով։

Այս իրադարձութիւնները իրականութեան թէ պոեմի հիւսուածքին մէջ մարգարէներ ունին, ջահակիրներ, հերոսներ, նահատակներ, պատմութեան անիւը դարձնելու կամքով օժտեալ արի արանց տիպարներ, որոնց մէկ խումբը տեսանելի դարձած է առաջին օրէն, տեսանելի կը մնայ նոյնիսկ անփորձ ակնարկներուն, բայց թէ Զարենց ի՞նչ սկզբունքով ու նախասիրութիւններով կատարած է անոնց ընտրութիւնը, երբեք առանձին քննութեան նիւթ չէ դարձած չարենցագէտներուն եւ հեռուէ հեռու քիչ մը դժուար է վերջնական բաներ ըսել այդ մասին։

Հայկական կուսակցութիւններուն ծեռնդէն առաջ գործող տիպարներ կան անոնց մէջ, հոգեբանական զարթօնքը պայթեցուցած դէմքեր կան, կան յեղափոխական կամքը դարբնող մեծագործներ ու քաղաքականորէն պայծառատես այրեր, թուենք անվիճելի պայծառութեամբ մը ուրուացողներէն միայն հայ հերոսները, յաջորդաբար՝ Հայր Ղեւոնդ Ալիշան, Բաֆֆի, Գամառ Քաթիպա, Քրիստափոր Միքայէլեան, Սիմոն Զաւարեան, Ռոստոմ, Ստեփանոս Նազարեանց, Պետրոս Դուրեան, Մկրտիչ Պէշիկթաշլեան, Գրիգոր Արծրունի, Խրիմեան, Աւետիս Ահարոնեան, Սիամանթօ եւ Դանիէլ Վարուժան։

14 դէմք, որոնց շարքին ընթերցողը գուր կը փնտռէ, օրինակ, Արեւելահայ զարթօնքի ներկայացուցիչներէն Խաչատուր Աբովեանի եւ Միքայէլ Նալբանդեանի ստուերները, ինչպէս գուր կը փնտռէ հետքը մեծ նահատակներէն Գրիգոր Զօհրապի եւ Ռուբէն Զարդարեանի։

Ընթերցողը նկատած պէտք է ըլլայ, որ իր գրառման ատեն ապրող դէմքերէն միայն մէկ հոգի ներս առած է պոեմը իր հիւսուածքին մէջ,— Աւետիս Ահարոնեան։

Երկրորդ ուշագրաւ պարագան այն է, որ գործող կուսակցութիւններէն միայն մէկուն դէմքերը հաշուի առած է Զարենց իր պոեմին մէջ, բացառաբար դաշնակցական դէմքերը, գործիչներ ու բանաստեղծներ, Քրիստափորը եւ ընկերները, Սիամանթոն յետոյ, Վարուժանը, իսկ միւս կուսակցութիւններէն ոեւէ դէմք չէ ներկայացուած պոեմին մէջ։

Ուրիշ ուշագրաւ պարագայ մը ա՛յն՝ որ պոեմին գրառման տարիներուն ապրող դէմքերէն միայն մէկ հոգի կ'երեւի «Մահուան Տեսիլ»ին մէջ,— Աւետիս Ահարոնեան, նորէն դաշնակցական, երբ բանաստեղծը այդ բացառութիւնը կրնար ընել, օրինակ, վերակազմեալ ռամկավարներէն Վահան Թէքէեանի, որ Ահարոնեանի պէս դիպուածով միայն զերծ մնաց թրքական եաթաղանէն, այլ Ահարոնեանի պէս Եղեռնի դիմաց ու անոր ի յուշ տաղուեցաւ մինչեւ չունչ վերջին։

digitised by A.R.A.R.@

Եղիշէ Չարենցի վաստակը գիտական հրատարակութեան պատրաստած հայրենի մտաւորական Ամասա Զաքարեան բանաստեղծին չորրորդ հատորին մէջ ծանօթագրած է «Մահուան տեսիլ»ի այլաբանութիւնները, բայց երեւի ծանօթագրած է բրեժնեւեան լճացման տարիներուն արտօնածը միայն ու կը թուի արագ սահած ըլլալ պատմական վայրերու եւ հաւանական այլ տիպարներու մօտէն, ինչպէս է պարագան, օրինակ, 25 տուն հաշուող պոեմին վեցերորդ գլուխին, որ կը պարզէ Չարենցի գնահատանքին ու համոզումը վայելող յատուկ նկարագիր մը։

Հոն նկարագրուած է բլուր մը, որուն բարձունքներէն կը հնչէ չեփորի կանչ մը։ Ժամանակը՝ Արեւմտեան Հայաստան ռուսական բանակներու մուտքէն ծնունդ առած յոյսին յաջորդած պատմական պահն է։ Հրդեհ է ամէն դի, աւեր, ռումբեր կը պայթին, կը թնդան թնդանօթներ, սակայն այդ քաոսին մէջ սովահար, տանջահար ու յամենայնի յուսաբեկ մնացորդացը կը դիմէ դէպի «այն բլուրը կարմիր» եւ կը հասնի հո՛ն՝ ուր հրացուած էր մի անծայր, լերկ հարթավայր», որուն մէջտեղը կը վառի «հսկայ, մի երկնահուպ խարոյկ, մօտը՝ Արքայ մը, գլխագիր, որ, կ'իմանանք, «պէտ նրանց Արքան էր գուցէ, կամ՝ սերած հրդեհի զարմից՝ Առաջնորդը նրանց կրակէ», որ «բռնել է սեղմած բռունցքում — մի փոքրիկ եռագոյն դրօշ»։

Այս տուեալները մտածել կու տան, որ գլխագրուած Արքան Հայաստանի Հանրապետութեան հիմնադիր Արամ փաշան է, այն ենթադրութեամբ տակաւին, որ այդ օրերուն չկար մեր իրականութեան մէջ մէկը, որ մարդերը կշռելու տաղանդով օժտեալ բանաստեղծի մը համար արժանի համարուէր արքայական կոչումի մը։

Նոյնը կը վկայեն Արքային շուրջ պար բռնող երախտագէտ հոգիները, պոեմին այդ մասին մէջ տեղ գտած կարգով՝ Քրիստափորը, Բաֆֆին, Խրիմեանը, միւսները նորէն, միշտ Արքային շուրջ պարի ելած բոլորը, «մի ամբողջ ժողովուրդ էր պարում, որ Արքային ի տես «Հրդահի՞ւն, Հրդահի՞ւն, Հրդահի՞ւն»» *կը գոռայ։ Այդ պահուն մէկը կ'անջատուի ամբոխէն, Քրիստափորն է դարձեալ, որ կը մօտենայ Արքային դահուն եւ «կտրած իր գլուխը կը նետէ»*

«Արքայի ոտքերի առջեւ, իրրեւ տուրք, կամ զոհ սրբազան» (էջ 115)։

«Մահուան տեսիլ»ի *այլաբանութիւնները վերծանուած են օրին, մեր ծանօթութեան սահմաններուն մէջ՝* «Հայրենիք» *եւ* «Տպիրի» *ամսագիրներուն մէջ,* «Ցուսաբեր» *եւ այլ օրաթերթերու էջերուն, Չարենցի դէմ շղթայազերծուած հալածանքի տարիներուն լոյս տեսած* «Խորհրդային Հայաստան»*ի եւ* «Գրական թերթ»*ի սիւնակներուն, բաց կամ դռնփակ ժողովներուն արձանագրուած փաստերուն երկայնքին, բանաստեղծին վերապահքի տարիներուն լոյս տեսած գիտական հրատարակութիւններուն մէջ, բայց մենք չենք յիշեր ակնարկութիւն մը, որ պոեմին այս հատուածը լոյսի մէջ առած ըլլար ու է դէմս գլխագրուած Արքային տար Արամ փաշայի անունը, ու պիտի չուզէինք սխալած ըլլալ, միշտ պատրաստ ըլլալով վարկածին աւելի համոզիչ պատասխան մը տուող դիտողութիւններուն։*

digitised by A.R.A.R.@

Ե. ՉԱՐԵՆՑ

ՄԱՀՈՒԱՆ ՏԵՍԻԼ

ՄՈՒՏՔ

Քերթութեան ոլորապտոյտ ճանապարհներով
Անհանգրրուան անցած տարիներ երկարածիգ,
Սիրտս կիզած բազում արեւների հրով,
Խուսափելով ընդմիշտ երգերից դիւրածին,

Ահա զգում եմ ինձ կրկի՛ն անօգնական,
Աեաւորուած, ինչպէս բարձր լեռան առջեւ,
Որի ոլորտներով կրկի՛ն պիտի գնամ,
Եւ չգիտեմ՝ ընկնե՞մ պիտի արդեօք, թէ՞ վաստակած հանգչեմ...

Արդ՝ մանուկ եմ ես նորից, ե՛ւ անուժ, ե՛ւ դողահար,
Անհամարձակ, ինչպէս աշակերտ, ուժերիս ու գրչիս անվստահ,-
Լեզուիս վրայ կսկիծ, ե՛ւ ջերմութիւն, ե՛ւ վահր՝
Աչքերս յառել եմ անցեալին՝ ապագայի նժոյգը նստած։-

ՀՈՄԵՐՈՍ

Ձեզ եմ յառել աչքերս, ո՛վ անցեալի վսեմ
քերթողահայրե՛ր,
Գագաթնե՛ր Մտքի ու Հանճարի եւ Քերթութեան
պետե՛ր,-
Քե՛զ, անյոյզ, մարմարեայ Հոմերո՛ս, որ երգել
ես հերոսների մահը,
Սակայն խաղա՛ղ սրտով, մի մանկական հեքիաթ
իրրեւ թէ։-

Եւ քե՛զ, լատինական փառքի հուչակը
աւետող
Ո՛վ դիւցազնական եւ բարբարոս
Վիրգի՛լ,
Որ ընթացել ես թէեւ հեղէն հանճարների
սրբագործած հետքերով,
Սակայն ինքնահուն է եղել պղընձեայ
արշաւանքը երգիդ։

ՎԻՐԳԻԼԻՈՍ

digitised by A.R.A.R.@

ՖԻՐԴՈՒՍԻ

Եւ բ՛զ, արեգակնական հանճար, շռայլօրէն փարթամ
Ֆիրդովսի՛,
Բազմաթղէտ, ինչպէս Արեւելքը, գանձերով ու
արկածներով հարուստ,
Որ հանճարիդ այնքա՛ն անայլայլ եւ իմաստուն
լոյսով
Ներթողել ես շահերի սխրութիւնները սին, իրրեւ
ուղի անմեռ, որ տրւում է վերուստ...

Սակայն թոլորդ միասին թւում էք ահաւասիկ
Ապագայով լեցուն աչքերիս, որ անցեալին եմ յառել ահալի,–
Ո՛վ դուք, զառամեալ մանկութեան յիշատակներ վսեմ,–
Այնքա՛ն թոթովախօս ու միամիտ...

Ձեր երգը միամիտ մանկութեան եւ ոգու երջանիկ անգիտութեան,
Եւ կարծեցեալ փառքի, եւ ճորտութեան դժնի,
Բայց եւ հանճարափայլ պարգեւն էր՝ մեզ տրուած
Հի՛ն դարերի տխնութիւնից ազնիւ:–

Այլեւ ներթողել է ձեր երգը՝ հերոսութիւն ու փայլ,
Խիզախների վսեմ արշաւանք եւ այրերի դաշինք,
Նշել է քերթութեան լուսազարդ ճանապարհ,
Փառք անմահական՝ բազմած մարմարիոնեայ ճժոյգների բաշին:–

Բայց անցեալը այն, այն ուղին, այն ճանապարհը չարչարանաց,
Որին ես ահաւասիկ ուզում եմ մօտենալ –
Չէ՛ լեռ հերոսութեան, կամ վեհութեան ուղի, կամ փառքի
ճանապարհ,
Կամ իմաստութեան պարտէզ, կամ ոգորում ոգու, կամ տխնութիւն
անահ...

Եւ այն տեսիլը, որ՝ տարիներից յառնած՝
Մառացել է ահա իմ վարանոտ ու զարհուրեալ հայեացքների դէմ –
Ո՛չ փառքի գագաթ է խոստանում, ո՛չ քերթութեան Պառնաս,
Ո՛չ անգամ փողփողեալ տողերի անմրցելի հանդէս:–

Այդ տեսիլը դժնի է եւ ժանտաժանտ, անփայլ է եւ գոսնական,
Եւ զարհուրելի է, ինչպէս զառանցանք, եւ անիմաստ է յաւէտ,–
Ո՛վ անցեալի պայծառ քերթողներ, ձեր երգը հերոսական
Թող դարերի՛ն մնայ ձեր հեռաւոր, ձեր օրերի՛ն անէ:–

digitised by A.R.A.R.@

ՏԱՆԹԷ

Զեր մարմարիոնեայ եւ դաշն դէմքերի
փոխարէն,
Իրրեւ վարպետ միակ, իրրեւ անկաշառ
մարագրէ –
Ահաւասիկ յառնում է մռայլ
միջնադարից
Եւ կանգնում է դէմս, ո՛վ տառապեալ հանճար,
քո կերպարանքը քարէ:–

Անցեալի արնակարմիր տեսիլներից շշմած հայեացքներիս հանդէպ,
Որ ուղեցոյց են հայցում, Ե՛ւ առաջնորդ արդար, Ե՛ւ կորովի
հանճար–
Պատկերելու համար Անցեալի խաւարից յառնած զարհուրանքը–
Դժոխքի դժնի մշուշից բարձրանում է ահա քո դէմքը
բազմաչարչար...

Զարհուրանքի սովոր աչքերով, որ խորն են ու գերող,
Դու նայում ես ահա ոգուս խորքը, երկա՛ր նայում ես ոգուս
խորքը,–
Եւ բռնում ես ձեռքս, որ ինձ առաջնորդես մռայլ ուղիներով,
Ինչպէս Վիրգիլը լուսաւոր, որ ցոյց տուեց մի օր քեզ երկնային
դժոխքը:–

Ահաւասիկ գնում ենք քեզ հետ միասին, աշակերտ ու վարպետ,
Քերթութեան թոթովախօս մանուկ եւ այր բազմավաստակ,
Մեր խոհերով, մեր կեանքով, մեր երգերով անհունօրէն տարբեր,
Բայց եւ հարազատ ու արնակից, իրրեւ միեւնո՛յն մարդկութեան
երկու տարբեր հասակ:–

Ընկնում ենք քեզ հետ միասին մենք ճանապարհ երկար,
Եւ մեր առջեւ ահա իր յորձանքն է ձգում արնափրփուր մի գետ,
Որ բաժանում է դժնի անցեալից այս լուսաւոր ներկան,–
Եւ մենք նստում ենք Մտածումի նաւը, որ նաւարկենք քեզ հետ:–

Գնում ենք ահաւասիկ քեզ հետ Քերթութեան ու Խոհի դժուար
ճանապարհով
Դէպի ափը դէմի՝ ամէն յոյս ու հաւատ թողնելով այս ափին,
Եւ Մտածումս ահա, որպէս մշտնջենական ու կորովի Քարոն,
Նաւարկում է դէպի Անցեալը, դէպի Անցեալը դառն, դէպի ափը
Մահուան ու Սարսափի...

digitised by A.R.A.R.@

Ա

Մենք ափ ենք ելնում միասին եւ նայում ենք մեր շուրջը մի պահ.–
Լռութիւն է, մռայլ մառախուղ, իսկ վերից գունատ մի մահիկ
Իր մեռեալ լոյսի հետ մէկտեղ տարածում է տխրութիւն ու ահ
Այդ անծիր եզերքի վրայ անսահման Սոսկումի ու Մահի:

Քայլում ենք, իրարու բռնած, քայլերով տարտամ, երերուն,
Անուղի, ինչպէս մոլորուած երկու կոյր, կամ անօգ մանուկ:
Միեւնո՛յն մառախուղն է բռնել թէ մօտիկը մեր, թէ հեռուն,
Միեւնո՛յն լռութիւնն անհուն:

Խտանում էր մեր դէմ մառախուղը.– ժայռեր են կարծես ու քարեր
Գարսպի նման բարձրացել եւ բռնել ճանապարհն անդարձ:–
Մօտենում ենք մենք ժայռերին – եւ տեսնում ենք վիթխարի ծառեր,
Եւ մտնում ենք ահա խաւարով ու ահով լեցուն մի անտառ:

Ծառերի միջով վիթխարի գնում ենք դանդաղ մենք առաջ,
Կանգնում ենք, ականջ ենք դնում լռութեան մէջ երկար ու երկար,–
Եւ ահա հնչում է մթին անտառի խորքից մի հառաչ.–
Այդ ե՞րգ է արդեօք, հեկեկա՞նք, թէ՞ տրտունջ՝ քնարով հրգած:–

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ

Լսում է ապա մօտիկից մի հանդարտ, դանդաղ
ոտնաձայն.
Մօտենում է մէկը. դէպի մե՛զ, դէպի մե՛զ է գալիս
ահա նա.
Եւ ահա – ծառերի ետեւից ելնում է մի այր
գլխաբաց.–
Վարդապե՞տ է նա, մուրացի՞կ, թէ՞ գեղջուկ, աղքատ
քահանայ:–

Լուսնի սառ լոյսերով ողողուած՝ մօտենում է նա երերուն
Քայլերով, կանգնում է մեր դէմ,– ուրուական է կարծես նա ցաւի.–
Փոքրիկ է. նիհար. կիսամերկ. ճակատին պսակ է կրում,
Եւ ձեռքին բռնած նա ունի մի հսկայ արծաթեայ տաւիղ:

Հասնում է մօրուքն սպիտակ մինչեւ սրունքները նրա՝
Սպիտակ սաւանի նման ծածկելով մերկութիւնը ծերի.
Հայեացքով տխուր ու անօգ նայում <է> նա լուռ մեր վրայ,
Եւ ապա, դառնալով Վարպետին, նա ասում է ձայնով մտերիմ.

digitised by A.R.A.R.@

«–Վարդապե՛տ, օ՛հ, ես Էլ քեզ նման մի գիշեր աշխարհից անցայ,
«Ապրեցի, իբրեւ վանական, հայրենի եզերքում քո ծովի.
«Բայց չքնաղ հայրենիքը քո – ինձ համար հայրենիք չդարձաւ,
«Եւ ծովը ձեր այն ծիծաղկուն – չբուժեց իմ սիրտը ցաւից:

«Աշխարհում շաչող հողմերից այն կողում ապաստան գտած,
«Զգեցած սեւասեւ սքեմ՝ ես տաւիղը սակայն սիրեցի.
«Եւ տաւիղը շեփոր դարձրած՝ քերթութեան պարտէզը մտայ,
«Որ կորած հայրենիքս երգեմ եւ անցեալը նրա հրածին:–

«Երգեցի ես ձայնով առնական ամրոցներն ու բերդերը հայոց,
«Ոստանները հայոց արքայից, պալատները նոցա փառահեղ.
«Երգեցի Կարմիր Աւարայրը, Մասիսը՝ աստղերին հայող,
«Զգտելով հին փառքը հայոց սրտերում անմար միշտ պահել:

«Բնարով մարտի կոչեցի ես նոցա՝ յանուն անցեալի.
«Կոչեցի ելնել վերստին, թօթափել փոշին բարբարոս,–
Կոչեցի արժանի լինել մեր նախնեաց փառքին պանծալի՝
«Վառելով ջահերն անցեալի, իբրեւ նո՛ր փրկութեան փարոս:–

«Եւ երգս ի զուր չհնչեց:– Հայրենի եզերքից քո լուրթ
«Թռչելով, իբրեւ երաւէր, դէպի հայրենիքն իմ հեռու–
«Նա ոտքի հանեց քաջարի այրերի անմահ մի սերունդ,
«Որ եկաւ գերութեան փոշուց հայրենեաց համար կռուելու:–

«Եւ թէեւ քէնով բարբարոս փորձեցին նոքա, դարաւոր
«Ոսոխները հայոց աշխարհի, մեզ արեա՛մբ ողողել կրկին,–
«Բայց վսե՛մ մեր երթը եղաւ անցեալի փայլո՛վ փառաւոր,
«Եւ խաղա՛ղ սրտով ես մեռայ՝ մինչեւ մահ քնարը ձեռքիս:–

Ասաց – եւ խփեց քնարին նա մոմէ մատներով դեղին,
Աչքերում ամեհի մի հուր, մօրուքով մերկութիւնը ծածկած,–
Եւ ձայնը նրա քնարի, որ նման էր ձայնին թիթեղի,
Հնչում էր, ինչպէս մի հիւանդ, մահամերձ ընկած մանկան լաց:

Եւ տաւիղն հնչելով հեռացաւ, խարխափով մտաւ նա նորից
Անտառի խորքը խաւար, ուր տիրում էր տագնապ ու հառաչ:–
Մենք երկար լսեցինք նրա քնարի հառաչքը խորին,
Մինչ սուզուեց, լռեց նա հեռուում... Եւ անձայն անցանք մենք
առաջ:–

digitised by A.R.A.R.@

Բ

Գնում ենք մենք ահա կրկին անտառով այդ մութ ու խաւար,
Ծառերի ճիւղերն անտերեւ խլում են դէմքերին մերթ մեր,
Եւ թւում է մեզ, թէ նոքա չորացած մատներ են նիհար,
Եւ թւում են ծառերն անտառի – սարսափից քարացած դէմքեր:

Գնում ենք անտառով երկար, եւ ինչքան խորն ենք մտնում–
Լցւում է անտառը այնքան հառաչի ու լացի ձայներով,
Մանուկներ են կարծես զառանցում, ծերեր են հոնդում մթնում,
Սերունդներ են կարծես կարկառում բազուկներ գրկող ու գերող:

Բայց ահա երեւում է հեռուն տագնապով թարթող մի կրակ,
Թարթում է նա մերթ խաւարում, ու կրկին տագնապով մարում:
Մենք քայլում ենք նրա ուղղութեամբ, մօտենում ենք ահա մենք
նրան,
Եւ տեսնում ենք արդէն մոխրացած, համարեա՛ հանգած մի խարոյկ:

Խարոյկի շուրջը թափուած մենք տեսնում ենք զէնքեր, ոսկորներ,
Մարդկային գանկեր, հնօրեայ զրահներ, մի հին հրացան:–
Եւ տեսնում ենք ապա, այլայլուած հայեացքով նայում ենք երբ վեր–
Ծառերի ճիւղերից կախուած կմախքներ՝ տապից չորացած:

ՐԱՖՖԻ

Այս դժնի պատկերից սարսած՝ ուզում ենք
արդէն կիսամար
Այդ խարոյկը թողնել ու գնալ, ընթանալ կրկին,
երբ յանկարծ,
Ծառերի ետեւից ելնելով՝ երեւում է
կիսամերկ մի մարդ՝
Սեւահեր, ահագին գլխով, ոտները
ոլորուն ու կարճ:

Գաճաճ է կարծես՝ հրաշքով անտառի խաւարից ելած.
Աչքերը շանթեր են թափում, ցայտում են կայծակներ ու կիրք.
Վիթխարի գլուխը կարծես տնկած է ուսերի վրայ.
Ակնոցներ ունի նա դրած, եւ ձեռքին բռնել է մի գիրք:

Նայում է շանթող աչքերով նա մի պահ աչքերի տակից,
Նստում է ապա կիսամար խարոյկի մոխիրի վրայ,
Եւ հսկայ մի գնդի նման ցնցելով գլուխն ահագին՝
Ասում է ձայնով կանացի՝ ցուցամատը ճակատին դրած.

digitised by A.R.A.R.@

«–Այս խարոյկը Ե՛ս վառեցի աշխարհում ծեռքերով իմ թոյլ,
«Եւ տասնեակ տարիներ բորբոքուած՝ նա ցրեց շողեր ու կայծեր,–
«Իմ ամբողջ կեանքում կռացած՝ փչեցի ես անխոնջ ու անդուլ,
«Որ երբ՛ք, երբ՛ք չմարի նրա հուրը – եւ յա՛ր առկայծէ։

«Եւ եկան, տասնեակ տարիներ սերունդնե՛ր եկան բորբոքուած,
«Այրեցին սրտերը թափուր աշխարհում վառած իմ հրով,–
«Հայրենի երկրի խաւարում սփռեցին հուր, ցնորք ու կայծ.
«Այստեղի՛ց զրահներ առած գնացին Ֆաեբրատն ու Կարոն։–

«Ես վրէ՛ժը կեանքում երգեցի թշնամու հանդէպ հնօրեայ.
«Իմ քնարը, գրիչն իմ հատու – սրբազան մրրի՛կ սերմանեց,–
«Բայց նստած եմ կրկի՛ն ահա ես խարոյկիս մոխիրի վրայ–
«Եւ շրթերս թորում են հիմա նախատի՛նք միայն ու անէ՛ծք...»։

Վեր թռաւ յուզուած նա տեղից, շպրտեց գիրքը մի կողմ,
Կռացաւ խարոյկի վրայ եւ կրկին սկսեց փչել։–
Ելնում էր շունչը կրծքից մի խռպոտ, փայտեայ աղմուկով,
Եւ խարոյկը չէր բորբոքում... Եւ կանգնեց նա ոտի ու գոչեց.

«–Բարձրացի՛ր, ելի՛ր խաւարից, ո՛վ ռազմի երգերի գուսան,
«Հնչեցրո՛ւ քնարդ կրկին, թող ձայնը նրա շառաչէ.–
«Թող մարտի՛ նա կոչէ կրկին բանակները մեր սրբազան,
«Ե՛ւ զէնքերը թող որոտան, ե՛ւ ռազմի սրերը թող շաչեն։–

Այսպէս նա կանչեց,– եւ ահա անտառի
խորքից ելնելով,
Մօտեցաւ մեզ մոայլ մի մարդ՝ մազերը
գանգուր ու խռիւ.
Վիթխարի ճակատ նա ունէր. հայեացքը
խրոխտ ու խելօք.
Իր ձեռքի պղնձեայ շեփորով շեփորեց
նա պայքար ու կռիւ։

ԳԱՄԱՌ ԲԱԹԻՂԱ

Բայց շեփորը՝ ռազմի ամպագոռ, շառաչուն երգի փոխարէն՝
Արձակեց խռպոտ մի հառաչ, որ նման էր քամու կաղկանձի.
Բայց նրանց մեռեալ աչքերում ամեհի հուրեր նա վառեց,
Եւ գանգնն սկսեց պարել–խելագար, խնդութեամբ անծիր...

Քարացած՝ մենք նայում էինք վիթխարի գլխով այդ մարդուն,
Որ վայրի մի պար էր պարում կաղկանձող նուագի ներքոյ,
Իսկ վերից, խաւարի միջից, պաեակի նման մշտարթուն,
Ջառամեալ լուսինն է նայում՝ հմայուած պարով ու երգով։–

digitised by A.R.A.R.@

Իսկ ծառի ճիւղերից կախած կմախքները այն չորացած,
Շարժելով ծնօտներն իրենց՝ սկսեցին ամեհի կափկափել,–
Եւ լուսինը, ի վերուստ տրուած իր ժպիտը անդարձ մոռացած,
Սկըսեց բրբջալ եւ վերից մեր գլխին պաղ մոխիր թափել...

Գ

Մենք թողինք պարող գաճաճին եւ ռազմի շեփորով մարդուն,
Եւ կրկին դանդաղ քայլերով քայլեցինք անտառի միջով,–
Եւ թնդաց յանկարծ անտառում մի երկինք հասնող դղրդիւն,
Եւ անտառը լցուեց ծայրէծայր բարձրաձայն լացով ու ճիչով:

Սարսափած՝ վազեցինք մենք առաջ ծառերի միջով անտառի,
Անպաշտպան կրծքերս նրանց ճիւղերի հարուածին բացած,–
Եւ այդպէս երկար վազելով – դուրս եկանք յանկարծ անտառից
Եւ փոուեց աչքերիս առջեւս – ամայի, ընդարձակ մի բացատ:

Ողողուած կարմրաւուն լոյսով – ձգւում էր բացատն ընդարձակ,
Ամայի, ինչպէս անապատ, անպտուղ, քարքարոտ ու լուռ:–
Այդ մռայլ բացատի մէջտեղում, հրաշքի նման բարձրացած,
Ցցուել էր ժայռերից կերտած մի կարմիր, կոնաձեւ բլուր:

Մենք նայում էինք բլուրին՝ աչքերս սարսափից չոած,
Այնտեղից ռազմի մի շեփոր կանչում էր խրոխտ ու առոյգ.
Վառւում էր բլուրի գլխին բարձրաբերձ բոցով մի կրակ,
Թւում էր, թէ վառել են այնտեղ մի հսկայ տօնական խարոյկ:–

Ոլորուն մի ուղի էր տանում բացատով դէպ բլուրն այդ թեք,
Քայլեցինք ուղիով այդ ոլոր,– եւ ահա, բլուրին չհասած,
Հանդիպեց, կտրեց մեր ուղին մի ինչ-որ կերպարանք անդէմ,
Մի, կարծես դժոխքից եկած, անսահման դժնի արարած:

Ք. ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

Դա մա՞րդ էր, որո՞ւ, թէ մի դե՞ւ,–
դժուար էր որոշել իսկոյն:–
Նման էր հսկայ մորեխի, շարժւում էր
թռիչքով թեթեւ.
Մնում էր մի պահ իր տեղում – եւ յանկարծ
թռիչք էր անում,
Կարճ, հատու, ինչպէս դաշտերում մորեխն է
թռչում տեղից-տեղ:

digitised by A.R.A.R.@

Այդպիսի թռիչքով հատու ծառացաւ երբ նա մեր առաջ–
Սկզբում տեսանք մենք միայն ոսկորի եւ մսի մի կոյտ.
Կարծես մէկը առել էր մի խուրձ ոսկորներ եւ խառնել էր իրար,
Իսկ յետոյ – իրարու կապել, խառնելով ազդրեր ու գլուխ:

Երբ մի քիչ երկար նայեցինք ոսկորի ու մսի այդ կոյտին–
Տեսանք, որ կմախք է դա մի՝ գլխի տեղ – երկաթեայ մեքենայ,
Ձեռքերը տեղերից պոկած, գլուխը հագցրած ոտին,
Իսկ սրտի փոխարէն–կրծքում պողպատեայ զսպանակ դրած:

Ներքեւից, ձախ ոտի մօտից, գլուխը նայում էր վերեւ՝
Աչքերից շանթեր թափելով, ատամները քսելով իրար.
Աջ ոտի մատներով մի պահ նա գունատ ճակատը քերեց–
Եւ այսպէս նա խօսեց՝ ներքեւից ցասումով նայելով մեր վրայ.

«–Ո՞վ դուք, որ մտել էք ահա այս մռայլ անտառը Ահի,–
«Նայեցէ՛ք հատեալ կմախքիս եւ գլխիս՝ պոկուած իր տեղից.–
«Աշխարհում որոնում էի ես խոհեր կռուի ու մահի,
«Եւ գլխի փոխարէն ունէի մեքենայ՝ շինուած թիթեղից:–

«Ես սրտի փոխարէն ունէի իմ կրծքում պողպատ զսպանակ,
«Անձանօթ էր կեանքում ինձ համար ամենայն վարանում ու ահ.
«Մեր երկրի արի այրերից կազմեցի ես մե՛ծ մի բանակ,
«Եւ մեր սեւ դրօշի վրայ գրեցի «Հայրենիք կամ Մահ»:

«Գնացին նոքա, այդ արի զինուորները, Երկիրն Աւետեաց,
«Տիրում էր այնտեղ բռնութիւն, ե՛ւ ոճիր, ե՛ւ կեանք անազատ.
«Գնացին նոքա՝ սրբելու մեր դէմքից նախատինք ու լաց,
«Բայց երկիրն արեամբ ողողեց տագնապած արքան այն գազան:

«Հանելով բարբարոս հորդաներ – նա քանդեց մեր շէները բոլոր,
«Մեր մանկանց արեա՛մբ արբեցաւ՝ թաքնուած որջում արքունի,–
«Եւ ահա վրէժով լցուած, դժոխքի հանգարին դիմելով,
«Ուխտեցի ըմպել մի բաժակ բռնակալ Արքայի արիւնից:

«Ես գլուխս դարձրի այնժամ դժոխքի մի գոռ մեքենայ,
«Բայց, դժբախտ փորձի ժամանակ, Արքայից հեռու նա պայթեց,–
«Եւ խփեց–խորտակեց նա ինձ... Իսկ Արքան կենդանի մնաց,
«Եւ, իբրեւ դեւի տրիտուր, նախնիքներ նիւթեց ու ջարդեր...

digitised by A.R.A.R.@

«Եւ մնա՛ց նա կենդանի... կենդանի՛ նա մնաց... Վա՛յ ինձ...
«Աշխարհից հեռացայ ես այսպէս՝ իմ ուխտը թողած անկատար...
«Եւ ո՛չ մի կաթիլ չխմած արիւնից այն Հրէշ-Արքայի՝
«Ես կեանքից ընդմիշտ հեռացայ... Եւ չունե՛մ հանգիստ ու
դադար...»։

Ասաց-կափկափեց կրկին ատամները թափով մի ահեղ,
Աչքերից շանթեր արձակեց,– եւ յանկարծ թռչելով տեղից,
Սկսեց թպրտալ օդում, թռչկոտել, նչալ ու վայել,
Լցնելով բացատն աղմուկով ոսկորի եւ շաչող թիթեղի։–

Ս. ՉԱՐԱՐԵԱՆ

Թռչկոտում էր նա խելայեղ, կատաղի դառնութեամբ
վայում,
Դառնում էր օդում, ինչպէս հոլ, եւ ճիչեր արձակում
ցաւի.–
Մենք դիտում էինք քարացած, սարսափած աչքերով
նայում,
Երբ յանկարծ մօտեցան նրան երկու այր՝ դէմքերով
կաւին։

ՌՈՍՏՈՄ

Բուսնելով կարծես խաւարից՝ մօտեցան նրան
երկու այր,
Երկու մարդ սեւազգեստ, մռայլ, կրծքերին
պղնձեայ նշան.
Կմախքներ էին՝ զգեցած զգեստներ մթին
ու մռայլ,
Ձեռքերին ոսկորներ ռնած, ինչպէս գոռ
մարտի դրօշակ։

Ելնելով կարծես խաւարից՝ մօտեցան նրանք այն հոլին,
Որ ցատկում ու դառնում էր օդում եւ ճիչեր արձակում ահեղ,–
Եւ մէկը նրանցից, որ ունէր հայեացքներ՝ մռայլ փայլով լի–
Սկսեց ձեռքերով օդում, նրա շուրջը շարժումներ անել։

Հիպնոսող բժիշկն է ինչպէս ներազդող շարժումներ անում՝
Հիւանդի առջեւ շարժելով պսպղուն մի գունդ, կամ բիւրեղ–
Նա շարժում էր այդպէս մի ոսկոր, կրկնելով այնայտ մի անուն,
Ցանքերի տակից ցայտելով կրակներ կարմիր ու հուրեր։

digitised by A.R.A.R.@

Հ. Յ. Դ.
ՀԸԴԱՀԻՆ...

ԽԱՆ-ԲԱՆ-ՕՏ...

ԲԱՆ-ՕՏ...

«Հրդահի՛ւն, Հրդահի՛ւն, Հրդահի՛ւն» – ձայնում էր կանչով
շառաչուն,
Ձեռները կարոտով օդում հոլածեւ մարդուն տարածած,
«Խա՛ն-Բա՛ն-օ՛տ, Խա՛ն-Բա՛ն-օ՛տ, Բա՛ն-օ՛տ» – ձայնակցում էր
նրա հառաչին
Ուղեկիցը նրա՝ ամեհի էֆստազում ինչպէս վերացած:

Այդ մռայլ կանչերի ներքոյ հոլատիպ մարդը քիչ-քիչ
Սկըսեց թուլանալ, հանդարտել,– եւ ահա ընկաւ ուժասպառ.
Ցնցում էր մի քանի վայրկեան իր գլուխը միայն ահագին,
Բայց նա էլ հանդարտուեց ահա... Եւ տիրեց լռութիւն անբառ:–

Մենք նայում էինք քարացած պատկերին այդ մութ ու յոռի,
Եւ ուզում էինք հեռանալ, ընթանալ բացատով կրկին,
Երբ հնչեց բլուրի գլխից հոինդը ռազմի շեփորի,
Եւ լսուեց աղմուկ, ոտնաձայն – ներքեւից, անտառի խորից:

Լսելով ձայնը շեփորի – վեր թռաւ տեղից հոլածեւ
Այն կմախքը, կամ մարդը կրկին՝ նակատին արնաթոր վէրքեր,–
Մի քանի վայրկեան քարացած, ականջը շեփորին, նա լսեց,–
Եւ քամու նման սրընթաց – երեքով սլացան ներքեւ:

Շոինդը ռազմի շեփորի թնդում ու կանչում էր մինչդեռ,
Ձայնում էր բլուրի գլխից, ինչպէս կոչ, երթի աղաղակ,–
Եւ լսում էր ներքեւից, անտառից – ճիչեր ու կանչեր,
Հաւաքւում էր կարծես անտառում եւ երթի էր ելնում մի բանակ:

Վերեւից, բլուրի գլխից հնչում էր շեփորը, կանչում,
Տագնապով, ինչպէս ահազանգ,– եւ ձայնին նրա զուգահեռ՝
Լսւում էր հառաչ, ոտնաձայն, մի զանգ էր հեռուն դողանչում,
Եւ վառւում էին անտառում բազմաթիւ կրակներ ու ջահեր...

digitised by A.R.A.R.@

Դ

Մենք լսում էինք, քարացած, շեփորի ձայնը դժնի,
Որ վերից, բլուրի գագաթից, հնչում էր ամեհի թափով,-
Երբ ահա ներքեւից, անտառից, ողողուած ցոլքերով լուսնի,
Սկըսեց եկնել ու հոսել դէպի մեզ – հսկայ մի թափօր:

Շարժւում էր թափօրը՝ լուսնի սպիտակ լոյսով ողողուած,
Ահագին, ինչպէս մարդկային վիթխարի մի գետ, կամ հեղեղ.
Ձիերի խրխինջ, բառաչիւն, մարդկային հեկեկանք ու լաց,
Զէնքերի շաչիւն, թմբուկներ, կրաներ կարմիր ու դեղին:-

Այս ամէնը խառնուած իրար, գալիս էր դանդաղ դէպի մեզ,
Կամ դէպի բլուրն էր գնում՝ անսալով շեփորի ձայնին:-
Քաշուեցինք զգոյշ մենք մի կողմ, որ յորձանքը մեզ չեզմէ,
Կամ չնչին տաշեղի նման մեզ յանկարծ իր հետ չտանի:

Մօտենում էր թափօրը դանդաղ, հասնում էր հանդարտ ու ահեղ,
Հեղեղի նման յորդանում՝ բերելով աղմուկ ու հառաչ,
Ցնծութեան ճիչեր խելագար, զառանցանք ու վիշտ խելայեղ,
Ոսկորի ու մսի մխրճանք, երկաթի շռինդ ու շառաչ:

Մօտեցաւ թափօրն ահա մեզ եւ դանդաղ սկսեց անցնել
Մեր չոած աչքերի առաջով, երազի նման մի դժնի:
Մենք նայում էինք քարացած, սարսափով անհուն ու անծիր,
Ողողուած սպիտակ լոյսով այն ահից դալկացած լուսնի:

Ս. ԱԶԱՐԵԱՆՑ

Գալիս էր ամէնից առաջ վիթխարի
հասակով մի մարդ՝
Զոր, բարակ, հսկայ նակատով, պեխերը սափրած,
բայց կլոր
Մօրուքով, ինչպէս քահանայ, հայեացքով խոնարհ
ու հանդարտ,
Իր գունատ, մահատիպ շրթներով մի ինչ-որ
աղօթք երգելով:

Մազերին եղեամ էր ցանել մառախուղը կարծես Հիւսիսի,
Որ շողում էր ալեզարդ գլխին, ինչպէս սառը, օտար լոյսի փայլ.
Նա տխուր շարական էր երգում Աստծոյ որդի Յիսուսին,
Բայց բառերը խառնում էր իրար՝ յորդելով անհարթ մի բարբառ:

digitised by A.R.A.R.@

Իր բարակ, ոսկորոտ մատներով նա բռնել էր մի գանձարան.
Աջամբոյր են փոքրիկ ժամերում հաւաքում նման ամանով.
Թիթեղեայ էր փոքրիկ գանձարանը,– եւ ձեռքով գրուած էր վրան՝
«Ք ա ղ ա ք ա կ ա ն ա ն օ ք»:

Սկիհի նման արքազան գանձարանն այդ բարձր պահած՝
Երբ անցաւ առաջով նա մեր – մեզ տեսանք զարմանքով անծիր,
Որ նախրում է անօքի վրայ, աղաւնու կերպարանք առած,
Սուրբ հոգու նման – մի փոքրիկ երկգլխանի արծիւ:

Այդ անօքը բարձր պահած՝ նա անցաւ քայլերով դանդաղ,
Անմոռանչ, ինչպէս քահանայ, որ գանձ է հաւաքում ժամում,–
Եւ դէմքը նրա սպիտակ եւ սկիհը նրա այդ – անդարձ
Դրոշմուած մնաց իմ հոգում-այնքա՛ն էր պատկերն այդ անհուն:

Գալիս էր ահա անտառի եզերքին մեր տեսած այն ծերուկ
Վարդապետը, կամ քերթողն այն հզօր՝ մօրուքով մերկութիւնը
ծածկած.–
Նստած էր կմախքի վրայ նա մի մերկ, երերուն ձիու,
Որ քայլում էր ճօճուելով, ինչպէս ձիերն են քայլում ծերացած:

Իր ձիու կմախքէ վզին արծաթեայ տաւիղն իր դրած՝
Խփում էր մատներով նա չոր ու երգում ռազմական մի երգ,
Եւ նրա ետեւից մի քանի երգիչներ, հրելով իրար,
Արշաւում էին՝ նրա պէս նստոտած կմախքէ ձիեր:

Գ. ԴՈՒՐԵԱՆ

Բայց նրանք տաւիղի փոխարէն
ոսկորներ ունէին ձեռներին,
Որ թափով խփելով իրար՝
աղմկում էին կատաղի.–
Նրանցից մէկն էր միայն, որ ունէր
իսկական սրինգ,
Եւ սրինգը ձայներ էր հանում
չափազանց տխուր ու աղի:–

Պատանի էր դա մի դալկահար, արցունքով լեցուն աչքերով,
Եւ ձայնը նրա սրինգի նման էր ողբի ու լացի.
Նուագում էր իր խեղճ սրինգով նա տաղեր վշտի ու սիրոյ,
Խառնելով այլոց աղմուկին իր ձայնը՝ մի քիչ կանացի:–

digitised by A.R.A.R.@

Մ. ՊԵՏԿՈՒՍԵԱՆ

Այս գունատ պատանու կողքին արշաւում էր այլ
մի քերթող,
Նրանից աւելի տարեց, փառահեղ ճակատով
եւ ճաղատ.
Նա տաւիղ ունէր արծաթէ եւ շեփոր պղնձէ –
ու հերթով
Նուագում էր կա՛մ սիրոյ տաղեր, կա՛մ հնչում
ռազմի աղաղակ:

Եւ այսպէս՝ խառնելով իրար ռազմաշունչ, ամպագոռ տաղեր
Եւ սիրոյ տխուր նուագներ-անցնում էր խումբը նոցա,–
Եւ հնչում էր նուագն այդ խմբի– թաղումի նման դառնաղէտ,
Լցնելով սրտերը յաւէտ-դառնութիւն անկոթար ու ցաւ:

Երգեցիկ այդ խմբից յետոյ գալիս էր մի սեւ դիակառք,
Որ քաշում էին մարդակերպ, չորեքթաթ դեւեր, կամ ձիեր.
Դրուած էր այդ կառքի վրայ ոսկեզօծ, շքեղ մի դագաղ,
Եւ նստած էր դագաղի վրայ մի գաճաճ՝ դէմքով դէպի ետ:

Գ. ԱՐԾՐՈՒՆԻ

Նախ այնպէս մեզ թուաց, թէ նա,
դագաղի մարդն այդ գաճաճ
Կրում էր իր մարմնի վրայ՝
վիթխարի գլուխներ երկու,
Բայց կառքը երբ քիչ մօտեցաւ եւ կանգնեց մի պահ
մեր առաջ –
Մենք տեսանք դագաղի վրայ – վիթխարի մի գլուխ
եւ մի կուզ:

Այդ կուզն էր, որ ետ էր նայում, իսկ գլուխը նայում էր առաջ,
Կոնածեւ բլուրը դէպի, դէպի յոյսը նրա գագաթի:–
Իր խրոխտ, արծուային քթին ակնորցներ ունէր նա դրած
Եւ խորունկ կնճիռներ ունէր սպիտակ ու նեղ ճակատին:–

Նա ո՛չ թէ նստած էր ոսկեայ դագաղի վրայ, այլ մի մեծ
Զոլչիկի կամ բուի նման՝ թառել էր կարծես չորեքթաթ:–
Նա կառքի անհարթ շարժումից կշռւում էր մերթ առաջ, մերթ ետ,
Եւ մերթ կուզն էր բարձրացնում վերեւ, մերթ գլուխը՝ մի
փոքր հերթափ:

digitised by A.R.A.R.@

Բայց այդպէս չորեքթաթ կռացած՝ ձեռքերով նա իր ահագին
Պահել էր վիթխարի մի թերթ, կամ դրօշ՝ շինուած թիթեղից.
Թիթեղէ դրօշի վրայ նկարուած էր մի արջ թագակիր,
Որ թաթի երկաթեայ խաչով կռտրում էր մահիկ մի դեղին:

Անախորժ ցռինչ հանելով ընթանում էր կառքը դանդաղ,
Երգեցիկ խմբի ետեւից, անսալով ձայնին շեփորի,—
Իսկ կառքի երկու կողքերից, քայլերով՝ ծանր ու հանդարտ,
Ընթանում էին անտառում մեր տեսած այրերը նորից:—

Առաջինը՝ անտառում վառած խարոյկի պահապանն էր այն եէք,
Որ ձեռքին, դրօշի փոխարէն, կրում էր վիթխարի մի փուքս.
Փչելով փուքսն իր հսկայ՝ նա փորձում էր կրակներ հանել,
Բայց հանում էր ձայներ խռպոտած, տխրագին տնքոց ու հոգոց:

Իսկ միւսը — նրա օգնական ռազմաշունչ այն գուսանն էր, որ
Շանթեր էր աչքերից թափում, քարկոտեան հուրեր ու կայծեր.—
Իր ձեռքին բռնած նա ունէր պղնձեայ ահագին մի շեփոր,
Բայց շեփորը չէր շեփորում, այլ տխուր կաղկանձում էր կարծես:

Գնում էր նրանց ետեւից կիսամերկ այրերի մի խումբ.
Կմախքներ էին՝ զգեցած զանազան լաթեր ու շորեր.
Մէկը խաչ էր իր կրծքին կրում, մի ուրիշը՝ դեղնած ծաղկեփունջ,
Որ նաւթի բուրմունքի էր հանում՝ չափազանց սուր ու զօրեղ:

Մի կմախք տանում էր մէջքին մագուքի երկաթեայ ման,
Մի ուրիշը՝ հսկայ մի հաշուիչ, որ նման էր փայտեայ քնարի.
Մի կմախք, շալակին դրած, մի դոյլ էր տանում իր համար,
Մի ուրիշը պահել էր գլխին ոսկեզօծ նժար վիթխարի:

Հազիւ էր այս խումբը անցել, երբ ահա
երեւաց ջահակիր,
Սեւամեամ այրերի մի խումբ, որ գալիս էր՝
երգելով շարական.
Քայլում էր այդ խմբի մէջտեղում,
կապտաւուն ծիրանի հագին,
Մի փարթամ մօրուքով վարդապետ, մի նժդեհ,
մօտ վաթսուն տարեկան:

ԽՐԻՄԵԱՆ

Նա կրծքին կրում էր մի աստղ, որ ցոլում էր ինչպէս աղամանդ,
Մի խաչ էր շողշողում փորին, որ ցոլքեր էր ցրում բիւրեղէ.—
Իր հուժկու ձեռքերով, իրրեւ դարերից մնացած աւանդ,
Բռնել էր պարթեւ ծերունին եւ տանում էր թղթէ մի շերեփ:

digitised by A.R.A.R.@

Թափօրի առջեւից տարուող այն փոքրիկ սկիհի նման
Այս շերեփը Ե՛ւս ունէր հովանի մի ոգի անլոյծ.—
Արծաթեայ արծուի փոխարէն այս թղթէ շերեփի վրայ
Նստել էր, իբրեւ հովանի, պղնձեայ բաշով մի առիւծ։

Երգելով տխուր շարական, սեւասեւ
զգեստներ հագած,
Քայլում էր շքախումբը նրա՝ կրելով
ջահեր մահատիպ,
Եւ թղթէ շերեփը ձեռքին ընթանում էր
նա յամբաքայլ,
Անընդհատ, ձայնով անայլայլ, կրկնելով
մոգական մի թիւ։—

Մինչ անցնում էր թափօրն այս այսպէս – ետեւից յորդում էր արդէն
Անընդհատ աճող, ծաւալուող, լեռնացող մի ծով, կամ հեղեղ.
Աճում էր աղմուկն աւելի, խտանում ու դառնում էր տարբեր,
Մօտենում էր խորշակ մի կարծես՝ խառնելով ազգեր ու ցեղեր։

Դղիրդի նման հեռաւոր մօտենում էր աղմուկ նախ մի խուլ,
Երկիր էր կարծես ընթանում՝ հեղեղով արուած տեղահան.
Անտառ էր կարծես ճարճատում, հրդեհուած երկիր էր մխում՝
Սփռելով բարբարոս մի բոյր, հանելով ճիչեր երկնահաս։

Ձիերի դոփիւն, զէնքերի չարագոյժ շառաչ, մարդկային
Հեկեկանք, օգնութեան ճիչեր, շների կաղկանձ յուսահատ.—
Մօտենում էր այդպէս հեռուից արշաւանքը արեան եւ մահի,
Եւ նայում էինք մենք՝ ահից կարկամած, շնչներս պահած։

Իսկ դէմից, բլուրի գլխից, կանչում էր շեփորն անընդհատ,
Շեփորում էր մահու տագնապով՝ կոչելով նոցա հանդէսի,—
Եւ հոսում էին դէպի նա ամբոխները այդ տեղահան՝
Դէպի լեռն էին շտապում՝ Մահու ու արեան մի ծէսի…

digitised by A.R.A.R.@

Ե

Հոիմդով, լացով, աղմուկով, թնդալով մօտենում էր մեզ
Գլխաւոր օղակն այդ ահեղ, հեղեղի նման թափօրի.
Զահակիր թափօրից յետոյ, այրերից յետոյ սեւազգեստ-
Զրահակիր բանակ էր դա մեծ, որ կռուի էր արշաւում նորից:

Վիթխարի մի ձժոյգ նստած՝ ընթանում էր երթի առաջից
Հոլածեւ մարդն այն ահեղ՝ ծածանած մի սեւ դրօշակ.
Խրխնջում էր ձժոյգը նրա, բայց նման էր հիւանդ բառաչի
Խրխնջոցը նրա ձժոյգի, որ ֆայլում էր դանդաղ եւ ուժատ:

Գլուխը՝ հագցրած ոտին՝ նայում էր շանթող աչքերով
Ձժոյգի ոտների մօտից, ճօճուելով մերթ եւ, մերթ առաջ.
Վառում էր լապտերի նման, կապտաւուն, ժլատ մի հրով
Շլինքին դրուած մեքենան, հանելով տնքոց ու հառաչ:

Իսկ նրա ետեւից, իր նման ձժոյգներ նստած եւ ձիեր,
Արշաւում էր նրա շքախումբը՝ կազմելով ստուար մի բանակ.
Ձիերի վրայ նստոտած կմախքներ էին ու դիեր՝
Ձեռներին սուսեր, զրահներ, հնամեայ զենքեր ու դանակ:

Ընթանում էր մէկը՝ կմախքէ ձժոյգի վրայ ընկղմած,
Անգլուխ, մի ոտը կտրած, ձեռքերը կապած կռնակին,
Բայց կապած ձեռքերի արանքում մի դաշոյն ունէր նա պահած,
Եւ փորձում էր նա դաշոյնով խողխողել ձժոյգն իր տակի:

Հետեւեալը... Ձիհար ձժոյգի ոսկորէ նստուկին նստած
Խեղդամահ էր՝ լեղակի պէս կապոյտ իր լեզուն բերանից կախած.
Իր մռայլ պետի ետեւից արշաւում էր ֆայլով նա վստահ,
Գնում էր կարծես անվեհեր՝ ելնելու կրկի՛ն կախաղան:-

Միւսի իրանն էր միայն երեւում, լոկ այդ, եւ մէկ էլ-
Մէջտեղից կոտրած մի սրունք, էլ ոչի՛նչ. արշաւում էր այդպէս.
Իսկ ո՞վ էր արդեօք այն մէկի ողնաշարը մէջտեղից թեքել-
Եւ դարձել էր նա հարցական նշանի նման մի պատկեր...

digitised by A.R.A.R.@

Ձիերի շատերի վրայ, մարդկային թէկուզ հաշմանդամ
Կմախքի, կամ մարմնի փոխարէն – պարզապէս բազմել էին սէգ
Զրահներ, կամ սրեր ժանգոտած, մի դաշոյն, կամ փամփուշտ
անգամ,
Մի ամբողջ նժոյգի վրայ – մի փամփուշտ, կամ հին հրազէն...

Այդ նժոյգ նստած հաշմանդամ այրերից շատերը սակայն
Ձիերի գաւակին կապած, իբրեւ բեռ վսեմ, կամ պարծանք–
Աւարներ էին տանում – այն փառաւոր մարտերում հաւաքած՝
Մխրճած գանկեր, սրունքներ՝ սրբելուց պապղուն դարձած:–

Այս լեզուն կտրած, կուրացած, խեղդամահ ասպետը ահա
Շարել է նժոյգի սանձին – մխրճած մատների մասեր.
Մի ուրիշը կրում էր ձեռքին կոնքերից շինած մի վահան,
Մի ասպետ փաթաթել էր մէջքին մի տրցակ կանացի մազեր:

Անցնում են, անցնում են անվերջ, գնում են շարքերով անծիր,
Կմախքէ նժոյգներ նստած, զրահներ հագած մահաշունչ.
Հնձուորներ են կարծես, որ դանդաղ դառնում են Եղեռնի հնձից,
Մանգաղի ու բահի փոխարէն հրազէն առած ու դաշոյն:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

Բայց ահա այդ կոյր, յոշոտուած,
հաշմանդամ շքերթի միջում
Արշաւում է՝ նստած տախտակէ ձողերից շինած
մի նժոյգ–
Սեւահեր, թխադէմ մի այր, որ կրակ ու
բոց է շնչում,
Մի ձեռքին քնար ոսկեզար, միւսին՝
հրազէն մի զոյգ:

Մի փոքրիկ մօրուք նա ունէր, գալարուն, սեւասեւ մազեր,
Ծածկել էր թաւիշէ գլխարկ, եւ ունէր փողկապ փառահեղ,
Բայց նստուկը մերկ էր նրա, հանել էր զգեստներն ասես,
Որ տեսքը չինի երեւի սրբազան իր դերին վայել:–

Իր խրոխտ դէմքին հակառակ, հակառակ առնական տեսքին՝
Երգում էր կերկերուն ձայնով նա քաղցրիկ, լորձունքոտ երգեր.–
Մենք լսում էինք զարմացած, նայելով առնական կրծքին,
Երբ տեսանք, որ նստուկը նրա բարձրանում ու իջնում է ներքեւ:

digitised by A.R.A.R.@

Փողային գործիք նուագող վարպետի այտերի նման
Ուռչում էր նստուկը նրա եւ իջնում, կրկին ու կրկին,-
Տեսնելով հրաշքն այս ցնցող- ա՜հ, մենք նո՛ր հասկացանք նրա
Եռքնագոհ ժպիտը - եւ խուլ, կաղկանձող թախիծը երգի...

«-Հընդահի՛ւն, Հընդահի՛ւն, Հընդահի՛ւն» - երգում էր նստուկով նա իր,
Խառնելով կանչին այդ - մահու հառաչանք, ատամի կրճտոց,-
Անտառից բարձրանում էր այնինչ աղաղակ ամեհի ու խոր,
Եւ երկինք էր հասնում այնտեղից տագնապով բարձրացող մի բոց:

Անտառից, խարույկի պէս մեծ, շառայլ էր նետում դէպի վեր
Կարմրաւուն, արնագոյն մի բոց՝ այրելով յօնքերը լուսնի,
Եւ լսւում էին այնտեղից սուլոցներ, օգնութեան ճիչեր,
Ծառերի ճարճատիւն, հեկեկանք, բրիչներ վայրի ու դժնի:

Եւ որքան գնում - աւելի ահեղ էր դառնում անտառից
Բարձրացող աղմուկն ահաւոր, հեկեկանքը՝ աստղերին հասնող.
Ցերեկի պէս լոյս էր արդէն անտառից բարձրացող հրից,
Իսկ թափօրը ձգւում էր էլի, ողողուած շառայլով այդ նոր:

Թափօրի մի ծայրը արդէն հասել էր բլրի գագաթին,
Որտեղից հնչում էր, կանչում այն շեփորը - անվե՛րջ, անընդհա՛տ,-
Եւ անցնում էին մեր դէմից, դեռ անցնում էին մահատիպ,
Գոսնելի ասպետներ ու այրեր, կազմելով խռիւ մի ընթացք:

Մենք վաղուց արդէն, նայելով թափօրի ընթացքին այդ յորդ,
Էլ չէինք ջոկում իրարից այրերին շարէշար անցնող.-
Դժուար էր արդէն տարբերել նորերին՝ դէմքերից նախորդ,
Ընդհանուր մի գետ էր անցնում մեր դէմից արդէն, կամ մի ծով:

Դժուար էր արդէն տարբերել նրանցից մէկին միւսից.
Զրահներն էին շատացել թերեւս, կամ ձիերն էին ծեր.
Միեւնո՛յն կերպարանքն էր արդէն բոլորինը, բոլորի՛ ուսից
Կախուած էր զէնքը միեւնոյն,- եւ արդէն չկային անձեր:

Բայց յանկարծ ամբոխի մէջ այդ, յորձանքում այդ բուք ու անդէմ,
Բարբարոս թափօրում այդ մթին, որ նման էր արդէն կոշմարի -
Մենք տեսանք կերպարանք երկու,- եւ պատեց մեզ վիշտ մի անդեղ,
Եւ կարծես վերացանք մենք մի պահ այդ արեան ու տենդի աշխարհից:

digitised by A.R.A.R.@

ՍԻՍՄԱՆԹՈ

Գնում էր թափորի միջից մի արծաթ
կարծես մարմարէ.
Հասակը բարձր. քարէ աչքերում
թախիծ ու կորով.
Իր քարէ շրթերով նա անկապ մի երգ էր
փորձում բարբառել,
Երեւում էր, որ Մա՛հն էր տեսել եւ Սարսափը
նա իր աչքերով։-

Եղկելի էր որքան նստուկով նուագող քերթողն այն - այնքան
Ցարգանք էր ներշնչում սրա կերպարանքը ամբողջ նայողին.
Իր կեանքում տեսած սարսափից նա դարձել էր արդէն խելագար,
Եւ ահից յանկարծ քարացել՝ կորցրած թէ՛ յոյս, թէ՛ ուղի։

Նա ո՛չ թէ ինքն էր քայլում, այլ երթի ընթացքով տարուած՝
Շարժւում էր, ինչպէս մեքենայ, ենթակայ յորձանքի ուժին.
Երբեմն ցնցում էր նրան անհաղորդ, ներքին մի հարուած -
Նա կանգնում էր մի պահ քարացած եւ նայում՝ լուսնոտի պէս ուշիմ։

Եւ քայլում էր կրկին մարմարեայ արձանի պէս ուղիղ ու անթեք,
Նայելով ուղի՛ղ իր առջեւ՝ կոյրերն են ինչպէս միշտ նայում.
Ձեռքերը խաւարին մեկնած՝ անսահման եղեռնի հանդէպ
Շշնջում էր սարսափի բառեր հ. կրկնում մեռած մի անուն...

Նա հո՛ղ էր հայցում՝ խաւարին կարկառած ձեռքով իր քարէ,
Եւ լո՛յս էր հայցում խաւարից՝ իբրեւ դեղ աչքերին իր կոյր,-
Եւ մահու պէս գունատ շրթերով շշնջում էր բառեր մարմարէ,
Երազում էր խոնջէնք ու արեւ եւ սիրոյ աղբիւրներ մաքուր։

Բայց վսեմ այդ խոհից յանկարծ դառնալով ուրիշ մի խոհի՝
Նա թակում էր գլուխն իր թափով, սկըսում էր մարմինը ցնցել-
Եւ մաքուր, անբիծ շրթերից թորում էր լարձունք ամեհի,
Եւ դէմքի վրայ այդ պահին նկարւում էին ալ բծեր...

Դ. ՎԱՐՈՒԺԱՆ

Գնում էր նրա հետ մէկտեղ, յամրաքայլ,
քերթող մի ուրիշ.
Շինուած էր կարծես նա մոմից, եւ դէմքը,
որպէս մագաղաթ.
Նրա ձայնը ելնում էր կարծես ժայռերում
փորած ջրհորից՝
Ե՛ւ մաքուր, Ե՛ւ ջինջ էր այնքան, ինչպէս ցողը՝
դաշտերում շաղած։-

digitised by A.R.A.R.@

Բայց մոմէ այդ գունատ գուսանի թղթի պէս ճերմակ շրթերից
Ցորդում էր երգը յանկարծ – ամպրոպի, որոտի՛ պէս թափով...
Եւ ո՞վ էր տուել այդքան ուժ, այդքան թափ ու շնորհիվ վերին
Այդ մոմէ դէմքով գուսանին – եւ ցնտել նման մի թափօր...

Նա Ելս, սարսափից քարացած այն քարէ գուսանի նման,
Քայլում էր՝ յորձանքով տարուած՝ իր աւագ ընկերոջ կողքին,
Եւ դէմքը նրա մոմեղէն, սփրթնած, գունատ, ինչպէս մահ,
Մերթ ընդ մերթ բոցւում էր, կարծես մի ուրի՛շ արեւի շողքից:

Արծաթէ ափսէի վրայ նա տանում էր բոցավառ մի սիրտ,
Որ բոսոր ցոլքեր էր ցանում խաւարում այն սիրտ կեղեքող,
Եւ զուլալ, արծաթեայ ձայնով երգում էր արեւի մասին,
Իր գիւղի՛ արեւի մասին, որ մորթել էին ցերեկով...

Երգում էր հերկերի մասին, դաշտերի մասին ու հողին,
Քրտինքն էր երգում գեղջուկի եւ նրա վաստակը արդար,–
Բայց փոխւում էր երգը յանկարծ եւ դառնում աղաղակ ոխի,
Եւ մոմէ շրթերով քերթողի – սկսում էր նա նզովք կարդալ:

Պահերին այդ դէմքը նրա դառնում էր դժնի, արիւնռուշտ,
Խոպոցի էր փոխւում ու նիչի նրա ձայնը պայծառ ու մաքուր,–
Սեւանում էր սիրտը մի պահ, դառնալով անհուր ու անուժ,
Եւ քարէ ընկերոջ նման՝ քայլում էր նա էլ՝ ինչպէս կոյր:–

«–Ո՞վ տխուր ու խեղճ գուսաննե՛ր, նոխազնե՛ր, կեանքի բարբարոս,–
Բարբառեց Վարպետը յանկարծ՝ դառնալով նոցա ստուերին.
–Դուք կոչուած էիք լինելու Լոյսի ու Խնդութեա՛ն փարոս,
Բայց սրտերը ձեր բոցավառ – այն Ստի՛ն ողջակէզ բերիք»:

Եւ նա ցոյց տուեց հեռուում, բլուրի գագաթին վառուող
Այն կրակը դժնի ու դեղին, որ վառւում էր անհուն տագնապով,–
Եւ ապա, դառնալով կրկին բարբարոս յորձանքով տարուող
Այրերին այն՝ ասաց իր սրտի բովանդա՛կ տխրութեամբ ու թափով.

«–Դուք կարո՞ղ էիք Քերթութեան եւ Մտքի լուսէ պարտէզում
Ճաշակել Ոգո՛ւ Խնդութիւն՝ սնուելով խոհով ու բանի,–
Եւ երթում այս մութ ու դաժան կա՞յ արդեօք աւելի՛ մեծ զոհ,
Քան հանձարը ձեր բոցավառ՝ մատուցած այս պի՛ղծ սեղանին...»:

Եւ լռեց Վարպետը մոայլ, առաջին եւ վերջին անգամ
Մեր ամբողջ երթի ընթացքում շրթունքները իր բանալով,–
Մինչ մոայլ թափօրին ձուլուած, ոտքերով բոպիկ, արնաքամ
Հեռացան գուսաններն այն վսեմ՝ խելագար խնդալով ու լալով...

digitised by A.R.A.R.@

9

Կանչում էր այնինչ վերեւից, բլուրի գագաթից, դժնի
Այն շեփորը ձայնով չարագույժ,– եւ գնում էր թափորը վերեւ,
Անցնում էր անվերջ՝ ողողուած արնագոյն ցոլքերով լուսնի,
Եւ գնում էին արդէն մերկ մանուկներ, կանայք եւ ծերեր:

Անցել էր արդէն թափորի գլխաւոր հոսանքը ամբողջ,
Թափորի մի ծայրը վաղուց հասել էր բլրի գագաթին,
Որտեղից երկինք էր հասնում արդէն ալ, արնագոյն մի բոց,–
Իսկ թափորը դեռ չէր վերջանում, դեռ գալիս էր –
անվե՛րջ ու անթիւ:

Ներքեւում անտառը արդէն ճարճատում էր հրով ընդհանուր,
Երկինք էր բարձրանում այնտեղից արդէն նո՛ր մի, ընդհանուր
հրդեհ,
Եւ ռումբեր էին շառաչում, եւ թնդում էր քիւր թնդանօթ,
Եւ կրակը շէնե՛ր էր ամբողջ սկսել երկինք շպրտել:

Դղրդում էր հողը արդէն ռումբերի շաչող որոտից,
Բովանդակ աշխա՛րհն էր արդէն սասանել մոլուցքից արեան,–
Լցուել էր տիեզերքն ամբողջ արդէն տօթ բոյրով վառօդի,
Էլ չկար հեռու ու մօտիկ,– բայց թափորը երգում էր «Ց ա ր ե ա ւ»:

Կատաբեալ բանակներ էին արշաւում մեր դէմից արդէն,
Շտապում էին տագնապով կոնածեւ բլուրն հասնելու,–
Եւ ահա վառուող անտառից սկսեց նոր մի գետ յորդել,
Եւ հոսել, հոսել անընդհատ, նախիրի նման անգլուխ...

Երբ ռազմի շաչով-շառաչով, ցնցելով հնչուն ծնծղաներ,
Թմբուկներ խփելով տօնական, երգելով երգեր ռազմանիչ,
Դոփելով՝ բանակներն անցան,– սկսուեց տրտունջ մի անել,
Ցուսահատ հեկեկանք ու լաց, խելագար հառաչք ու քրքիջ:

Մեր դէմից անցնում էին արդ մանուկներ մեռեալ եւ ծերեր,
Հաշմանդամ սերունդներ ամբողջ՝ Նղեռնի հնձանին ընծայ...
Նախիրներ էին անցնում հոծ, սարսափած կոյերի պէս երեր,
Եւ ցանքսեր, արտեր ոսկեգոծ՝ դեռ ո՛չ մի ձեռքով չհնձած...

digitised by A.R.A.R.@

Եւ անցնում էին զօրքերից ոտնակոխ արուած պարտէզներ,
Հրդեհից մոխրացած հիւղեր, քաղաքներ մեռեալ եւ շէներ,–
Եւ գետեր՝ տապից չորացած, ցորեանի հրդեհուած դէզեր,
Եւ գայլեր՝ մարդուց զազազած, եւ մկնե՛ր զառամ, եւ շնե՛ր...

Սրածուած սերունդնե՛ր էին արդ անցնում, քաղաքներ քանդած,
Հեղեղի պէս պրծած, տեղահան, գնում էր երկի՛ր մի ամբողջ,–
Անցնում էր արմատից պոկած, անխնայ կտրած մի անտառ,–
Սարսափած նախիրի նման՝ սպանդից փախած մի ամբոխ...

Ամեհի լացով, աղմուկով, ոռնոցով անյոյս ու մռայլ
Շարժւում էր ամբոխը դէպի այն բլուրը կարմիր, կոնաձեւ.–
Վերջանում էր երթը արդէն, երբ մենք Էլ, ձուլուելով նրանց,
Քայլեցինք, կամ կարծես թռանք՝ շիւղերի նման հողմածեծ:

Դիւական մի ձեռք էր կարծես թոցնում, քշում մեզ առաջ,
Եւ ահա, տարուելով այդպէս, երբ լերան գագաթը հասանք,–
Կանգնեցինք՝ մեր դէմ ծառացած պատկերի առջեւ շուարած.
Զառանցա՛նք էր պատկերն այդ կարծես, որ մեր դէմ փռուած մենք
տեսանք...

Բացւում էր բլուրի վրայ մի անծայր, լերկ հարթավայր,
Ողողուած կարմրաւուն լոյսով, որ դողում էր անվերջ ու պարում.
Իր բոսոր, արնավառ գոյնով ներկելով շրջակայքը խաւար՝
Վառւում էր բլուրի մէջտեղում մի հսկայ, երկնահուպ խարոյկ:

Կրակէ օղակի նման բոցկլտում էր
խարոյկը կարմիր.
Բոցեղէն պարիսպ էր կարծես՝ Արքայի
շուրջը քաշած:–
Այդ նրանց արքա՛ն էր գուցէ, կամ՞
սերած Հրդեհի զարմից՝
Առաջնորդը նրանց կրակէ, որ ցոյցի էր
եղել մարդաշատ:

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Խարոյկի մէջտեղում, ոսկեայ մի գահի
վրայ ընկղմած,
Նստած էր Արքան այդ ահեղ, որ չունէր
կերպարանք որոշ.
Մերթ թւում էր, թէ դա – կրակէ մի մարդ է՝
բոունցքը սեղմած,
Որ բռնել է սեղմած բոունցքում – մի փոքրիկ
եռագոյն դրօշ:

digitised by A.R.A.R.@

Բայց յաջորդ վայրկեանին արդէն փոխուում էր տեսքը նրա,
Եւ ահա – գահի վրայ նոյն – մի գայլի գլխով վարդապետ,
Սեւասեւ վեղարը գլխին եւ դեղին նակատի վրայ –
Մի հսկայ, շողշողուն ադամանդ, որ թէ խաչ է,
թէ գունդ է, թէ նետ։

Փոխուում էր ապա նաեւ այդ կերպարանքը. յանկարծ նրա տեղ
Երեւում էր դեղին մի կատու՝ աչքերում կրակներ ահի,–
Եւ թւում էր, թէ դէմքը նա իր – ոսկեկար քողով է պատել,
Եւ նետը դարձել է նժար, եւ խաչը դարձել է մահիկ։

Նստած էր ոսկեայ իր գահին կրակէ Արքան այդ ահեղ,
Տեսիլքի նման մի դժնի, կերպարանքը մթին ու մռայլ,–
Եւ շուրջը նրա խարոյկի, բոլորած մի պար խելայեղ,
Ցատկոտում էին ու պարում ամբոխները այն դիւահար։

Խարոյկին ամէնից մօտիկ, բոլորած շրջանն առաջին,
Թռչկոտում էին ու պարում մեր տեսած այրերն այն ճիւաղ,–
Հոլածեւ կմախքն էր պարում, եւ ծայնով, նման բառաչի,
Երգում էր խաժադուժ մի երգ՝ ափոելով տառապանք ու վախ։

Նրա ձեռքը բռնած, նրա հետ, պարում էր անտառում հանդիպած
Խարոյկի պահապանը գանգ եւ գուսանը ապա ռազմատենչ.
Պարում էր վարդապետը պարքեւ՝ շերեփը շրթերին հպած,
Եւ բոլոր ապետնե՛րն ապա՝ աչքերում մոլուցք մի անշէջ։

Գնալով լայնանանում էր, ուռչում շրջանակը այդ շուրջպարի.–
Բռնելով հարթավայրն ամբողջ, չարագոյժ բոցերի ներքոյ,
Ահռելի տեսիլքի նման ելնելով կարծես խաւարից՝
Մի ամբողջ ժողովո՛ւրդ էր պարում եղկելի ճիչով ու երգով։

Մանուկներ տկլոր, անատամ աղջիկներ, ծերեր հաշմանդամ,
Գլուխները բռնած ձեռներին, վայրենի լացով ու ճիչով,
Թռչկոտում էին ու պարում,– ցատկոտում էր կարծես մի անտառ,–
Եւ անցնում էինք մենք դանդաղ այդ պարող անտառի միջով…

«Հրդահի՛ւն, Հրդահի՛ւն, Հրդահի՛ւն»-ոռնում էր ամբոխը մոլի,
Կարկառած ձեռները վերեւ, կամ դիմացը՝ դեղին Արքային,–
Երբ ճիւաղը յանկարծ այն ծանօթ, որ նման էր մարդակերպ հոլի,
Մորեխի պէս օդում ցատկելով՝ մօտեցաւ Արքայի գահին։

digitised by A.R.A.R.@

Մօտեցաւ շարժումով հատու եւ կտրած գլուխն իր ներսից
Արքայի ոտքերի առջեւ, իբրեւ տուրք, կամ զոհ սրբազան,–
Եւ ամբոխը խոպոտ ճիչերով, ոռնոցով նրան հետեւեց–
Բարձրացաւ գանկերի մի բուրգ եւ բուրգը աստղերին հասաւ...

Իսկ շուրջը վիթխարի այդ բուրգի– մշուշում, բռնած խօլապար
Թռչկոտում էին ու պարում աւերուած քաղաքներ ու շէներ,–
Եւ երբի ելած նրանց հետ՝ ամեհի խանդով, խօլաբար՝
Թռչկոտում էին ու պարում նախիրներ գառում եւ շներ...

Եւ արդէն ոսկեայ իր գահից բարձրացած բուրի վրայ՝
Կանգնել էր Արքան այն դեղին՝ հրդեհի նման մօրուքով,–
Եւ փողի նման լեգեոնդար՝ մահագոյժ շեփորը նրա
Կանչում էր, կանչում էր նրանց – դէպի նոր մի մեռեալ երիքով...

Է

Այդ դաժան տեսիլքին ի տես՝ քայլերով երեր մենք փախանք,
Կտրեցինք հարթավայրն ամբողջ եւ իջանք անտառ մի ուրիշ,
Մինչ հասնում էր դեռ բլուրից մի լացի նման աղաղակ,
Ոռնում էր կարծես մի քաղաք՝ փախչելով հրից ու սրից:

Խաւար էր անտառում այդ նոր, եւ ծառերը, կորած խաւարում,
Կմախքներ էին կարծես սեւ, որ պարզած ոսկորէ ձեռներ–
Մեզ բռնել էին կամենում, քաշքշում էին ու հրում,
Եւ մահուան սառնութիւն բուրում, ինչպէս վեր ելած մեռելներ:

Հառաչում էին նրանք խուլ ձայներով, անէծք շշնջում,
Կամ կարծես օգնութիւն հայցում մօտեցող սրից ու հրից,–
Դեռ հասնում էին բլուրից սրերի շառաչ ու շաչիւն,
Դեռ շեփորը կանչում էր, կանչում այն Մահու եւ Արքան Բլուրից:

Սարսափած փախչում էինք մենք անտառի միջով այդ խաւար,
Այդ մռայլ ծառերի միջով, որ պարզած երերուն ձեռներ,
Մեզ թւում էին մի գալիք ահռելի սպանդի համար
Հանրային դամբանից ելած, յարութիւն առած մեռելներ:

digitised by A.R.A.R.@

Մեր ոտքերը դիպչում էին սուր, փշերի նման քարերի,
Ծառերի ճիւղերը՝ կանանց մատների նման գալարուն՝
Ձանգռտում էին, արնոտում մեր դէմքերը,– եւ հին դարերից
Նախամա'րդն էր արդէն արշաւում՝ աչքերում մոլուցք ու արիւն:

Ժամանակը Ե՛տ էր թռչում արդէն խուլ աշխարհի վրայով,
Մարդակերպ Կապի'կն էր արդէն արշաւում հետքերից մեր նորից,–
Եւ լուսինը, անզօր ժպիտով ծառերի արանքից նայող,
Մեզ թւում էր քարի մի աստուած, որ փրկում է ջրից ու հրից...

Սարսափած փախչում էինք մենք անտառի ծառերի միջով,
Եւ ամէն ծառի ետեւից մեզ նայում էր արդէն մի հրէշ,
Մեզ արդէն ագռա'ւն էր ծաղրում իր լացի նման քրքիջով,
Եւ ամէն մի շրշիւն ու շշուկ մեզ գուժում էր պատիժ ու վրէժ:

Մեր հոգուց քերում էր մի ձեռք այն ամէնը, որ տարիներ,
Կամ դարե՛ր էինք կուտակել՝ սերունդից-սերունդ կրելով,–
Եւ գունատ ցոլքերը լուսնի մեզ թւում էին փերիներ,
Արիւնոուշտ, չարա՛չք փերիներ՝ մարդու միս ու արիւն սիրող:–

Մենք երկար, երկար վազեցինք, սրասափից խելագար, անյոյս,
Այդ մռայլ ու մութ անտառում կորցրած ուղի ու հաւատ,–
Երբ յանկարծ ծառերի միջից երեւաց երկնագոյն մի լոյս,
Որ աստղի նման փրկարար շողշողաց հեռուում այն խաւար:

Հեւիհեւ, արիւնոտ ոտքերով, չանգռելով կուրծք ու երես,
Վազեցինք մենք լոյսը դէպի, որ ցոլում էր ցոլքով մի մաքուր,–
Եւ ահա, վազքից շնչասպառ, քայլերով անուժ ու երեր,
Մօտեցանք անտառի եզերքին – եւ տեսանք կերպարանք մի հուր:

ԼԵՆԻՆ

Մի մարդ էր գալիս դէպի մեզ՝ ոսկեզօծ
լապտերը ձեռին.
Գունատ էր. հսկայ ճակատով. երկնագոյն աչքեր
նա ունէր.
Լոյսի պէս սպիտակ դէմքին խաղում էր ժպիտ
մի վերին,
Հայեացքը թափանցում էր կարծես անսահման,
անծիր հեռուներ:

Ողջունեց ժպիտով նա մեզ եւ ապա լապտերն հուրհրան
Նա պահեց մի պահ մեր առաջ, իբրեւ աստղ, նշան լուսատու.–
Վիթխարի ճակատով այդ մարդու լապտերի ապակու վրայ
Նկարուած էր ոսկեթեւ մի աստղ եւ գրուած էր պատգամ մի հատու:

digitised by A.R.A.R.@

Այդ լապտերը իր դէմ պահելով՝ նա հանեց մեզ մութ անտառից,
Մոլորուել էինք ուր արդէն՝ կորցրած ուղի ու հաւատ,–
Եւ այստեղ հրաժեշտ տուեց ինձ Վարպետը Մահուան աշխարհի,
Որ գիտէր լոկ վիշտ ու չարիք եւ երգել էր դժոխքը խաւար:

Արդ՝ անցել էինք արդէն մենք Անցեալի մռայլ եզերքից,
Լայնահուն աշխարհն էր իմ դէմ ողողուած հրով փրկարար,–
Այն ոսկեայ լապտերի լոյսով ես դարձայ Գալիմի՛ երգիչ,–
Այդ լապտերը, ո՛վ Առաջնորդ, կը փրկէ աշխարհը արար...

1933 V 4 ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

Եղիշէ Չարենցի «Մահուան տեսիլ» պոեմին հերոսներուն պատկերները առաւել եւս թարմացնելու համար չիշողութիւններուն մէջ, որոշեցինք տալ նաեւ անոնց կենսագրականներէն գիծեր, որոնց ամփոփումը, կը խորհինք, շահեկան կրնայ ըլլալ նաեւ այլապէս։
Անոնք կը ներկայանան պոեմին մէջ իրենց մուտքին կարգով եւ «Բագին»ի մէջ իրենց գրաւած էջերուն յաջորդականութեամբ։

ՀՈՄԵՐՈՍ — (Էջ 89)

Ցոյն դիւցազներգակ բանաստեղծ Հոմերոս ապրած է Ք.Ա. 9րդ դարուն։ Կը նկատուի «Իլիական»ի եւ «Ոդիսական»ի հեղինակը։ Եօթը քաղաքներ կը վիճին՝ իւրաքանչիւրը իրեն վերագրելով անոր ծնունդ տուած ըլլալու պատիւը։ Անանդութիւնը զայն կը ներկայացնէ ծեր եւ կոյր, որ կը շրջէր քաղաք է քաղաք՝ արտասանելով իր բանաստեղծութիւնները։ Մտաւորականներ տ'Օպենաքիայի, Վիքոյի եւ Վուլֆի յարուցած վէճերէն ետք, խնդրոյ առարկայ դարձաւ իր գոյութիւնը։ Անոնք իրենց ուսումնասիրութիւններուն մէջ ընդգծեցին այն կարծիքը, թէ «Իլիական»ը եւ «Ոդիսական»ը տարբեր թուականներու գրուած երկեր են, հետեւաբար չի կրնար նոյն անձը ըլլալ անոնց հեղինակը («Հարուս»)։

ՎԻՐԳԻԼԻՈՍ — (Էջ 89)

Հռոմէացի բանաստեղծ Վիրգիլիոս ապրած եւ ստեղծագործած է Հռոմի հանրապետութեան անկման շրջաններուն, Ք.Ա. 70ական թուականներուն։ Իր գլխաւոր գործերն են «Հովուական երգեր», «Գէորգիկա» պոեմը, իսկ գլուխգործոցը կը համարուի «Էնէական» պոեմը, որ յղացուած ու կիրարկուած է իբրեւ «Իլիական»ի եւ «Ոդիսական»ի հռոմէական զուգահեռ։ Վիրգիլիոսի հայերէն առաջին թարգմանութիւնները լոյս տեսած են 1814ին, Վենետիկի մէջ։ «Էնէական»ի հայերէն առաջին ամբողջական թարգմանութիւնը կատարած է Էդ. Հիւր-

digitised by A.R.A.R.@

միւզեանը՝ 1845ին, գրաբար, նոյն գործին աշխարհաբար առաջին թարգմանութիւնը՝ 1910ին։ 1925ին Հ. Արսէն Ղազիկեանի թարգմանութեամբ լոյս տեսաւ Վիրգիլիոսի «*Հովուական երգեր*»ը՝ «*Հովուականք*» խորագրով։

ՖԻՐԴՈՒՍԻ — (էջ 90)

Պարսիկ բանաստեղծ Ֆիրդուսի ծնած է 940ական թուականներուն։ Իր գլուխ-գործոցը կը համարուի «*Շահնամէ*»ն, որ կը բաղկանայ երեք մասերէ՝ դիցաբանական, դիւցազնական եւ պատմական։ Գործը ծայրէ ծայր տոգորուած է «Բարիի եւ Չարի» պայքարին գաղափարով, իսկ իր միւս հիմնական գաղափարը սէրն է հանդէպ իր հայրենիքին՝ Իրանի։ «*Շահնամէ*»ն թարգմանուած է եւրոպական եւ այլ բազմաթիւ լեզուներու։ Անիկա հատուածաբար թարգմանուած է նաեւ հայերէնի, չորս-հինգ տարբեր թարգմանիչներու կողմէ։

ՏԱՆԹԷ — (էջ 91)

Իտալացի բանաստեղծ Տանթէ Ալիգերի ծնած է Ֆլորանս, 1265ին։ Վաղ շրջանին կը մասնակցի քաղաքական կեանքին՝ յարելով արիստաւորներու կուսակցութեան։ Ազնուական դասուն կազմած կուսակցութեան յաղթանակէն ետք կը տարագրուի 1315ին եւ ի բացակայութեան կը դատապարտուի մահուան։ Կեանքի վերջին վեց տարիներուն կ'ապրի Ռաւեննայի մէջ։ Իր գլուխ-գործոցը՝ «*Աստուածային կատակերգութիւն*», գրած է 1307-21 տարիներուն, իսկ անոր տպագիր առաջին հրատարակութիւնը տեղի ունեցած է 1472ին։ «*Աստուածային կատակերգութիւն*»ը թարգմանուած է աշխարհի գրեթէ բոլոր լեզուներուն, նաեւ արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի։ Արեւելահայ առաջին լիակատար թարգմանութիւնը կատարած է Արթուն Տայեան։ Տանթէ մեռած է 1321ին, Ռաւեննա։

ՀԱՅՐ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ — (էջ 92)

Բանաստեղծ, բանասէր ու Վենետիկի Մխիթարեան Ուխտի միաբաններէն Հայր Ղեւոնդ Ալիշան ծնած է 1820ին։ Հայրենասէր խառնուածք՝ ան խորապէս ուսումնասիրած է Հայոց պատմութիւնն ու աշխարհագրութիւնը, հանդիսանալով ազգային զարթօնքի կարկառուն դէմքերէն ու ազգայնաշունչ բանաստեղծութեան հիմնադիրներէն մէկը։ Իր գլխաւոր գործերն են «*Միսուան*», «*Միսական*», «*Ակրարատ*», «*Հայապատում*», «*Ցուշիկք հայրենեաց Հայոց*», եւայլն։ Վախճանած է 1907ին, Վենետիկի Ս. Ղազար կղզին։

ՐԱՖՖԻ — (էջ 94)

Վիպասան, բանասէր եւ ուսուցիչ Բաֆֆի ծնած է Պարսկաստանի Սալմաստ գաւառի Փայաջուկ գիւղը, 1837ին։ Տեղւոյն վարժարանին մէջ նախակրթութիւնը ստանալէ ետք, 1847ին կ'երթայ Թիֆլիս ու կը յաճախէ պետական գիմնազիոնը, որմէ դուրս կու գայ թերաւարտ։ 20 տարեկանին կ'այցելէ Արեւմտահայաստան եւ ծանօթութիւն կը հաստատէ պատմական բոլոր վայրերուն հետ։ Վերադարձին կ'աշխատակցի «*Արծիւ Վասպուրականի*», իսկ Թիֆլիս փոխադրուելէ ետք՝ Գրիգոր Արծրունիի «*Մշակ*»ին։ Երեք տարի անց կ'անցնի Թաւրիզ եւ ատեն մը ուսուցչական պաշտօն կը ստանձնէ տեղւոյն «Արամեան» վարժարանին մէջ։ 1884ին բախում մը կ'ունենայ «*Մշակ*»ի տնօրէն Արծրունիի հետ եւ այնուհետեւ կը սկսի աշխատակցիլ «*Արժամանակ*»ին։ Գլխաւոր գործերն

digitised by A.R.A.R.@

են *«Սամուէլ»*, *«Դաւիթ Բեկ»*, *«Կաթեր»*, *«Խենթը»*, *«Մակի աքաղաղ»*, *«Սալբի»*, *«Խաչագողի յիշատակարանը»*, եւայլն։ Կը մեռնի 1988ին, Թիֆլիս։

ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ — (էջ 95)

Բանաստեղծ, արձակագիր եւ ուսուցիչ Գամառ Քաթիպա ծնած է Նոր Նախիջեւան, 1830ին։ Նախակրթութիւնը կը առանայ հօրը հիմնած վարժարանին մէջ։ 1843ին կը մեկնի Մոսկուա եւ վեց տարի կը յաճախէ «Լազարեան» ճեմարան։ 20 տարեկանին ուսուցչական պաշտօն կը ստանձնէ «Ներսիսեան» վարժարանին մէջ եւ իր առաջին բանաստեղծութիւնները կը հրատարակէ *«Արարատ»* շաբաթաթերթին մէջ։ Տարի մը ետք կը յաճախէ Դորպատի համալսարանը, որուն առաջին դասընթացքը հազիւ բոլորած՝ կ'անցնի Մոսկուա եւ Մոսկուայի համալսարանին մէջ կը հետեւի պատմա-լեզուաբանական ճիւղին։ 1855էն մինչեւ 1860 իր ընկերներուն հետ կը հրատարակէ գրքոյկներու շարք մը, թիւով հինգ հատ, որոնց երկրորդին մէջ լոյս կը տեսնէ *«Արարատի արտասուք»*։ Սրբասունվեց տարեկանին կը հաստատուի իր ծննդավայրը եւ կը նուիրուի ուսուցչութեան եւ գրականութեան։ Ունի բանաստեղծական եւ վիպական շարք մը գործեր։ Կը մեռնի 1892ին եւ կը թաղուի Ս. Խաչ վանքին բակը։

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ — (էջ 96)

Ուսուցիչ եւ լեզուփոխական գործիչ Քրիստափոր Միքայէլեան ծնած է Գողթն գաւառի Ագուլիս գիւղը, 1859ին։ Թիֆլիսի ուսուցչանոցը կ'աւարտէ 1880ին։ 1885ին կը մեկնի Մոսկուա, բայց երկու տարի ետք, ուսումը կէս ձգած՝ կը վերադառնայ ծննդավայրը, ուսուցչութեան նուիրուելու եւ կը զբաղի լեզուփոխական քարոզչութեամբ։ 1890ին կը հանդիսանայ գլխաւոր դարբինը Հ.Յ.Դաշնակցութեան։ 1892ին կ'աքսորուի Քիշնեւ, իսկ յաջորդ տարի, Թիֆլիսի մէջ կայացած Հ.Յ.Դաշնակցութեան Առաջին Ընդհանուր Ժողովին, Ռոստոմի եւ Զաւարեանի հետ կը կազմէ կուսակցութեան ծրագիր-կանոնագիրը։ Բ. Ընդհանուր Ժողովին որոշումով Քրիստափոր կ'անցնի Ժընեւ եւ կը գլխաւորէ *«Դրօշակ»*ի խմբագրութիւնը։ Իր ջանքերուն շնորհիւ 1900 Նոյեմբերին Փարիզի մէջ կը սկսի հրատարակուիլ ֆրանսերէն *"Pro Armenia"* թերթը։ Քրիստափոր գլխաւորած է նոյնպէս *«Փոթորիկ»* խումբը։ Գ. Ընդհանուր Ժողովին կ'որոշուի կազմակերպել սուլթան Ապտիւլ Համիտը սահմանելու գործը, որուն ղեկավարութիւնը կը ստանձնէ Քրիստափոր, սակայն ռումբի անյաջող փորձին զոհ կ'երթայ ինք, 1905ին եւ կը թաղուի Սոֆիա։

ՍԻՄՈՆ ԶԱՒԱՐԵԱՆ — (էջ 98)

Ուսուցիչ, խմբագիր, հրապարակագիր ու լեզուփոխական գործիչ Սիմոն Զաւարեան ծնած է Իգդիր գիւղը, 1866ին։ Երկրորդական ուսումը կը ստանայ Թիֆլիս, ապա կ'աւարտէ Մոսկուայի գիւղատնտեսական վարժարանը ու 1889ին կը վերադառնայ Թիֆլիս ու կը նուիրուի հանրային գործերու, աշակցելով Քրիստափորին՝ Դաշնակցութեան հիմնադրման գործին մէջ։ Զաւարեան ատեն մը մաս կազմած է Ժընեւի *«Դրօշակ»*ի խմբագրութեան, իսկ աւելի ուշ՝ աշխատակցած է Պոլսոյ *«Ազատամարտ»*ին։ Թիֆլիսէն, Մոսկուայէն, Ժընեւէն ու Պոլսէն առաջ ու ետք, եղած է Տրապիզոն, Կիլիկիա, Լիբանան, Եգիպտոս, Մուշ, միշտ իբրեւ տնօրէն, ուսուցիչ, կազմակերպիչ ու լեզուփոխական գործիչ։ Մեռած է 1913ին, Պոլիս, ու թաղուած Թիֆլիս, Խոջեվանքի գերեզմանատան մէջ։

digitised by A.R.A.R.@

ՌՈՍՏՈՄ — (էջ 98)

Ուսուցիչ, խմբագիր եւ յեղափոխական գործիչ Ռոստոմ ծնած է Գողթն գաւառի Ցղնա գիւղը, 1867ին։ 1886ին կ'աւարտէ Թիֆլիսի պետական վարժարանը եւ 1889ին կը մտնէ Մոսկուայի գիւղատնտեսական վարժարանը, բայց տարի մը ետք կ'աքսորուի՝ ուսանողական ցոյցի մը մասնակցած ըլլալուն համար։ Թիֆլիս վերադառնալով՝ կը դառնայ Քրիստափորի եւ Ջաւարեանի անմիջական գործակիցը։ 1892ին կը մասնակցի Հ.Յ.Դաշնակցութեան Առաջին Ընդհանուր Ժողովին, ուր, Քրիստափորի եւ Ջաւարեանի հետ կը կազմէ Հ.Յ.Դաշնակցութեան ծրագիր-կանոնագիրը։ Ռոստոմ 1893էն 1895 կը մնայ Ժընեւ՝ «Դրօշակ»ի գործով։ Թիֆլիսէն ու Ժընեւէն ետք կամ առաջ, ան եղած է Կարին, Պարսկաստան, Պալքանեան երկիրներ, Ծտուտկարտ, Փերոկրատ, Սթոքհոլմ, Բաքու, միշտ իբրեւ տնօրէն, ուսուցիչ, գաղափարական դարբին ու յեղափոխական գործիչ։ Մեռած է բծաւոր տիֆէ, 1919ին, Թիֆլիս։

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑ — (էջ 100)

Մանկավարժ, հրապարակագիր ու խմբագիր Ստեփանոս Նազարեանց ծնած է Թիֆլիս, 1812ին։ 1825էն 1829 կը յաճախէ տեղւոյն «Ներսիսեան» վարժարանը։ Չորս տարի ետք, կարճ ատեն մը Դորպատի գիմնազիան, մէկ տարի նոյն քաղաքին համալսարանի բժշկագիտական (1835-36), իսկ հինգ տարի փիլիսոփայական ֆակուլտետները (1836-1840)։ Ստեփանոս Նազարեանց 1858ին կը հիմնէ ու կը խմբագրէ *«Հիւսիսափայլ»* ամսագիրը, իսկ 1869-71 տարեշրջաններուն կը վարէ «Ներսիսեան» վարժարանի տնօրէնութիւնը։ Ջատագով աշխարհաբար լեզուի ու կրթութեան՝ ան կը հանդիսանայ արեւելահայ զարթօնքի ռահվիրաներէն մէկը։ Գլխաւոր գործերն են *«Ծաղկաց փորձական հոգեբանութեան»* (1851), *«Առաջին հոգեղէն կերակուր՝ հայազգի երեխաների համար»* (1853), *«Վարդապետարան կրօնի»* (1853), *«Հանդէս նոր հայախօսութեան»* (1857), եւայլն։ Մեռած է 1879ին, Մոսկուա։

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ — (էջ 101)

Բանաստեղծ եւ թատերագիր Պետրոս Դուրեան ծնած է Սկիւտար, 1851ին։ Կը յաճախէ Սկիւտարի ճեմարանը, ուր ուսուցիչ կ'ունենայ Յակոբ Պարոնեանը։ Դուրեան 13 տարեկանին կը գրէ իր *«Վարդ եւ Շուշան»* անուն թատերախաղը։ 1868ին, ճեմարանը աւարտելէ ետք, կը սկսի աշխատիլ նախ սեղանաւորի մը մօտ, ապա վաճառականի քով՝ իբրեւ գրագիր։ Կարճ ատեն մը ետք կը ստիպուի ձգել այդ պաշտօնները եւ կը նուիրուի գրական աշխատանքներու եւ թատրոնի։ Օրշան մը մաս կը կազմէ *«Օրագիր»* թերթի խմբագրութեան եւ կու տայ նաեւ մասնաւոր դասեր։ Իր գործերը ամփոփուած են *«Տաղք եւ թատերգութիւնք»* անուն հատորին մէջ։ Կը մեռնի թոքախտէ, 21 Յունուար 1872ին, Պոլիս։

ՄԿՐՏԻՉ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ — (էջ 102)

Բանաստեղծ, թատերագիր եւ ուսուցիչ Մկրտիչ Պէշիկթաշլեան ծնած է Պոլիս, 1828ին։ Պոլսոյ Մխիթարեան վարժարանին մէջ նախնական ուսումը ստանալէ ետք, կը մեկնի Իտալիա եւ կ'աւարտէ Փատուայի «Մուրատեան» վարժարանը ու ատեն մը կը մնայ Վենետիկ եւ կ'ուսումնասիրէ մեր մատենագրութեան կարեւոր գործերը։ 1845ին կը վերադառնայ Պոլիս եւ կը լծուի կրթական ու հանրային ասպարէզներուն եւ թախտորոշ դեր կը կատարէ երիտասար-

digitised by A.R.A.R.@

դութեան հոգեբանութեան ու աշխարհահայեացքին կազմաւորման մէջ։ Իր մահէն ետք, Մերենցի նախաձեռնութեամբ կը հաւաքուին իր տաղերն ու թատերգութիւնները եւ կը հրատարակուին *«Մատենագրութիւնք Մկրտիչ Պէշիկթաշլեանի»* խորագրին տակ, 1870ին։ Կը մեռնի թոքախտէ, 1868ին, Պոլիս։

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ — (էջ 102)

Հրապարակագիր, գրող, խմբագիր ու հանրային գործիչ Գրիգոր Արծրունի ծնած է Մոսկուա, 1845ին։ Նախնական կրթութիւնը ստացած է Թիֆլիսի ռուսական գիմնազիոնի, իսկ բարձրագոյն կրթութիւնը՝ Մոսկուայի եւ Փեթերսպուրկի համալսարաններուն մէջ։ Ճանաչուած է նոյնպէս Հայտեղպերկի համալսարանը եւ ստացած քաղաքատնտեսութեան եւ փիլիսոփայութեան դոկտորի աստիճան։ Աւելի ետք, հայերէնի մասնաւոր դասեր առած է Վենետիկի Մխիթարեաններուն մօտ։ Ատեն մը ուսուցչութիւն ըրած է Թիֆլիսի աղջկանց վարժարանին մէջ, թղթակցելով նոյն ատեն *«Մեղու Հայաստանի»* եւ *«Հայրենիք աշխարհ»* թերթերուն, իսկ 1872ին հիմնադրած է *«Մշակ»* թերթը, զոր խմբագրած է մինչեւ մահը։ Իր գլխաւոր գործերն են *«Էվիլինա»* վէպը, պատմուածքներ եւ շարք մը ակնարկներ։ Մեռած է 17 Դեկտեմբեր 1892ին, Թիֆլիս։

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ — (էջ 103)

Բուն անունով Մկրտիչ Խրիմեան, ծնած է Վան 1820ին։ 34 տարեկանին կը ձեռնադրուի վարդապետ։ Վարագայ վանքին մէջ կը ճաստատէ տպարան ու կը հրատարակէ *«Արծուի Վասպուրականի»* ամսաթերթը։ Ապա կ'ընտրուի Մշոյ առաջնորդ, ուր եւս կը հրատարակէ *«Արծուիկ Տարօնոյ»* պարբերաթերթը։ Կը ձեռնադրուի եպիսկոպոս ու կ'ընտրուի պատրիարք Կ. Պոլսոյ. շրջան մը ետք, հրաժարելով իր աթոռէն՝ կը նուիրուի գրական աշխատանքներու։ Գլխաւորած է Պերլինի վեհաժողովը ներկայացնող հայկական պատուիրակութիւնը։ 1885ին կը դառնայ Վանի առաջնորդ, թուրք կառավարութեան կողմէ կ'աքսորուի Պոլիս, ապա՝ Երուսաղէմ։ 1892ին կ'ընտրուի Ամենայն Հայոց կաթողիկոս ու կը փոխադրուի Էջմիածին, ուր կը վախճանի 87 տարեկանին՝ 1907ին։ Խրիմեան հայրիկի *«երկաթէ շերեփ»*ի օրինակը բոլոր սերունդներուն համար անջնջելի պատգամ մը կը մնայ։

ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ — (էջ 106)

Գրագէտ, հրապարակագիր, խմբագիր, մանկավարժ, ազգային ու քաղաքական գործիչ Աւետիս Ահարոնեան ծնած է 1866ին, Արարատեան դաշտի Իգդիրմաւա գիւղը։ Նախնական կրթութենէն ետք՝ կ'ընդունուի Էջմիածնի *«Գէորգեան»* ճեմարանը ու կ'աւարտէ անոր վերջամեայ դասընթացքը, ապա կը հետեւի Լօզանի համալսարանի պատմա-փիլիսոփայական ճիւղին։ Վերադարձին՝ Թիֆլիսի մէջ կը մասնակցի *«Մուրճ»* եւ *«Ցառաջ»* թերթերու խմբագրութեան եւ ատեն մը կը վարէ *«Ներսիսեան»* վարժարանի տնօրէնութիւնը։ 1918ին՝ ան կը գլխաւորէ Հանրապետութեան պատուիրակութիւնը, նախ՝ Պոլսոյ, եւ ապա՝ Փարիզի մէջ։ Իսկ 10 Օգոստոս 1920ին, Հայաստանի կառավարութեան անունով կը ստորագրէ Սեւրի դաշնագիրը։ Իր գլխաւոր գործերն են *«Ազատութեան ճանապարհին»*, *«Իմ գիրքը»*, *«Արցունքի հովիտը»*, *«Ղեղոյի արտը»*, *«Մրրիկին սուրբը»*, եւայլն։ Կը մեռնի Մարսէյլ, 1948ին, ամբողջ 14 տարի անկողնոյ ծառայելէ ետք։

digitised by A.R.A.R.@

ՍԻԱՄԱՆԹՕ — (էջ 108)

Բանաստեղծ Սիամանթո ծնած է Ակն, 1878ին։ Տասնչորս տարեկանին կը փոխադրուի Պոլիս եւ կը յաճախէ ու կ'աւարտէ Սկիւտարի «Պէրպէրեան» վարժարանը։ 1896ին կ'ապաստանի Եւրոպա եւ երեք տարի կը հետեւի Սորպոնի գրականութեան ճիւղին, աշխատակցելով միաժամանակ մեր կարգ մը թերթերուն։ 1908ին կը վերադառնայ Պոլիս եւ տարի մը ետք կ'անցնի Ամերիկա՝ իբրեւ «*Հայրենիք*»ի խմբագիր։ 1910ին կը վերադառնայ Պոլիս, իսկ 1913ին մինչեւ Թիֆլիս կ'ընկերանայ Զաւարեանի դագաղին, իբրեւ պատուոյ պահակ։ Իր գլխաւոր գործերն են «*Դիւցազներէն*», «*Հայորդիներ*», «*Հոգեվարքի եւ յոյսի ջահեր*», «*Կարմիր լուրեր բարեկամէս*» եւ «*Մուրբ Մեսրոպ*»։ Նահատակուած է 1915ին։

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ — (էջ 108)

Բանաստեղծ եւ մանկավարժ Դանիէլ Վարուժան ծնած է Սեբաստիոյ Բրգնիկ գիւղը, 1884ին։ Տասներկու տարեկանին կը փոխադրուի Պոլիս եւ կը յաճախէ Մխիթարեան վարժարանը։ 1902ին կ'ընդունուի Վենետիկի «Մուրատ-Ռափայէլեան» վարժարանը, զոր կ'աւարտէ 1905ին։ Նոյն տարին կ'անցնի Պելճիքա եւ Կանտի համալսարանին մէջ կը հետեւի քաղաքական եւ ընկերային գիտութեանց։ 1909ին Վարուժան կ'աւարտէ համալսարանը, կը վերադառնայ Պոլիս, ատեն մը կ'անցնի Սեբաստիա, դարձեալ կու գայ Պոլիս, միշտ զբաղելով գրականութեամբ եւ ուսուցչութեամբ։ Գլխաւոր գործերն են «*Մարսուանիներ*», «*Ցեղին սիրտը*», «*Հեթանոս երգեր*» եւ «*Հացին երգը*»։ Նահատակուած է 1915ին։

ԼԵՆԻՆ — (էջ 114)

Յեղափոխական, տեսաբան, Համայնավար կուսակցութեան հիմնադիր Լենին ծնած է 10 Ապրիլ 1870ին, Ուլեանովսկ։ 1887ին կ'աւարտէ Սիմբիրսկի գիմնազիան, որմէ ետք կ'ընդունուի Կազանի համալսարանի իրաւաբանական բաժանմունքը։ 1891ին՝ հեռակայ կարգով քննութիւններ կու տայ Փեթերսպուրկի համալսարանի իրաւաբանական բաժանմունքին։ 1900 Յուլիսին կը մեկնի Գերմանիա։ Իբրեւ յեղափոխական՝ Լենին երկու անգամ կը ձերբակալուի ու կ'աքսորուի Սիբիր, ուր կը գրէ աւելի քան 30 աշխատութիւններ, օգտագործելով 170 ծանկանուն։ 1917ին կը ղեկավարէ Հոկտեմբերեան յեղափոխութիւնը։ Հիմը կը դնէ «*Վպերեոդ*», «*Զվեզդա*», «*Պրոսվեշչենիէ*» եւ «*Պրաւդա*» թերթերուն եւ կը մասնակցի ոմանց խմբագրական աշխատանքներուն։ Հեղինակն է տեսական ու քաղաքական բազմաթիւ երկերու։ Մեռած է 21 Յունուար 1924ին, Մոսկուա։

digitised by A.R.A.R.@

ԱՆՀԵՏԱՑԱԾ ԴԷՄՔԵՐ

«Բագին»ի անցեալ տարուան վերջին թիւով տուած էինք ցանկը մօտիկ անցեալին անհետացած գրական եւ մշակութային դէմքերու եւ խոստացած քանի մը էջ յատկացնել անոնց յիշատակին։

Ներկայ թիւով կու տանք Սփիւռքի եւ անչուշտ մեզի ծանօթ դէմքերուն կենսագրական համառօտ ծանօթութիւններն ու անոնց խոհերէն ու տպաւորութիւններէն բնորոշ հատուածներ, յաջորդին ձգելով անհետացած հայրենի դէմքերուն յարգանքի մեր տուրքը։

ՍՏԵՓԱՆ ԷՄՄԻԵԱՆ

Լիբանանի հանրածանօթ դաշնակահարներէն՝ վաստակաւոր երաժիշտ եւ մանկավարժ Ստեփան Էմմիեան ծնած է 1930 Ապրիլ 2ին՝ Սարպա (Լիբանան), երաժիշտներու ընտանիքի մը մէջ։

Երաժշտական առաջին գիտելիքները ստացած է հօրմէն, ապա, դաշնակի մասնակի դասեր առած է աւստրիացի Հիւկօ Պարգայէն եւ Միշէլ Զեսքինոֆէն։ Միաժամանակ հետեւած է դաշնաւորումի եւ contrepointի դասընթացքներուն, Ս. Փեթերսպուրկի արքունիքի ֆիլհարմոնիք նուագախումբի ղեկավար պարոն Էրհարտ Դէլինկի մօտ։ Երաժշտական իր ուսումը շարունակած է Mission Culturelle Française մէջ, զոր աւարտած է 1960ին։ Իր ուսուցիչները եղած են Միշէլ Պուրտօ (դաշնակ) եւ Հանրի Ռուպիար (դաշնաւորում եւ contrepoint)։

Իբրեւ դաշնակի ուսուցիչ՝ դասաւանդած է Լիբանանի երաժշտական ծանօթ գրեթէ բոլոր հաստատութիւններուն մէջ (Պետ. Երաժշտանոց, U.S.E.K., «Բարեկեղ Կանաչեան», Անթիլիասի Դպրեվանք, եւայլն)։

Իր 53ամեայ մանկավարժական գործունէութեան ընթացքին հասցուցած է տաղանդաւոր բազմաթիւ դաշնակահարներ։

Տուած է բազմաթիւ նուագահանդէսներ զանազան երկիրներու մէջ. Լիբանան, Յորդանան, Կիպրոս, Շուէտ, Ֆինլանտա, Զուիցերիա։

Իբրեւ ընկերակցող եւոյթ ունեցած է հայ թէ օտար բազմաթիւ արուեստագէտներու հետ. Վարուժան Գոճեան, Օննիկ Սիրմէլեան, Սոնա Ղազարեան, Կարպիս Պօյաճեան, Արփինէ Փեհլիվանեան, Անթաւն Սատտ եւ ուրիշներ։

Պարգեւատրուած է զանազան շքանշաններով.

Ստեփան Էմմիեանի ստեղծագործական երկերէն են.

1979-5 Préludes, Noël Syriaque.

1980-2 Préludes, Կիլիկիա։

1981-Հայրենի սէր (երգչախումբի եւ դաշնամուրի համար)։

1983-Fantasisie héroïque, Rhapsodie Nocturne, Requiem, Chant de Troubadour.

Ստեփան Էմմիեան մեռած է 26 Յունուար 1994ին, Պէյրութ։

digitised by A.R.A.R.@

ՓՕԼ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Շաբաթ, 21 Նոյեմբեր 1993ի գիշերը, սրտի անակնկալ կաթուածի մը հետեւանքով մահացաւ սփիւռքահայ եւ արաբական գեղանկարչութեան վաւերական դէմքերէն մէկը հանդիսացող Փօլ Կիրակոսեան:

1960ական տարիներուն իր ինքնուրոյն ոճն ու գեղանկարչական դպրոցը հաստատած Փօլ Կիրակոսեան ծնած է 1925ին, Երուսաղէմ, Եղեռնէն վերապրած ընտանիքի մը յարկին տակ:

1950ական թուականներու առաջին տարիներուն, լիբանանեան մակարդակի վրայ ինքզինք պարտադրելէ ետք, 1956ին, իտալական կառավարութեան հրաւէրով կը մեկնի Ֆլորանս, որուն «Լ'Աքատեմի տէ Պօ-զ'Արթ»ի մասնագիտական ուսման շրջանը կ'աւարտէ փայլուն յաջողութեամբ: 1961ին, հազիւ Լիբանան վերադարձած, այս անգամ կը հրաւիրուի Ֆրանսական պետութեան կողմէ: Ապա, նման հրաւէրներ կը ստանայ գերմանական եւ եւրոպական այլ պետութիւններէ:

Աւելի քան 40 տարի անդադար ստեղծագործած Փօլ Կիրակոսեան ստորագրած է հազարէ աւելի իւղաներկ պաստառներ, բազմահազար գծանկարներ, ջրանկարներ, կաւճանկարներ եւ այլ բնոյթի ստեղծագործութիւններ: Անոր գործերը ցուցադրուած են աշխարհի չորս ծագերուն եւ տեղ գրաւած՝ պետական ու միջազգային զանազան թանգարաններու մէջ, ինչպէս՝ Ուաշինկթընի «Հորքորան» ժամանակակից արուեստի թանգարանի, Վատիկանի «Միւզէ տէ լ'Ար Մոտեռն»ի, Մոսկուայի «Միւզէ տէ Լէօփաս»ի, Մինսքի «Ազգային թանգարան»ի, Սան Փաուլոյի «Միւզէ տ'Ար Մոտեռն»ի, Փարիզի «Էնսթիթիւտ տը Մոնտ Արապ»ի եւ Վիեննայի, Վենետիկի, Քուէյթի, Ֆրանքֆորթի, Շիքակոյի, Ուաշինկթընի, Նիւ Եորքի, Թոքիոյի, Նիւ Տելհիի, Դամասկոսի, Պէյրութի եւ այլ մայրաքաղաքներու պետական թանգարաններուն ու նշանաւոր ցուցասրահներուն մէջ:

Փօլ Կիրակոսեանի արուեստին նուիրուած են չորս գիրք-ալպոմներ, իսկ աշխարհի չորս ծագերուն կազմակերպուած իր ցուցահանդէսներուն առիթով հրատարակուած են յիսունէ աւելի *քաթալոգներ* եւ *պրոշիւրներ*:

Արեւմտեան անուանի արուեստաբաններու կողմէ «Արեւելեան արդի արուեստի դարպասը» նկատուած Փօլ Կիրակոսեան, որուն արուեստին նուիրուած օտար արուեստաբաններու բազմահարիւր յօդուածներն ու ուսումնասիրութիւնները լոյս տեսած են աշխարհի ամէնէն նշանաւոր հրատարակութիւններուն մէջ, առաջին իսկ օրէն եղած է գրագէտներու եւ բեմադրիչներու մտերիմ բարեկամը եւ նկա-

digitised by A.R.A.R.@

բազարդած՝ բազմատասնեակ հատորներ ու պատրաստած՝ թատերական բազմաթիւ բեմադրութիւններու գեղարուեստական ձեւաւորումը:

Ամէն առիթով հայ եւ իրաւազրկուած այլ ժողովուրդներու արդար ու անժամանցելի իրաւունքները պաշտպանած այս տաղանդաւոր արուեստագէտը արժանացած է բազմաթիւ մրցանակներու, շքանշաններու եւ պատուոյ գիրերու, ինչպէս՝ «Կրուի Թոսքան» ոսկեայ մետալին (1957), Փարիզի «Պիէնալ»ի միջազգային փառատօնի առաջին մրցանակին (1959), «Ֆիլիփս»ի առաջին մրցանակին (1969), «Լ'էտիւքասիոն Նասիոնալ»ի Ա. կարգի մրցանակին (1970), Ֆրանսայի մշակոյթի նախարարութեան ոսկեայ մետալին (1984), «Մարտիրոս Սարեան»ի անուան մրցանակին (1985), Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Ս. Մեսրոպ Մաշտոց»ի ոսկեայ մետալին (1985), Վատիկանի «Սէնթ Սիլվեսթր» Ասպետի ոսկեայ շքանշանին (1991), Լիբանանի հանրապետութեան Ասպետի Ա. կարգի շքանշանին եւ բազում այլ շքանշաններու ու պատուոյ գիրերու:

Փոլ Կիրակոսեանի անժամանակ մահով՝ սփիւռքահայ, լիբանանեան եւ արաբական գեղանկարչութիւնը կորսնցուց միջազգային վարկ ու համբաւ նուաճած դէմքերէն մէկը:

digitised by A.R.A.R.@

ՍՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ

Պարսկահայ ծնողներու զաւակ՝ Սմբատ Փանոսեան ծնած է 1909ին, Թիֆլիս, դէպի Նովկաս նահանջի ժամանակ, 1918ին: 1911ին ընտանեօք կը վերադառնան Սալմաստ, ուր հողագործութեամբ պարապող հայրը զոհ կ'երթայ պատահական գնդակի մը: Յաջորդ տարի շրջանի հայութեան հետ Փանոսեան ընտանիքը կը գաղթէ դէպի Միջագետք: Հոն, Տիալա գետի ափին, համահարակի մը հետեւանքով կը մահանայ մայրը: Բոլորովին որբ՝ եղբօր ու քրոջ հետ կը դրուի Նահր էլ Օմարի որբանոցը: 1922ին որբանոցը կը տեղափոխուի Երուսաղէմի հայոց վանքը, ուր կը մնայ մինչեւ 1925 եւ կը շարունակէ իր նախակրթութիւնը:

1926ին Սմբատ Փանոսեան կ'ընդունուի Կիպրոսի նորաբաց «Մելքոնեան» կրթական հաստատութիւն եւ անուանի ուսուցիչներու շարքին կ'աշակերտի նաեւ Յակոբ Օշականի:

1930ին կը հեռանայ Կիպրոսէն եւ կարգ մը արհեստներ ու պաշտօններ փորձելէ ետք, երեւանական թուականներու կէսերուն կը մտնէ Լաթաքիոյ ծխախոտի ընկերութեան մէջ եւ մինչեւ վերջ կը վարէ նոյն պաշտօնը:

Սմբատ Փանոսեան գրել սկսած է 1932ին եւ աշխատակցած Սփիւռքի գրեթէ բոլոր գրական հանդէսներուն ու թերթերուն:

Իր գլխաւոր գործերն են՝

1.-«Անծրագանգ քայլեր» (պատմուածքներ), 1949:

2.-«Որ մորկաւ էին զատուած» (վէպ), 1953:

3.-«Հայկական վէրքը» (պատմուածքներ):

4.-«Վարք Կոմիտաս Կուտինացիի» (վէպ), 1969:

5.-«Սէրը, որ գին չունէր» (պատմուածքներ), 1963:

6.-«Զանձն իմ փառաւորեալ» (վէպ), 1989:

1965ին, «Թէքէեան» մշակութային միութեան կողմէ կազմակերպուած գրական մրցանքին հանդիսացած է երկրորդ՝ իր «Աւերակ բեդին առջեւ» վէպով:

Հրատարակելի ունի «Աւազի վրայ ծաղկած ծիրանի» վէպը եւ պատմուածքներու քանի մը շարք:

Մեռած է 1993ին, Լաթաքիա:

ԿՈՄԻՏԱՍ ԿՈՒՏԻՆԱՑԻ

—Վարդապետը ցնորա՞ծ է,— ըսին սրտացաւ ծանօթ-բարեկամներ։

—Այժմ, կ'ըմբռնէ՞ք, պարոնայք օտարականներ,— կը հարցնէր ինք իր մէջ խորասուզուած բոյժ-քոյրը ու կը բարձրացնէր թեւը ինկած վերարկուին, որ կը ծածկէր Կոմիտասին ուսերը։

Նաւը տուած էր կողը Վոսփորի արեւելեան կողին ու գրկը-

digitised by A.R.A.R.@

ւած քարափին հետ։ Գարնանայի՞ն էր եղանակը, թէ դեռ աշուն լտեսած տաք ամառ, յայտնի չէր։ բայց Կոմիտաս կը մսէր եւ ահա թէ ինչո՞ւ բոյժ-քոյրը կը բարձրացնէր վերարկուին թեւը։ Արեւը այժմ ծուռ կը նայէր նաւուն, որ շուքին մէջ առած էր քարափէն մաս մը։

Կոմիտասի ուսերը վեր ելան։ ձեռքերը թաղեց սքեմին փէշերուն տակ։ մատները երկու ափերուն՝ փնտռեցին դիրար, իրան քով քովի։ բռնուեցան խոլ գրգիռով մը եւ յանկարծ յարձակեցան իրարու վրայ։ մտան մէջ մէջի։ մատնայօդերը ճարճատեցան։ Դիմացը բազմած էր բազում բլրակներէ կազմուած գահին վրայ դարաւոր Պոլիսը, հազար ինը հարիւր տասնինի «պարտեալ» կնիքը ճակտին։ Միշտ պառաւած, սակայն բնաւ չծերացած պէրուհիի նման հոլանի։ Ոսկեղջիւրի կապոյտ ջուրերը մեղմ ալիքներով, հաւատարիմ չան մը պէս կը լիզէին անոր մերկ ոտքերը, որոնք կը կամրջէին եւրոպա-ասիական զոյգ ափերը Մարմարա ծովուն։ Խառնածին էր ու աննման իր գեղեցկութիւնը, խորամանկ, վաւաշոտ, նենգամիտ՝ ժպիտն ու խօսքը։ Ինքն էր, որ դարբնեց առաջին ցեղասպանութիւնը եւ զայն փաթթեց հայու վիզին, միանգամ ընդ միշտ խեղդելու համար անոր ազատատենչ շունչը։ Պատերազմը եղած էր առիթ մը։ գործադրած ոճիրը բռնուած էր յանցանքի վրայ։ Սակայն, կրցաւ ազատիլ ծանր չղթաներէ։ «Մեծերը» սիրեցին ու ընտրեցին պէրուհիի իր հոլանի թեւերը, բաց կուրծքը եւ մերկ ազդրերը։ Յարձակեցան վրան համերաշխ ոգիով, բայց չկրցան բաժնել անոր անբաւ հարստութիւնը իրենց մէջ սոված գազանի բնազդով իրան միսերուն, ու եղան վէճ իրենց միջեւ։ Հիմա անոնք սեռային կիրքէ յագեցած՝ փողոցային բիրտ շուներու պէս թաւալած էին արեւելեան գեղեցկուհիին շուրջբոլորը ու գրմռալով եւ ժանիք ցցելով կը խանդէին դիրար…

Այդպէս էր, որ ապրեցաւ Պոլիսը եւ այժմ թրքօրէն բազմած էր բազում բլուրներէ շինուած իր գահին, ոսկեշղթայ գօտին կապած մէջքին, ձեռքերը ազատ, միտքը՝ անկախ ուզածը ընելու։ Իսկ անոր ուզածն ի՞նչ էր։ երկար, երկա՜ր ցանկութիւն մը, որ ուրան-թուրան կը կոչուէր։ Կիրք մըն էր անիկա պատմական բնազդին մէջ կազմաւորուած։ Կար ու կը մնար արգելակող վերջին ուժը, որ կռուահատով մաշած, փոքրացած՝ կը մնար Արաքսի արեւելեան ափին, արագածի փէշերուն կպած…

Նոր աշխարհ մը ստեղծելու միտքէն հրուած՝ «մեծերը» զբաղած էին Բաբելոն շինելով, որ նոր ջրհեղեղին դէմ փրկութեան խարիսխ մը ունենայի։ Զիրար չհակնալով, ձգեցին Պոլսոյ ձեռքերը ազատ։ իրենց հո՞գն էր, թէ պիտի վերցուէր պատմութեան բեմէն հայ ցեղն ու հողը…

(Հատուած) ՍՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՆՈՒՊԱՐ ԱԿԻՇԵԱՆ

Արձակագիր Նուպար Ակիշեան ծնած է 1934ին, Սանճաքի Իսկէնտերուն քաղաքը: Յաճախած է Հալէպի Մեսրոպեան վարժարանը, բայց նախակրթարանի ուսումը ամբողջացնելէ առաջ հարկադրուած է նեռուիլ կեանքի ասպարէզ: 1949ին ընդունուած է Կիպրոսի «Մելքոնեան» կրթական հաստատութիւն եւ բոլորած է անոր վեցամեայ դասընթացքը: 1955ին կը նշանակուի Գահիրէի «Արեւ» օրաթերթի օգնական խմբագիր: Աշխատակցած է Պէյրութի «Ծիրակ» ամսաթերթին, Պոսթընի «Պայքար» տարեգիրքին եւ «Նոր օր»ին: 1957ին կը հաստատուի Ամերիկա, ուր կը մասնագիտանայ բնագիտութեան բնագաւառին մէջ ու կը ստանայ համապատասխան վկայականներ:

Նուպար Ակիշեանի գլխաւոր գործերն են՝

1.—«Հոսանքն ի վար», (1976):
2.—«Անարգուած մարդիկ», (1978):
3.—«Գաղթականները» (վէպ), 1988):
4.—«Օտար անցորդը» (1986), եւայլն:

Ունի նաեւ մենագրութիւններ՝ Շահան Շահնուրի եւ Լեւոն Զաւէն Սիրմէլեանի մասին: Գործածած է Շահան Շահէ ծածկանունը:

Մեռած է 19 Յունուար 1994ին, Պոսթըն:

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Ճշմարիտ գրականութիւնը արտայայտութիւնն է ժամանակաշրջան մը բնորոշող հոգեկան ու իմացական վիճակներու, եւ այդ վիճակներուն ծնունդ տուող բարդ մթնոլորտին։ Ան է նաեւ ամբողջական պատկերը մարդուն խորասոյզ գիտակցութեան, յարաշարժ յուզումներուն, եւ անոր՝ իր միջավայրին հետ ստեղծած ներդաշնակ յարաբերութեան, եւ կամ այդ կենակցութեան չգոյութեան։ Այդ պատճառաւ է, որ փոխուող ժամանակներու յարուցած քաղաքական, ընկերային ու տնտեսական յեղաշրջումները իրենց հարազատ արձագանգը կ'ունենան գրականութեան մէջ, խուովելով ու տագնապեցնելով՝ տարբեր ժամանակներու ընթացքին բնականօրէն հաստատուած աւանդութիւններն ու ճշդուած սահմանումները։

Ընկերային կեանքի յարափոփոխ պաստառները, ուրեմն, իրենց երանգաւոր այլազանութեամբ կ'ընդգրկեն մշտանորոգ մտայնու-

digitised by A.R.A.R.@

թիւններու գլխաւոր արտադրութիւնը, ուր գեղարուեստական մտահոգութիւնը զուգահեռ կ'ընթանայ մարդկային պահանջներու եւ ակնկալութեանց։ Այսպէս է, որ կը շաղախուին գրական ու գեղարուեստական շարժումներուն ծնունդ տուող ջանքեր ու մտասեւեռումներ։

Ինչպէս միջազգային օտար գրականութիւնը, մերն ալ թաւալած է փոթորկայոյզ ժամանակներու ջղագրգիռ հոսանքներուն հետ, եւ հակառակ երկար ատեն հող ու երդիք չունենալուն, կրցած է բնութագրել պատմական վերիվայրումներու անմիջական խռովքը։ Եւ այդպէս ալ պէտք է ըլլայ բարձրորակ գրականութիւնը։ Որքան ալ փորձուի, կարելի պիտի չըլլայ գեղարուեստական արտայայտութիւնը տարանջատել պատմական իրավիճակներէն, որովհետեւ, ճշմարիտ գրականութիւնը իր հիմնական կառուցուածքով ուրիշ բան չէ, եթէ ոչ պատկերաւոր մտայղացքն ու ցոլացումը ժամանակաշրջանի մը տարրական կարիքներուն, դժուարութիւններուն ու մղձաւանջին։

Ձիշդ այդ հանգամանքով է, որ մենք եւս, քաղաքական աննպաստ երեւոյթներէ բխող ու անոնցմով պայմանաւորուող սահմանումներու պատշաճեցուցած ենք մեր գրական շրջանները եւ անոնց հագցուցած ենք գաղթականի ոչ բաղձալի շապիկը։ Արեւմտահայ գրականութիւնը, իր էութեամբ, յատկանշուած է, ուրեմն, արտերկրեայ նկարագրով, սեփական հողէն զրկուած իր ջանքերով ու յուզականութեամբը։ Նոյնիսկ այսպիսի որակում մը ունի ժամանակներու զատորոշման դրոշմը միջավայրի եւ բարքերու այլազանութեամբ, որուն միակ յայտարարը կը հանդիսանայ օտար ազդեցութիւններու անմիջական ներգործութիւնը։

(Հատուած) ՆՈՒՊԱՐ ԱԿԻՇԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԵՂԻՇԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Խմբագիր ու թարգմանիչ Եղիշէ Մանուկեան ծնած է 1914ին, Ատանա: Փոքր տարիքէն կը կորսնցնէ ծնողը եւ մինչեւ հինգ տարեկան հասակը կը մնայ Մերսինի որբանոցը: 1919ին կը փոխադրուի Լիբանան եւ Աշքութի ու Զէյէկեան որբանոցներուն մէջ կը ստանայ իր նախակրթութիւնը:

1926ին կ'ընդունուի Կիպրոսի «Մելգոնեան» կրթական հաստատութիւնը եւ կ'աշակերտի շարք մը նշանաւոր ուսուցիչներու, որոնց շարքին՝ Յակոբ Օշականի:

Վաղ տարիքին անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ի, դարձած է անոր աշքառու դէմքերէն մէկը եւ շրջուն տարածիչը նոյն միութեան ոգիին:

Եղիշէ Մանուկեան ատեն մը զբաղած է ուսուցչութեամբ եւ պաշտօնավարած է Դամասկոսի «Ս. Թարգմանչաց» եւ «Միացեալ» վարժարաններուն, իսկ հետագային՝ Լիբանանի «Ս. Յակոբ» (այժմ «Հայթալպաշեան»), «Մխիթարեան» եւ «Նշան Փալանճեան» ճեմարանի մէջ, գլխաւորաբար աւանդելով հայոց լեզու:

Մարզական եւ կրթական ասպարէզներուն առընթեր՝ Եղիշէ Մանուկեան վարած է հրապարակագրական եւ խմբագրական աշխատանքներ, իր աշխատակցութիւնը բերելով **«Ազդակ»**, **«Ազդարար»** եւ **«Այգ»** թերթերուն: Ան կատարած է նաեւ թարգմանչական աշխատանքներ, հայացնելով Ստեֆան Ցուայգի **«Անծանօթ կնոջ մը նամակը»**, Պորիս Փասթերնաքի **«Տոքթոր Ժիվակօ»**ն, եւայլն:

Իր ստեղծած ազգային ու մշակութային մթնոլորտին մէջ ոգի ու շունչ կազմած զաւակները կեանքի ասպարէզին մէջ արձանագրած են մեծ յաջողութիւններ եւ ազգային հաստատութիւններու ըրած են շարք մը իշխանական նուիրատուութիւններ, որոնց կարգին՝ իրենց հօր եւ մօրը անուններով կառուցած են «Եղիշէ Մանուկեան» վարժարանը եւ «Սիրան Մանուկեան» սրահը:

Մեռած է 25 Մայիս 1994ին, Լոնտոն:

ԱՌԱՔԵԼԱՏԻՊ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԷՍ ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ

Մարդ Օշականը ինծի ու Կիպրոսի «Մելգոնեան» վարժարանի դասընկերներուս իր խոնարհ հոգին պիտի պարզէր երկու այլ պարագաներու տակ, մանուկները յիշեցնող իր··· լացով։

Հայ գրականութենէն ընթերցումի մը պահուն ան կարդաց·— «Լա՛ց, պառաւ լաց»ը։ Հայր ու մայր բանտ կ'այցելեն՝ վերջին անգամն ըլլալով տեսնելու համար իրենց մահապարտ զաւակը, որ այգաբացին կախաղան պիտի բարձրանար։

digitised by A.R.A.R.@

Ընթերցման աւարտին Օշական, որ շրջուն համայնագիտարանն էր ո՛չ միայն հայ գրականութեան, այլեւ ֆրանսական, գերմանական, անգլիական ու ռուսական գրականութիւններուն մասին, սեղանին վրայէն առաւ գիրք մը, որուն մէջէն սկսաւ կարդալ Էմոնիտ Անտրէեւի «Եօթը կախաղաններ»էն հատուած մը։ Հոս եւս հայր եւ մայր բանտ կ'այցելեն, վերջին անգամն ըլլալով համբուրելու համար իրենց զաւակը, որ մթնշաղին կախաղան պիտի բարձրանար։

Մեծանուն ուսուցիչս ո՛րքան յառաջացաւ ընթերցման մէջ, ա՛նքան կարկամեցան շրթունքները. յետոյ՝ տամկացան աչքերը եւ արտասուքի մարգրիտները սկսան հոսիլ յաւերժ համբուրելի իր այտերն ի վար։

Երկու տող եւս ու ան ուժգնօրէն գոցեց գիրքը, նետեց սեղանին վրայ ու չտապ քայլերով, գրեթէ վազելով դուրս նետեց ինքզինք դասարանէն։ Ելեկտրականացած մթնոլո՛րտը, թէ Օշականին լացը մեզ պահեց ներզօր յուզման մէջ։

Վստահաբա՛ր՝ մարդուն յայտնութիւնը հանճարեղ գրագէտին մէջ։

Բայց մենք դեռ աւելին պիտի տեսնէինք իրմէ։

Ապրիլեան Եղեռնի ոգեկոչումը տեղի կ'ունենար Հաստատութեան հանդիսասրահին մէջ, ի ներկայութեան ուսուցչական կազմին, աշակերտութեան եւ Նիկոսիայէն հրաւիրուած հոյլ մը ազգայիններու։

Բանախօս՝ Օշական։

Ցամրաքայլ, բայց ոչ ինքնավստահ՝ բեմ ելաւ ան։ Պահ մը գլուխը հակեց կուրծքին ու...

—Տասնեօթը տարի առաջ, այսօր, Թուրքիոյ մէջ...

Կանգ առաւ, աչքերը չփչփեց, անկարող յանկարծ նախադասութիւնը արտասանելու, փղձկեցաւ ու չտապ քայլերով իջաւ բեմէն, ճամբան շարունակեց ու ա՛լ հանդիսասրահ չվերադարձաւ։

Կասկած չկայ, որ այդ օրը ջարդերէն ճողոպրած հազուագիւտ մտաւորականներէն մին՝ Ցակոբ Օշական, իր աչքերուն առջեւ պատկերացուցած էր գազանացած թուրք խուժանը, որ եաթաղաններով թէ մահակներով զինուած իր ետեւէն ինկած էր՝ Օշականին անձին վրայ եւս յարձակելու համար իր արիւնուչտ ախորժակը։

Այսպէս էր հայ գրականութեան անաղարտ պահպանման նըւիրուած քննադատը, որ, միաժամանակ, իր կուրծքին մէջ կը կրէր սիրտերուն ամէնէն բուխը։

Հաստատութեան վերջին պատասխանատուներուն կողմէ ծըրագրուած ու հանգրուան առ հանգրուան կիրարկուած դաշնակցական դաստիարակներու հեռացման քաղաքականութեան առաջին զոհերէն մէկը հանդիսացաւ Ցակոբ Օշական, որ վրայ տուաւ ուսուցչական իր պաշտօնը։

(Հատուած) ԵՂԻՇԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ



Արձակագիր եւ յօդուածագիր Յ. Կարապետեան, բուն անունով Յակոբ Կարապետեան, ծնած է 9 Օգոստոս 1925ին, Թաւրիզ: Նախնական կրթութիւնը ստացած է տեղւոյն ֆրանսական «Սեն Վենսան տը Պոլ», «Հայկազեան-Թամարեան» եւ ամերիկեան «Մեմորիալ» դպրոցներուն մէջ: Միջնակարգ ուսումը ստացած է Թեհրանի «Սեն Լուի» գոլէճին մէջ, իսկ բարձրագոյն ուսումը՝ Միացեալ Նահանգներու «Միզուրի» եւ «Գոլոմպիա» համալսարաններուն մէջ:

Աշխատակցած է սփիւռքահայ եւ ամերիկեան թերթերուն եւ պարբերականներուն: Քսանհինգ տարի աշխատած է Ուաշինկթընի մէջ՝ իբրեւ ռատիօ-լրագրող ու խմբագիր «Ամերիկայի ձայն» հաստատութեան մէջ:

Յակոբ Կարապետեանց լոյս ընծայած է հետեւեալ գործերը.

1.-«Անծանօթ հոգիներ» (պատմուածքներ), 1970:

2.-«Կարթագէնի դուստրը» (վէպ) 1972:

3.-«Նոր աշխարհի հին սերմնացանները» (պատմուածքներ) 1975:

4.-«Միջնարար» (պատմուածքներ), 1981:

5.-«Ադամի գիրքը» (վէպ), 1983:

6.-«Ամերիկեան շուրջպար» (պատմուածքներ), 1987:

7.-«Անկատար» (պատմուածքներ), 1987:

8.-«Երկու աշխարհ» (յօդուածներ), 1992:

9.-«Մի մարդ ու մի երկիր» (պատմուածքներ), 1994:

Յ. Կարապետեանի գործերէն «Կարթագէնի դուստրը» արժանացած է «Հայկաշէն Ուզունեան» գրական մրցանակին, իսկ «Ադամի գիրքը»՝ ՀԲԸՄ Ալեք Մանուկեան եւ ֆրանսահայ գրողներու միութեան «Է. Գաւուքճեան-Այվազեան» գրական մրցանակին:

Ունի հատորի չանցած շարք մը գրութիւններ:

Մեռած է 20 Հոկտեմբեր 1994ին, Ուոթըրթաուն:

ԳՐՈՂԸ ԻՆՔՆ ԻՐ ՀԵՏ

Ասել եմ։ Կրկնում եմ։ Գրում եմ, որովհետեւ կեանքը ո՛չ արդար է, ոչ էլ կատարեալ։ Գրելով փորձում եմ կերպարանք տալ իմ ներքին քաոսին, ապա իմ շրջապատի քաոսին։ Արդէն այդ է արուեստի նպատակը — առնել մի հատուած կեանքի ժամանակից՝ ձեւ ու կարգ պարգեւել նրան։ Այդ են վկայում գրքերը, նկարչական պատկերները, երաժշտական գործերը, քարէ քանդակները, թատրոնը, որմերն ու կամարները, նոյնիսկ լուսանկարն ու

digitised by A.R.A.R.@

յաջորդ շարժանկարը։ Այնքան իրականութեան պատկերումը չէ նպատակը, որքան մի նոր իրականութիւն ստեղծելը, որը թէ՛ արտացոլի կեանքը եւ թէ միաժամանակ տայ պատրանքը մի աւելի արգար կեանքի։ Երբեմն արուեստի գործը այնքան իրաւ է լինում, որ կեանքը օրինակում է արուեստին։ Ահա թէ ինչու արուեստը ազնուացնում է կեանքը, ջանում իմաստ պարգեւել մեր առօրեայ հեւասպառ գոյութեանը։

Գրելով՝ անմահութեան չեմ ձգտում։ Ապագայի մասին չեմ մտածում։ Չեմ գրում ապագայ սերունդների համար։ Եթէ անմահութեան ձգտէի, մէկ շունչով չէի գրի։ Առաջին տարբերակս վերջին տարբերակը չէր լինի։ Կը նստէի, կը յղկէի, կը վերախմբագրէի, մինչեւ որ անթերի լինէր գործը, զերծ՝ խորդուբորդութիւններից, անտաշ քարերից ու մացառներից։ Այդպիսով իմ տեղը կ'ապահովէի արդի դասականների շարքում։ Կը լինէի խելօք, գիտակից ու կարգապահ։ Սակայն ես անմիջական անցաւորն եմ, եւ անմիջական ներկան է իմ մտասեւեռումը։ Ինչպէս ժամանակն է անսկիզբ ու անվախճան, այնպէս էլ իմ գրականութիւնը։ Ինչպէս կեանքն է լի անակնկալներով ու վերիվայրումներով, այնպէս էլ իմ գրական փորձերը, ուր հարազատ ու ճշգրիտ խօսքը ինձ համար աւելի կարեւոր է, քան գեղեցիկն ու գեղագիտական մարգանքը։ Լոյսի հետ թողնում եմ մութը, փայլուն գաղափարի հետ նաեւ հում նիւթը։ Երբ ոճս պերճուղուց թեքւում, քարքարոտ ճանապարհն է ընկնում, չեմ միջամտում։ Թողնում եմ իր բնական հոսքի մէջ։ Այդ խաչաձեւումը երբեմն ուժեղ լարում է առաջացնում, երբեմն էլ ձախաւեր հակազդեցութիւն։ Կարող եմ յետ դառնալ ու շտկել աւերը, սակայն իրերը թողնում եմ իրենց բնական վիճակի մէջ՝ համոզուած լինելով, որ ա՛յդ է ուժականը, ա՛յդ է տուեալ արձագանգը, տուեալ կեանքի զինեթում, պատմութեան տուեալ վայրկեանում։ Միրում եմ ծաղիկի ու տատասկի անկարելի համադրութիւնը։

Չեմ ուրանում իմ գործերը։ Միաժամանակ՝ մեծ համարում չունեմ իմ գործերի նկատմամբ։ Հրատարակուելուց յետոյ իմ գրածները այլեւս չեմ կարդում։ Մոռանում եմ նրանց գոյութիւնը։ Ինձ թւում է, թէ ուրիշ մէկն է գրել իմ գրքերը։ Արդէն եղած չեղածը անկատար բաներ են, որոնք, երբեմն, ի զարմանս ինձ, արձագանգում են այլոց կեանքերում։ Այդ պահերին երանութիւն եմ ապրում։ Ուրեմն, հակառակ իմ վերապահումներին, կարողացել եմ հաղորդակցել։ Ուրեմն, ես մենակ չեմ։ Ուրեմն, նա մենակ չէ։

(Հատուած) Ց. ԿԱՐԱՊԵՆՑ

digitised by A.R.A.R.@

ԲԱԲԳԷՆ ՉԱՆՈՅԵԱՆ*

Երկար տարիներով ուսուցչութեամբ եւ թարգմանական գրականութեամբ պարապած Բաբգէն Զանոյեան ծնած է Մուսա Տաղի Պիթիաս գիւղը, 1920ին: Դեռ պատանի, երկրորդական ուսումը կիսատ ձգած՝ կը նետուի ուսուցչական ասպարէզին մէջ, առաւելաբար աւանդելով արաբերէն լեզու եւ գրականութիւն:

1939ին, Սանճագի պարպումին հետեւանքով՝ համագիւղացիներուն հետ կը տեղափոխուի Լիբանանի Այնճար գիւղը ու կը շարունակէ ուսուցչական իր պաշտօնը, նախ՝ Զահիէի Պալըգճեան, եւ ապա՝ Այնճարի աւետարանական նորաբաց վարժարանները մէջ: 1939էն 1944 երկարող հինգ տարիներուն, մնալով հանդերձ արաբերէն լեզուի ուսուցիչ, Զանոյեան ժամանակ կը յատկացնէ ու կը խորացնէ ակամայ թերի մնացած մայրենի լեզուի իր ծանօթութիւնները:

1944ին կը ստանձնէ Սուրիոյ Հասիչէ քաղաքին Արաբ. Աւետարանական վարժարանի տնօրէնութիւնը, զոր ինը տարիներ վարելէ ետք, մասնաւոր հրաւէրով մը կրկին կը փոխադրուի Այնճար եւ կը ստանձնէ Հայ Աւետարանական բարձրագոյն վարժարանի արաբերէնի լեզուի ու գրականութեան ուսուցչի պաշտօնը, իսկ 1957էն մինչեւ 1983, նոյն ծառայութեան համար պաշտօնի կը կոչուի Պէյրութի Հայ Աւետարանական գոլէճին մէջ:

Բաբգէն Զանոյեան յատուկ աշխատանք տարած է պետական պաքալորիայի քննութեան արաբերէն բաժնի ծրագրին պատրաստութեան մէջ եւ իր բազմարդիւն աջակցութիւնը բերած է Աւետարանական բարձրագոյն վարժարաններու ծրագիրներու կազմութեան:

Կրթական իր ծառայութեան կողքին, Բաբգէն Զանոյեան կատարած է նաեւ խմբագրական ու թարգմանական աշխատանքներ՝ արաբական գրականութենէն:

1983ին՝ Զանոյեան ընտանեօք փոխադրուեցաւ Միացեալ Նահանգներ եւ մեռաւ Ուաշինկթըն, 27 Յունուար 1995ին:

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆԸ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ ՄԷՋ

Արաբական գրականութիւնը, 1258էն մինչեւ 1798, հինգ ու կէս երկար դարեր, կատարեալ ամլութեան շրջան մը ապրելէ ետք՝ դիմաւորեց ազգային ու մշակութային զարթօնքի մը արշալոյսը:

Մշակութեան շատ մը նոր սեռեր, որոնցմէ մասնաւորաբար պիտի յիշենք քաղաքական եւ ընկերային մարզը, որովհետեւ այդ սեռն էր, որ արթնցուց արաբ ազգը դարերու թմբիրէն, եւ զարգացուց զայն քաղաքական մտածողութեան մը ուղղութիւններով:

digitised by A.R.A.R.@

Ինչպէս միշտ եւ ամէն տեղ, արաբական աշխարհին մէջ ալ, գրագէտները եղած են ժողովուրդին խիղճը, ուղեղը եւ դէտը՝ ազգային ու բարոյական իմաստով։

Ազգային շունչով մշակուած գրականութիւն մը արթնցուցած է թմրած եւ գերութեան հետ հաշտուած ժողովուրդները, եւ ներմուծած է արժանապատուութեան, ազատութեան եւ սրբազան իրաւունքներու գիտակցութիւնը անոնց մէջ։

Օսմանեան Թուրքիան ջանաց այդ խիղճը լռեցնել, այդ գիտակցութիւնը մեռցնել իր տիրապետութեան տակ ճնշուած ժողովուրդներուն մէջ։ (Այս իրողութիւնը հայերուս համար ո՛չ փաստի կը կարօտի, ոչ ալ բացատրութեան)։

Ահա թէ ինչու Պէյրութի Նահատակաց Հրապարակին մէջ կախաղաններու վրայ Օսմանեան դահիճներուն կողմէ սարքուած ջարդերուն (1915), նահատակուեցան բազմաթիւ մտաւորականներ, գրագէտներ եւ բանաստեղծներ, ինչպիսիք էին Ֆիլիպ էլ-Խազէն եւ եղբայրը (խմբագիրներ), Օմար Համատ (բանաստեղծ), Սաիտ Ագլ («Ալ Պայրագ» թերթի արտօնատէրն ու խմբագիրը), Տէր Եուսէֆ քահանայ էլ-Հայէք, Ապտիւլ Քէրիմ Խալիլ եւ Ապտիւլ Ղանի Ալրիսի (գրագէտներ), եւ բազմաթիւ ուրիշներ։

Ցարգանքով եւ երախտագիտութեամբ յիշելէ ետք բոլոր այն մտաւորականները, որոնք իրենց գրիչներով կռուեցան յանուն ճշմարտութեան, ազատութեան եւ անկախութեան, պահ մը կանգ պիտի առնենք հետեւեալ չորս տիտաններուն առջեւ, ջանալով գնահատել անոնց ցուցաբերած բարոյական քաջութիւնը, օսմանեան բռնատիրութեան դէմ իրենց մղած հերոսական պայքարին մէջ։–

–Ճըպրան Խալիլ Ճըպրան – մարոնի

–Էտիպ Իսհակ – հայ

–Ռաֆի Էտտին Եէկէն – իսլամ (թուրք)

–Պութրոս էլ Պուսթանի – աւետարանական

Այս չորս մեծ մտաւորականները, որ կը պատկանէին տարբեր կրօնքներու եւ դաւանանքներու, ծնած էին տարբեր տեղեր, յաճախած էին տարբեր դպրոցներ եւ ստացած տարբեր դաստիարակութիւն՝ չորսն ալ, յեղափոխական կարգախօսին երրորդութիւնը կազմող ազատութեան, հաւասարութեան եւ եղբայրութեան ուխտեալ զինուորները եղան, եւ պայքարեցան տիրող տգիտութեան եւ սարկամտութեան դէմ, իրենց անպարտելի հաւատքովն ու անխորտակելի գրիչներովը։

Անոնք միացան առանց գիրար ճանչնալու, առանց կուսակիցներ, հայրենակիցներ ու դաւանակիցներ ըլլալու, ճիշդ այնպէս՝ ինչպէս մարդիկ կը միանան մեծ համաճարակի մը կամ երկրաշարժի նման աղէտի մը դիմաց։ Այս պարագային աղէտը օսմանեան Թուրքին բռնատիրութիւնն ու զուլումն էր։

(Հատուած) ԲԱԲԳԷՆ ԶԱՆՈՅԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՄԵՍՐՈՊՈՒՀԻ ՄԵՍՐՈՊ ԹԱՆԳԱՐԱՆԵԱՆ

(1916 - 1985)

Պուլկարիա երթեւեկող բարեկամ մը, առիթով մը հետը բերած ու մեր տրամադրութեան տակ դրած էր ձեռագիր տետրակ մը, Մեսրոպուհի ստորագրութեամբ, որուն մասին տարիներու վրայ երկարած մեր հետապնդումները զուր անցնելէ ետք, որոշուեցաւ տողաշարին յանձնել ձեռագիրը, «Ճամբու զրոյց», որ լոյս տեսաւ «Բագին»ի առջի տարուան թիւ 5-6 միացեալ համարին մէջ։

Ընթացիկ տարւոյն Ապրիլին սկիզբները, Լիբանանի մէջ կայացած Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր ժողովին մասնակցած պուլկարահայ անձնաւորութիւն մը, Թորոս Տօնիկեան, այցելեց խմբագրատունս եւ յայտնեց, որ ինք անձամբ ճանչցած է Մեսրոպուհին եւ խոստացաւ վերադարձին ներկայանալ անոր պարագաներուն եւ փութացնել մեզի որոշ ծանօթութիւններ։

Քանի մը շաբաթ առաջ, ստացանք Մեսրոպուհիին եղբօրը, Փ. Մեսրոպի ստորագրութեամբ 5 Յունիս 1995 թուակիր նամակ մը, ներփակ «Ճամբու զրոյց»ի հեղինակին լուսանկարն ու կենսագրական ծանօթութիւններ, զորս կը ներկայացնենք ստորեւ։

Գէորգ Մեսրոպի դուստրը, Մեսրոպուհի, ամուսնական անունով Թանգարանեան, ծնած է 21 Յունուար 1916ին, Պոլիս, ուր եւ անցուցած է իր մանկութիւնը։ Հայրը՝ Գէորգ Մեսրոպ (1881-1948), եղած է երկարամեայ ուսուցիչ Պոլսոյ վարժարաններուն մէջ, մինչեւ ընտանեօք փոխադրութիւնը Պուլկարիա, նախ՝ Փլովտիւ, ուր կը հիմնէ գիշերօթիկ դպրոց՝ «Մեսրոպեան ճեմարան»ը, ապա՝ Սոֆիա, ուր կը փոխադրէ նաեւ իր հիմնադրած ճեմարանը։

Մեսրոպուհի նախնական կրթութիւնը կը ստանայ հօրը հիմնած «ճեմարան»ին մէջ, որմէ յետոյ մասնաւոր դասերու հետեւելով եւ անհրաժեշտ քննութիւններու ներկայանալով՝ կը ստանայ նաեւ միջնակարգ կրթութեան վկայական։ Երկու տարի (1934-36) յաճախելէ ետք Կիպրոսի Մելգոնեան վարժարանը,

digitised by A.R.A.R.@

կ'աւարտէ անոր ուսուցչանոցի բաժինը։

Պուլկարիոյ հայաշատ զանազան քաղաքներու մէջ՝ Պուրկազ, Խասքովօ, Սլիվին, եւայլն, կը պաշտօնավարէ 1937էն մինչեւ 1956, նախ՝ իբրեւ ուսուցիչ, աւելի ուշ՝ իբրեւ տնօրէն Խասքովոյի դպրոցին։ Ուսումնական նախարարութեան հրահանգով՝ 1955-56 տարեշրջանին, իբրեւ քննիչ կ'այցելէ Պուլկարիոյ հայկական դպրոցները եւ կը զեկուցէ անոնց մանկավարժական-ուսումնական գործունէութեանց մակարդակին մասին, նշելով որոշ միջոցառումներ՝ զայն կատարելագործելու համար։ Մինչեւ 1964 թուականը, երբ Պուլկարիոյ համայնավար կառավարութիւնը վերջնականապէս կը փակէ տեղւոյն բոլոր հայկական դպրոցները, Մեսրոպուտի կը պաշտօնավարէ իբրեւ տնօրէն Խասքովոյի հայկական դպրոցին մէջ։

Նոյն տարւոյն (1964) Հոկտեմբերին, ընտանիքով, ամուսինը՝ Պօղոս Թանգարանեան, 9 տարեկան աղջընակը եւ զոքանչը կը փոխադրուին Խորհրդային Հայաստան։

Մեսրոպուտի գրեթէ անմիջապէս կ'անցնի գործօն աշխատանքի՝ Հայկական ակադեմիայի մանկավարժական հիմնարկին մէջ, ինչպէս նաեւ կրթական նախարարութեան յարակից բաժանմունքներուն՝ ուսումնական ծրագիրներու պատրաստութեան գործերով, մա՛նաւանդ նոր (վեց տարեկանէն սկսեալ) աշակերտներու ուսուցման վերաբերող աշխատանքներով։

Լուրջ մասնակցութիւն կը բերէ արտասահմանի ուսանողներուն անհրաժեշտ դասագիրքերու պատրաստութեան։ Կը վարէ դասախօսութիւններ՝ յօդուտ շարք մը արտասահմանեան դպրոցներու մասնագէտ-աշակերտներու կատարելագործման։ Կ'աշխատակցի նաեւ *«Պատմութիւն հայկական դպրոցներ Պուլկարիոյ մէջ»* երկհատոր գիտական ուսումնասիրութեան որուն առաջին հատորը լոյս կը տեսնէ 1975ին, իսկ երկրորդը՝ 1984ին։

Բացի իր ծաւալած զուտ մանկավարժական գործունէութիւններէն, Մեսրոպուտի Մեսրոպ Թանգարանեան իր մասնակցութիւնը կը բերէ նաեւ հայկական կառավարական արխիւի (դիւանի) տարքատրումին, յօդուածներով եւ կենսագրութիւններով կը մասնակցի Հայկական Հանրագիտարանի խմբագրութեան, ինչպէս նաեւ մասնաւոր աշխատանք կը տանի՝ հետազօտելու համար յատկանշական տարբերութիւնները Ռոտոսթոյի հայկական գաւառաբարբարին։

Մանկական բազմաթիւ պատմութիւններով, վերլուծական յօդուածներով եւ քննարկումներով մասնակցութիւն բերած է ինչպէս հայաստանեան, այնպէս եւ սփիւռքահայ պարբերական հանդէսներու, եւ ասիկա անընդմէջ, գրեթէ մինչեւ իր կեանքի վերջը։

21 Մայիս 1985ին Երեւանի ժողովուրդէն մաս մը, շնորհապարտ երիտասարդ մտաւորական ստուար բազմութեան մը հետ՝ կ'ուղեկցի անխոնջ գիտաշխատող Մեսրոպուտիի դագաղին՝ մինչեւ իր վերջին հանգրստավայրը - Երեւանի քաղաքային գերեզմանոցը։

digitised by A.R.A.R.@

ԱՍՈՒՊՆԵՐ

Աչքերս լեցուն են ասուպներով.
Ամառ գիշերներ ժողվեցի զանոնք,
Երբ որ երկնքէն կ'իյնային սիրով,
Ինչպէս քնի մէջ՝ լոյս աչքե՞ր անհոգ:

Ժողվեցի զանոնք, ամառ գիշերներ,
Աչուրներուս մէջ, երբ որ երկնքէն
Կ'իյնային՝ չինկած հողին վրայ դեռ,
Ջինջ սէրե՞ր ծնած եւ մեռած արդէն:

Հիմա իմ հոգիս լուսաւոր է միշտ.
Աչքերս գոհարի տուփեր են մէյ մէկ.
Եւ օրը երբ որ շատ ճնշէ իմ վիշտ,

Շատ աղքատ մնամ եւ մոռայլ ու մէգ
Ծրչապատէ զիս,- աստղեր կը կազմեմ
Այն ասուպներէն եւ, լո՞ւռ, կը դիտեմ:

*
* *

ԱՆՑԱԻ ԳՆԱՑ

Անցաւ գնաց ու կը սպասեմ իր դարձին,
Ինչպէս մոմ մը՝ հովին դէմը դողալով.
Անցորդները պատրանքով զիս խոցեցին
Եւ ինչպէս մոմ, որուն վրայ փչէր հով,

Ես կը հայիմ՝ սպասելով իր դարձին:
Ու կը խորհիմ. «Ինչպէս երկա՞ր,
ճանճրացող
Թարթիչներու տակ աչքերով՝ առանձին
Կ'երթայ, քայլուածքն գետնի փոշին
հմայող:

Որքա՞ն անուշ պիտի ըլլար իր քովէն
Քալել, յուշիկ, ճամբու մը մէջ ծաղկաշէն,
Ծնչելով լո՞ւռ վարդերուն սիրտն անձնուէր.

Մինչ կը պատէ խաւարին ցանցն ալ
զմեզ:
Ի՞նչ երջանիկ պիտի ըլլար, գողի պէս,
Ատեն-ատեն հայիլ սիրով ուսն ի վեր...»:

«ՅԻՍՈՒՆ ՔԵՐԹՈՒԱԾ»

Վահան Թէքէեանի մահուան յիսնամեակին առիթով, արձակագիր Արամ Սեփեթճեան կազմած ու «Սիփան» հրատարակչատան միջոցով լոյս ընծայած է մեծ բանաստեղծին վաստակէն ընտրանի մը՝ «Յիսուն քերթուած»։

Վահան Թէքէեանի բանաստեղծութիւնները լեցնող տարերքը ազգային ու մարդկայնական ապրումներ են, խոհեր ու տագնապներ, զորս առաւելագոյն արուեստով մը գրսեւորուած կը գտնէ ընթերցողը մէկտեղուած վեսուն քերթուածներուն մէջ։ Առանց նոր բան մը ըսած ըլլալու յաւակնութեան, կրկնել պէտք է, որ քառորդ դարեայ ժամանակի մը հարթիչ գլանը անցած է այս ստեղծումներուն վրայէն, որոնք սակայն դիմացած են քանի մը սերունդի խստադատութեանց, ու անպայման պիտի վայելեն յարգանքն ու համարումը գալոց սերունդներուն, ճաշակի ու հասկացողութեան ի՛նչ բարեշրջումներ ալ արձանագրուին ժամանակի տոմարներուն մէջ։

Ինդրոյ առարկայ ընտրանիին մէջ՝ ընթերցողը հաւանաբար պիտի գտնէ շատ քիչ թիւով քերթուածներ, որոնց տեղ պիտի ուզէր ուրիշներ կարդալ։ «Յիսուն»ի սահմաններուն մէջ մնալով միշտ, նախասիրութեան կարգով, մենք եւս պիտի ուզէինք մէկտեղուած քերթուածներէն քանի մը հատը փոխարինել ուրիշներով, այս սխնակին մէջ արտագրուած զոյգ «Հոգեր»ուն տեղ, օրինակ, պիտի ուզէինք հետեւիլ դիմացի էջին երեւցող սխրալի «Հանըմ»ին, կամ խորանալ հինգ զգայարանքներուն «Երիվարները խենթեցնող» «Վերջաբան»ին մէջ, որոնք աւելի բան մը կը յայտնաբերեն Թէքէեանի զգայարանքներէն մէկուն պայծառութենէն ու միւսին ողբերգութենէն, քան հաղիւ բանաստեղծ մը մատնող միւսները...

digitised by A.R.A.R.@

ՀԱՆԸՄԸ

Միակըտուր սեռ-անփայլ մետաքսն ամբողջ զինք ծածկած
Եւ քայլերուն մետաքսէ խոր շրշիւնո՛վը թեթեւ,
Որ ազդերուն քնարին կարծես նուագն ըլլար ցած,
Կ'երթա՛յ հանրմն՝ յուզելով մուշկի ալիք մ'իր յետեւ:

Ժանեկայորդ թեւէն դուրս կը բխի ձեռքը պզտիկ,
Զոր նախանձոտ սեռ ձեռնոց մը կը պահէ կիսովին,
Մինչ ոսղանկիւն ճակատէն ինկած քողն ալ լուսանցիկ
Ծանրածարիր աչքերուն կ'անթեղէ հուրքը խորին:

Կամուրջին վրայ, յորդագեղ վերջալոյսի մը ներքեւ,
Կ'երթայ հանրմը այսպէս, հորիզոնէ հորիզոն,
Մթնցնելով Ոսկեղջիւրն ու դիւթելով երեկոն...

Կ'երթա՛յ հանրմն՝ անմատոյց, քողածածուկ, հոյաձեւ,
Կի՛ն կամ ոգի, պահ մ'եղած պալատներէն Պոլիսի,
Պոլսոյ ոգի՛ն, խուսափուկ, անքննելի՞, սխրալի՞...

ՎԵՐՋԱԲԱՆ

Ինչպէ՞ս կրնամ քեզ մոռնալ, զգայարանք վեցերորդ,
Ամէնէն ուշ արթնցող, ամէնէն շուտ քնացող,
Որ քու բոլոր յոյզերուդ կ'ընես միւս հինգը հաղորդ,
Կու տա ուժէդ անոնց ուժ եւ դողերէդ՝ անոնց դող...

Աչքին, բերնին, ունգունքին եւ ականջին եւ ձեռքին՝
Երիվարներ խելօքիկ, խենթեցնողն եղար դուն.
Եղար փարոս մը ճերմակ՝ կեանքի ծովին վրայ մթին,
Նաւերը քեզ կանչելով, բաշխեցիր լոյսդ ամէնուն...

Ո՛վ դուն, ո՛վ դուն, ամէն բան միայն քու մէջդ էր պահուած,
Ամէն փափաք, ամէն յոյս, ամէն հրճուանք ու վայելք,
Արքայութեան դուն կամուրջ, անմահութեան վրայ ելք...

Ցոգնած, պառկած ես հիմա, ու կը խօսիմ քեզի ցած
Քու փառքի հին օրերէդ, նախճիրներէդ, զոհերէդ,
Եւ երբ կ'անցնիմ աշխարհէս, սա ափոփանքն ունիմ գէթ՝

Թէ յարութեան օրը քեզ ալ պիտի կեանք տայ Աստուած...:

digitised by A.R.A.R.@

ՆԵՐԿԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Բ

Հո՛ղ այնտեղ, եւ հողին վրայ ցեղ...
Կը կոխէ ցեղը զայն, կը մրխէ
Անոր մէջ կամքն ուժեղ ու անշեղ
Եւ նորէն կը քաղէ ուժ անկէ...

Հո՛ղ այնտեղ՝ բարեկամ, բարերար.
Ջրփախչող ոտքին տակ. վեր բռնող
Մարդոց մէջքն, ու գլխուն մէջը յար
Վերածուող ճամբայի լուսաշող...

Հո՛ղ վստահ՝ ուր ամէն մարդ ու կին
Այնտեղ նոր աչք բացող մանուկին,
Այնտեղ նոր բարձրացող հասկերուն,

Նո՛ր շէնքին, նո՛ր հէնքին, մտքին նո՛ր
Կը նայի հրճուանքով մը սոսկոր,
Կը լեցուի անդորրո՞վ մը անհուն...:

1936

Գ

Երկիրը հո՛ն իր զաւակինն է այլեւս...
Անոր ճակտէն հոսող քրտինքը կ'երթա՞յ
Մեծ-հայրերուն մինչեւ կրծոսկրը թերեւս՝
Հաստատելու իր տանը հիմն անոր
վրայ...

Ո՞չ ոք այնտեղ ա՛լ իրեն ծուռ կը նայի...
Աւերակներն անգամ ծրպիտ մ'ունին արդ
Երբ կը տեսնեն դէմը իրենց՝ ամայի
Գետնէն ելող շինութեանց շարքը
հրպարտ...

Եւ հո՛ղը, հո՞ղն իր գերութիւնն ա՛լ
թօթուած,
Իր ընդերքէն ոչ միայն ուժ՝ այլ եւ խե՛ղ
Կը հայթայթէ Հայուն ի մէն մի
հարուած...

Եւ շղթային՝ Արեւմուտքէն Արեւելք
Վերակապուող կեանքի ամո՛ւր շղթային՝
Կ'ըլլայ մեր պինդ Ազգը օղա՞կը
նախկին...

*
* *

Թերեւս աւելորդ չըլլայ երկու բառ ըսել նաեւ «Ցիսուն»ի համրանքին մէջ թիւ չգրաւած «Պեթովընի սոնատին վրայ» անուն շարքին երկրորդ եւ երրորդ բաժիններուն, ինչպէս եւ «Ներկայ Հայաստանին» խորագիրին տակ ինկած եւ դարձեալ «Ցիսուն»ին ուղղակի մաս չկազմող երկրորդ եւ երրորդ հնչեակներուն մասին։ Ընտրանին, արդարեւ, աւելի ընտիր կ'ըլլար, եթէ կազմողը «Նռապատկեր»ին ենթակայ չզգար ինքզինք եւ տեղ չտար այդ թոյլ կտորներուն։

Այլ դիտողութիւն մը.—

Իր ընտրութիւնը կատարած ատեն, Արամ Սեփեթճեան կը թուի, թէ առաջ տուած է կենսագրական տուեալներուն եւ նախորդ էջերուն մատնանշուած «Հոգեր»էն վերցուած ուսանաւորներուն օրինակով, անհրաժեշտ համարած է անպայման «Տաղարան»էն ներս առնել երկու հնչեակ, որոնք նոյնպէս զուրկ են յիսունի սահմաններուն մնալու ծրագրով կազմուած միւս բանաստեղծութիւններուն թէքէեանական կնիքէն։

Ցիշեալ ուսանաւորներուն տեղ, անպայման աւելի լաւ կ'ըլլար, եթէ ընթերցողին տրուէր անգամ մը եւս կարդալ «Լեզուն, որով գրեցի»ն, որ մեր առօրեայ ցաւն է ու ցաւագին վկայութիւն մը՝ մեզի պարտադրուած պատմութենէն, ու անոր պէս «Ցիսուն»ին մաս չկազմած «Մանկութեան իղձ մը» անուն բանաստեղծութիւնը, որ մաքրութեան ու վեհութեան ապրումի մը հաղորդ կը դարձնէ ընթերցողը, ուսանաւորէն վեր կանգնած բանաստեղծական շունչով։

digitised by A.R.A.R.@

ԼԵԶՈՒՆ, ՈՐՈՎ ԳՐԵՑԻ

Լեզուն, որով գրեցի՝ երկրի երեսը քիչեր
Կը կարդային զայն արդէն ու պակսեցան անոնք ալ...
Հարիւր տարի վերջ միայն, իր այս ձեւով, այս սիալ
Կամ ճիշդ ձեւով ու հնչմամբ՝ լեզուն անուշ, զոր խօսեր

Էին անուշ տղաքներ, գուցէ խօսող չունենայ,
Եւ քերթուածները, որոնց մէն մի բառին ու վանկին
Վրայ ես սիրտ հատցուցի՝ գուցէ անկիւն մը պառկին,
Առանց որ մէկը դնէ իրենց բուն շեշտն անոնց վրայ...

Տէ՛ր, ցաւ մ'ալ ա՛յս է հիմա, ցաւերէն ետք անհամար,
Որոնց մէջէն անցնելով, որոնցմէ շիթ մ'առնելով
Ես կազմեցի այս տաղերն ու հոս դրի քովէ քով...

Չի եթէ միշտ եւ միայն երգած եմ ես ինձ համար,
Չիս սփոփած եմ նաեւ՝ մտածելով, թէ խոցուած
Հոգիս կրնայ իր երգով սփոփե՞լ սիրտը ոմանց...

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԻՂՁ ՄԸ

Ինչպէ՞ս այս իղձն էր ծներ,— կ'ուզէի սուրբ ըլլալ ես,
Բայց ճշմարիտ, իրական, սրբոց շարքին մէջ դասուած.
Սուրբի կեանքով մը ապրած, նահատակուած սուրբի պէս,
Սուրբ մը՝ գացող ու տեսնող արքայութեան մէջ Աստուած:

Եւ կ'ըսէի, թէ միակ մեղք մ'արգիլեր պիտի զիս
Սուրբ ըլլալէ, եւ այդ մեղքն էի գործած ես գուցէ՝
Այն ատեն ութ տարեկան... Ու գոցած ձեռքս երեսիս՝
Օր մը, դասի միջոցին, լացի՞ վախէ ու ցաւէ:

Եւ ուրիշ օր մը մինչդեռ կոյր մուրացիկ մը՝ հացի
Տոպրակը կախ իր ուսէն՝ մեր տան դիմացն էր կեցեր,
Գացի շիտակ իր վրայ, քաշեցի ձեռքն ու պագի:

Կ'աղօթէի ճօրս հետ ամէն առտու եւ գիշեր.
Կը խորհէի ամէն տեղ գալիք կեանքիս, մահուանն ալ...
Տղայ էի, կ'ուզէի ես այն ատեն սուրբ ըլլալ...

digitised by A.R.A.R.@

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ





ԷՋԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

(Հեղինակ՝ Մեսրոպ Արք. Աշճեան)

«Ամենայն Հայոց կաթողիկոս Տ.Տ. Վազգէն Ա. կաթողիկոսի վախճանումը առիթ հանդիսացաւ, որ հայ մամուլը եւ առհասարակ Հայ Եկեղեցիով չահագրգռուող անձեր եւ շրջանակներ հարցումներ ուղղեն, թէ ինչպէ՞ս կ'ընտրուէին Ամենայն Հայոց կաթողիկոսները, եւ ի՞նչ պայմաններու ներքեւ վախճանած են անոնք եւ թաղուած»։

Այս նախադասութիւններով կը սկսի 1994ին, Նիւ Եորքի մէջ լոյս տեսած Մեսրոպ Արք. Աշճեանի *«Էջեր հայ եկեղեցւոյ պատմութենէն»* հատորին *«Մուտք»*ը, որ ժողովուրդին մտքին մէջ ծագած հարցումները ի մի խմբելէ ետք, իր եզրափակիչ հատուածով կ'ընդգծէ. *«Ահա ա՛յս հետաքրքրութեան գոհացում տալու համար մեր ընթերցողներուն կը ներկայացնենք հայոց պատմութեան էջերէն փրցուած պատմութիւններ, ոմանք գուցէ եւ անեկդոտային ոճով, բայց վստահաբար մի՛չտ հետաքրքրական եւ մի՛չտ ուսանելի»։*

143 էջեր հաշուող «այս ակնարկը», որ իբրեւ աղբիւր ունեցած է կրօնական ու պատմական 19 հատոր, կը բաղկանայ նոյնպէս 19 գրու-

digitised by A.R.A.R.@

թիւններէ, վերջաբանէ մը եւ Ամենայն Հայոց հայրապետներու հակիրճ կենսագրականներն ու Գէորգ Զ. կաթողիկոսի 19 Յունիս 1945ին հաստատած *«Ազգային-եկեղեցական ժողով գումարելու յատուկ կանոնադրութիւն»*էն:

Ս. Էջմիածնի եւ անոր վերջին 200 տարուան իրերայաջորդ հայրապետներուն կաթողիկոսական ընտրութիւնները, անոնց գործունէութիւնը եւ կեանքի վերջին օրերու պատմութիւնը առանձին սեւեռումի տակ առնող էջերու զուգահեռ՝ Մեսրոպ սրբազան կը դիմէ առելի վաղ ժամանակներու եւ իր նիւթը կը հարստացնէ պատմական տուեալներով: Այսպէսով, պարզ ու մատչելի մատուցումով մը ընթերցողին հրամցուած հատորին առաջին երեք ակնարկները՝ *«Հայ եկեղեցին ընդհանրապէս կանոնագրութիւն ունեցա՞ծ է»*, *«Ինչպէ՞ս տեղի կ'ունենային կաթողիկոսական ընտրութիւնները»* եւ *«Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը էջմիածնի մէջ»* (էջ 11-31), լայն կը բանան կարկինը եւ շօշափուած հարցերուն մասին կը փոխանցեն ընթերցողին գոհացում տուող պատմական հետաքրքրական մանրամասնութիւններ:

Այս, *«Աղեքսանդր Զուղայեցի կաթողիկոսի կտակը»* խորագրեալ ակնարկով, հեղինակը կը քակէ ծալքերը «իր տեսակին մէջ առաջինը» հանդիսացող 1708ին գրուած այս կտակին, որ կը թելադրէր կաթողիկոսի ընտրութիւնը կատարել Էջմիածնի մեծ ժողովին կողմէ, Պոլսոյ, Սպահանի եւ աշխարհի չորս ծագերու առաջնորդներուն եւ Մայր Աթոռի ենթակայ բոլոր հաւատացեալներուն կամքով, այսինքն՝ «նպատակայարմարութեան եւ համաձայնութեան պաշտօնագրերով»:

Հատորին ընդհանուր ենթահողը պատրաստող վերոնշեալ գրութիւններէն ետք, Մեսրոպ Արք. կը սկսի ներկայացնել 1682-1994 ժամանակահատուածին Ս. Էջմիածնի գահակալ կարգ մը հայրապետներուն կեանքն ու գործունէութիւնը՝ սկսելով Հայ Եկեղեցոյ պատմութեան մէջ մեծ աղմուկ եւ լուրջ հարցեր ստեղծած Եղիազար Ա. Այնթապցի կաթողիկոսէն մինչեւ վերջերս վախճանած Վազգէն Ա. Ամենայն Հայոց հայրապետ: Խնդրոյ առարկայ ժամանակահատուածին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գահին բազմած 27 կաթողիկոսներէն ընտրելով արժանաւորագոյն 15 ներկայացուցիչները, հեղինակ սրբազանը ո՛չ միայն սեղմ գիծերով կը բնութագրէ անոնց գործունէութիւնն ու վարքը, այլեւ, անոնց ընդմէջէն՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան համառօտ պատմութիւնը, դժուարութիւնները, նուաճումները եւ արտաքին՝ ցարական ու խորհրդային պետական միջամտութիւններու հետեւանքով առաջացած լուրջ բարդութիւնները:

Հայ Եկեղեցոյ համար կենսական նշանակութիւն ներկայացնող Մեսրոպ Արք. Աշճեանի պարզ ու կուռ էջերը կը փակուին Ս. Գրիգոր Լուսաւորիչի յաջորդած 129 հայրապետներու հակիրճ կենսագրականները եւ ընտրութեան եղանակը պարզաբանող *«Ցուցակ»* բաժինով, որ, պատմական արժէք ներկայացնող լուսանկարներու պատճէններուն հետ՝ յատուկ փայլք մը կու տայ հատորին:

digitised by A.R.A.R.@

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀԵՏ

(Հեղինակ՝ Յակոբ Յ. Ասատուրեան)

1962ին *«Կոմիտաս վարդապետ եւ հայ երգը»* խորագրեալ հատորը լոյս ընծայելէն աւելի քան երեսուն տարի ետք, ամերիկահայ արձակագիր եւ երաժշտագէտ Յակոբ Յ. Ասատուրեան ընթերցողին հրամցուց նոյն նիւթին նուիրուած եւ անհրաժեշտ յաւելումներով հարստացած աւելի ծաւալուն գործ մը՝ *«Կոմիտաս վարդապետի հետ»*: 1994ին, Պէյրութի «Սիփան» հրատարակչատունէն լոյս տեսած վերոնշեալ հատորը, որ կը բաղկանայ երեք «գիրք»երէ եւ 320 էջերու մէջ կ'ամփոփէ 43 անուն գրութիւններ, կը փակուի հեղինակին խօսքով՝ իր գործին եւ անձին շուրջ, 13 էջերու վրայ երկարած վկայութիւններով՝ նուիրուած *«Կոմիտաս վարդապետ եւ հայ երգը»* հատորին ու հեղինակին մեկնաբանութեամբ արձանագրուած *«Հայ երգ»* ձայնապնակներուն: Վկայութիւններուն կը յաջորդէ *«Մատենագիտութիւն»* խորագրեալ օգտագործուած աղբիւրներու «ոչ-ամբողջական ցանկ»ը, որմէ ի յայտ կու գայ, որ իր այս աշխատասիրութեան պատրաստութեան համար Յակոբ Յ. Ասատուրեան օգտագործած է շուրջ 90 հատորներ:

Վազգէն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի «Հայրապետական կոնդակ»էն ետք, հատորը կը բացուի *«Ընթերցողին»* խորագրեալ մուտքով, որ առաջին հերթին կը յայտնէ, թէ *«Կոմիտաս վարդապետ եւ հայ երգը»* հատորի սպառումէն յետոյ, երբ կարգ մը բարեկամներ թելադրած են իրեն վերահրատարակել զայն, նախընտրած է վերոնշեալ գիրքը ճոխացնել անհրաժեշտ յաւելումներով եւ նոր պրպտումներու արդիւնք հանդիսացող գրութիւններով, մանաւանդ որ առաջին հատորի լոյս ընծայումէն ասդին յայտնուած են արխիւային հարուստ նիւթեր եւ հրատարակուած՝ արժէքաւոր հատորներ եւ ուսումնասիրութիւններ: Ապա, Յակոբ Յ. Ասատուրեան կ'աւելցնէ, որ *«արդիւնքը ներկայ հատորն է ուրեմն, առաջինին աւելի քան կրկին ծաւալովը»*, որուն յօդուածները գրուած են տասնամեակներու ընթացքին, կրելով իրենց գրառման ժամանակին կնիքը:

digitised by A.R.A.R.@

«Կոմիտաս վարդապետի հետ» խորագիրը կրող «Ա. գիրք»ը (էջ 5-187), առաջին հատորին *«Երկու խօսք»*էն եւ *«Ներածական»*էն ետք, ընթերցողին կը հրամցնէ 14 ուսումնասիրութիւններ, որոնք գիտական մօտեցումով կը կատարեն արժեւորումը հայ երգի Մեսրոպ Մաշտոցին արուեստին ու գործին, օտար եւ հայ մասնագէտներու գնահատական խօսքերու մէջբերումներով՝ վեր կ'առնեն մեծ արուեստագէտին էապէս ազգային եւ արժէքով միջազգային երաժշտութեան էութիւնը՝ *«Հորովել»*ներէն մինչեւ սիրերգներ, ազգագրական վաստակէն մինչեւ *«Սասմայ ծռեր»*, *«Անտունի»* եւ *«Հայկական պատարագ»*:

«Կիսատուած կեանք... անաւարտ կենսագրութիւն» ենթախորագիրը կը կրէ «Բ. գիրք»ը հատորին (էջ 189-240): Թիւով 20 յօդուածներ, հիմնուած եռամեծար վարդապետին ժամանակակիցներու վկայութեանց, յուշագրութիւններու եւ մենագրութիւններու վրայ: Այս բաժինով, հեղինակը համառօտ գիծերով կը ներկայացնէ Կոմիտաս վարդապետի կեանքի հանգրուանները: Մէկ շունչով կարդացուող վերոնշեալ յօդուածները, հակառակ իրենց սեղմ էջերուն, ճշգրիտ ու ստուգուած մանրամասնութիւններ կը փոխանցեն Կոմիտաս վարդապետի մանկութեան, աշակերտական տարիներուն, ձեռնադրութեան, երաժշտական առաջին քայլերուն, գործունէութեան, մասնագիտական կրթութեան, ստեղծագործական-երաժշտական կեանքին, Մեծ Եղեռնի հետեւանքով ընդհատուած կենսագրավէպին, ապրած ոդիսականին եւ մահուան թուականի շփոթին շուրջ:

Կը յաջորդէ *«Ցարակից էջեր»* ընդհանուր խորագիրը կրող «Գ. գիրք»ը հատորին (էջ 243-289): Հայ երաժշտութեան տարբեր նուիրեալներու նուիրուած եօթը յօդուածներ, որոնք կը կատարեն գնահատումը Պապա Համբարձումեանի, Արմենակ Շահմուրատեանի, Միհրան Թումաճանի, Համբարձում Պէրպէրեանի, Վաղարշակ Սրուանձտեանցի, Ռուբէն Տիգրանեանի, Գրիգոր Սիմնիի, Ալան Յովհաննէսի եւ ամերիկահայ այլ երաժիշտներու գործունէութեան ու վաստակին:

Յակոբ Յ. Ասատուրեանի *«Կոմիտաս վարդապետի հետ»* հատորը կը փակուի *«Վկայութիւններ»* յաւելուածով: Հեղինակին առաջին հատորին եւ երաժշտական գործունէութեան առիթով ստորագրուած յօդուածներէ եւ նամակներէ քաղուած գնահատականները կ'ընդգծեն, որ հայ երգը իր սրտով ու արիւնով ապրող Յակոբ Յ. Ասատուրեան է *«...Հայ երգի սիրով բաբախող հոգի մը, որ իր սիրագեղումը հաստատած է պաշտամունքի»*, ինչպէս կը հաստատէ բազմավաստակ բանասէր ու երաժիշտ Միհրան Թումաճան:

digitised by A.R.A.R.@



ՀԱՅ ԽՄԲԱՎԱՐԸ՝ ՍՈՒՐԻԱԿԱՆ ԲԵՄԵՐՈՒ ՎՐԱՅ

Սուրիոյ սիմֆոնիկ պետական նուագախումբը, իր հիմնադրութեան երկրորդ տարեդարձին առիթով, անցեալ Դեկտեմբերին ունեցած է երեք ելոյթներ, որոնց ներկայ գտնուած են աւելի քան 3000 երաժշտասէրներ։

Երեք ելոյթներու ընթացքին, խումբը յաջողութեամբ նուագած է համաշխարհային ճանաչում նուաճած ստեղծագործութիւններ։ Յայտագիրներուն կատարումով հանդէս եկած են Երաժշտական Բարձրագոյն Ակադեմիայի ուսանողները, որոնց մէջ յատուկ ուշադրութեան արժանացած է ելոյթներու մէկ մասին խմբավարման ծանր պատասխանատուութիւնը ստանձնած դաշնակահար Միսաք Պաղպուտարեան, որուն երաժշտական բացառիկ շնորհքին մասին սուրիական մամուլը անդրադարձած է դրուատական նախադասութիւններով։

Միսաք Պաղպուտարեան ծնած է 1973ին, Դամասկոս։ Աւարտած է Ազգ. Միացեալ վարժարանը։ Ներկայիս Դամասկոսի պետական համալսարանի ելեկտրագիտութեան բաժնի ուսանող է։

Վեց տարի շարունակ Արաբական Երաժշտութեան Ուսումնարանի ձայնամարզութեան եւ դաշնամուրի դասերուն հետեւելէ ետք, երբ 1990ին հիմնուած է Սուրիոյ Բարձրագոյն Երաժշտանոցը, ան դարձած է անոր առաջին ուսանողներէն մէկը։ Այդ թուականէն ի վեր, Միսաք Պաղպուտարեան իր գործօն մասնակցութիւնը բերած է խումբի ելոյթներուն՝ իբրեւ դաշնակահար։ Միաժամանակ՝ ան հետեւած է Սվետլանա Նաւասարդեանի եւ երեք ֆրանսացի երաժիշտներու հովանաւորութեամբ կազմակերպուած Mas-

digitised by A.R.A.R.@

ter class-ի երկու դասընթացքներու եւ արժանացած՝ իր ուսուցիչներուն յատուկ գնահատանքին։

1993էն ի վեր, իբրեւ դաշնակի ուսուցիչ՝ կը պաշտօնավարէ Արաբական Երաժշտութեան Ուսումնարանին մէջ։ 1994ի Դեկտեմբերի ելոյթներու պատրաստութեան ընթացքին, սիմֆոնիկ նուագախումբի դեկավար Սուպիի էլ-Ուատի այս երիտասարդ հայորդիին վստահած է Մոցարթի Clarinet Concerto-ն դեկավարելու պատասխանատու գործը, զոր Մ. Պաղպուտարեան կատարած է արժանավայել յաջողութեամբ։

Ցիշենք, որ Սուրիական սիմֆոնիկ պետական նուագախումբին մաս կը կազմեն նաեւ երեք այլ հայորդիներ։

ԲԱՐՍԵՂ ԹՈՒՂԼԱՃԵԱՆԻ ՆՈՐ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պոլսահայ փրոֆ. դոկտ. Բարսեղ Թուղլաճեան, որ քանի մը ամիս առաջ Անգլիոյ մէջ մասնակցած էր միջազգային համագումարի մը եւ այս առթիւ Պալեաններու մասին պատրաստած իր ուսումնասիրութեան անգլերէն մէկ օրինակը յանձնած էր Էլիզապէթ Բ. Թագուհիին, Անգլիոյ առաջին քաղաքացիէն ստացած է շնորհակալութեան գնահատական գիր մը։

Փրոֆ. Բարսեղ Թուղլաճեան, որ անդամ է միջազգային բազմաթիւ գիտական եւ պատմաբանական կազմակերպութիւններու, վերջերս արժանացած է նաեւ այլ նոր տիտղոսներու, ինչպէս՝ Միացեալ Նահանգներու համաշխարհային յաջողութիւններու կաճառին մնայուն ներկայացուցչութեան, Միացեալ Նահանգներու կենսագրական ընկերակցութեան մնայուն անդամակցութեան եւ Անգլիա հաստատուած միջազգային բարեկամութեան ընկերակցութեան հիմնադիր անդամութեան պատուին։

ՀԱՅՐԵՆԻ ԵՐԳԱՀԱՆՆԵՐ ԿԸ ՄԵԾԱՐԵՆ ԱՐՏԱԿ ՍՐԲԱԶԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

Հայաստանի Երգահաններու Միութեան նախաձեռնութեամբ, 23 Դեկտեմբերին, Երեւանի մէջ տեղի ունեցած է Թեհրանի Հայոց թեմի առաջնորդ Արտակ Արքեպս. Մանուկեանի բանաստեղծութիւններու հիման վրայ շարք մը երաժիշտ - երգահաններու յօրինած երգերուն անդրանիկ երգահանդէսը։ Համերգին ներկայ գտնուած են երաժիշտներ ու արուեստագէտներ։

Ձեռնարկի ընթացքին, հռչակաւոր երաժշտագէտ Ցառա Տէր Ղազարեան դրուատիքով անդրադարձած է սրբազան հօր բանաստեղծութիւններուն։ Երեկոյթի ընթացքին հնչած է նաեւ Հայաստանի յայտնի երաժշտագէտ եւ երգահան Գէորգ Արմէնեանի «Ղողանջներ» երգաշարքը՝ սրբազան հօր հինգ բանաստեղծական կտորներու վրայ յօրինուած։

ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐԻ ՄՐՑԱՆԱԿ՝ Ն. ՄԱՀՃՈՒՋԻ ԱՆՈՒՆՈՎ

Եգիպտացի աշխարհահռչակ գրող, Նոպէլեան մրցանակակիր (1988) եւ

digitised by A.R.A.R.@

շարժապատկերի ժապաւէններու հեղինակ ու բեմագիր Նեկիպ Մահֆուզի ահաբեկման ձախորդ փորձէն քանի մը օր ետք, «Եգիպտական շարժապատկերի զարգացման հոլովոյթին իր մեծ նպաստը բերած» գրագէտը ըստ արժանւոյն մեծարելու նախանձախնդրութեամբ, Արաբ Արուեստագէտներու Միութեան եւ Գահիրէի Շարժապատկերի Միջազգային Փառատօնի նախագահ Սա'տէտտին Ռահիպէ յայտարարեց, որ այսուհետեւ նորահաստատ «Նեկիպ Մահֆուզի անուան մրցանակ»ը պիտի շնորհուի արաբական կամ օտար այն ժապաւէնին, որ լաւագոյն ձեւով հանդիսատեսներուն կը փոխանցէ ազատութեան, արդարութեան եւ ժողովրդավարութեան վեհ արժէքներուն կոչ-պատգամը։

Շարունակելով, եգիպտացի անուանի արուեստագէտը աւելցուց, որ Նեկիպ Մահֆուզի ամէնամեայ մրցանակը պիտի ունենայ իր յատուկ դատակազմը՝ բաղկացած աշխարհի չորս ծագերը ներկայացնող մեծահամբաւ գրագէտներէ եւ եօթներորդ արուեստի աշխարհահռչակ արուեստագէտներէ։

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

23, 24 եւ 25 Յունիս 1995ի երեք օրերու ընթացքին, Պէյրութի «Մելանքթոն» եւ Հայկ Արսլանեան ճեմարանին մէջ տեղի ունեցաւ Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Կեդրոնական Վարչութեան Բ. լիագումար ժողովը։

Կեդրոնական Վարչութեան նստավայրի անդամներուն կողքին, ժողովին կը մասնակցէին հեռանկար անդամները, ինչպէս նաեւ՝ Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ եւ Համազգայինի Հայաստանի Շրջանային Վարչութեան ատենապետ քանասէր Ռազմիկ Դաւոյեան։

Ժողովը հանգամանօրէն քննեց շրջաններու եւ ի մասնաւորի Հայաստանի կազմակերպական վիճակն ու գործունէութիւնը, Համազգայինի կրթական հաստատութիւններուն ուսումնական եւ շինարարական երագիրները, հրատարակչական ու գրատարածման աշխատանքներուն ընթացքը։

Կեդրոնական Վարչութիւնը գոհունակութեամբ արձանագրեց Համազգայինի գործունէութեան ծաւալումն ու աշխուժացումը Եւրոպայի երկիրներուն մէջ։

Յատուկ գնահատանքի արժանացան «Հայրենի Մտաւորականութեան Ծոնողին աշխատանքները եւ որոշուեցաւ յառաջիկային հրատարակել նաեւ սփիւռքահայ հեղինակներու գործեր։

Ներքին Սփիւռքի նոր սերունդի հայեցի դաստիարակութեան ապահովելու համար, կեդրոնական Վարչութիւնը որոշեց ձեռնակալ մանկապարտէզի աշակերտներու հայերէնի ուսուցման յատուկ դասագիրքերու պատրաստութեան։

digitised by A.R.A.R.@

ԼՈՅՍ ՏԵՍԱԾ Է ԼԵՀԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Լեհաստանի «*Վրոցլաւի Օսոլինէում*» հրատարակչատունէն վերջերս լոյս տեսած է Ռաֆայէլ Իշխանեանի «*Հայ գիրքը* 1510-1920 *թուականներին*» աշխատութեան լեհերէն թարգմանութիւնը։

Հատորի ներածականին մէջ, ամփոփ գիծերով լեհ ընթերցողին ներկայացուած է հայոց պատմութեան հազարամեայ հոլովոյթը՝ Հայասայի հարիւրտարեկն մինչեւ Ուրարտու եւ Մեծ Եղեռնէն մինչեւ Հայաստանի Հանրապետութիւն (1918-1920)։ Ապա, հակիրճ կերպով ներկայացուած է հայերէն ձեռագիր գիրքը եւ հայ տպագրիչ-հրատարակիչներու գործունէութիւնը՝ 16րդ դարէն սկսեալ։

Ռ. Իշխանեանի այս աշխատասիրութիւնը լեհերէնի թարգմանած է հայագէտ եւ թարգմանիչ Անժէյ Պիսովիչ։

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀԵՂԻՆԱԿԻՆ ԵՒ ԻՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ

Չորեքշաբթի, 7 Յունիս 1995ին, Մոնթրէալի Հայ Կեդրոնի «Աւետիս Ահարոնեան» սրահին մէջ, տեղի ունեցած է «*Հայրենիք*» շաբաթաթերթի խմբագիր ընկ. Գէորգ Տօնապետեանի վերջերս լոյս տեսած «*Հ. Յ. Դաշնակցութիւնը Հիւսիսային Ամերիկայի մէջ*» գիրքի Բ. հատորին ներկայացման ձեռնարկը։

«*Հորիզոն*» շաբաթաթերթի խմբագիր Կիրօ Մանոյեան կատարած է երեկոյթին բացումը եւ ամփոփ գիծերով ներկայացուցած է հատորին գլխաւոր բաժինները։ Ապա, ան բեմ հրաւիրած է մեծարուած գիրքին հեղինակը, որպէսզի ներկայ գրասէրներուն փոխանցէ իր տրտի խօսքը։

Նոյնպէս, կրթական մարզի կաբեւորութեան գիտակցութեամբ, որոշուեցաւ շարունակել Համազգայինի Մարմէյի ճեմարանի հողի գնման միտող աշխատանքները։

Կեդրոնական Վարչութիւնը կարեւորութեամբ անդրադարձաւ «Բագին» գրական եւ գեղարուեստական եռամսեայ հանդէսի վերաշխուժացման, զայն նկատելով հայ ու մանաւանդ սփիւռքահայ մտաւորականութեան անհրաժեշտ բեմը։

Արժեւորումը կատարուեցաւ սփիւռքահայ ուսանողութեան համար կազմակերպուած՝ յառաջիկայ Յուլիս-Օգոստոսին Գէյրութի մէջ կայանալիք Համաշխարհային Ա. Ֆորումին։ Կեդրոնական Վարչութիւնը վստահութիւն յայտնեց, որ քննարկուելիք նիւթերով, դասախօսներու մակարդակով ու Սփիւռքի զանազան շրջաններէն մասնակցող հայ ուսանողներու թիւով ու որակով, ան լիովին պիտի արդարացնէ իր վրայ դրուած յոյսերը։ Այս առիթով, յատուկ գնահատանք արձանագրուեցաւ Ա. Ֆորումին յաջողութեան համար իրենց նիւթական եւ բարոյական աջակցութիւնը բերող բարեկամներուն եւ անդամներուն։

Ժողովի աւարտին, Կեդրոնական Վարչութիւնը անգամ մը եւս չեշտեց «Մէկ Ազգ, Մէկ Հայրենիք, Մէկ Մշակոյթ» հասկացողութեան հանդէպ իր ամբողջական հաւատքը եւ այս առընչութեամբ որոշեց վճռականութեամբ շարունակել իր աշխատանքները։

1 ՅՈՒԼԻՍ 1995 — *ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ*

digitised by A.R.A.R.@

Առաջին հերթին, Գէորգ Տօնապետեան բացատրած է այս շարքին լոյս ընծայման պատճառներն ու կարեւորութիւնը եւ ընդգծած, որ անոր բովանդակութիւնը անբաժան մասնիկը կը կազմէ նախ Հ.Յ.Դաշնակցութեան, ապա՝ հայ ժողովուրդի նորագոյն պատմութեան։

Շարքին Ա. եւ Բ. ու մնացեալ հատորներուն մասին ամփոփ տեղեկութիւններ ստանալէ ետք, ներկաները առիթ ունեցած են ուղղելու հարցումներ, որոնց ամբողջական ձեւով պատասխանած է Գէորգ Տօնապետեան։ Ապրտին, տեղի ունեցած է մտերմիկ զրոյց՝ խմբագիր-հեղինակին եւ գրասէր ներկաներուն միջեւ։

ԻՐԱՆԱՀԱՅ ԳԾԱԳՐԻՉՆԵՐՈՒՆ ՑԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ

Իրանի գծանկարիչներու (*գրաֆիստ*) գործերուն նուիրուած եւ երկու տարին անգամ մը տեղի ունեցող 4րդ ցուցահանդէսը կատարած է իր մրցանակաբաշխութիւնը։

Այս տարուան ցուցահանդէսը բաղկացած է երեք գլխաւոր բաժիններէ՝ Ա) Մրցութեան բաժին, Բ) Ասիայի գրաֆիքի ներկայացում, Գ) Վարպետներու ստեղծագործութիւն։

Ցուցահանդէսին ներկայացուած են նաեւ շարք մը հայ գրաֆիստներու ստեղծագործութիւնները. անոնք են՝ Արմոնդ Այվազեան, Արման Ստեփանեան, Արմէն Սեղբոսեան եւ Արման Դաւթեան, որոնք ունեցած են բաւականաչափ յաջող աշխատանքներ։ Ուշադրութիւն գրաւած են Արմոնդ Այվազեանի պիստակի արտադրութեան յատկացուած որմնազդը։ Արմէն Սեղբոսեանի Ապրիլեան Եղեռնի նուիրուած պաստառը նաեւ արժանացած է մեծ ուշադրութեան։

Դատակազմի յատուկ գնահատանքին արժանացած է Հայաստանի մէջ տեղի ունեցած «Իրանական Ֆիլմերու Փառատօն»ին որմնազդը, որ գործն է Քրիստ Հովուեանի։

digitised by A.R.A.R.@

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ՔԱՂԱՔԸ՝ ՈՒՐ ՆԱՐԵԿ ՉԿԱՐ
—վէպ—
Նուպար Զարխուտեան, Լոս Անճելոս, 1993, 75 էջ:

●

ՆՈՐ ՆԵՄԵԶԻԴԱ
—դրամատիկական պոեմ—
Վարանդ, Երեւան, 1993, 66 էջ:

●

ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐ
—պատմուածքներ—
Ռաֆֆի Քէպապճեան, Հանովր, 1994, 146 էջ:

●

ՍՊԱՍՈՒՄ
—բանաստեղծութիւններ—
Յակոբ Լատոյեան, Մոնթրէալ, 1994, 32 էջ:

●

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՄԻՋԱՆՑՔԸ
—բանաստեղծութիւններ—
Գէորգ Գոյունեան, Պէյրութ, 1994, 62 էջ:

●

ՑԻՍՈՒՍԱԲՈՅՐ
—բանաստեղծութիւններ—
Ծագ Ս. Յակոբեան, Լոս Անճելոս, 1994, 84 էջ:

●

digitised by A.R.A.R.@

ԼԻԲԱՆԱՆ

Հատավաճառ	10.000 Լ.Ո.
Տարեկան բաժնեգին	40.000 Լ.Ո.

ՍՈՒՐԻԱ

Տարեկան բաժնեգին	1000 Ս.Ո

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին	40 ամերիկեան տոլար

باكين

مجلة شهرية ، ادبية فنية وعلمية

المدير المسؤول

السيد ارتين كازنيك قزانجيان

•

PAKINE

REVUE MENSUELLE

LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Sr. A. KAZANDJIAN

•

ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Խմբագիր

ՊՕՂՈՍ ՄՆԱՑԵԱՆ

Խմբագրութեան անդամ

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Հասցէ՝

Centre Culturel SHAGHZOYAN

Bourdj Hammoud — Liban

digitised by A.R.A.R.@